

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2023թ. դեկտեմբերի 25-ին քաղաք Սանկտ Պետերբուրգում ստորագրված՝ «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Իրանի Իսլամական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**

Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների՝ մի կողմից, եւ Իրանի Իսլամական Հանրապետության՝ մյուս կողմից, միջեւ ազատ առևտրի մասին համաձայնագիր

ՆԱԽԱԲԱՆ

Եվրասիական տնտեսական միությունը (այսուհետ՝ ԵԱՏՄ) եւ Հայաստանի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ղրղզական Հանրապետությունը, Ռուսաստանի Դաշնությունը (այսուհետ՝ ԵԱՏՄ անդամ պետություններ)՝ մի կողմից, եւ Իրանի Իսլամական Հանրապետությունը (այսուհետ՝ Իրանի Իսլամական Հանրապետություն)՝ մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր),

ԳԻՏԱԿՑԵԼՈՎ Կողմերի միջեւ երկարատեւ եւ ամուր բարեկամական հարաբերություններն ու ավանդական բազմակողմ համագործակցությունը խորացնելու կարելիությունը,

ՑԱՆԿԱՆԱԼՈՎ ստեղծել բարենպաստ միջավայր եւ պայմաններ՝ Կողմերի միջեւ առևտրատնտեսական փոխհարաբերությունների զարգացման, ինչպես նաեւ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում Կողմերի միջեւ տնտեսական համագործակցության զարգացման համար,

ՀԻՄՆՎԵԼՈՎ Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների՝ մի կողմից, եւ Իրանի Իսլամական Հանրապետության՝ մյուս կողմից, միջեւ ազատ առևտրի գոտու ձեւավորմանն ուղղված՝ 2018 թվականի մայիսի 17-ի ժամանակավոր համաձայնագրով **նախկինում հաստատված արտոնյալ առևտրային հարաբերությունների վրա,**

ԸՆԴՈՒՆԵԼՈՎ առևտրի հետագա զարգացումն ապահովելու եւ սույն համաձայնագրով նախատեսված տնտեսական համագործակցությունը եւ ավելի լայն գործարար հնարավորությունները խթանելու անհրաժեշտությունը,

ԸՆԴԳԾԵԼՈՎ փոխադարձ վստահության, թափանցիկության եւ առեւտրի ղյուրացման հիման վրա Կողմերի միջեւ փոխհարաբերությունների հետագա զարգացմանը նպաստելու անհրաժեշտությունը,

ՀԱՍՏԱՏԵԼՈՎ Առեւտրի համաշխարհային կազմակերպությանը հնարավորինս շուտ միանալուն իրենց օժանդակությունը եւ ընդունելով այն փաստը, որ ԵԱՏՄ-ի եւ դրա անդամ պետության (որը դեռեւս Առեւտրի համաշխարհային կազմակերպության անդամ չէ) եւ Իրանի Իսլամական Հանրապետության՝ Առեւտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցությամբ կստեղծվեն բարենպաստ պայմաններ բազմակողմ առեւտրային համակարգում իրենց ինտեգրումը խորացնելու համար, եւ կընդլայնվի Կողմերի միջեւ համագործակցությունը,

ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ ներքոհիշյալի մասին.

ԳԼՈՒԽ 1. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1.1

Ընդհանուր սահմանումները

Սույն համաձայնագրի նպատակներով, եթե այլ բան նախատեսված չէ՝

ա) **«մաքսային մարմիններ»**՝ ԵԱՏՄ անդամ պետությունների կամ Իրանի Իսլամական Հանրապետության մաքսային մարմին կամ մաքսային մարմիններ.

բ) **«օրեր»**՝ օրացուցային օրեր, ներառյալ՝ հանգստյան եւ ոչ աշխատանքային օրերը.

գ) **«հայտարարատու»**՝ այն անձը, որը մաքսային նպատակներով հայտարարագրում է ապրանքները, կամ որի անունից հայտարարագրվում են ապրանքները.

դ) **«Եվրասիական տնտեսական հանձնաժողով»**՝ ԵԱՏՄ մշտապես գործող կարգավորող մարմին՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի համաձայն (այսուհետ՝ ԵԱՏՄ-ի մասին պայմանագիր).

ե) **«Ներդաշնակեցված համակարգ»** կամ **«ՆՀ»**՝ «Ապրանքների նկարագրման եւ ծածկագրման ներդաշնակեցված համակարգի մասին» 1983 թվականի հունիսի 14-ի միջազգային կոնվենցիայի համաձայն ստեղծված՝ ապրանքների նկարագրման եւ ծածկագրման ներդաշնակեցված համակարգ, ինչպես ընդունված է եւ Կողմերի կողմից կիրառվում է համապատասխան օրենքներում եւ կարգավորումներում.

զ) **«օրենսդրություն եւ կարգավորումներ»-ը** ներառում է ցանկացած օրենք կամ ցանկացած այլ նորմատիվ իրավական ակտ.

է) **«միջոց»**՝ Կողմի՝ օրենքի, կարգավորման, կանոնի, ընթացակարգի, որոշման, վարչարարության, գործելակերպի կամ որեւէ այլ ձեւով արտահայտված ցանկացած միջոց.

ը) **«ծագում ունեցող»**՝ սույն համաձայնագրի 6-րդ գլխում սահմանված ծագման կանոններին համապատասխանող.

թ) **«Կողմեր»**՝ ԵԱՏՄ անդամ պետությունները եւ ԵԱՏՄ-ն՝ մի կողմից՝ գործելով համատեղ կամ առանձին՝ ԵԱՏՄ-ի մասին պայմանագրից բխող իրենց իրավասության համապատասխան ոլորտներում, եւ Իրանի Իսլամական Հանրապետությունը՝ մյուս կողմից.

ժ) **«Կողմ»**՝ կա՛մ ԵԱՏՄ անդամ պետությունները եւ ԵԱՏՄ-ն՝ գործելով համատեղ կամ առանձին՝ ԵԱՏՄ-ի մասին պայմանագրից բխող իրենց

իրավասության համապատասխան ոլորտներում, կա՛մ Իրանի Իսլամական Հանրապետությունը.

Ժա) «անձ»՝ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ:

Հոդված 1.2

Առեւտրի ազատականացումը եւ ազատ առեւտրի գոտու ստեղծումը

Կողմերը սույնով ստեղծում են Ազատ առեւտրի գոտի՝ միջազգային կանոններին, չափանիշներին եւ գործելակերպերին համապատասխան¹:

Հոդված 1.3

Նպատակները

Սույն համաձայնագրի նպատակներն են՝

ա) ազատականացնել եւ դյուրացնել Կողմերի միջեւ ապրանքների առեւտուրը, մասնավորապես՝ սակագնային եւ ոչ սակագնային խոչընդոտները նվազեցնելու կամ վերացնելու միջոցով՝ սույն համաձայնագրի դրույթներին համապատասխան.

բ) աջակցել Կողմերի միջեւ տնտեսական եւ առեւտրային համագործակցությանը.

գ) խրախուսել Կողմերի միջեւ առեւտրի ընդլայնումը եւ բազմազանեցումը.

դ) ամրապնդել սույն համաձայնագրի շրջանակներում համաձայնեցված ոլորտներում սերտ համագործակցությունը եւ դյուրացնել Կողմերի միջեւ

¹ Սույն համաձայնագրի՝ Առեւտրի համաշխարհային կազմակերպության անդամ հանդիսացող Կողմերի համար «միջազգային կանոններ, չափանիշներ եւ գործելակերպեր» նշանակում է ԱՀԿ համաձայնագրի համապատասխան դրույթները, մասնավորապես՝ «Սակագների եւ առեւտրի մասին» 1994 թվականի գլխավոր համաձայնագրի XXIV հոդվածը:

հաղորդակցությունը:

Հոդված 1.4

Այլ համաձայնագրերի հետ կապը

1. Սույն համաձայնագիրը կիրառվում է՝ չխախտելով Կողմերի այն միջազգային պայմանագրերով սահմանված իրավունքներն ու պարտավորությունները, որոնց կողմեր են դրանք:

2. Չհակասելով սույն համաձայնագրի 6.7 հոդվածին՝ սույն համաձայնագրի դրույթները չեն կիրառվում ԵԱՏՄ անդամ պետությունների միջև կամ ԵԱՏՄ անդամ պետությունների եւ ԵԱՏՄ-ի միջև, ինչպես նաեւ դրանցով Իրանի Իսլամական Հանրապետությանը չեն շնորհվում այնպիսի արտոնություններ, որոնք ԵԱՏՄ անդամ պետությունները բացառապես շնորհում են միմյանց:

Հոդված 1.5

Համատեղ կոմիտե

1. Կողմերը սույնով ստեղծում են յուրաքանչյուր Կողմի ներկայացուցիչներից բաղկացած Համատեղ կոմիտե, որը համանախագահում են երկու ներկայացուցիչներ. մեկը՝ ԵԱՏՄ-ից եւ դրա անդամ պետություններից, իսկ մյուսը՝ Իրանի Իսլամական Հանրապետությունից: Կողմերին ներկայացնում են դրանց կողմից այդ նպատակով նշանակված բարձրաստիճան պաշտոնյաներ:

2. Համատեղ կոմիտեին վերապահված են հետեւյալ գործառույթները.

ա) ուսումնասիրել սույն համաձայնագրի կիրարկմանը եւ գործողությանն առնչվող ցանկացած հարց.

բ) վերահսկողություն իրականացնել սույն համաձայնագրի համաձայն

կամ Համատեղ կոմիտեի հայեցողությամբ սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան ստեղծված բոլոր ենթակոմիտեների, աշխատանքային խմբերի եւ այլ մարմինների աշխատանքի նկատմամբ.

գ) ուսումնասիրել Կողմերի միջեւ առեւտրային հարաբերությունների հետագա զարգացման հնարավորությունները.

դ) ուսումնասիրել սույն համաձայնագրում փոփոխությունների կատարումը եւ Կողմերին ներկայացնել դրանց վերաբերյալ առաջարկություններ. եւ

ե) սույն համաձայնագրին առնչվող ցանկացած հարցի մասով իրականացնել այլ գործողություններ՝ Կողմերի հետ համաձայնեցմամբ:

3. Համատեղ կոմիտեն իր գործառույթներն իրականացնելու նպատակով կարող է ստեղծել օժանդակ մարմիններ, այդ թվում՝ ժամանակավոր (*ad hoc*) մարմիններ, եւ նրանց վերապահել հանձնարարականներ՝ առանձին հարցերի վերաբերյալ: Համատեղ կոմիտեն կարող է անհրաժեշտության դեպքում դիմել երրորդ անձանց կամ խմբերի՝ իր իրավասության շրջանակին պատկանող հարցերի վերաբերյալ խորհրդատվություն ստանալու նպատակով:

4. Եթե Կողմերն այլ համաձայնություն ձեռք չեն բերել, ապա Համատեղ կոմիտեն հրավիրում է՝

ա) հերթական նիստ՝ ամեն տարի, ընդ որում, այդ նիստերը պետք է անցկացվեն հաջորդաբար Կողմերի տարածքներում, եւ

բ) արտահերթ նիստ՝ Կողմի կողմից այդպիսի պահանջ ներկայացվելուց հետո 30 օրվա ընթացքում, ընդ որում, այդ նիստերը պետք է անցկացվեն մյուս Կողմի տարածքում կամ Կողմերի միջեւ համաձայնեցված այլ վայրում:

5. Համատեղ կոմիտեի եւ սույն համաձայնագրի համաձայն ստեղծված դրա օժանդակ մարմինների բոլոր որոշումները կայացվում են Կողմերի միջեւ ընդհանուր համաձայնությամբ:

6. Բոլոր ծանուցումները, հարցումները եւ Կողմերին կամ Համատեղ

կոմիտե ներկայացվող այլ գրավոր փաստաթղթեր կազմվում են անգլերենով կամ պարսկերենով կամ ռուսերենով՝ դրանց համապատասխան անգլերեն թարգմանություններով, եթե սույն համաձայնագրով այլ բան նախատեսված չէ:

Հոդված 1.6

Գործարար երկխոսության հարթակը

1. Կողմերն ստեղծում են Կողմերի գործարար համայնքների միջեւ համագործակցության ամրապնդմանն ուղղված գործարար երկխոսության հարթակ՝ Կողմերի այդ գործարար համայնքների ներկայացուցիչների միջեւ երկխոսության անցկացման նպատակով:

2. Գործարար երկխոսության հարթակին վերապահվում են իրավասություններ՝ Համատեղ կոմիտե ներկայացնելու առաջարկներ՝ սույն համաձայնագրի կիրառման հետ կապված հարցերի վերաբերյալ, այդ թվում՝ առաջարկներ՝ Կողմերի միջեւ առեւտրատնտեսական համագործակցության զարգացման վերաբերյալ, ինչպես նաեւ Կողմերի միջեւ փոխադարձ առեւտրին առնչվող այլ հարցերի վերաբերյալ:

3. Գործարար երկխոսության հարթակի շրջանակներում անհրաժեշտության դեպքում կկազմակերպվեն սեմինարներ, գործարար ցուցահանդեսներ, տոնավաճառներ, կլոր սեղան քննարկումներ եւ այլ համատեղ միջոցառումներ՝ ուղղված Կողմերի միջեւ առեւտրատնտեսական փոխհարաբերությունների զարգացմանը:

Հոդված 1.7

Կապի ապահովման կենտրոնները

1. Յուրաքանչյուր Կողմ նշանակում է կապի ապահովման կենտրոն կամ կապի ապահովման կենտրոններ՝ սույն համաձայնագրին առնչվող ցանկացած հարցի շուրջ Կողմերի միջև հաղորդակցությունը դյուրացնելու նպատակով, եւ Համատեղ կոմիտեին տեղեկացնում է իր կապի ապահովման կենտրոնի կամ կապի ապահովման կենտրոնների մասին:

2. Կողմի հարցման հիման վրա՝ մյուս Կողմի կապի ապահովման կենտրոնը կամ կապի ապահովման կենտրոնները պարզում են տվյալ հարցի համար պատասխանատու գերատեսչությունը կամ պաշտոնական պատասխանատուին եւ անհրաժեշտության դեպքում աջակցում են Կողմերի միջև հաղորդակցության ապահովման հարցում:

Հոդված 1.8

Գաղտնի տեղեկությունները

1. Յուրաքանչյուր Կողմ իր համապատասխան օրենքների եւ կարգավորումների համաձայն պահպանում է սույն համաձայնագրին համապատասխան տեղեկությունները տրամադրող Կողմի՝ որպես գաղտնի նշագրված տեղեկությունների գաղտնիությունը:

2. Սույն համաձայնագրի դրույթներով չի կարող նախատեսվել Կողմին ներկայացվող այնպիսի գաղտնի տեղեկություններ տրամադրելու պահանջ, որոնց բացահայտումը կխոչընդոտի օրենքի կատարումը կամ որեւէ այլ կերպ կհակասի հանրային շահին, կամ որոնք կարող են սահմանափակել պետական կամ մասնավոր առանձին ձեռնարկությունների օրինական առետրային շահերը:

Հոդված 1.9

Ընդհանուր բացառությունները

Պայմանով, որ նշված միջոցները չեն կիրառվում որպես կամայական կամ չարդարացված խտրականության միջոց այն երկրների միջեւ, որտեղ միեւնույն պայմանները գերակայում են, կամ որպես միջազգային առետրի քողարկված սահմանափակման միջոց, սույն համաձայնագրում ոչինչ չի կարող մեկնաբանվել այնպես, որ որեւէ Կողմի խոչընդոտի ընդունել կամ իրականացնել այնպիսի միջոցներ, որոնք՝

- ա) անհրաժեշտ են հանրային բարոյականության պահպանության համար.
- բ) անհրաժեշտ են մարդկանց, կենդանիների կամ բույսերի կյանքի կամ առողջության պաշտպանության համար.
- գ) առնչվում են ոսկու եւ արծաթի ներմուծմանը կամ արտահանմանը.
- դ) անհրաժեշտ են այն օրենքներին կամ կարգավորումներին համապատասխանության ապահովման համար, որոնք չեն հակասում սույն համաձայնագրի դրույթներին, այդ թվում՝ կապված մաքսային օրենսդրության պահպանման, սույն համաձայնագրի 2.11 հոդվածին համապատասխան գործող ձեռնարկությունների կողմից իրավունքի պահպանման ապահովման, արտոնագրերի, ապրանքային նշանների եւ հեղինակային իրավունքների պաշտպանության, ինչպես նաեւ խարդախ գործողությունների կանխման հետ.
- ե) վերաբերում են բանտարկյալների աշխատանքի արդյունքում ստեղծված ապրանքներին.
- զ) կիրառվում են գեղարվեստական, պատմական կամ հնագիտական արժեք ներկայացնող ազգային հարստությունների պաշտպանության համար.
- է) առնչվում են սպառվող բնական ռեսուրսների պահպանությանը, եթե այդ միջոցներն իրականացվում են ներքին արտադրության կամ սպառման նկատմամբ սահմանվող սահմանափակումների հետ համատեղ.

ը) ներառում են հայրենական արտադրության նյութերի արտահանման սահմանափակումներ՝ հայրենական մշակող արդյունաբերության միջոցով այդ նյութերի բավարար քանակ ապահովելու նպատակով այն ժամանակահատվածներում, երբ այդ նյութերի ներքին գինն ավելի ցածր է, քան համաշխարհային գինը՝ որպես Կառավարության կողմից իրականացվող կայունացման նախագծի մի մաս՝ պայմանով, որ այդ սահմանափակումները չեն նպաստի արտահանման ծավալների կամ այդ ներքին տնտեսության ճյուղին տրամադրվող պաշտպանության ավելացմանը եւ չեն հակասի սույն համաձայնագրի կամ խտրականության բացառմանն առնչվող դրույթներին.

թ) կարետոր նշանակություն ունեն ընդհանրապես կամ տեղական մակարդակով պակասուրդ ունեցող ապրանքների ձեռքբերման կամ բաշխման համար՝ պայմանով, որ ցանկացած այդպիսի միջոց համապատասխանում է այն սկզբունքին, որ Կողմերն ունեն այդ ապրանքների միջազգային մատակարարումներից հավասար մասնաբաժին ստանալու իրավունք, եւ որ սույն համաձայնագրի մյուս դրույթներին չհամապատասխանող ցանկացած այդպիսի միջոցի կիրառումը դադարեցվում է, երբ դրա համար հիմք հանդիսացող պայմանները դադարում են գոյություն ունենալուց:

Հոդված 1.10

Անվտանգությանն առնչվող բացառությունները

Սույն համաձայնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի այնպես, որ՝

ա) դրանով որեւէ Կողմից պահանջվի տրամադրել այնպիսի տեղեկություններ, որոնց բացահայտումը հակասում է այդ Կողմի անվտանգության էական շահերին. կամ

բ) խոչընդոտի որեւէ Կողմի ձեռնարկել այնպիսի գործողություններ, որոնք այդ Կողմն անհրաժեշտ է համարում իր անվտանգության էական շահերի պաշտպանության համար, եւ որոնք՝

- i. կապված են տրոհվող նյութերի կամ այն նյութերի հետ, որոնցից դրանք ստացվել են. կամ
- ii. կապված են զենքի, զինամթերքի եւ ռազմական միջոցների առետորի եւ այլ ապրանքների ու նյութերի առետորի հետ, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն իրականացվում է զինված ուժերին մատակարարելու համար.
- iii. իրականացվում են ռազմական ժամանակ կամ միջազգային հարաբերություններում այլ արտակարգ իրավիճակում. կամ

գ) խոչընդոտի որեւէ Կողմի՝ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված՝ միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման նպատակներով ստանձնած իր պարտավորությունների կատարմանն ուղղված որեւէ գործողության ձեռնարկումը:

Հոդված 1.11

Վճարային հաշվեկշռի ապահովմանն ուղղված միջոցները²

1. Չնայած սույն համաձայնագրի 2.7 հոդվածի 1-ին կետի դրույթներին՝ Կողմն իր արտաքին ֆինանսական դիրքի պաշտպանության եւ վճարային հաշվեկշռի ապահովման նպատակով կարող է սահմանափակել ներմուծման համար թույլատրված ապրանքների քանակը կամ արժեքը՝ սույն հոդվածի ստորեւ նշված կետերի դրույթները կատարելու պայմանով: Կողմի կողմից սույն հոդվածին համապատասխան սահմանված, պահպանվող կամ ուժեղացված՝ ներմուծմանն առնչվող սահմանափակումները չպետք է գերազանցեն այն սահմանափակումները, որոնք անհրաժեշտ են՝

- i. իր արժույթային պահուստներին սպառնացող վտանգը կանխելու կամ դրանց էական նվազումը դադարեցնելու համար, կամ

²Կողմերը ձեռնարկում են միջոցներ՝ սույն հոդվածի դրույթների համաձայն խորհրդակցություն անցկացնելիս խիստ գաղտնիությունը պահպանելու համար:

- ii. Կողմի արժույթային պահուստների՝ անբավարար կամ շատ քիչ լինելու վտանգի առկայության դեպքում՝ դրա պահուստների աճի ողջամիտ տեմպն ապահովելու համար:

Երկու դեպքում էլ պատշաճ ուշադրություն պետք է դարձնել ցանկացած հատուկ գործոնի, որը կարող է ազդել այդ Կողմի պահուստների կամ պահուստների մասով դրա կարիքների վրա, իսկ եթե տվյալ Կողմին հասանելի են նպատակային արտաքին վարկային միջոցներ կամ այլ ռեսուրսներ, ապա նաեւ այդ վարկային միջոցների կամ ռեսուրսների համապատասխան օգտագործումն ապահովելու անհրաժեշտությանը:

Համապատասխան Կողմը տեղեկացնում է մյուս Կողմին իր արտաքին ֆինանսական դիրքի եւ վճարային հաշվեկշռի պահպանման նպատակով նման միջոցներ ձեռնարկելու իր մտադրության, ինչպես նաեւ դրանց կիրառման ու վերացման ժամանակացույցի մասին:

2. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան սահմանափակումներ կիրառող Կողմերն այդ պայմանների բարելավման հետ մեկտեղ հետետողականորեն թուլացնում են այդ սահմանափակումները՝ դրանք պահպանելով միայն այնքանով, որքանով սույն կետով սահմանված պայմաններով հետագայում կհիմնավորվի դրանց կիրառումը: Կողմերը չեղարկում են սահմանափակումները, եթե այդ պայմաններով այլեւս չի հիմնավորվում դրանց սահմանումը կամ պահպանումը՝ սույն կետին համապատասխան:

3.ա) Կողմերն իրենց ներքին քաղաքականությունն իրականացնելիս պարտավորվում են պատշաճ ուշադրություն դարձնել իրենց վճարային հաշվեկշռն ամուր եւ կայուն հիմքի վրա պահպանելու կամ վերականգնելու անհրաժեշտությանը եւ արտադրական ռեսուրսների տնտեսապես չարդարացված օգտագործումը կանխելուն: Կողմերն ընդունում են, որ այդ նպատակներին հասնելու համար ցանկալի է հնարավորինս արագ ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնց շնորհիվ միջազգային առեստուրը ոչ թե կրճատվում, այլ ընդլայնվում է:

բ) Սույն հոդվածի համաձայն սահմանափակումներ կիրառող Կողմերը

տարբեր ապրանքների կամ ապրանքների դասերի ներմուծման սահմանափակումների արդյունավետությունը կարող են սահմանել այնպես, որ առաջնահերթությունը տրվի առավել կարելի ապրանքների ներմուծմանը:

գ) Սույն հոդվածին համապատասխան սահմանափակումներ կիրառող Կողմերը պարտավորվում են՝

- i. խուսափել ցանկացած այլ Կողմի կոմերցիոն կամ տնտեսական շահերին անհարկի վնաս հասցնելուց³.
- ii. չկիրառել այնպիսի սահմանափակումներ, որոնք ուղղված են որեւէ անվանմամբ ապրանքի առետորային նվազագույն քանակի ներմուծումը չարդարացված ձեռով խոչընդոտելուն, որոնց բացառումը բացասաբար կանդրադառնա կանոնավոր առետորային ուղիների վրա, եւ
- iii. չկիրառել այնպիսի սահմանափակումներ, որոնք կարող են խոչընդոտել կոմերցիոն նմուշների ներմուծումը կամ արտոնագրերի, ապրանքային նշանների, հեղինակային իրավունքի կամ համանման ընթացակարգերի պահպանումը:

դ) Կողմերն ընդունում են, որ լրիվ եւ արտադրական զբաղվածության ապահովմանն ու պահպանմանը կամ տնտեսական ռեսուրսների զարգացմանն ուղղված ներքին քաղաքականությունների արդյունքում Կողմի՝ ներմուծման պահանջարկի մակարդակը կարող է աճել, ինչը մեծ վտանգ կարող է ներկայացնել դրա՝ սույն հոդվածի 1-ին կետում նշված արժույթային պահուստների համար: Համապատասխանաբար, սույն հոդվածի դրույթները մնացած մասով կատարող Կողմը պարտավոր չէ չեղարկել կամ փոփոխել սահմանափակումներն այն հիմնավորմամբ, որ սույն հոդվածին համապատասխան իր կողմից կիրառվող սահմանափակումներն այդ քաղաքականությունների փոփոխման արդյունքում կդառնան անօգուտ:

³Սահմանափակումներ կիրառող Կողմը ջանքեր է գործադրում այն արտադրանքի արտահանմանը լուրջ վնաս հասցնելը կանխելու համար, որից մեծապես կախված է Կողմի տնտեսությունը:

4.ա) Եթե սույն հոդվածին համապատասխան ներմուծման սահմանափակումները կիրառվում են մշտապես եւ լայնորեն, ինչը վկայում է Կողմերի միջեւ առեւտուրը սահմանափակող՝ վճարումների ընդհանուր անհավասարակշռության առկայության մասին, ապա Կողմերը նախաձեռնում են քննարկումներ՝ գնահատելու համար, թե կարող են արդյոք այն Կողմերը, որոնց վճարային հաշվեկշիռը ճնշող գործոնների ազդեցության տակ է, կամ այն Կողմերը, որոնց վճարային հաշվեկշիռը բացառիկ բարենպաստ պայմաններում է, ընդունել այլ միջոցներ՝ վճարումների անհավասարակշռության հիմնական պատճառները վերացնելու համար:

բ) Սույն հոդվածի 1-ին կետում նշված սահմանափակող միջոցների ընդունման կամ պահպանման դեպքում Համատեղ կոմիտեն անհապաղ խորհրդակցություններ է անցկացնում: Այդ խորհրդակցությունների ընթացքում գնահատվում են համապատասխան Կողմի վճարային հաշվեկշռի վիճակը եւ սույն հոդվածի համաձայն ընդունված կամ պահպանված սահմանափակող միջոցները՝ հաշվի առնելով, *ի թիվս այլնի*, այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝

- i. վճարային հաշվեկշռի հետ կապված դժվարությունների բնույթը եւ ծավալը.
- ii. մյուս Կողմի տնտեսության վրա սահմանափակումների հնարավոր ազդեցությունը. կամ
- iii. այլընտրանքային ուղղիչ միջոցները, որոնք կարող են հասանելի լինել: Խորհրդակցությունների ընթացքում պետք է անդրադարձ արվի սույն հոդվածի դրույթներին ցանկացած սահմանափակող միջոցի համապատասխանությանը:

Հոդված 1.12

Թափանցիկությունը

1. Յուրաքանչյուր Կողմ, իր համապատասխան օրենքներին եւ կարգավորումներին համապատասխան, ապահովում է, որ սույն համաձայնագրի գործողության շրջանակներում գտնվող ցանկացած հարցի առնչվող՝ իր ընդհանուր կիրառության օրենքներն ու կարգավորումներն անհապաղ հրապարակվեն կամ այլ կերպ հասանելի լինեն այնպես, որ հնարավորություն տան շահագրգիռ անձանց ու մյուս Կողմին ծանոթանալու դրանց, հնարավորության դեպքում՝ նաեւ էլեկտրոնային եղանակով: Կողմերը փոխանակում են համապատասխան պաշտոնական հրապարակումների եւ էլեկտրոնային զանգվածային լրատվության միջոցների ցանկերը:

2. Յուրաքանչյուր Կողմ՝

ա) հրապարակում է սույն հոդվածի 1-ին կետում նշված այն օրենքների ու կարգավորումների նախագծերը, որոնք այդ Կողմը նախատեսում է ընդունել, եւ

բ) շահագրգիռ անձանց եւ մյուս Կողմին տրամադրում է ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իրենց մեկնաբանությունները սույն հոդվածի 1-ին կետում նշված այն օրենքների ու կարգավորումների վերաբերյալ, որոնք այդ Կողմը նախատեսում է ընդունել:

3. Կողմը մյուս Կողմի պահանջով անհապաղ տրամադրում է տեղեկատվություն եւ պատասխանում է գործող կամ նախատեսվող ցանկացած օրենքի, կարգավորման, ընթացակարգի կամ ընդհանուր կիրառության վարչական ակտի առնչվող հարցերին՝ անկախ այն փաստից, թե հարցումը ներկայացնող Կողմը նախապես ծանուցվել է այդ մասին, թե՛ ոչ: Կողմը սույն կետին համապատասխան տեղեկատվություն է տրամադրում անգլերենով՝ հարցումն ստանալու օրվանից 45-օրյա ժամկետում:

4. Կողմերն ապահովում են մյուս Կողմի համար ներմուծմանն առնչվող

իրենց համապատասխան պահանջների հստակությունն ու թափանցիկությունը եւ հրապարակում եւ մյուս Կողմին են տրամադրում մյուս Կողմի արտահանողների համար ներմուծման կարգավորման վերաբերյալ իրենց կողմից կիրառվող մանրամասն ձեռնարկը՝ սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 6 ամսվա ընթացքում: Տվյալ ձեռնարկը կազմվում է անգլերենով եւ հրապարակվում է համընդհանուր ծանոթացման համար, այդ թվում՝ համապատասխան Կողմի՝ բոլորի համար հասանելի անվճար պաշտոնական կայքում: Կողմերն այդ ձեռնարկում անհապաղ արտացոլում են ներմուծման գործընթացի՝ իրենց կարգավորման մեջ կատարված ցանկացած փոփոխություն:

5. Սույն հոդվածի 3-րդ կետում նշված ծանուցումը համարվում է կատարված, եթե համապատասխան տեղեկատվությունը հրապարակվել է համընդհանուր ծանոթացման համար, այդ թվում՝ համապատասխան Կողմի՝ բոլորի համար հասանելի անվճար պաշտոնական կայքում:

6. Սույն հոդվածին համապատասխան տրամադրվող ցանկացած ծանուցում, հարցում կամ տեղեկատվություն մյուս Կողմին փոխանցվում է կապի ապահովման համապատասխան կենտրոնների միջոցով:

Հոդված 1.13

Օրենքներում եւ կարգավորումներում կատարվող ճշգրտումները

Նախքան սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելը Կողմերը ձեռնարկում են ընդհանուր եւ հատուկ բնույթի բոլոր անհրաժեշտ միջոցները՝ սույն համաձայնագրին համապատասխան իրենց պարտավորությունները կատարելու համար, եւ անհրաժեշտության դեպքում իրենց օրենքներում եւ կարգավորումներում համապատասխանաբար կատարում են ճշգրտումներ՝ դրանք սույն համաձայնագրի դրույթներին համապատասխանեցնելու նպատակով:

ԳԼՈՒԽ 2. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԵՎՏՈՒՐԸ

Հոդված 2.1

Ազգերի առավել բարենպաստության ռեժիմը

1. Ներմուծման կամ արտահանման համար կամ դրա հետ կապված կիրառվող կամ ներմուծումների կամ արտահանումների համար վճարումների միջազգային փոխանցման համար կամ դրա հետ կապված մաքսատուրքերի եւ ցանկացած տեսակի վճարների առնչությամբ, այդ տուրքերը եւ վճարները գանձելու մեթոդի առնչությամբ եւ ներմուծման ու արտահանման հետ կապված բոլոր կանոնների եւ ձեւակերպումների առնչությամբ, ինչպես նաեւ սույն համաձայնագրի 2.2 հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերում նշված բոլոր հարցերի առնչությամբ ցանկացած այլ երկրի տարածքի ծագում ունեցող կամ այդ տարածքի համար նախատեսված ապրանքի համար Կողմի տրամադրած ցանկացած առավելություն, բարենպաստ պայման, արտոնություն կամ անձեռնմխելիություն անհապաղ կերպով եւ անվերապահորեն տրամադրվում է մյուս Կողմի տարածքի ծագում ունեցող կամ այդ Կողմի տարածքի համար նախատեսված համանման ապրանքի համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները չեն կիրառվում այն առանձնաշնորհումների դեպքում, որոնք՝

ա) Կողմը շնորհել է հարեւան երկրներին՝ սահմանային առեւտուրը դյուրացնելու համար.

բ) Կողմը շնորհել է մաքսային միության կամ ազատ առևտրի գոտու վերաբերյալ համաձայնագրի համաձայն կամ մաքսային միության կամ ազատ առևտրի գոտու ստեղծման համար անհրաժեշտ ժամանակավոր համաձայնագրի համաձայն կամ արտոնյալ պայմաններով առևտրային համաձայնագրի համաձայն, որը համապատասխանում է «Ձարգացող երկրների տարբերակված եւ ավելի բարենպաստ մոտեցման, փոխադարձության եւ ավելի լիարժեք մասնակցության վերաբերյալ» 1979 թվականի նոյեմբերի 28-ի (L/4903) որոշմամբ սահմանված պահանջներին.

գ) Կողմը շնորհել է զարգացող եւ առավել թույլ զարգացած երկրներին՝ սակագնային առանձնաշնորհումների ընդհանուր սխեմային համապատասխան:

Հոդված 2.2

Ազգային ռեժիմը⁴

1. Կողմերն ընդունում են, որ ներքին հարկերն ու այլ ներքին վճարներ եւ ներքին վաճառքին առնչվող օրենքները, կարգավորումներն ու պահանջները, ապրանքների վաճառքի, գնման, փոխադրման, բաշխման կամ օգտագործման վերաբերյալ առաջարկները, ինչպես նաեւ ապրանքների համակցում, մշակում կամ որոշակի քանակությամբ կամ մասնաբաժիններով դրանց օգտագործում պահանջող ներքին քանակական կարգավորումները չեն կիրառվում ներմուծվող կամ հայրենական արտադրության ապրանքների նկատմամբ՝ ներքին արտադրությանը սատարելու նպատակով⁵:

2. Մի Կողմի տարածքից մյուս Կողմի տարածք ներմուծվող ապրանքները ոչ ուղղակի եւ ոչ էլ անուղղակի ենթակա չեն ներքին հարկման կամ ցանկացած բնույթի այլ ներքին վճարների, որոնք գերազանցում են հայրենական արտադրության համանման ապրանքների նկատմամբ ուղղակիորեն կամ անուղղակիորեն կիրառվող ներքին հարկերն ու վճարները: Բացի այդ, ոչ մի Կողմ ներմուծվող կամ հայրենական արտադրության ապրանքների նկատմամբ ներքին

⁴Ցանկացած ներքին հարկ կամ այլ ներքին վճար կամ ցանկացած օրենք, կարգավորում կամ պահանջ, որոնց մասին նշվում է սույն համաձայնագրի 2.2 հոդվածի 1-ին կետում, եւ որոնք կիրառվում են ներմուծվող ապրանքների և համանման հայրենական արտադրության ապրանքների համար, եւ որոնք գանձվում կամ գործում են ներմուծվող ապրանքների համար ներմուծման պահին կամ վայրում, այնուամենայնիվ, պետք է դիտարկվեն որպես ներքին հարկ կամ այլ ներքին վճար կամ օրենք, կարգավորում կամ պահանջ, որոնց մասին նշվում է սույն համաձայնագրի 2.2 հոդվածի 1-ին կետում, եւ համապատասխանաբար դրանց վրա տարածվում են սույն համաձայնագրի 2.2 հոդվածի դրույթները:

⁵Կողմերը ձեռնարկում են այնպիսի ողջամիտ միջոցներ, որոնք իրենց համար կարող են հասանելի լինել տարածաշրջանային եւ տեղական կառավարման մարմինների ու իշխանության մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակն ընդգրկող տարածքներում սույն համաձայնագրի 2.2 հոդվածի 1-ին կետի կատարումն ապահովելու համար: «Ողջամիտ միջոցներ» եզրույթի օգտագործմամբ չի պահանջվում, օրինակ, գործող ազգային օրենսդրության չեղարկում, որով տեղական կառավարման մարմինները լիազորվում են կիրառել այնպիսի ներքին հարկեր, որոնք թեեւ տեխնիկապես չեն համապատասխանում սույն համաձայնագրի 2.2 հոդվածի տառին, փաստացի համապատասխանում են այդ հոդվածի ոգուն, եթե այդ չեղարկման արդյունքում էապես կվատանա համապատասխան տեղական կառավարման մարմինների կամ իշխանության մարմինների ֆինանսական դրությունը: Իսկ տեղական կառավարման մարմինների կամ իշխանության մարմինների կողմից այնպիսի հարկման դեպքում, որը հակասում է սույն համաձայնագրի 2.2 հոդվածի թե՛ տառին, թե՛ ոգուն, «ողջամիտ միջոցներ» եզրույթի օգտագործումը Կողմին թույլ է տալիս անցումային ժամանակահատվածի ընթացքում աստիճանաբար բացառել ոչ հետևողական հարկումը, եթե դրա անսպասելի բացառումը վարչական ու ֆինանսական էական դժվարություններ կստեղծի:

հարկերը կամ այլ ներքին վճարներ չի կիրառում այնպես, որ դա հակասի սույն հոդվածի 1-ին կետով սահմանված սկզբունքներին⁶:

3. Մի Կողմի տարածքից մյուս Կողմի տարածք ներմուծվող ապրանքների համար ապահովվում է ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան ազգային ծագում ունեցող համանման ապրանքների համար տրամադրվող ռեժիմը՝ դրանց ներքին վաճառքին, վաճառքի, գնման, փոխադրման, բաշխման կամ օգտագործման վերաբերյալ առաջարկներին առնչվող բոլոր օրենքների, կարգավորումների ու պահանջների առումով: Սույն կետի դրույթները չեն խոչընդոտում ներքին փոխադրման տարբերակված այնպիսի վճարների կիրառումը, որոնք բացառապես պայմանավորված են տրանսպորտային միջոցների տնտեսապես շահավետ շահագործմամբ, այլ ոչ թե ապրանքների ազգային ծագմամբ:

4. Կողմերը չեն սահմանում կամ չեն պահպանում որեւէ ներքին քանակական կարգավորում ապրանքների համակցման, մշակման կամ որոշակի քանակությամբ կամ մասնաբաժիններով օգտագործման համար, որով ուղղակիորեն կամ անուղղակիորեն պահանջվում է, որ կարգավորման ենթակա ապրանքի որոշակի քանակություն կամ մասնաբաժին մատակարարվի ներքին աղբյուրներից: Բացի այդ, ոչ մի Կողմ ներքին քանակական կարգավորումները չի կիրառում այնպես, որ դա հակասի սույն հոդվածի 1-ին կետով սահմանված սկզբունքներին⁷:

5. Ապրանքների համակցմանը, մշակմանը կամ որոշակի քանակությամբ կամ մասնաբաժիններով օգտագործմանն առնչվող ներքին քանակական ոչ մի

⁶ Սույն համաձայնագրի 2.2 հոդվածի 2-րդ կետի առաջին նախադասության պահանջները բավարարող հարկը համարվում է նշված կետի երկրորդ նախադասության դրույթներին չհամապատասխանող միայն այն դեպքերում, երբ առկա է մրցակցություն մի կողմից՝ հարկվող ապրանքների, մյուս կողմից՝ համանման հարկով չհարկվող՝ ուղղակիորեն մրցունակ կամ փոխարինվող ապրանքների միջեւ:

⁷ Սույն համաձայնագրի 2.2 հոդվածի 4-րդ կետի առաջին նախադասության դրույթի հետ համատեղելի կարգավորումը չի դիտարկվում որպես նշված կետի երկրորդ նախադասության դրույթներին հակասող ցանկացած դեպքում, երբ այն բոլոր ապրանքները, որոնց վրա տարածվում են կարգավորումները, արտադրված են երկրի ներսում՝ զգալի քանակությամբ: Կարգավորումը չի կարող հիմնավորվել որպես երկրորդ նախադասության դրույթների հետ համատեղելի այն հիմքով, որ կարգավորման ենթակա ապրանքներից յուրաքանչյուրի համար սահմանված մասնաբաժինը կամ քանակությունը հավասար հարաբերակցություն է ներմուծվող եւ ներքին ապրանքների միջեւ:

կարգավորում չի կիրառվում այնպես, որ ցանկացած այդպիսի քանակություն կամ մասնաբաժին բաշխվի մատակարարման ներքին աղբյուրների միջև:

6. ա) Սույն հոդվածի դրույթները չեն կիրառվում այն օրենքների, կարգավորումների կամ պահանջների նկատմամբ, որոնցով կարգավորվում են պետական հաստատությունների կողմից գնվող արտադրանքի մատակարարումները, որոնք կատարվում են պետական նպատակներով, այլ ոչ թե կոմերցիոն վերավաճառքի կամ կոմերցիոն վաճառքի նպատակով ապրանքների արտադրության մեջ օգտագործելու համար:

բ) Սույն հոդվածի դրույթներով չի բացառվում սուբսիդիաների վճարումը բացառապես ներքին արտադրողներին, այդ թվում՝ սույն հոդվածի դրույթներին համապատասխան կիրառվող ներքին հարկերի կամ վճարների մուտքերից ստացված վճարումները ներքին արտադրողներին, ինչպես նաև հայրենական արտադրության ապրանքների պետական գնումների միջոցով իրագործվող սուբսիդիաների վճարումը:

7. Կողմերն ընդունում են, որ առավելագույն գնի ներքին վերահսկման միջոցներն անգամ սույն հոդվածի մյուս դրույթներին համապատասխանելու դեպքում կարող են վնաս հասցնել ներմուծվող ապրանք մատակարարող Կողմերի շահերին: Համապատասխանաբար, այդպիսի միջոցներ կիրառող Կողմը պետք է հաշվի առնի մյուս Կողմի շահերը՝ այդպիսի վնասից հնարավորինս խուսափելու համար:

Հոդված 2.3

Մաքսատուրքերի նվազեցումը եւ (կամ) վերացումը

1. Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի տարածքի ծագում ունեցող ապրանքների համար ապահովում է սույն համաձայնագրի 1-ին հավելվածով նախատեսված առաջին Կողմի՝ սակագնային պարտավորությունների ժամանակացույցով սահմանված ռեժիմից ոչ պակաս բարենպաստ ռեժիմ:

2. Մյուս Կողմի սակագնային պարտավորությունների ժամանակացույցի մեջ նկարագրված՝ Կողմի տարածքի ծագում ունեցող ապրանքները, այդ մյուս Կողմի տարածք ներմուծման դեպքում եւ հաշվի առնելով այդ ժամանակացույցի մեջ սահմանված ժամկետները, պայմանները եւ պահանջները, ազատվում են սակագնային պարտավորությունների համապատասխան ժամանակացույցի մեջ սահմանված չափը գերազանցող մաքսատուրքերից: Այդ ապրանքները ազատվում են նաեւ ցանկացած այլ տուրքից կամ ցանկացած տեսակի վճարից, որոնք կիրառվում են ներմուծման առնչությամբ կամ ներմուծման հետ կապված, եւ որոնք գերազանցում են ժամանակացույցի մեջ սահմանված տուրքերը եւ վճարները:

3. Սույն հոդվածով որեւէ Կողմի չի արգելվում ցանկացած ապրանքի ներմուծման առնչությամբ ցանկացած պահի սահմանել՝

ա) ներքին այն հարկերին համարժեք վճար, որը, սույն համաձայնագրի 2.2 հոդվածի 2-րդ կետի դրույթներին համապատասխան, սահմանվել է հայրենական արտադրության համանման ապրանքների առնչությամբ կամ ցանկացած այնպիսի դետալի առնչությամբ, որից ամբողջությամբ կամ մասնակիորեն արտադրվել կամ պատրաստվել է ներմուծվող ապրանքը.

բ) սույն համաձայնագրի 3-րդ գլխին համապատասխան սահմանվող ցանկացած տուրք.

գ) մատուցված ծառայությունների արժեքին համարժեք վճարներ կամ այլ վճարումներ:

4. Եթե Կողմի տարածքի ծագում ունեցող ապրանքի համար սույն համաձայնագրի 1-ին հավելվածի համաձայն կիրառվող արտոնյալ մաքսատուրքի դրույքաչափն ավելի բարձր է, քան ազգերի առավել բարենպաստության ռեժիմով նույն ապրանքի համար կիրառվող մաքսատուրքի դրույքաչափը, ապա այդպիսի ապրանքի համար կիրառվում է ազգերի առավել բարենպաստության ռեժիմով սահմանված դրույքաչափը:

Հողված 2.4

Կիրառվող սակագնային անվանացանկի փոփոխությունները

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ ՆՀ-ի ու դրա նկարագրերի հիման վրա կազմված՝ իր կողմից կիրառվող անվանացանկում արվող ցանկացած փոփոխություն կատարվի՝ առանց խախտելու սույն համաձայնագրի 1-ին հավելվածին համապատասխան սահմանված սակագնային զիջումները:

2. ՆՀ-ի ու դրա նկարագրերի հիման վրա կազմված՝ ԵԱՏՄ-ի կողմից կիրառվող անվանացանկի եւ ՆՀ-ի ու դրա նկարագրերի հիման վրա կազմված՝ Իրանի Իսլամական Հանրապետության կողմից կիրառվող անվանացանկի այդ փոփոխությունը պետք է կատարվի համապատասխանաբար Եվրասիական տնտեսական հանձնաժողովի եւ Իրանի Իսլամական Հանրապետության կողմից: Կողմերը ՆՀ-ի եւ դրա նկարագրերի հիման վրա կազմված՝ կիրառվող անվանացանկի ցանկացած փոփոխություն հրապարակում են ժամանակին, բոլորին հասանելի վայրում, ինչպես նաեւ յուրաքանչյուր տարի միմյանց տեղեկացնում են այդպիսի փոփոխությունների մասին:

Հոդված 2.5

Ներմուծման եւ արտահանման հետ կապված վճարները, վճարումները եւ ձեւակերպումները⁸

1. ա) Բոլոր վճարներն ու ցանկացած բնույթի վճարում (բացի սույն համաձայնագրի 2.2 հոդվածի գործողության ոլորտի շրջանակներում ներմուծման ու արտահանման տուրքերից եւ հարկերից), որոնք Կողմերի կողմից կիրառվում են ներմուծման կամ արտահանման նկատմամբ կամ կապակցությամբ, սահմանափակվում են մատուցված ծառայությունների մոտավոր արժեքի չափով եւ չեն համարվում միջնորդավորված աջակցություն հայրենական արտադրության ապրանքներին կամ հարկաբյուջետային նպատակով ներմուծման կամ արտահանման հարկմանը:

բ) Կողմերն ընդունում են սույն կետի «ա» ենթակետում նշված վճարների ու վճարումների քանակն ու բազմազանությունը կրճատելու անհրաժեշտությունը:

գ) Կողմերն ընդունում են նաեւ ներմուծման ու արտահանման ձեւակերպումները պարզեցնելու եւ դրանց ծավալները նվազագույնին հասցնելու, ինչպես նաեւ ներմուծմանն ու արտահանմանն առնչվող փաստաթղթերին ներկայացվող պահանջները կրճատելու ու պարզեցնելու անհրաժեշտությունը⁹:

2. Կողմը մյուս Կողմի պահանջով վերանայում է իր օրենքների ու կարգավորումների գործողությունը՝ սույն հոդվածի դրույթների լույսի ներքո:

⁸ Չնայած այն փաստին, որ սույն համաձայնագրի 2.5 հոդվածի գործողության շրջանակը որպես այդպիսին չի ընդգրկում արժույթների բազմակի փոխարժեքների կիրառումը, սույն համաձայնագրի 2.5 հոդվածի 1-ին եւ 4-րդ կետերով չի խրախուսվում արժույթային հարկերի կամ վճարների կիրառումը՝ որպես արժույթների բազմակի փոխարժեքների գործելակերպի իրականացման միջոց. եթե, այնուամենայնիվ, Կողմը, ստանալով Արժույթի միջազգային հիմնադրամի հավանությունը, վճարային հաշվեկշռի համար գանձում է արժույթների բազմակի փոխարժեքների վճարներ, ապա սույն համաձայնագրի ոչ մի դրույթով չի բացառվում Կողմի կողմից արժույթային վերահսկողության կամ արժույթային սահմանափակումների կիրառումը՝ Արժույթի միջազգային հիմնադրամի համաձայնագրի հոդվածներին կամ մյուս Կողմի հետ Կողմի՝ փոխարժեքների վերաբերյալ հատուկ համաձայնագրի հոդվածներին համապատասխան:

⁹ Դա սույն համաձայնագրի 2.5 հոդվածի 1-ին կետին կհամապատասխանի այն դեպքում, երբ մի Կողմի տարածքից մյուս Կողմի տարածք ապրանքների ներմուծման դեպքում ապրանքների ծագման սերտիֆիկատների տրամադրում պահանջվի միայն այն դեպքերում, երբ դա խիստ անհրաժեշտ է:

3. Մաքսային կարգավորումների կամ ընթացակարգային պահանջների աննշան խախտումների համար Կողմերն էական տուգանային պատժամիջոցներ չեն կիրառում: Մասնավորապես, այն տուգանային պատժամիջոցները, որոնք նշանակվում են մաքսային փաստաթղթերի մեջ ցանկացած այնպիսի բացթողման կամ սխալի համար, որը հեշտ է ուղղել, եւ որն ակնհայտորեն արվել է առանց խարդախ մտադրության կամ կոպիտ անփութության, չեն գերազանցում բացառապես նախազգուշացման ձեւով կիրառվող միջոցներին:

4. Սույն հոդվածի դրույթները տարածվում են այն վճարների, վճարումների, ձեւակերպումների ու պահանջների վրա, որոնք սահմանվում են իշխանության մարմինների կողմից ներմուծման եւ արտահանման, ինչպես նաեւ հետեւյալի առնչությամբ.

ա) հյուպատոսական գործողություններ, օրինակ՝ հյուպատոսական ապրանքագրեր ու սերտիֆիկատներ.

բ) քանակական սահմանափակումներ.

գ) լիցենզավորում.

դ) արժույթային վերահսկողություն.

ե) վիճակագրական ծառայություններ.

զ) փաստաթղթեր, փաստաթղթավորում եւ սերտիֆիկացում.

է) վերլուծություն եւ տեսչական ստուգում. եւ

ը) կարանտին, սանիտարական մաքրում եւ ախտահանում:

5. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ իր իրավասու մարմիններն իրենց պաշտոնական կայքերում հրապարակեն տեղեկատվություն՝ իրենց կողմից կիրառվող վճարների ու վճարումների վերաբերյալ:

Հոդված 2.6

Առեւտրային կարգավորումների իրականացումը

1. Կողմերի կողմից գործողության մեջ դրվող ընդհանուր կիրառության օրենքները եւ կարգավորումները, դատական վճիռներն ու վարչական որոշումները, որոնք կապված են մաքսային նպատակներով ապրանքների դասակարգման կամ արժեքի որոշման կամ տուրքերի, հարկերի կամ այլ վճարումների դրույքաչափերի, ինչպես նաեւ ներմուծմանը կամ արտահանմանը կամ դրանց դիմաց վճարումների փոխանցմանը ներկայացվող պահանջների, սահմանափակումների կամ արգելքների հետ, կամ որոնք ազդեցություն ունեն այդ ապրանքների վաճառքի, բաշխման, փոխադրման, ապահովագրության, պահեստավորման, զննման, ցուցադրման, մշակման, համակցման կամ այլ օգտագործման վրա, անհապաղ հրապարակվում են այնպես, որ իշխանություններն ու առեւտրային ընկերությունները կարողանան ծանոթանալ դրանց: Հրապարակվում են նաեւ միջազգային առեւտրի քաղաքականության վրա ազդեցություն ունեցող համաձայնագրերը, որոնք գործում են Կողմերի կառավարության կամ պետական գերատեսչության միջեւ: Սույն կետի դրույթներով Կողմերից չի պահանջվում բացահայտել այնպիսի գաղտնի տեղեկատվություն, որի բացահայտումը կխոչընդոտի օրենքի կատարումը կամ այլ կերպ կհակասի հանրային շահին կամ կհանգեցնի թե՛ պետական, թե՛ մասնավոր առանձին ձեռնարկությունների օրինական կոմերցիոն շահերի ոտնահարմանը:

2. Կողմերի ընդունած ընդհանուր կիրառության ոչ մի միջոց, որը կապված է ներմուծման տուրքի կամ այլ վճարումների դրույքաչափի՝ սահմանված եւ մշտական գործելակերպին համապատասխան բարձրացման հետ կամ ներմուծման կամ դրանց դիմաց վճարումների փոխանցման նկատմամբ նոր կամ ավելի ծանրաբեռնող պահանջի, սահմանափակման կամ արգելքի կիրառման հետ, ուժի մեջ չի մտնում մինչեւ պաշտոնապես հրապարակվելը:

3. ա) Յուրաքանչյուր Կողմ միատեսակ, անկողմնակալ եւ ողջամիտ կերպով կիրառում է սույն հոդվածի 1-ին կետում նշված իր բոլոր օրենքները,

կարգավորումները, վճիռներն ու որոշումները:

բ) Յուրաքանչյուր Կողմ առավելագույնս կարճ ժամկետում պահպանում կամ ստեղծում է դատական, արբիտրաժային կամ վարչական տրիբունալներ կամ ընթացակարգեր, *ի թիվս այլնի*, մաքսային հարցերին առնչվող վարչական գործողությունների անհապաղ վերանայման եւ շտկման նպատակով: Այդպիսի տրիբունալները կամ ընթացակարգերն անկախ են այն մարմիններից, որոնց վերապահված է վարչարարության իրականացումը, եւ նրանց որոշումները կատարվում են այդ մարմինների կողմից, ու վերջիններս իրենց գործելակերպում առաջնորդվում են այդ որոշումներով, եթե միայն ներմուծողների կողմից բողոք ներկայացնելու համար սահմանված ժամանակահատվածի ընթացքում վերին ատյանի դատարան կամ տրիբունալ վերաքննիչ բողոք չի ներկայացվում՝ պայմանով, որ այդ մարմնի կենտրոնական ղեկավարությունը կարող է միջոցներ ձեռնարկել մեկ ուրիշ վարույթի շրջանակներում այդ հարցը քննելու համար, եթե առկա են բավարար պատճառներ՝ ենթադրելու, որ այդ որոշումը չի համապատասխանում օրենքի սահմանված սկզբունքներին կամ իրական փաստերին:

գ) Սույն կետի «բ» ենթակետի դրույթներով չի պահանջվում սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվի դրությամբ Կողմի տարածքում գործող այն ընթացակարգերի վերացում կամ փոխարինում, որոնցով փաստացիորեն նախատեսվում է վարչական գործողությունների օբյեկտիվ եւ անկողմնակալ վերանայում, նույնիսկ եթե այդպիսի ընթացակարգերն ամբողջովին կամ միայն ձեւականորեն անկախ չեն այն մարմիններից, որոնց վերապահված է վարչարարության իրականացումը: Այդպիսի ընթացակարգեր կիրառող ցանկացած Կողմ հարցման հիման վրա տրամադրում է ամբողջական տեղեկատվություն դրանց վերաբերյալ, որպեսզի մյուս Կողմը կարողանա սահմանել՝ արդյոք այդ ընթացակարգերը համապատասխանում են սույն ենթակետի պահանջներին:

Հոդված 2.7

Քանակական սահմանափակումները¹⁰

1. Բացի քվոտաների միջոցով, ներմուծման կամ արտահանման լիցենզիաներով կամ այլ միջոցներով գործողության մեջ դրված տուրքերից, հարկերից կամ այլ վճարումներից՝ ոչ մի արգելք կամ սահմանափակում չի սահմանվում կամ չի պահպանվում ցանկացած Կողմի կողմից՝ ցանկացած այլ Կողմի տարածքից որեւէ ապրանքի ներմուծման կամ ցանկացած այլ Կողմի տարածքի համար նախատեսված որեւէ ապրանքի արտահանման կամ արտահանման նպատակով վաճառքի դեպքում:

2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները չեն տարածվում՝

ա) արտահանման արգելքների կամ սահմանափակումների վրա, որոնք ժամանակավորապես կիրառվում են պարենային ապրանքների կամ արտահանող Կողմի համար կարեւորություն ունեցող այլ ապրանքների սուր պակասուրդը կանխելու կամ նվազեցնելու համար.

բ) արտահանման եւ ներմուծման արգելքների կամ սահմանափակումների վրա, որոնք անհրաժեշտ են միջազգային առեւտրում ապրանքների դասակարգման, տեսակավորման կամ մարքեթինգի նպատակով ստանդարտների կամ կարգավորումների կիրառման համար.

գ) ցանկացած ձեւով¹¹ ներմուծվող ցանկացած գյուղատնտեսական կամ ձկնատնտեսական ապրանքի ներմուծման սահմանափակումների վրա, որոնք անհրաժեշտ են իշխանությունների կողմից իրականացվող այն միջոցների կատարման համար, որոնք գործում են՝

¹⁰ Սույն համաձայնագրի 2.7 ողջ հոդվածում «ներմուծման սահմանափակումներ» կամ «արտահանման սահմանափակումներ» եզրույթները ներառում են պետության կողմից իրականացվող առեւտրային գործառնությունների միջոցով կիրառվող սահմանափակումները:

¹¹ Սույն համաձայնագրի 2.7 հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետում «ցանկացած ձեւով» եզրույթը վերաբերում է մշակման սկզբնական փուլում գտնվող և դեռեւս արագ փչացող համարվող միեւնույն ապրանքներին, որոնք ուղղակիորեն մրցում են թարմ ապրանքների հետ եւ ազատ ներմուծման դեպքում թարմ ապրանքների նկատմամբ սահմանափակումները անարդյունավետ են դարձնում:

- i. շուկայահանման կամ արտադրության համար թույլատրված՝ հայրենական արտադրության համանման ապրանքների քանակությունը սահմանափակելու համար, կամ եթե համանման ապրանքների՝ զգալի ծավալով հայրենական արտադրություն չկա, ապա հայրենական արտադրության այնպիսի ապրանքների քանակությունը սահմանափակելու համար, որոնք ուղղակիորեն կարող են փոխարինվել ներմուծվող ապրանքով, կամ
- ii. հայրենական արտադրության համանման ապրանքների ժամանակավոր ավելցուկը վերացնելու համար, կամ եթե համանման ապրանքների՝ զգալի ծավալով հայրենական արտադրություն չկա, ապա հայրենական արտադրության այնպիսի ապրանքների քանակությունը վերացնելու համար, որոնք ուղղակիորեն կարող են փոխարինվել ներմուծվող ապրանքով՝ ավելցուկը հայրենական սպառողների որոշ խմբերի համար անվճար կամ ընթացիկ շուկայական գներից ավելի ցածր գներով հասանելի դարձնելու միջոցով, կամ
- iii. կենդանական ծագում ունեցող ցանկացած այն ապրանքների արտադրության համար թույլատրելի քանակությունը սահմանափակելու համար, որոնց արտադրությունն ուղղակիորեն, ամբողջությամբ կամ հիմնականում կախված է ներմուծվող հումքային ապրանքից, եթե տվյալ հումքային ապրանքի հայրենական արտադրությունը հարաբերականորեն աննշան է:

Ցանկացած Կողմ, որը ցանկացած ապրանքի ներմուծման սահմանափակումներ է կիրառում սույն կետի «գ» ենթակետին համապատասխան, համընդհանուր տեղեկացման համար հրապարակում է հետագայում որոշակի ժամանակահատվածի ընթացքում ներմուծման համար թույլատրվող ապրանքի ընդհանուր քանակությունը կամ արժեքը եւ այդ քանակության կամ արժեքի ցանկացած փոփոխություն: Բացի այդ, վերոնշյալ «i» ենթակետի համաձայն կիրառվող ցանկացած սահմանափակման արդյունքում

չպետք է կրճատվի հայրենական արտադրության ընդհանուր ծավալի նկատմամբ ներմուծման ընդհանուր ծավալն այն հարաբերակցության համեմատությամբ, որը, ինչպես ողջամտորեն ակնկալվում է, սահմանափակումների բացակայության դեպքում կարող է դրանց միջև գոյություն ունենալ: Այդ հարաբերակցությունը որոշելիս Կողմը պատշաճ ուշադրություն է դարձնում այն հարաբերակցությանը, որը գերակշռող է եղել նախորդ ներկայացուցչական ժամանակահատվածի ընթացքում, ինչպես նաև ցանկացած հատուկ գործոնի¹², որը կարող է ազդել կամ ազդում է համապատասխան ապրանքների առետրի վրա:

3. Կողմը մյուս Կողմի տարածքից որեւէ ապրանքի ներմուծման կամ մյուս Կողմի տարածքի համար նախատեսված որեւէ ապրանքի արտահանման համար ոչ մի արգելք կամ սահմանափակում չի կիրառում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ բոլոր երրորդ երկրներից համանման ապրանքների ներմուծումը կամ բոլոր երրորդ երկրներ համանման ապրանքների արտահանումը նույն կերպ արգելված կամ սահմանափակված է:

4. Ցանկացած ապրանքի ներմուծման սահմանափակումներ կիրառելիս Կողմերը ձգտում են այդ ապրանքի առետուրը բաշխել այնպես, որ հնարավորինս շատ ապահովվի մասնակցության այն ծավալը, որը մյուս Կողմն ակնկալում է ունենալ այդպիսի սահմանափակումների բացակայության դեպքում, եւ այդ նպատակով պահպանում է հետեւյալ դրույթները.

ա) գործնականում իրագործելի լինելու դեպքում սահմանվում են քվոտաներ, որոնք ներկայացնում են ներմուծման թույլատրելի ընդհանուր քանակությունը (անկախ այն բանից՝ դրանք բաշխվում են մատակարար երկրների միջև, թե՛ ոչ), եւ ուղարկվում է դրանց չափի վերաբերյալ ծանուցում՝ սույն հոդվածի 5-րդ կետի «բ» ենթակետին համապատասխան.

բ) այն դեպքերում, երբ քվոտաները գործնականում իրագործելի չեն,

¹² «Հատուկ գործոններ» եզրույթը ներառում է հայրենական ու օտարերկրյա արտադրողների միջև կամ տարբեր օտարերկրյա արտադրողների միջև արտադրության հարաբերական արդյունավետության մակարդակով փոփոխություններ, սակայն ոչ այնպիսի փոփոխություններ, որոնք արհեստականորեն առաջացել են սույն համաձայնագրով չթույլատրված եղանակներով:

սահմանափակումները կարող են կիրառվել ներմուծման լիցենզիաների կամ թույլտվությունների միջոցով՝ առանց քվոտայի.

գ) Կողմերը սույն կետի «դ» ենթակետին համապատասխան բաշխվող գործող քվոտաների կիրառման նպատակներից բացի այլ նպատակով չեն պահանջում, որ ներմուծման լիցենզիաները կամ թույլտվություններն օգտագործվեն կոնկրետ երկրից կամ աղբյուրից համապատասխան ապրանքները ներմուծելու համար.

դ) այն դեպքերում, երբ քվոտան բաշխվում է մատակարար երկրների միջև, սահմանափակումներ կիրառող Կողմը կարող է ձգտել համաձայնություն ձեռք բերել տվյալ ապրանքի մատակարարման մեջ շոշափելի շահ ունեցող երկրների, ներառյալ՝ մյուս Կողմի հետ՝ քվոտայում մասնաբաժինների բաշխման հետ կապված: Այն դեպքերում, երբ այդ մեթոդը ողջամտորեն գործնականում կիրառելի չէ, տվյալ Կողմը մյուս Կողմին է տրամադրում ապրանքի ներմուծման ամբողջ քանակությունից կամ արժեքից այնպիսի մասնաբաժիններ, որոնք այդ Կողմի կողմից մատակարարվել են ներկայացուցչական ժամանակահատվածին նախորդող ժամանակահատվածի ընթացքում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ցանկացած հատուկ գործոնի վրա, որը կարող էր կամ կարող է ազդել այդ ապրանքի առևտրի վրա: Չեն սահմանվում այնպիսի պայմաններ կամ ձեակերպումներ, որոնք ցանկացած Կողմի կխոչընդոտեն ամբողջությամբ օգտագործել մատակարարումների ցանկացած այդպիսի ընդհանուր քանակությունից կամ արժեքից իրեն տրամադրված մասնաբաժինը՝ պայմանով, որ ներմուծումը կատարվում է այն սահմանված ժամանակահատվածի ընթացքում, որին կարող է վերաբերել քվոտան¹³:

5. ա) Այն դեպքերում, երբ ներմուծման լիցենզիաները տրվում են

¹³ Որպես կանոն, «կոմերցիոն նկատառումներով» բառակապակցությունը ոչ մի կերպ չի նշվել քվոտաների բաշխման համար, քանի որ համարվում է, որ իշխանության մարմինների կողմից դրա կիրառումը ոչ միշտ է նպատակահարմար: Բացի այդ, այն դեպքերում, երբ դա նպատակահարմար է, Կողմը կարող է օգտագործել այդ նկատառումները համաձայնություն ձեռք բերելու գործընթացում՝ սույն հոդվածի 4-րդ կետի առաջին նախադասության մեջ ներկայացված ընդհանուր կանոնին համապատասխան:

ներմուծման սահմանափակումների առնչությամբ, սահմանափակումներ կիրառող Կողմը մյուս Կողմի պահանջով տրամադրում է ամբողջական համապատասխան տեղեկատվություն՝ սահմանափակումների կատարման, վերջերս տրված ներմուծման լիցենզիաների կիրարկման եւ այդ լիցենզիաները մատակարար երկրների միջեւ բաշխելու վերաբերյալ՝ պայմանով, որ ներմուծող կամ մատակարարող ձեռնարկությունների անվանումների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու պարտավորություն չկա:

բ) Քվոտաների սահմանում ներառող՝ ներմուծման սահմանափակումների դեպքում սահմանափակումներ կիրառող Կողմը համընդհանուր ծանոթացման համար հրապարակում է ապրանքների ընդհանուր քանակությունը կամ արժեքը կամ այն ապրանքները, որոնց ներմուծումը կթույլատրվի որոշակի հետագա ժամանակահատվածի ընթացքում, ինչպես նաեւ այդ քանակության կամ արժեքի ցանկացած փոփոխություն: Համապատասխան ապրանքների ցանկացած մատակարարում, որը համընդհանուր ծանուցումը հրապարակելու պահի դրությամբ իրականացվում է տրանսպորտային փոխադրման ձեռով, ներմուծումից չի հանվում՝ *պայմանով*, որ հնարավորության դեպքում այդ մատակարարումները հաշվի կառնվեն՝ հիմք ընդունելով համապատասխան ժամանակահատվածի ընթացքում ներմուծման համար թույլատրված քանակությունը, ինչպես նաեւ անհրաժեշտության դեպքում՝ հաջորդ ժամանակահատվածի կամ ժամանակահատվածների ընթացքում ներմուծման համար թույլատրված ծավալները, ինչպես նաեւ այն *պայմանով*, որ եթե որեւէ Կողմ սահմանված կարգով վերացնի այդ սահմանափակումներն այն ապրանքների համար, որոնք սպառման համար ստացվել են կամ սպառման համար պահեստներից դուրս են բերվել այդ համընդհանուր ծանուցումը հրապարակելու օրվանից 30 օրվա ընթացքում, ապա այդպիսի գործելակերպը կդիտարկվի որպես սույն ենթակետին ամբողջությամբ համապատասխանող գործելակերպ:

գ) Մատակարար երկրների միջեւ բաշխված քվոտաների դեպքում սահմանափակումներ կիրառող Կողմն անհապաղ ծանուցում է մյուս Կողմին

քվտայի այն մասնաբաժինների մասին, որոնք տվյալ պահի դրությամբ բաշխվել են տարբեր մատակարար երկրներին՝ ըստ քանակության կամ արժեքի, եւ հրապարակում է այդ մասին ծանուցում՝ համընդհանուր ծանոթացման համար:

6. Սույն հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետին կամ 4-րդ կետի «դ» ենթակետին համապատասխան կիրառվող սահմանափակումների դեպքում որեւէ ապրանքի համար ներկայացուցչական ժամանակահատվածի ընտրությունը եւ այդ ապրանքների առետրի վրա ազդող որեւէ հատուկ գործոնի գնահատումն ի սկզբանե կատարվում են սահմանափակում կիրառող Կողմի կողմից՝ *պայմանով*, որ այդ Կողմը մյուս Կողմի պահանջով անհապաղ խորհրդակցի մյուս Կողմի հետ՝ սահմանվող մասնաբաժինը կամ ընտրված հիմնական ժամանակահատվածը ճշգրտելու անհրաժեշտությանը կամ համապատասխան հատուկ գործոնները վերագնահատելու անհրաժեշտությանը կամ համապատասխան քվտայի բաշխման կամ դրա անսահմանափակ օգտագործման վերաբերյալ միակողմանիորեն սահմանված պայմանները, ձեւակերպումները կամ մյուս դրույթները վերացնելու անհրաժեշտությանն առնչվող հարցի շուրջ:

7. Սույն հոդվածի դրույթները կիրառվում են ցանկացած Կողմի կողմից սահմանված կամ պահպանվող ցանկացած սակագնային քվտայի նկատմամբ, եւ կիրառելիության սահմաններում սույն հոդվածի սկզբունքները տարածվում են նաեւ արտահանման սահմանափակումների վրա:

Հոդված 2.8

Տարանցման ազատությունը

1. Ապրանքները (ներառյալ ուղեբեռը), ինչպես նաև նավերն ու մյուս տրանսպորտային միջոցները համարվում են Կողմի տարածքով տարանցվող, եթե փոխադրումն այդ տարածքով փոխաբեռնման, պահեստավորման, խմբաքանակների մասնատման կամ տրանսպորտի տեսակի փոփոխման առկայությամբ կամ բացակայությամբ ամբողջական երթուղու միայն մի մասն է կազմում, որն սկսվում է ավարտվում է այն Կողմի սահմաններից դուրս, որի տարածքով բեռը տեղափոխվում է: Այդ տեսակի տեղափոխումը սույն հոդվածում սահմանվում է որպես «տարանցիկ փոխադրումներ»:

2. Սահմանվում է յուրաքանչյուր Կողմի տարածքով տարանցման ազատություն այն երթուղիներով, որոնք առավել հարմարեցված են միջազգային տարանցման համար, մյուս Կողմի տարածքներ կամ տարածքներից տարանցիկ փոխադրումների համար: Չպետք է արվի որեւէ տարբերակում, որը հիմնված է նավերի դրոշի, ծագման վայրի, մեկնման, մուտքի, ելքի կամ նշանակման վայրի, ինչպես նաև ապրանքների, նավերի կամ տրանսպորտային այլ միջոցների սեփականության հետ կապված այլ հանգամանքների վրա:

3. Կողմը կարող է պահանջել, որ իր տարածքով տարանցիկ փոխադրումները մուտք գործեն համապատասխան մաքսատուն, սակայն բացի կիրառվող մաքսային օրենսդրությանը եւ կարգավորումներին անհամապատասխանության դեպքերից՝ մյուս Կողմի տարածքից կամ տարածքով իրականացվող այդպիսի փոխադրումները չեն ենթարկվում անհարկի ուշացումների կամ սահմանափակումների եւ ազատվում են տարանցման կապակցությամբ հարկվող մաքսատուրքերից եւ բոլոր տարանցիկ կամ այլ վճարներից՝ բացի փոխադրման կամ այն վճարներից, որոնք համադրելի են տարանցման կամ մատուցվող ծառայությունների արժեքի հետ կապված վարչական ծախսերի հետ:

4. Կողմի կողմից մյուս Կողմի տարածք կամ տարածքից տարանցիկ փոխադրումների համար սահմանված բոլոր վճարներն ու կարգավորումները պետք է ողջամիտ լինեն՝ հաշվի առնելով փոխադրման պայմանները:

5. Տարանցման հետ կապված բոլոր վճարների, կարգավորումների ու ձեռակերպումների մասով յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի տարածք կամ տարածքից տարանցիկ փոխադրումների առնչությամբ տրամադրում է ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմը, որը տրամադրվում է ցանկացած երրորդ երկիր կամ երրորդ երկրից տարանցիկ փոխադրման առնչությամբ¹⁴:

6. Յուրաքանչյուր Կողմ այլ Կողմի տարածքով տարանցման մեջ գտնվող ապրանքների առնչությամբ տրամադրում է ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմը, որը կտրամադրվեր այդպիսի ապրանքների առնչությամբ, եթե դրանք իրենց ծագման վայրից նշանակման վայր փոխադրվեին՝ առանց այդ մյուս Կողմի տարածքով անցնելու: Կողմը, սակայն, ազատ է պահպանելու ուղղակի բեռնառաքման իր պահանջները, որոնք գոյություն ունեն սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվի դրությամբ՝ ցանկացած ապրանքի առնչությամբ, որի դեպքում այդ ուղղակի բեռնառաքումը պարտադիր պայման է արտոնյալ դրույքաչափերով ապրանքների ներմուծման իրավունք ստանալու համար, կամ դա առնչություն ունի տուրքերի գանձման նպատակով Կողմի կողմից սահմանված գնահատման մեթոդի հետ:

7. Սույն հոդվածի դրույթները չեն կիրառվում օդանավերի տարանցիկ տեղաշարժման նկատմամբ, սակայն կիրառվում են ապրանքների (այդ թվում՝ ուղեբեռի) օդային տարանցման առնչությամբ:

¹⁴ Փոխադրման վճարների դեպքում սույն համաձայնագրի 2.8 հոդվածի 5-րդ կետում նշված սկզբունքը վերաբերում է նմանատիպ պայմաններում նույն երթուղով փոխադրվող համանման ապրանքներին:

Հոդված 2.9

Ապրանքների առևտրի հարցերով զբաղվող կոմիտեն

1. Սույնով Կողմերը ստեղծում են Ապրանքների առևտրի հարցերով զբաղվող կոմիտե (այսուհետ՝ Ապրանքների կոմիտե), որը բաղկացած է յուրաքանչյուր Կողմի ներկայացուցիչներից:

2. Ապրանքների կոմիտեի հանդիպումները հրավիրվում են որեւէ Կողմի պահանջով՝ սույն գլխից եւ սույն համաձայնագրի 3-րդ, 6-րդ եւ 7-րդ գլուխներից բխող ցանկացած հարց քննարկելու նպատակով:

3. Ապրանքների կոմիտեին վերապահված են հետևյալ գործառույթները.

ա) վերահսկել եւ մշտադիտարկել սույն հոդվածի 2-րդ կետում նշված գլուխների կիրարկումն ու գործողությունը,

բ) վերանայել եւ անհրաժեշտության դեպքում Համատեղ կոմիտե ներկայացնել սույն գլխի դրույթներում եւ սույն համաձայնագրի 1-ին հավելվածում նշված՝ սակագնային պարտավորությունների ժամանակացույցներում կատարվող ցանկացած փոփոխության մասին համապատասխան առաջարկություններ՝ շուկայի հասանելիությունը խթանելու եւ դյուրացնելու համար,

գ) սահմանել եւ առաջարկել միջոցներ՝ ծագող ցանկացած խնդիր լուծելու համար,

դ) Համատեղ կոմիտե ներկայացնել սույն գլխի կիրարկումից բխող որեւէ այլ հարցի վերաբերյալ եզրահանգումներ:

Հոդված 2.10

Հանձնառությունները չեղարկելը կամ խախտելը

1. Եթե որեւէ Կողմ գտնում է, որ սույն համաձայնագրին համապատասխան ուղղակիորեն կամ անուղղակիորեն իր համար նախատեսված որեւէ օգուտ վերանում կամ նվազում է, կամ որ Համաձայնագրի որեւէ նպատակի ձեռքբերումը խոչընդոտվում է՝

ա) մյուս Կողմի կողմից սույն համաձայնագրին համապատասխան ստանձնած իր հանձնառությունները չկատարելու, կամ

բ) մյուս Կողմի կողմից սույն համաձայնագրի դրույթներին հակասող կամ չհակասող որեւէ միջոց կիրառելու, կամ

գ) ցանկացած այլ իրավիճակի արդյունքում,

Կողմը տվյալ հարցը բավարար չափով կարգավորելու նպատակով կարող է մյուս Կողմին տրամադրել գրավոր պարզաբանումներ կամ առաջարկներ: Այն Կողմը, որին դրանք ներկայացվել են, բարյացակամորեն ուսումնասիրում է իրեն ներկայացված պարզաբանումները կամ առաջարկները:

2. Եթե 60 օրը չգերազանցող ողջամիտ ժամկետի ընթացքում Կողմերի կողմից բավարար կարգավորում չի իրականացվում, կամ եթե առաջացած դժվարություններն իրենց բնույթով դասվում են սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետում նշված դժվարություններին, ապա հարցը կարող է փոխանցվել Համատեղ կոմիտեի ուսումնասիրմանը: Համատեղ կոմիտեն անհապաղ ուսումնասիրում է այդ առնչությամբ իրեն փոխանցված ցանկացած հարց եւ տալիս է համապատասխան հանձնարարականներ կամ համապատասխան դեպքերում տվյալ հարցի վերաբերյալ որոշում է կայացնում:

3. Եթե Համատեղ կոմիտեն գտնում է, որ առկա հանգամանքները բավականաչափ լուրջ են այդ գործողությունը հիմնավորելու համար, ապա այն կարող է Կողմին լիազորել դադարեցնելու մյուս Կողմի նկատմամբ այդպիսի

զիջումների եւ սույն համաձայնագրին համապատասխան ստանձնած այն մյուս պարտավորությունների կիրառումը, որոնք կոմիտեն անհրաժեշտ կհամարի համապատասխան հանգամանքներում:

4. Եթե Համատեղ կոմիտեի միջոցով Կողմերի միջեւ համաձայնություն ձեռք չի բերվել, եւ քննարկվող հարցը դեռ մնում է բաց, ապա շահագրգիռ Կողմը կարող է միակողմանիորեն կասեցնել զիջումները՝ չհակադրվելով սույն համաձայնագրի 8-րդ գլխին համապատասխան այդ հարցի շուրջ քննություն նախաձեռնելու մյուս Կողմի իրավունքին:

5. Սույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ զիջումների կասեցման օրվանից 60 օրվա ընթացքում շահագրգիռ Կողմը գրավոր ծանուցում է մյուս Կողմին այդ կասեցման մասին:

Հոդված 2.11

Պետական առևտրային ձեռնարկությունները

1.¹⁵ ա) Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է, որ եթե հիմնում կամ պահպանում է պետական ձեռնարկություն՝ անկախ դրա գտնվելու վայրից, կամ եթե որեւէ ձեռնարկության պաշտոնապես կամ փաստացիորեն տրամադրում է բացառիկ կամ հատուկ արտոնություններ¹⁶, ապա այդ ձեռնարկությունն արտահանման կամ

¹⁵ Մարքեթինգի հարցերով այն խորհուրդների գործունեությունը, որոնք ստեղծվում են Կողմերի կողմից, եւ որոնք զբաղվում են գնումների կամ վաճառքի գործունեությամբ, կարգավորվում է սույն համաձայնագրի 2.11 հոդվածի 1-ին կետի «ա» եւ «բ» ենթակետերի դրույթներով: Մարքեթինգի հարցերով այն խորհուրդների գործունեությունը, որոնք ստեղծվում են Կողմերի կողմից, եւ որոնք չեն զբաղվում գնումների կամ վաճառքի գործունեությամբ, այլ սահմանում են մասնավոր առևտրի ոլորտը կարգավորող նորմատիվ ակտեր, կարգավորվում է սույն համաձայնագրի համապատասխան հոդվածներով: Պետական ձեռնարկության կողմից տարբեր շուկաներում ապրանքների վաճառքի համար տարբեր գների սահմանումը չի բացառվում սույն հոդվածի դրույթներով՝ պայմանով, որ այդ տարբեր գները սահմանվեն կոմերցիոն նկատառումներով՝ արտահանման շուկաներում առաջարկի եւ պահանջարկի պայմանները կատարելու համար:

¹⁶ Արտաքին առևտուր իրականացնելիս որակի եւ արդյունավետության ստանդարտների ապահովման համար կառավարության կողմից ձեռնարկվող միջոցները կամ այն արտոնությունները, որոնք տրամադրվում են ազգային բնական ռեսուրսների օգտագործման համար, սակայն իշխանություններին չեն լիազորում վերահսկողություն իրականացնել համապատասխան ձեռնարկության առևտրային գործունեության նկատմամբ, չեն համարվում «բացառիկ կամ հատուկ արտոնություններ»:

ներմուծման հետ կապված գնումների կամ վաճառքի ընթացքում գործում է խտրականության բացառման այն ռեժիմի ընդհանուր սկզբունքներին համապատասխան, որը սույն համաձայնագրով սահմանված է անհատ ձեռնարկատերերի կողմից իրականացվող ներմուծման կամ արտահանման վրա ազդող՝ կառավարության կողմից ձեռնարկվող միջոցների համար:

բ) Սույն կետի «ա» ենթակետի դրույթները պետք է հասկանալ որպես պահանջ, որ այդ ձեռնարկությունները, պատշաճորեն հաշվի առնելով սույն համաձայնագրի մյուս դրույթները, այդ գնումները եւ վաճառքն իրականացնեն՝ ելնելով բացառապես կոմերցիոն հաշվարկներից¹⁷, ներառյալ՝ գնման կամ վաճառքի գինը, որակը, մատչելիությունը, մրցունակությունը, փոխադրումը եւ այլ պայմաններ, ինչպես նաեւ մյուս Կողմի ձեռնարկությունների համար ստեղծեն համարժեք հնարավորություն՝ գործարար գործելակերպին համապատասխան այդ գնումներում կամ վաճառքներում մասնակցության նպատակով մրցակցելու համար:

գ) Կողմերը չեն կարող խոչընդոտել, որ իրենց իրավասության ներքո գտնվող որեւէ ձեռնարկություն (անկախ այն բանից, թե վերջինս նկարագրված է սույն կետի «ա» ենթակետում, թե՛ ոչ) գործի սույն կետի «ա» եւ «բ» ենթակետերով սահմանված սկզբունքներին համապատասխան:

2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները չեն կիրառվում պետական նշանակությամբ՝ արագ կամ վերջնական սպառման համար նախատեսված եւ այլ կերպ վերավաճառքի կամ վաճառքի նպատակով ապրանքների արտադրության մեջ օգտագործելու համար նախատեսված ապրանքների ներմուծման նկատմամբ¹⁸: Այդպիսի ներմուծման դեպքում յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի առեւտրի համար տրամադրում է արդար եւ հավասար պայմաններով ռեժիմ:

3. Կողմերն ընդունում են, որ սույն հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետում

¹⁷ «Կապակցված վարկ» ստացող երկիրն արտասահմանում անհրաժեշտ նյութական միջոցներ գնելիս իրավունք ունի դիտարկելու այդ վարկը որպես «կոմերցիոն հաշվարկ»:

¹⁸«Ապրանքներ» եզրույթը պետք է հասկանալ առեւտրային գործելակերպում ապրանքներին վերագրվող իմաստով եւ չի ներառում ծառայությունների գնում կամ վաճառք:

նշված տեսակի ձեռնարկությունները կարող են իրականացնել այնպիսի գործունեություն, որի արդյունքում լուրջ խոչընդոտներ կարող են ստեղծվել առետրի համար. հետեաբար երկկողմ փոխշահավետ հիմքի վրա այն բանակցությունները, որոնք ուղղված են այդպիսի խոչընդոտների սահմանափակմանը կամ նվազեցմանը, կարելի է միջազգային առետրի ընդլայնման համար:

4. ա) Կողմերը Համատեղ կոմիտեին ծանուցում են այն ապրանքների մասին, որոնք ներմուծվում են իրենց տարածք կամ արտահանվում են իրենց տարածքից այն ձեռնարկությունների կողմից, որոնք դասվում են սույն հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետում նկարագրված տեսակին:

բ) Սույն համաձայնագրի 1-ին հավելվածում չներառված ապրանքի ներմուծման մենաշնորհի ստեղծող, պահպանող կամ թույլատրող Կողմը մյուս Կողմի պահանջով այդ Կողմին ծանուցում է ոչ վաղ շրջանի ներկայացուցչական ժամանակահատվածի ընթացքում ապրանքների ներմուծման գնի ավելացման¹⁹ մասին, կամ եթե դա անհնար է՝ ապրանքների վերավաճառքի համար սահմանված գնի մասին:

գ) Այն Կողմը, որը հիմքեր ունի ենթադրելու, որ իր շահերը, սույն համաձայնագրին համապատասխան, ոտնահարվում են սույն հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետում նկարագրված տեսակին դասվող ձեռնարկության գործողություններով, այդպիսի ձեռնարկություն հիմնող, պահպանող կամ թույլատրող Կողմից պահանջում է տեղեկություններ տրամադրել սույն համաձայնագրի դրույթների կատարման հետ կապված՝ դրա գործունեության վերաբերյալ:

դ) Սույն կետի դրույթներով որեւէ Կողմից չի պահանջվում բացահայտել այնպիսի գաղտնի տեղեկատվություն, որի բացահայտումը կխոչընդոտի օրենքի

¹⁹ «Գնի ավելացում» եզրույթն այն տարբերությունն է, որի չափով ներմուծվող ապրանքների ներմուծման մենաշնորհի վրա հիմնված գանձվող գինը (սույն համաձայնագրի 2.2 հոդվածով կարգավորվող ոլորտում ներքին հարկերը, տրանսպորտային փոխադրմանը, բաշխմանը եւ գնմանը, վաճառքին կամ հետագա մշակմանն առնչվող մյուս ծախսերը, ինչպես նաեւ շահույթի ողջամիտ գործակիցը հանած) գերազանցում է պահեստում ապրանքի արժեքը:

կատարումը կամ այլ կերպ կհակասի հանրային շահին կամ կհանգեցնի առանձին ձեռնարկությունների օրինական կոմերցիոն շահերի ոտնահարմանը:

ԳԼՈՒԽ 3. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հոդված 3.1

Սահմանումները

Սույն գլխի նպատակներով՝

ա) **«հակազնագցման միջոց»**՝ միջոց, որը, սույն գլխի դրույթներին համապատասխան, Կողմը կիրառում է այլ Կողմի տարածքից ապրանքի ներմուծման առնչությամբ այն գնագցումը հավասարակշռելու կամ կանխելու համար, որն էական վնաս է հասցնում կամ կարող է հասցնել ներքին տնտեսության ճյուղի զարգացմանը կամ զգալիորեն դանդաղեցնում է այդ գործընթացը.

բ) **«երկկողմ պաշտպանական միջոց»**՝ միջոց, որը, սույն գլխի դրույթներին համապատասխան, Կողմը կիրառում է այլ Կողմի տարածքի ծագում ունեցող ապրանքի ներմուծման առնչությամբ՝ ներքին տնտեսության ճյուղին լուրջ վնաս հասցնելը կամ այդ վնասը հասցնելու վտանգը կանխելու կամ հատուցելու նպատակով, որն առաջացել է սույն համաձայնագրին համապատասխան մաքսատուրքի չափի նվազեցման կամ զրոյացման հետ կապված այդ ապրանքի ներմուծման ծավալն ավելանալու հետեւանքով.

գ) **«փոխհատուցման միջոց»**՝ միջոց, որը, սույն գլխի դրույթներին համապատասխան, Կողմը կիրառում է այլ Կողմի տարածքից ապրանքի ներմուծման առնչությամբ՝ վերջինիս տարածքում տրամադրվող այն հատուկ սուբսիդիայի ազդեցությունը հավասարակշռելու համար, որն էական վնաս է հասցնում կամ կարող է հասցնել ներքին տնտեսության ճյուղի զարգացմանը կամ

զգալիորեն դանդաղեցնում է այդ գործընթացը.

դ) «**համընդհանուր պաշտպանական միջոց**»՝ միջոց, որը, սույն գլխի դրույթներին համապատասխան, Կողմը կիրառում է ապրանքի ներմուծման առնչությամբ՝ ներքին տնտեսության ճյուղին հասցված լուրջ վնաս հասցնելը կամ այդ վնասը հասցնելու վտանգը կանխելու կամ հատուցելու նպատակով, որն առաջացել է բոլոր երկրներից այդ ապրանքի ներմուծման ծավալն ավելանալու հետեանքով:

Հոդված 3.2

Հակազնագցման եւ փոխհատուցման միջոցները

1. Յուրաքանչյուր Կողմ կիրառում է հակազնագցման եւ փոխհատուցման միջոցներ՝ հակազնագցման ու փոխհատուցման միջոցների կիրառումը կարգավորող իր օրենսդրությանը համապատասխան՝ բացառությամբ սույն գլխով նախատեսված դեպքերի:

2. Ապրանքը դիտարկվում է որպես գնագցման օբյեկտ, եթե մեկ Կողմից մյուս Կողմ արտահանված ապրանքի արտահանման գինն ավելի ցածր է, քան առետրի բնականոն ընթացքի շրջանակներում արտահանող Կողմում սպառման համար նախատեսված համանման ապրանքի համար սահմանվող համեմատելի գինը:

3. Արտահանող Կողմի ներքին շուկայում համանման ապրանքի վաճառքն արտադրության միջին կշռված ծախսերից ոչ պակաս գներով՝ վարչական, վաճառքի եւ ընդհանուր ծախսերը ներառյալ, դիտարկվում է որպես առետրի բնականոն ընթացքի շրջանակներում իրականացվող գործընթաց: Հակազնագցմանն առնչվող քննություններ անցկացնելու նպատակով արտահանող Կողմի ներքին շուկայում առետրի բնականոն ընթացքի շրջանակներում համանման ապրանքի վաճառքի բացակայության դեպքում, կամ երբ արտահանող երկրի ներքին շուկայում վաճառքի փոքր ծավալի պատճառով

հնարավոր չէ իրականացնել վաճառքի պատշաճ համեմատություն, գնագցման սահմանաչափը որոշվում է՝ համեմատելով համապատասխան երրորդ երկիր արտահանելիս համանման ապրանքի համեմատելի գնի հետ՝ պայմանով, որ այդ գինը ներկայացուցչական է, կամ ծագման երկրում արտադրության ծախսերի հետ, որոնց գումարվում է վարչական, վաճառքի եւ ընդհանուր ծախսերի, ինչպես նաեւ շահույթի ողջամիտ գումարը: Արտահանող Կողմի ներքին շուկայում համանման ապրանքի վաճառքն արտադրության միավոր (հաստատուն եւ փոփոխական) ծախսերից պակաս գներով՝ վարչական, վաճառքի եւ ընդհանուր ծախսերը ներառյալ, դիտարկվում է որպես առետրի բնականոն ընթացքի շրջանակներում չիրականացվող գործընթաց՝ ելնելով գնից, եւ կարող է հաշվի չառնվել սովորական արժեքը սահմանելիս միայն այն դեպքում, երբ քննություն իրականացնող մարմինները որոշում են, որ այդ վաճառքն իրականացվում է տեւական ժամանակ²⁰, զգալի քանակով²¹ եւ այնպիսի գներով, որոնցով չի նախատեսվում ողջամիտ ժամկետում բոլոր ծախսերի փոխհատուցման հնարավորություն: Եթե վաճառքի ժամանակ միավոր ծախսերից ցածր գները քննության իրականացման ժամանակահատվածում բարձր են միջին կշռված միավոր ծախսերից, ապա այդ գներով նախատեսվում է ողջամիտ ժամանակահատվածում ծախսերի փոխհատուցման հնարավորություն: Սույն կետի նպատակներով ծախսերը սովորաբար հաշվարկվում են այն արտահանողի կամ արտադրողի հաշվառման փաստաթղթերի հիման վրա, որի նկատմամբ քննություն է իրականացվում՝ պայմանով, որ այդ փաստաթղթերը համապատասխանում են արտահանող երկրի ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքներին եւ բավականաչափ ճշգրտորեն արտացոլում են տվյալ ապրանքի արտադրության ու վաճառքի հետ կապված ծախսերը: Իրավասու մարմինները հաշվի են առնում ծախսերի պատշաճ բաշխման մասին

²⁰ Տեւական ժամանակը, որպես կանոն, պետք է կազմի մեկ տարի, սակայն ոչ մի դեպքում չպետք է լինի վեց ամսից պակաս:

²¹ Միավոր ծախսերից պակաս վաճառքն իրականացվում է զգալի քանակներով, երբ իրավասու մարմինները սահմանում են, որ սովորական արժեքը սահմանելու նպատակով դիտարկվող գործարքների շրջանակներում վաճառքի միջին կշռված գինը պակաս է միջին կշռված միավոր ծախսերից, կամ որ միավոր ծախսերից պակաս վաճառքի ծավալը կազմում է սովորական արժեքը սահմանելու նպատակով դիտարկվող գործարքների շրջանակներում վաճառքի ծավալի ոչ պակաս, քան 20 տոկոսը:

գոյություն ունեցող բոլոր ապացույցները, ներառյալ՝ այն ապացույցները, որոնք արտահանողի կամ արտադրողի կողմից տրամադրվում են քննության ընթացքում՝ պայմանով, որ ծախսերը, ինչպես փորձն է ցույց տալիս, արտահանողի կամ արտադրողի կողմից սովորաբար բաշխվում են մասնավորապես ամորտիզացիայի եւ մաշվածության համապատասխան ժամանակահատվածները սահմանելու, կապիտալ ներդրումները հաշվառելու եւ զարգացմանն ուղղված այլ ծախսեր նախատեսելու համար: Եթե սույն կետին համապատասխան ծախսերի բաշխման մեջ դա արդեն չի արտացոլվել, ապա ծախսերը համապատասխան ձեւով ճշգրտվում են՝ հաշվի առնելով հետագա եւ (կամ) ընթացիկ արտադրությունը խթանող՝ եկամուտների եւ ծախսերի հոդվածները կամ այն հանգամանքները, որոնց դեպքում քննություն անցկացնելու ժամանակահատվածի ընթացքում ծախսերը պայմանավորված են արտադրության ձեւավորման ժամանակահատվածի գործառնություններով²²: Սույն կետի նպատակներով վարչական, վաճառքի եւ ընդհանուր ծախսերի, ինչպես նաեւ շահույթի գումարները հիմնվում են առետրի բնականոն ընթացքի շրջանակներում համանման ապրանքի արտադրության ու վաճառքի վերաբերյալ փաստացի տվյալների վրա, որոնք տրամադրվում են այն արտահանողի կամ արտադրողի կողմից, որի նկատմամբ քննություն է անցկացվում: Եթե այդ գումարները հնարավոր չէ սահմանել նշված հիմքով, ապա դրանք կարող են սահմանվել՝ հիմք ընդունելով՝

²² Արտադրության ձեւավորման ժամանակահատվածի գործառնությունների մասով ճշգրտումն արտացոլում է արտադրության ձեւավորման ժամանակահատվածի ավարտի դրությամբ եղած ծախսերը, կամ եթե այդ ժամանակահատվածը ավելի երկար է, քան քննության ժամանակահատվածը, ապա ամենավերջին ծախսերը, որոնք քննության ընթացքում կարող են ողջամտորեն հաշվի առնվել իրավասու մարմինների կողմից:

- i. միեւնույն ընդհանուր կատեգորիայի ապրանքների արտադրության եւ դրանց ծագման երկրի ներքին շուկայում վաճառքի առնչությամբ՝ տվյալ արտահանողի կամ արտադրողի կողմից վճարված եւ իրացված փաստացի գումարները.
- ii. համանման ապրանքի արտադրության եւ դրա ծագման երկրի ներքին շուկայում վաճառքի առնչությամբ՝ այն մյուս արտահանողների կամ արտադրողների կողմից վճարված եւ իրացված փաստացի միջին կշռված գումարները, որոնց նկատմամբ քննություն է անցկացվում.
- iii. ցանկացած այլ ողջամիտ մեթոդ՝ պայմանով, որ այդ մեթոդով սահմանված շահույթի գումարը չի գերազանցում ծագման երկրի ներքին շուկայում միեւնույն ընդհանուր կատեգորիայի ապրանքների վաճառքի դեպքում այլ արտահանողների կամ արտադրողների կողմից սովորաբար ստացվող շահույթը:

4. Այն դեպքերում, երբ արտահանման գինը սահմանված չէ, կամ երբ համապատասխան մարմինների կարծիքով՝ արտահանման գինը կասկածելի է՝ արտահանողի ու ներմուծողի կամ երրորդ կողմի միջեւ եղած որեւէ կապով կամ փոխհատուցման համաձայնագրով պայմանավորված, արտահանման գինը կարող է ձեւավորվել այն գնի հիման վրա, որով ներմուծված ապրանքներն առաջին անգամ վերավաճառվում են անկախ գնորդի, կամ եթե ապրանքները չեն վերավաճառվում անկախ գնորդի կամ չեն վերավաճառվում այն վիճակով, որով դրանք ներմուծվել են, ապա մարմինների կողմից սահմանվող ողջամիտ հիմքով:

5. Արտահանման գնի ու սովորական արժեքի միջեւ արդար համեմատություն է անցկացվում: Այդպիսի համեմատությունը պետք է կատարվի առեստրային գործառնության միեւնույն փուլում, սովորաբար՝ գործարանից առաքման փուլում, եւ հնարավորության դեպքում՝ միեւնույն ժամանակ իրականացված վաճառքների նկատմամբ: Յուրաքանչյուր դեպքի էությունը հիմք

ընդունելով՝ կատարվում են համապատասխան անհրաժեշտ ճշգրտումներ, որոնց դեպքում հաշվի են առնվում գների համադրելիությանն առնչվող տարբերությունները, ներառյալ՝ վաճառքի պայմանների եւ ժամկետների, հարկման, առետրային փուլերի, քանակությունների, ֆիզիկական բնութագրերի տարբերությունները, ինչպես նաեւ ցանկացած այլ տարբերություն, որը եւս գների համադրելիության վրա ազդեցություն է ունենում: Սույն հոդվածի 4-րդ կետում նշված դեպքերում պետք է կատարվեն ճշգրտումներ նաեւ ծախսերի մասով, ներառյալ՝ ներմուծման եւ վերավաճառքի միջեւ ընկած ժամանակահատվածում վճարված տուրքերն ու հարկերը, ինչպես նաեւ ճշգրտումներ ստացված շահույթի մասով: Եթե այդպիսի դեպքերում գների համադրելիությունն ազդեցության է ենթարկվում, ապա իրավասու մարմինները սովորական արժեքը սահմանում են առետրային գործառնության այն փուլում, որը համարժեք է այն փուլին, որում կիրառվելու համար սահմանվում է արտահանման գինը, կամ կատարում են սույն կետով թույլատրված անհրաժեշտ ճշգրտումները: Կողմի իրավասու մարմինը շահագրգիռ անձանց մատնանշում է, թե ինչ տեղեկատվություն է անհրաժեշտ արդար համեմատություն անցկացնելու համար, եւ այդ կողմերի վրա ապացուցման անհիմն բեռ չի դնում:

- i. Եթե սույն հոդվածի 5-րդ կետի համաձայն համեմատություն անցկացնելու համար պահանջվում է արժույթների փոխարկում, ապա այդ փոխարկումը կատարվում է վաճառքի օրվա դրությամբ գործող փոխարժեքով՝ պայմանով, որ եթե արտարժույթի վաճառքը ֆորվարդային շուկայում անմիջականորեն կապված է արտահանման նպատակով համապատասխան իրացման հետ, ապա օգտագործվում է ֆորվարդային վաճառքի դեպքում կիրառվող փոխարժեքը: Փոխարժեքների տատանումները հաշվի չեն առնվում, եւ քննության ընթացքում իրավասու մարմիններն արտահանողներին առնվազն 60 օր են տրամադրում իրենց արտահանման գները ճշգրտելու համար՝ քննության

ժամանակահատվածի ընթացքում փոխարժեքների կայուն փոփոխություններն արտացոլելու համար:

- ii. Հաշվի առնելով սույն հոդվածի 5-րդ կետի դրույթները, որոնցով կարգավորվում է արդար համեմատության անցկացումը, գնագցման չափի առկայությունը քննության ընթացքում սովորաբար սահմանվում է՝ միջին կշռված սովորական արժեքը համեմատելով արտահանման բոլոր համադրելի գործարքների միջին կշռված գների հետ, կամ սովորական արժեքը համեմատելով որեւէ գործարքի արտահանման գների հետ՝ հիմք ընդունելով տվյալ գործարքը: Միջին կշռված հիմքով սահմանված սովորական արժեքը կարող է համեմատվել արտահանման կոնկրետ գործարքների գների հետ, եթե իրավասու մարմինները փաստեն, որ արտահանման գներն էապես տարբերվում են տարբեր գնորդների, տարածաշրջանների կամ ժամանակահատվածների միջեւ, եւ եթե բացատրություն տրվի, թե ինչու այդ տարբերությունները չեն կարող համապատասխան ձեւով հաշվի առնվել միջին կշռված մեծությունների կամ կոնկրետ գործարքների գների միջեւ համեմատություն անցկացնելիս:

6. Այն դեպքում, երբ ապրանքները չեն ներմուծվում անմիջապես ծագման երկրից, այլ ներմուծող Կողմ արտահանվում են միջանկյալ երկրից, այն գինը, որով ապրանքներն արտահանման երկրից վաճառվում են ներմուծող Կողմին, սովորաբար համեմատվում են արտահանման երկրում համեմատելի գնի հետ: Սակայն համեմատություն կարող է անցկացվել ծագման երկրում գնի հետ, եթե օրինակ՝ ապրանքները միայն ուղարկվում են արտահանման երկրով, կամ այդ ապրանքները չեն արտադրվում արտահանման երկրում, կամ արտահանման երկրում դրանց համեմատելի գին գոյություն չունի:

7. Սույն գլխի տեքստում «համանման ապրանք» եզրույթը մեկնաբանվում է որպես նույնական ապրանք, որը բոլոր առումներով նման է տվյալ ապրանքին,

կամ այդ ապրանքի բացակայության դեպքում՝ այլ ապրանք, որը, բոլոր առումներով նման չլինելով տվյալ ապրանքին, ունի տվյալ ապրանքի բնութագրերին մոտ բնութագրեր:

8. Սույն գլխի նպատակներով սուբսիդիան համարվում է առկա, եթե՝

ա) արտահանող Կողմի տարածքում կառավարության կամ ցանկացած հանրային մարմնի կողմից տրամադրվում է ֆինանսական աջակցություն, այսինքն՝ երբ՝

- i. կառավարությունն իրականացնում է դրամական միջոցների (օրինակ՝ դոտացիաների, փոխառությունների եւ կանոնադրական կապիտալում կատարվող վճարների) ուղղակի փոխանցում, այդ միջոցների կամ պարտավորությունների (օրինակ՝ փոխառությունների դիմաց տրված երաշխիքները) հնարավոր ուղղակի փոխանցում.
- ii. կառավարությունը հրաժարվում է իրեն հասանելիք եկամուտները գանձելուց կամ չի գանձում դրանք (օրինակ՝ այնպիսի հարկային արտոնություններ, ինչպիսիք հարկային վարկերն են)²³,
- iii. կառավարությունը տրամադրում է ապրանքներ կամ ծառայություններ՝ բացի ընդհանուր ենթակառուցվածքից, կամ գնում է ապրանքներ,
- iv. կառավարությունը կատարում է վճարումներ ֆինանսավորման մեխանիզմներում կամ որեւէ մասնավոր անձի հանձնարարում կամ կարգադրում է կատարել վերոնշյալ «i»-«iii» ենթակետերում նշված գործառույթներից մեկը կամ մի քանիսը, որոնք սովորաբար վերապահվում են կառավարությանը, ընդ որում, այնպիսի

²³ Ներքին սպառման համար նախատեսված համանման ապրանքի համար սահմանված տուրքերից կամ հարկերից արտահանված ապրանքի ազատումը կամ այդ տուրքերի կամ հարկերի նվազեցումն այնպիսի չափով, որը չի գերազանցում հաշվեգրված չափերը, չի համարվում սուբսիդիա:

պայմաններով, որոնք ոչ մի դեպքում չեն տարբերվում կառավարությունների սովորական գործելակերպից,

կամ

բ) գոյություն ունի սուբսիդիա ստացողի եկամուտների կամ գների պահպանման ցանկացած այլ ձեւ, որն ուղղակի կամ անուղղակի ազդեցություն է ունենում արտահանող Կողմի տարածքից ցանկացած ապրանքի արտահանման ծավալների ավելացման կամ դրա տարածք համանման ապրանքի ներմուծման ծավալների կրճատման վրա, եւ

գ) դրանով առավելություն է տրամադրվում:

9. Արտահանող Կողմի սուբսիդիան համարվում է հատուկ, եթե սուբսիդիայի հասանելիությունը արտահանող Կողմի օրենքի համաձայն կամ փաստացիորեն սահմանափակվում է կոնկրետ ձեռնարկության կամ արդյունաբերության ճյուղի կամ մի խումբ ձեռնարկությունների կամ արդյունաբերության ճյուղերի շրջանակով՝ սուբսիդավորող մարմնի իրավասության շրջանակներում: Հատուկ է համարվում այն սուբսիդիան, որի օգտագործումը սահմանափակված է սուբսիդավորող մարմնի իրավասությանը ենթակա տարածքի՝ սահմանված աշխարհագրական շրջանում գտնվող որոշակի ձեռնարկությունների շրջանակով: Ենթադրվում է, որ հարկերի՝ բոլոր մակարդակներում համընդհանուր ձեւով կիրառվող դրույքաչափերը իրավասու մարմինների կողմից սահմանելը կամ փոփոխելը սույն համաձայնագրի նպատակներով չի դիտարկվում որպես հատուկ սուբսիդիա:

10. Սահմանելու համար՝ արդյոք սուբսիդիան հատուկ է, թե՛ ոչ, կիրառվում են հետեւյալ սկզբունքները.

ա) եթե սուբսիդավորող մարմնի կողմից կամ այն օրենսդրությամբ, որին համապատասխան գործում է սուբսիդավորող մարմինը, սուբսիդիայի հասանելիությունը հստակորեն սահմանափակվում է միայն որոշակի ձեռնարկությունների շրջանակով, ապա այդպիսի սուբսիդիան համարվում է հատուկ սուբսիդիա.

բ) եթե սուբսիդավորող մարմնի կողմից կամ այն օրենսդրությամբ, որին համապատասխան գործում է սուբսիդավորող մարմինը, սահմանվում են օբյեկտիվ չափորոշիչներ կամ պայմաններ²⁴, որոնց համաձայն որոշվում են սուբսիդիաներ ստանալու իրավունքն ու դրանց չափը, ապա սուբսիդիան հատուկ չի համարվում՝ պայմանով, որ դա ստանալու իրավունքն ինքնաբերաբար է ծագում, եւ որ այդպիսի չափորոշիչներն ու պայմանները խստորեն պահպանվում են: Չափորոշիչները կամ պայմանները պետք է հստակորեն նախատեսվեն օրենքով, կանոնակարգով կամ այլ պաշտոնական փաստաթղթերով այնպես, որ դրանք հնարավոր լինի ստուգել:

գ) եթե չնայած այն փաստին, որ սույն կետի «ա» եւ «բ» ենթակետերում նշված սկզբունքների կիրառման արդյունքում սուբսիդիան թվում է ոչ հատուկ, հիմքեր կան ենթադրելու, որ այն ըստ էության հատուկ սուբսիդիա է, ապա կարող են հաշվի առնվել այլ գործոններ: Այդպիսի գործոնների թվին են դասվում սահմանափակ թվով որոշակի ձեռնարկությունների կողմից սուբսիդավորման ծրագրից օգտվելը, որոշակի ձեռնարկությունների կողմից դրանցից հիմնականում օգտվելը, որոշակի ձեռնարկությունների անհամամասնորեն մեծ չափով սուբսիդիաների տրամադրումը, ինչպես նաեւ այն հայեցողության ձեւը, որի իրավունքն ունի սուբսիդավորող մարմինը սուբսիդիա տրամադրելու մասին որոշում ընդունելիս²⁵: Այս ենթակետը կիրառելիս պետք է հաշվի առնել տնտեսական գործունեության դիվերսիֆիկացման մակարդակը սուբսիդավորող մարմնի իրավասության սահմաններում, ինչպես նաեւ այն ժամանակահատվածի տեւողությունը, որի ընթացքում գործում է սուբսիդավորման տվյալ ծրագիրը:

²⁴ Օբյեկտիվ չափորոշիչներ կամ պայմաններ ասելով՝ հասկանում ենք այն չափորոշիչները կամ պայմանները, որոնք չեզոք են, որոշակի ձեռնարկությունների համար առավելություններ չեն ստեղծում՝ այլ ձեռնարկությունների հետ համեմատած, բնույթով տնտեսական են, իսկ կիրառման տեսանկյունից՝ հորիզոնական, ինչպես օրինակ՝ զբաղվածություն ունեցողների թիվը կամ ձեռնարկությունների չափը:

²⁵ Այս առումով պետք է մասնավորապես հաշվի առնվեն սուբսիդիա ստանալու համար ներկայացվող հայտերը մերժելու կամ հաստատելու հաճախականության վերաբերյալ տեղեկատվությունը եւ այդպիսի որոշումներ կայացնելու հիմնավորումները:

11. Սույն հոդվածի 9-րդ եւ 10-րդ կետերի դրույթներին համապատասխան հատուկ լինելու վերաբերյալ ցանկացած պնդում պետք է հստակ հիմնավորվի հաստատող ապացույցների առկայությամբ:

12. Արտահանող Կողմի ցանկացած սուբսիդիա համարվում է հատուկ, եթե՝

ա) արտահանող Կողմի օրենքով կամ փաստացիորեն²⁶ սուբսիդիան կապված է արտահանման արդյունքների հետ՝ որպես միակ պայման կամ մի քանի պայմաններից մեկը.

բ) արտահանող Կողմի օրենքով կամ փաստացիորեն սուբսիդիան կապված է ներմուծված ապրանքների փոխարեն հայրենական արտադրության ապրանքների օգտագործման հետ՝ որպես միակ պայման կամ մի քանի պայմաններից մեկը:

13. Քննություն իրականացնող մարմնի կողմից օգտագործվող՝ սուբսիդիա ստացողի համար սույն հոդվածի 8-րդ կետին համապատասխան արտոնությանն առնչվող հաշվարկի ցանկացած մեթոդ պետք է համապատասխանի հետեւյալ սկզբունքներին.

ա) կառավարության մասնակցությունն ընկերության կապիտալում չի դիտարկվում որպես արտոնության տրամադրում, եթե ներդրումների վերաբերյալ որոշումը չի կարող որակվել որպես տվյալ Կողմի տարածքում մասնավոր ներդրողների ընդունված ներդրումային գործելակերպին չհամապատասխանող (ներառյալ՝ ռիսկային կապիտալի տրամադրումը).

բ) կառավարական փոխառությունը չի դիտարկվում որպես արտոնության տրամադրում, եթե վարկ ստացող ընկերության կողմից պետական փոխառության դիմաց վճարվող գումարը չի տարբերվում այն գումարից, որն այն կվճարեր

²⁶ Այդ չափանիշը կատարվում է այնպիսի փաստերի առկայության դեպքում, որոնք վկայում են այն մասին, որ սուբսիդիայի տրամադրումը, օրինական ձեւով պայմանավորված չլինելով արտահանման արդյունքներով, իրականում կապված է փաստացի կամ ակնկալվող արտահանման կամ արտահանումից ստացվող հասույթի հետ: Այն փաստը, որ սուբսիդիան տրամադրվում է արտահանում իրականացնող ձեռնարկությանը, չի կարող ինքնին հիմք ծառայել սույն դրույթի իմաստով այն արտահանման սուբսիդիա համարելու համար:

համադրելի կոմերցիոն փոխառության դիմաց, որը տվյալ ընկերությունը կարող է ստանալ շուկայում: Նման դեպքում արտոնություն է համարվում այդ երկու գումարների միջեւ եղած տարբերությունը.

գ) կառավարության կողմից փոխառության երաշխավորումը չի դիտարկվում որպես արտոնության տրամադրում, եթե կառավարության կողմից երաշխավորված փոխառության դիմաց երաշխիք ստացող ընկերության կողմից վճարվող գումարը չի տարբերվում այն գումարից, որն այն կվճարեր համադրելի կոմերցիոն փոխառության դիմաց՝ առանց պետական երաշխիքի: Նման դեպքում արտոնություն է համարվում այդ երկու գումարների միջեւ եղած տարբերությունը՝ վճարների տարբերությամբ ճշգրտված.

դ) կառավարության կողմից ապրանքների կամ ծառայությունների մատակարարումը կամ ապրանքների գնումը չի համարվում արտոնության տրամադրում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ապրանքները կամ ծառայությունները չեն մատակարարվում համարժեք վարձատրությունից ավելի ցածր վճարման դիմաց, կամ գնումը չի կատարվում համարժեք վարձատրությունից բարձր վճարման դիմաց: Վարձատրության համարժեքությունը որոշվում է՝ ելնելով մատակարարման կամ գնման երկրում այդպիսի ապրանքների կամ ծառայությունների համար գոյություն ունեցող շուկայական պայմաններից (ներառյալ՝ գինը, որակը, հասանելիությունը, իրացվելիությունը, տրանսպորտային փոխադրումը եւ գնմանը կամ վաճառքին առնչվող այլ պայմաններ):

14. Կողմերը կարող են կիրառել հակազնագցման կամ փոխհատուցման միջոց միայն քննություն իրականացնող մարմնի կողմից սույն հոդվածի դրույթների համաձայն սկսված ու անցկացված քննությունն անցկացնելուց հետո: Քննությունն ավարտվում է մեկ տարվա ընթացքում՝ բացառությամբ հատուկ հանգամանքների առկայության դեպքերի, եւ ոչ մի դեպքում չի գերազանցում այն սկսելու պահից 18 ամիսը:

15. Քննությունն սկսվում է ներքին տնտեսության ճյուղի կողմից կամ դրա անունից ներկայացված գրավոր դիմումի հիման վրա, որը պարունակում է բավարար ապացույցներ հետեւյալի մասին. ա) գնագցում (հակագնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ հատուկ սուբսիդիա (փոխհատուցման մասով քննություն անցկացնելու նպատակով), բ) ներքին տնտեսության ճյուղին հասցված վնաս²⁷ եւ գ) պատճառահետեւանքային կապ գնագցող ներմուծման (հակագնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ սուբսիդավորվող ներմուծման (փոխհատուցման մասով քննություն անցկացնելու նպատակով) եւ ենթադրվող վնասի միջեւ: Վերաբերելի ապացույցներով չհիմնավորված պարզ պնդումը չի կարող համարվել սույն կետի պահանջներին համապատասխանելու համար բավարար:

16. Փոխհատուցման տուրքի մասով քննություն անցկացնելու նպատակով ներկայացված դիմումը պարունակում է դիմումատուի համար հասանելի տեղեկատվություն հետեւյալի մասին.

ա) դիմումատուի անձը եւ դիմումատուի կողմից ներկայացված՝ համանման ապրանքի հայրենական արտադրության ծավալի ու արժեքի նկարագիրը: Եթե գրավոր դիմումը ներկայացվել է ներքին տնտեսության ճյուղի անունից, ապա դրանում պետք է հստակ սահմանվի տնտեսության այն ճյուղը, որի անունից ներկայացվել է դիմումը՝ ներառելով համանման ապրանքի բոլոր հայտնի հայրենական արտադրողների (կամ համանման ապրանքի հայրենական արտադրողների ասոցիացիաների) ցուցակը եւ հնարավորինս ներառելով այդ արտադրողներին բաժին ընկնող՝ համանման ապրանքի հայրենական արտադրության ծավալի ու արժեքի նկարագիրը.

բ) ենթադրաբար սուբսիդավորվող ապրանքի ամբողջական նկարագիրը, ծագման կամ արտահանման երկրի կամ երկրների անվանումը (անվանումները),

²⁷ «Վնաս» եզրույթը, եթե այլ բան նախատեսված չէ, հասկացվում է որպես ներքին տնտեսության ճյուղին հասցված նյութական վնաս, ներքին տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգ կամ ներքին տնտեսության ճյուղի զարգացման գործընթացի զգալի դանդաղեցում:

յուրաքանչյուր հայտնի արտահանողի կամ օտարերկրյա արտադրողի անձը եւ տվյալ ապրանքի ներմուծող հայտնի անձանց ցուցակը.

գ) ապացույցներ՝ տվյալ սուբսիդիայի առկայության, գումարի եւ բնույթի մասին.

դ) ապացույցներ այն մասին, որ ներքին տնտեսության ճյուղին ենթադրաբար հասցված վնասն առաջացել է սուբսիդավորված ներմուծումից՝ սուբսիդիաների ազդեցության արդյունքում. այդ ապացույցները պարունակում են տեղեկատվություն՝ ենթադրաբար սուբսիդավորվող ներմուծման ծավալի փոփոխության, ներքին շուկայում համանման ապրանքի գների վրա այդ ներմուծման ազդեցության եւ ներքին տնտեսության ճյուղի վիճակին առնչվող՝ սույն հոդվածի 23-րդ կետում նշված համապատասխան գործոններով եւ ցուցիչներով արտահայտված՝ ներքին տնտեսության ճյուղի վրա ներմուծման հետագա ազդեցության վերաբերյալ:

17. Հակազնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով ներկայացված դիմումը պարունակում է դիմումատուի համար հասանելի տեղեկատվություն հետեւյալի մասին.

ա) դիմումատուի անձը եւ դիմումատուի կողմից ներկայացված՝ համանման ապրանքի հայրենական արտադրության ծավալի ու արժեքի նկարագիրը: Եթե գրավոր դիմումը ներկայացվել է ներքին տնտեսության ճյուղի անունից, ապա դրանում պետք է հստակ սահմանվի տնտեսության այն ճյուղը, որի անունից ներկայացվել է դիմումը՝ ներառելով համանման ապրանքի բոլոր հայտնի հայրենական արտադրողների (կամ համանման ապրանքի հայրենական արտադրողների ասոցիացիաների) ցուցակը եւ հնարավորինս ներառելով այդ արտադրողներին բաժին ընկնող՝ համանման ապրանքի հայրենական արտադրության ծավալի ու արժեքի նկարագիրը.

բ) ենթադրյալ գնագցման առարկա հանդիսացող ապրանքի ամբողջական նկարագիրը, դրա ծագման կամ արտահանման երկրի կամ երկրների անվանումը

(անվանումները), յուրաքանչյուր հայտնի արտահանողի կամ օտարերկրյա արտադրողի անձը եւ տվյալ ապրանքը ներմուծող հայտնի անձանց ցուցակը.

գ) տեղեկատվություն այն գների վերաբերյալ, որոնցով տվյալ ապրանքը վաճառվում է ծագման կամ արտահանման երկրի կամ երկրների ներքին շուկաներում սպառման համար (կամ անհրաժեշտության դեպքում՝ տեղեկատվություն այն գների վերաբերյալ, որոնցով ապրանքը ծագման կամ արտահանման երկրից կամ երկրներից վաճառվում է երրորդ երկիր կամ երկրներ, կամ տեղեկատվություն՝ ապրանքի սահմանված արժեքի վերաբերյալ), եւ տեղեկատվություն՝ արտահանման գների վերաբերյալ, կամ անհրաժեշտության դեպքում՝ այն գների վերաբերյալ, որոնցով ապրանքը ներմուծող Կողմի տարածքում առաջին անգամ վերավաճառվում է անկախ գնորդի.

դ) տեղեկատվություն՝ ենթադրյալ գնագցման առարկա հանդիսացող ներմուծումների, ներքին շուկայում համանման ապրանքի գների վրա այդ ներմուծումների ազդեցության եւ ներքին տնտեսության ճյուղի վիճակին առնչվող՝ սույն հոդվածի 23-րդ կետում նշված համապատասխան գործոններով եւ ցուցիչներով արտահայտված՝ ներքին տնտեսության ճյուղի վրա ներմուծման հետագա ազդեցության վերաբերյալ:

18. Պատշաճ ձեւակերպված դիմումն ստանալուց հետո եւ մինչեւ հակագնագցման մասով քննություն սկսելը իրավասու մարմինները տվյալ արտահանող Կողմի կառավարությանը հակագնագցման մասով այդ քննությունն սկսելուց առնվազն 15 օր առաջ ծանուցում են ուղարկում:

19. Քննություն իրականացնող մարմիններն ուսումնասիրում են դիմումի մեջ ներկայացված ապացույցի հավաստիությունը եւ համապատասխանությունը՝ պարզելու համար, թե արդյոք առկա են բավարար ապացույցներ՝ քննություն սկսելը հիմնավորելու համար: Սույն հոդվածի 15-րդ կետի համաձայն քննություն չի սկսվի այն դեպքում, երբ համանման ապրանքի հայրենական արտադրողների՝ դիմումին կողմ կամ դեմ հանդես գալու աստիճանի ուսումնասիրման հիման վրա

Կողմի՝ քննություն իրականացնող մարմինը սահմանի, որ դիմումը ներկայացվել է ներքին տնտեսության ճյուղի կողմից կամ դրա անունից: Դիմումը դիտարկվում է որպես «ներքին տնտեսության ճյուղի կողմից կամ դրա անունից» ներկայացված, եթե դրան կողմ են հանդես գալիս այն հայրենական արտադրողները, որոնց հավաքական արտադրական ծավալը կազմում է ներքին տնտեսության ճյուղի այն նույն հատվածի կողմից արտադրված համանման ապրանքի արտադրության ամբողջ ծավալի 50 տոկոսից ավելին, որը դիմումին կողմ կամ դեմ է հանդես գալիս: Սակայն քննություն չի սկսվում, եթե դիմումին բացահայտ կերպով կողմ հանդես եկող հայրենական արտադրողներին բաժին է ընկնում ներքին տնտեսության ճյուղի կողմից արտադրված համանման ապրանքի արտադրության ընդհանուր ծավալի 25 տոկոսից պակաս ծավալ: Եթե հատուկ հանգամանքներում քննություն իրականացնող համապատասխան մարմինը քննություն սկսելու վերաբերյալ որոշում է ընդունում՝ առանց այդպիսի քննություն սկսելու խնդրանքով ներքին տնտեսության ճյուղի կողմից կամ դրա անունից դիմում ստանալու, ապա իրավասու մարմինը դրան ընթացք է տալիս միայն այն դեպքում, երբ բավարար ապացույցներ ունի սույն հոդվածի 15-րդ կետում ներկայացված գնագցման (հակագնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ հատուկ սուբսիդիայի (փոխհատուցման մասով քննություն անցկացնելու նպատակով), վնասի եւ դրանց միջեւ պատճառահետեւանքային կապի առկայության մասին՝ քննություն սկսելը հիմնավորելու համար:

20. Դիմումը մերժվում է, եւ քննությունն անհապաղ դադարեցվում է այն բանից հետո, երբ Կողմի՝ քննություն իրականացնող մարմինը համոզվում է, որ չկան գործընթացի շարունակումը հիմնավորող՝ գնագցման (հակագնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ սուբսիդավորման (փոխհատուցման տուրքի մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ վնասի առկայության մասին բավարար ապացույցներ: Քննությունն անհապաղ դադարեցվում է այն դեպքերում, երբ Կողմի՝ քննություն իրականացնող մարմինը սահմանում է, որ գնագցման սահմանաչափը կամ սուբսիդիայի գումարը ոչ

էական է (de minimis), կամ որ գնագցող կամ սուբսիդավորվող՝ փաստացի կամ հնարավոր ներմուծումների ծավալը կամ վնասի չափը աննշան է: Գնագցման սահմանաչափը համարվում է ոչ էական, եթե այդ սահմանաչափը 2 տոկոսից պակաս է, որն արտահայտվում է արտահանման գնի տոկոսների ձեւով: Գնագցող ներմուծման ծավալը, որպես կանոն, համարվում է աննշան այն դեպքում, երբ պարզվում է, որ կոնկրետ երկրից գնագցող ներմուծման ծավալը կազմում է ներմուծող Կողմի տարածք համանման ապրանքի ներմուծման ոչ ավելի, քան 3 տոկոսը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այն երկրներին, որոնցից յուրաքանչյուրին առանձին բաժին է ընկնում ներմուծող Կողմի տարածք համանման ապրանքի ներմուծման ոչ ավելի, քան 3 տոկոսը, հավաքականորեն բաժին է ընկնում ներմուծող Կողմի տարածք համանման ապրանքի ներմուծման ավելի, քան 7 տոկոսը:

21. Հակագնագցման եւ փոխհատուցման տուրքի մասով քննություններ անցկացնելու նպատակով «ներքին տնտեսության ճյուղ» եզրույթը պետք է մեկնաբանվի որպես համանման ապրանքների բոլոր հայրենական արտադրողներին կամ միայն նրանց առնչվող, որոնց ապրանքների արտադրության հավաքական ծավալը կազմում է այդ ապրանքների ամբողջ հայրենական արտադրության զգալի մասը, այն բացառությամբ, որ՝

ա) եթե արտադրողները փոխկապակցված են²⁸ արտահանողների կամ ներմուծողների հետ, կամ իրենք են ենթադրյալ գնագցման առարկա հանդիսացող կամ սուբսիդավորվող ապրանքի ներմուծողը, «ներքին

²⁸ Սույն կետի նպատակներով արտադրողներն արտահանողների կամ ներմուծողների հետ փոխկապակցված են համարվում միայն այն դեպքում, երբ ա) նրանցից մեկն ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկողություն է իրականացնում մյուսի նկատմամբ. կամ բ) նրանց երկուսի նկատմամբ էլ ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկողություն է իրականացվում երրորդ անձի կողմից. կամ գ) նրանք միասին ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկողություն են իրականացնում երրորդ անձի նկատմամբ՝ պայմանով, որ հիմքեր կան ենթադրելու կամ կասկածելու, որ այդ կապի ազդեցության հետևանքով տվյալ արտադրողի գործելակերպը կարող է տարբերվել հարցին առնչություն չունեցող արտահանողների գործելակերպից: Սույն համաձայնագրի 3.2 հոդվածի 21-րդ կետի «ա» ենթակետի նպատակներով՝ մեկը վերահսկողություն է իրականացնում մյուսի նկատմամբ, եթե այդ առաջին անձն իրավաբանական կամ գործնական առումով այնպիսի դիրքում է, որ կարող է սահմանափակել կամ ուղղորդել մյուսի գործողությունները:

տնտեսության ճյուղ» եզրույթը կարող է մեկնաբանվել որպես մնացած արտադրողներին առնչվող,

բ) բացառիկ հանգամանքներում տվյալ արտադրության համար Կողմի տարածքը կարող է բաժանված լինել երկու կամ ավելի մրցակցող շուկաների, եւ արտադրողները յուրաքանչյուր շուկայի ներսում կարող են դիտարկվել որպես առանձին ոլորտ, եթե ա) այդպիսի շուկայի ներսում արտադրողները վաճառում են իրենց կողմից արտադրված ապրանքի ամբողջ կամ գրեթե ամբողջ ծավալը, եւ բ) այդ շուկայում պահանջարկն այդ տարածքի այլ հատվածներում գտնվող՝ տվյալ ապրանքի արտադրողների կողմից զգալի չափով չի բավարարվում: Այդպիսի հանգամանքներում վնասի առկայություն կարող է արձանագրվել, նույնիսկ եթե վնաս չի կրում ողջ ներքին տնտեսության ճյուղի հիմնական մասը՝ պայմանով, որ գնագցող կամ սուբսիդավորվող ներմուծումները կենտրոնացված են այդպիսի առանձնացված շուկայում, ինչպես նաեւ այն պայմանով, որ գնագցող կամ սուբսիդավորվող ներմուծման արդյունքում վնաս է հասցվում այդպիսի շուկայում արտադրանքի ամբողջ կամ գրեթե ամբողջ ծավալի արտադրողներին:

22. Մի Կողմի տարածքից մյուս Կողմի տարածք ներմուծված ապրանքի նկատմամբ միաժամանակ չեն կիրառվում հակազնագցման ու փոխհատուցման միջոցներ՝ գնագցման կամ սուբսիդավորման միանման իրավիճակի հետ կապված փոխհատուցման նպատակով:

23. Կողմը մյուս Կողմից ներմուծման նկատմամբ չի կիրառում հակազնագցման կամ փոխհատուցման միջոցներ, մինչեւ քննության ընթացքում չպարզի, որ գնագցման (հակազնագցման միջոցներ կիրառելու նպատակով) կամ հատուկ սուբսիդիայի (փոխհատուցման միջոցներ կիրառելու նպատակով) արդյունքում իր ներքին տնտեսության ճյուղին հասցվում է կամ կարող է հասցվել նյութական վնաս, կամ այն կարող է զգալիորեն դանդաղեցնել ներքին տնտեսության ճյուղի զարգացումը: Վնասի առկայության հաստատումը հիմնվում է դրական ապացույցների վրա եւ ենթադրում է ա) գնագցող ներմուծման (հակազնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ

սուբսիդավորվող ներմուծման (փոխհատուցման մասով քննություն անցկացնելու նպատակով) ծավալի եւ ներքին շուկայում համանման ապրանքների գների վրա այդպիսի ներմուծման ազդեցության, ինչպես նաեւ թ) այդ ապրանքների հայրենական արտադրողների վրա այդպիսի ներմուծման հետագա ազդեցության օբյեկտիվ ուսումնասիրումը: Ինչ վերաբերում է գնագրող ներմուծման (հակազնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ սուբսիդավորվող ներմուծման (փոխհատուցման տուրքի մասով քննություն անցկացնելու նպատակով) ծավալին, քննություն իրականացնող մարմինները դիտարկում են, թե արդյոք տեղի է ունեցել գնագրող ներմուծման (հակազնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ սուբսիդավորվող ներմուծման (փոխհատուցման տուրքի մասով քննություն անցկացնելու նպատակով) ծավալների զգալի աճ՝ ներմուծող Կողմի տարածքում արտադրության կամ սպառման ծավալների բացարձակ կամ հարաբերական ցուցանիշներով: Ինչ վերաբերում է գների վրա գնագրող ներմուծման (հակազնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ սուբսիդավորվող ներմուծման (փոխհատուցման տուրքի մասով քննություն անցկացնելու նպատակով) ազդեցությանը, քննություն իրականացնող մարմինները դիտարկում են, թե արդյոք գնագրող ներմուծման (հակազնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ սուբսիդավորվող ներմուծման (փոխհատուցման տուրքի մասով քննություն անցկացնելու նպատակով) հետեւանքով տեղի է ունեցել գնի զգալի կրճատում՝ ներմուծող Կողմի համանման ապրանքի գնի համեմատ, կամ արդյոք այդ ներմուծման ազդեցության հետեւանքով գներն այլ կերպ զգալիորեն նվազում են, կամ դրանով զգալիորեն կանխվում է գների աճը, ինչը հակառակ պարագայում տեղի կունենար: Ներքին տնտեսության դիտարկվող ճյուղի վրա գնագրող ներմուծման (հակազնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ սուբսիդավորվող ներմուծման (փոխհատուցման տուրքի մասով քննություն անցկացնելու նպատակով) ազդեցության ուսումնասիրումը ներառում է տվյալ ճյուղի վիճակին առնչվող բոլոր համապատասխան տնտեսական գործոնների ու ցուցիչների գնահատումը,

ներառյալ՝ վաճառքի, շահույթի, արտադրանքի, շուկայում մասնաբաժնի, արտադրողականության, ներդրումներից ստացվող եկամուտների կամ հզորությունների օգտագործման փաստացի եւ հնարավոր նվազումը, ներքին շուկայի գների վրա ազդող գործոնները, գնագցման սահմանաչափի մեծությունը (հակագնագցման մասով քննություն անցկացնելու դեպքում), կանխիկ դրամական միջոցների շարժի վրա փաստացի եւ հնարավոր բացասական ազդեցությունը, ապրանքային պաշարները, զբաղվածությունը, աշխատավարձերը, աճի տեմպերը, կապիտալ կամ ներդրումներ ներգրավելու հնարավորությունը: Տվյալ ցանկը սպառիչ չէ. նշված գործոններից ոչ մեկը եւ ոչ էլ մի քանիսը, իհարկե, չեն կարող որոշիչ նշանակություն ունենալ: Գնագցող ներմուծման (հակագնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ սուբսիդավորվող ներմուծման (փոխհատուցման տուրքի մասով քննություն անցկացնելու նպատակով) եւ ներքին տնտեսության ճյուղին հասցված վնասի միջեւ պատճառահետեանքային կապի առկայությունը հիմնվում է քննություն իրականացնող մարմնի տիրապետման տակ գտնվող՝ գործին առնչվող բոլոր ապացույցների ուսումնասիրման վրա: Գնագցող ներմուծումից (հակագնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ սուբսիդավորվող ներմուծումից (փոխհատուցման տուրքի մասով քննություն անցկացնելու նպատակով) բացի՝ քննություն իրականացնող մարմինն ուսումնասիրում է նաեւ ցանկացած այլ հայտնի գործոն, որն այդ նույն ժամանակահատվածում վնաս է հասցնում ներքին տնտեսության ճյուղին, եւ այդ գործոններով հասցվող վնասը չպետք է դիտարկվի որպես գնագցող ներմուծման (հակագնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ սուբսիդավորվող ներմուծման (փոխհատուցման տուրքի մասով քննություն անցկացնելու նպատակով) հետեանքով հասցվող վնաս: Գործոնները, որոնք կարող են վերաբերելի լինել այս առումով, ներառում են, ի թիվս այլնի, գնագցող գներով (հակագնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) չվաճառված՝ ներմուծումների ծավալը եւ գները կամ չսուբսիդավորվող ներմուծման (փոխհատուցման տուրքի մասով քննություն անցկացնելու նպատակով) ծավալը եւ գները, պահանջարկի նվազումը կամ սպառման

կառուցվածքի փոփոխությունները, օտարերկրյա եւ հայրենական արտադրողների առեւտրային սահմանափակումները եւ նրանց միջեւ մրցակցությունը, տեխնոլոգիական զարգացումները, արտահանման ցուցանիշները եւ ներքին տնտեսության ճյուղի արտադրողականությունը: Նյութական վնաս հասցնելու վտանգի առկայության հաստատումը պետք է հիմնված լինի փաստերի, այլ ոչ թե անհիմն պնդումների, ենթադրությունների կամ ոչ հստակ հավանականության վրա: Այն հանգամանքների փոփոխությունը, որոնք կարող էին հանգեցնել այնպիսի իրավիճակի, որ գնագցման (հակագնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ սուբսիդավորման (փոխհատուցման տուրքի մասով քննություն անցկացնելու նպատակով) հետեւանքով կարող է վնաս հասցվել, պետք է անհապաղ հստակ կանխատեսվի: Նյութական վնաս հասցնելու վտանգի առկայության վերաբերյալ որոշում կայացնելիս քննություն իրականացնող մարմինները պետք է, ի թիվս այլնի, հաշվի առնեն հետեւյալ գործոնները. i) տվյալ սուբսիդիայի կամ սուբսիդիաների բնույթը եւ առեւտրի վրա այն ազդեցությունը, որը դա կարող է առաջ բերել (փոխհատուցման տուրքի մասով քննություն անցկացնելու նպատակով). ii) ներքին շուկա գնագցող ներմուծման (հակագնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ սուբսիդավորվող ներմուծման (փոխհատուցման տուրքի մասով քննություն անցկացնելու նպատակով) ծավալների ավելացման զգալի տեմպը, ինչը վկայում է ներմուծման ծավալների զգալի ավելացման հավանականության մասին, iii) արտահանողի ազատ տնօրինելի՝ բավարար ներուժի կամ արտահանողի ներուժի անխուսափելի զգալի ավելացումը, ինչը վկայում է ներմուծող Կողմի շուկա գնագցող արտահանման (հակագնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ սուբսիդավորվող արտահանման (փոխհատուցման տուրքի մասով քննություն անցկացնելու նպատակով) ծավալների զգալի աճի հավանականության մասին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այլ արտահանման շուկաներ հնարավոր է ծածկեն ցանկացած լրացուցիչ արտահանում, iv) արդյոք ներմուծվող ապրանքները մուտք են գործում այնպիսի գներով, որոնք կունենան զգալի նվազեցնող կամ զսպող ազդեցություն ներքին

գների վրա, եւ կարող են ավելացնել հետագայում ներմուծվող ապրանքների պահանջարկը, եւ v) քննության ենթարկվող ապրանքի պաշարները: Պարտադիր չէ, որ այս գործոններից որեւէ մեկն առանձին-առանձին լինի հստակ ուղենիշ, սակայն հաշվի առնելով դիտարկվող բոլոր գործոնները՝ կարելի է հանգել այնպիսի եզրակացության, որ հետագա գնագցող արտահանումը (հակազնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ սուբսիդավորվող արտահանումը (փոխհատուցման տուրքի մասով քննություն անցկացնելու նպատակով) անխուսափելի է, եւ որ պաշտպանության միջոցներ չձեռնարկվելու դեպքում կհասցվի նյութական վնաս: Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ գնագցող ներմուծման (հակազնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ սուբսիդավորվող ներմուծման (փոխհատուցման տուրքի մասով քննություն անցկացնելու նպատակով) հետեւանքով առկա է վնաս պատճառելու սպառնալիք, հանգամանորեն քննարկվում է հակազնագցման եւ փոխհատուցման միջոցների կիրառման հարցը, եւ կայացվում է որոշում դրա վերաբերյալ:

24. Նախնական միջոցներ կարող են ձեռնարկվել միայն, եթե i) քննություն է նախաձեռնվել սույն հոդվածի 15-20-րդ կետերի դրույթներին համապատասխան, դրա վերաբերյալ ուղարկվել է հրապարակային ծանուցում, եւ շահագրգիռ կողմերին տրվել է տեղեկություններ ներկայացնելու եւ դիտողություններ անելու համարժեք հնարավորություն, ii) գնագցման (հակազնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ հատուկ սուբսիդիայի (փոխհատուցման տուրքի մասով քննություն անցկացնելու նպատակով) առկայության եւ դրա հետեւանքով ներքին տնտեսության ճյուղին հասցված վնասի մասին տրվել է նախնական դրական եզրակացություն, եւ iii) քննություն իրականացնող համապատասխան մարմիններն այս միջոցները համարում են քննության ընթացքում հասցվող վնասը կանխելու համար անհրաժեշտ: Նախնական միջոցները չեն կիրառվում քննությունն սկսելու ամսաթվից 60 օրվանից ոչ շուտ: Նախնական միջոցների կիրառումը

սահմանափակվում է հնարավորինս կարճ՝ 4 ամիսը չգերազանցող ժամանակահատվածով, կամ առետրի զգալի մասը ներկայացնող արտահանողների խնդրանքի հիման վրա համապատասխան մարմինների կողմից ընդունված որոշմամբ՝ 6 ամիսը չգերազանցող ժամանակահատվածով: Երբ քննություն իրականացնող մարմինը քննության ընթացքում ուսումնասիրում է, թե արդյոք գնագցման սահմանաչափից ավելի ցածր տուրքը բավարար է վնասի վերացման համար, այդ ժամանակահատվածները կարող են կազմել համապատասխանաբար 6 եւ 9 ամիս:

25. Մյուս Կողմից ներմուծման նկատմամբ փոխհատուցման տուրքի մասով քննություն սկսելու մտադրություն ունեցող Կողմը մինչեւ քննություն սկսելը մյուս Կողմին հրավիրում է խորհրդակցությունների՝ իրավիճակը պարզաբանելու եւ փոխընդունելի որոշում կայացնելու նպատակով: Բացի այդ, քննության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում այն Կողմին, որի ապրանքները քննության առարկա են, տրամադրվում է խորհրդակցությունները շարունակելու ողջամիտ հնարավորություն՝ փաստացի իրավիճակը պարզելու եւ փոխընդունելի որոշում կայացնելու նպատակով: Առանց խորհրդակցությունների համար ողջամիտ հնարավորություն տրամադրելու պարտավորությունը խախտելու՝ խորհրդակցություններին առնչվող սույն դրույթներով նպատակ չի հետապնդվում խոչընդոտել Կողմի իրավասու մարմիններին քննություն սկսելիս, նախնական կամ վերջնական դրական կամ բացասական եզրակացություններ տրամադրելիս կամ սույն համաձայնագրի դրույթներին համապատասխան նախնական կամ վերջնական միջոցներ կիրառելիս անհապաղ գործելու հարցում: Փոխհատուցման տուրքի մասով ցանկացած քննություն սկսելու մտադրություն ունեցող կամ այդպիսի քննություն իրականացնող Կողմն այն Կողմի պահանջով, որի ապրանքները ենթարկվում են այդպիսի քննության, հասանելիություն է տրամադրում ոչ գաղտնի տեղեկատվությանը, ներառյալ՝ քննություն սկսելու կամ անցկացնելու համար օգտագործվող գաղտնի տվյալների ոչ գաղտնի ամփոփագիրը:

26. Հակազնագցման տուրքի չափը չի գերազանցում գնագցման սահմանաչափը: Քննություն իրականացնող մարմինները, որպես կանոն, հնարավոր լինելու դեպքում սահմանում են գնագցման առանձին սահմանաչափ՝ քննության ենթարկվող ապրանքի յուրաքանչյուր հայտնի արտահանողի կամ արտադրողի համար: Փոխհատուցման տուրքի դրույքաչափը չի գերազանցում արտահանող Կողմի հատուկ սուբսիդիայի չափը, որը հաշվարկված է սուբսիդավորման պայմաններով սուբսիդավորվող եւ արտահանվող ապրանքի միավորի համար:

27. Քննություն իրականացնող մարմինները տուրքի կանոնավոր սահմանման անհրաժեշտությունը վերանայում են երաշխիքների առկայության դեպքում՝ սեփական նախաձեռնությամբ կամ պայմանով, որ հակազնագցման տուրքի (հակազնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ փոխհատուցման տուրքի (փոխհատուցման տուրքի մասով քննություն անցկացնելու նպատակով) սահմանումից հետո անցել է ողջամիտ ժամանակ՝ վերանայման անհրաժեշտությունը հիմնավորող, հավաստի տեղեկություններ ներկայացնող ցանկացած շահագրգիռ կողմի պահանջով: Շահագրգիռ կողմերն իրավունք ունեն քննություն իրականացնող մարմիններից պահանջելու այն հարցի ուսումնասիրումը, թե արդյոք տուրքի կանոնավոր սահմանումն անհրաժեշտ է գնագցումը (հակազնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ սուբսիդավորումը (փոխհատուցման տուրքի մասով քննություն անցկացնելու նպատակով) հավասարակշռելու համար, եւ թե արդյոք վնաս հասցնելու գործընթացը կարող է շարունակվել կամ վերսկսվել, եթե տուրքը վերացվի կամ փոփոխվի, կամ միաժամանակ երկու դեպքում: Հակազնագցման կամ փոխհատուցման միջոցի գործողության ժամանակահատվածը չի գերազանցում այդ միջոցի կիրառման օրվանից հինգ տարին եւ շարունակվում է այն ժամանակահատվածի ընթացքում ու այնքան, որքան անհրաժեշտ է վնաս հասցնող գնագցմանը կամ սուբսիդավորմանը հակազդելու համար: Հակազնագցման կամ փոխհատուցման միջոցի գործողության

ժամանակահատվածը ներառում է նախնական միջոցի կիրառման ժամանակահատվածը: Հակազնագցման կամ փոխհատուցման միջոցի գործողության ժամանակահատվածը կարող է երկարաձգվել գնագցմանը եւ վնասին (հակազնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ սուբսիդավորմանը եւ վնասին (փոխհատուցման տուրքի մասով քննություն անցկացնելու նպատակով) առնչվող վերջին վերանայման օրվանից կամ միջոցի գործողության ժամկետը լրանալու հետ կապված՝ վերանայումն ավարտելու օրվանից հինգ տարին չգերազանցող ժամանակահատվածով: Հակազնագցման կամ փոխհատուցման միջոցների գործողության ժամկետը երկարաձգելու վերաբերյալ որոշումը կարող է ընդունվել, եթե քննություն իրականացնող մարմինները մինչեւ հակազնագցման կամ փոխհատուցման միջոցների գործողությունը դադարեցնելու օրը սեփական նախաձեռնությամբ կամ մինչեւ այդ օրը ողջամիտ ժամկետի ընթացքում ներքին տնտեսության ճյուղի կողմից կամ դրա անունից ներկայացված՝ պատշաճորեն հիմնավորված հարցման հիման վրա սկսված վերանայման արդյունքներով որոշեն, որ տուրքի գործողության ժամկետը լրանալը հավանաբար կհանգեցնեք սուբսիդավորման (փոխհատուցման տուրքի մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ գնագցման (հակազնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) եւ վնաս հասցնելու գործընթացի շարունակմանը կամ կրկնմանը: Սույն հոդվածի՝ ապացույցների եւ ընթացակարգի վերաբերյալ դրույթները կիրառվում են սույն հոդվածին համապատասխան իրականացված ցանկացած վերանայման նկատմամբ: Ցանկացած այդպիսի վերանայում իրականացվում է արագացված կարգով եւ որպես կանոն, ավարտվում է վերանայումն սկսելու օրվանից 12 ամսվա ընթացքում:

28. Քննությունն իրականացնող Կողմը բոլոր շահագրգիռ կողմերին տրամադրում է տվյալներ եւ իրենց տեսակետները ներկայացնելու հնարավորություն, ներառյալ՝ մյուս շահագրգիռ կողմերի ներկայացրած նյութերին արձագանքելու հնարավորությունը: Քննությունն իրականացնող Կողմը պահանջի դեպքում բոլոր շահագրգիռ կողմերի համար ապահովում է հակադիր շահեր

ունեցող կողմերի հետ հանդիպելու հնարավորություն, որ ներկայացվեն հակադիր տեսակետներ եւ հերքող փաստարկներ: Քննությունն իրականացնող Կողմը շահագրգիռ կողմերին ուղարկում է ծանուցում՝ նշելով այդ հանդիպումների ժամանակ վայրը, ինչպես նաեւ դրանց ընթացքում քննարկման համար նախատեսված հարցերի ցանկը:

29. Քննության բոլոր շահագրգիռ կողմերին ծանուցում են իրավասու մարմիններին անհրաժեշտ տեղեկատվության մասին, եւ նրանց ընձեռնվում է բավարար հնարավորություն՝ գրավոր ներկայացնելու այն բոլոր տվյալները, որոնք, ըստ նրանց, վերաբերում են տվյալ քննությանը: Արտահանողներին, օտարերկրյա արտադրողներին կամ արտահանող Կողմի շահագրգիռ մարմիններին, որոնց տրամադրվում են քննության ընթացքում օգտագործված հարցաշարերը, պատասխանելու համար տրվում է առնվազն 30 օր: Պատշաճ ուշադրություն պետք է դարձնել 30-օրյա ժամկետը երկարաձգելու ցանկացած պահանջի, եւ համապատասխան հիմնավորում ներկայացնելու դեպքում գործնականում հնարավոր լինելու պարագայում այդ երկարաձգումը տրամադրվում է: Հաշվի առնելով գաղտնի տեղեկատվության պաշտպանությանը ներկայացվող պահանջը՝ մի շահագրգիռ կողմի գրավոր ներկայացրած տվյալներն անհապաղ հասանելի են դառնում քննությանը մասնակցող մյուս շահագրգիռ կողմերի համար: Քննությունն սկսելուց անմիջապես հետո իրավասու մարմինները հայտնի արտահանողներին ու արտահանող Կողմի իրավասու մարմիններին են ներկայացնում գրավոր դիմումի ամբողջական տեքստը եւ պահանջի դեպքում այն տրամադրում են մյուս մասնակից շահագրգիռ կողմերին: Պատշաճորեն հաշվի է առնվում գաղտնի տեղեկատվության պաշտպանությանը ներկայացվող պահանջը՝ սույն հոդվածի 30-րդ կետով նախատեսված կարգով: Քննությունն իրականացնող մարմինները պատշաճ ձեւով հաշվի են առնում ցանկացած խնդիր, որին բախվում են շահագրգիռ կողմերը, մասնավորապես՝ փոքր ընկերությունները՝ պահանջվող տեղեկությունները տրամադրելիս, եւ տրամադրում են ցանկացած հնարավոր աջակցություն:

30. Ցանկացած տեղեկատվություն, որն իր բնույթով գաղտնի է (օրինակ՝ որովհետեւ դրա հրապարակման արդյունքում մրցակիցն էական մրցակցային առավելություն կունենար, կամ որովհետեւ դրա հրապարակումը կհանգեցնէր զգալի բացասական հետեւանքների՝ տեղեկատվությունը տրամադրած անձի կամ այն անձի համար, որից տվյալ անձն ստացել է այդ տեղեկատվությունը), կամ որը քննության կողմերի կողմից ներկայացվում է գաղտնի ձեւով, բավարար հիմքեր ներկայացնելու դեպքում Կողմերի կողմից դիտարկվում է որպես գաղտնի տեղեկատվություն: Այդպիսի տեղեկատվությունը չի հրապարակվում կամ չի փոխանցվում երրորդ կողմերի՝ առանց դա տրամադրող կողմի՝ գրավոր ձեւով ներկայացված հատուկ թույլտվության: Քննությունն իրականացնող Կողմերը գաղտնի տեղեկատվությունը տրամադրող շահագրգիռ կողմերից պահանջում են ներկայացնել դրա ոչ գաղտնի ամփոփագիրը: Այդպիսի ամփոփագրերը կազմվում են բավականաչափ մանրամասն՝ որպես գաղտնի տրամադրված տեղեկատվությունը ողջամիտ կերպով հասկանալու համար: Բացառիկ դեպքերում այդ կողմերը կարող են նշել, որ տվյալ տեղեկատվությունն ամփոփ տարբերակով ներկայացման ենթակա չէ: Այդպիսի բացառիկ դեպքերում պետք է ներկայացվեն այն պատճառները, թե ամփոփագիր կազմելն ինչու է անհնար:

31. Քննությունն իրականացնող Կողմը բոլոր շահագրգիռ կողմերին է ուղարկում հրապարակային ծանուցում՝ քննություն սկսելու, ցանկացած նախնական կամ վերջնական, ինչպես դրական, այնպես էլ բացասական որոշման, գնային պարտավորություններ ստանձնելու, այդ պարտավորությունները դադարեցնելու եւ վերջնական հակազնագցման տուրքի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ ցանկացած որոշման մասին:

32. Հակազնագցման կամ փոխհատուցման միջոց կիրառելու մտադրություն ունեցող Կողմը մինչեւ վերջնական որոշում ընդունելը բոլոր շահագրգիռ կողմերին տեղեկացնում է ուսումնասիրվող այն էական փաստերի մասին, որոնք վերջնական միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ որոշում ընդունելու

համար հիմք են ձեռնվորում: Այդպիսի տեղեկատվությունը պետք է հրապարակվի ժամանակին, որպեսզի կողմերը կարողանան պաշտպանել իրենց շահերը:

33. Քննությունն սկսելու մասին հրապարակային ծանուցումը պարունակում է համապատասխան տեղեկատվություն հետևյալ հարցերի վերաբերյալ.

ա) քննությունն սկսելու ամսաթիվը.

բ) քննության ենթակա ապրանքի հստակ նկարագիրը եւ դրա դասակարգումը՝ Ներդաշնակեցված համակարգին համապատասխան.

գ) արտահանող երկրի կամ երկրների անվանումը (անվանումները).

դ) այն հիմնավորումը, համաձայն որի դիմումի մեջ ներկայացվում է գնագցման մասին ենթադրությունը (հակագնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ քննության ենթակա սուբսիդավորման գործելակերպի կամ գործելակերպերի նկարագիրը (փոխհատուցման տուրքի մասով քննություն անցկացնելու նպատակով).

ե) այն գործոնների կրճատ նկարագիրը, որոնց վրա հիմնվում է վնասի վերաբերյալ ենթադրությունը.

զ) շահագրգիռ կողմերի կողմից ապացույցներ ներկայացնելու, այլ շահագրգիռ կողմերի ներկայացրած նյութերի վերաբերյալ մեկնաբանություններ անելու եւ դրանց պատասխանելու վերջնաժամկետները.

է) այն հասցեն, որին Կողմը, որի ապրանքների առնչությամբ անցկացվում է քննությունը, եւ դրա շահագրգիռ կողմերը կարող են ուղարկել նյութեր.

ը) քննությունն իրականացնող մարմնի անվանումը, հասցեն եւ հեռախոսահամարը:

34. Կողմերը բոլոր շահագրգիռ կողմերին ուղարկում են հրապարակային ծանուցում ցանկացած թե՛ դրական եւ թե՛ բացասական, նախնական կամ վերջնական եզրակացության մասին՝ հրապարակելով առանձին հաշվետվություն,

որում ներկայացվում են բոլոր նախնական եւ վերջնական որոշումներն ու եզրակացությունները՝ համապատասխան փաստական ու իրավական բոլոր հարցերի վերաբերյալ:

35. Ցանկացած նախնական եզրակացության մասին հրապարակային ծանուցում, որում պատշաճորեն հաշվի են առնվում գաղտնի տեղեկատվության պաշտպանությանը ներկայացվող պահանջները, ի թիվս այլնի, ներառում է՝

ա) քննության առարկա հանդիսացող ապրանքի հստակ նկարագիրը.

բ) գնագցող ներմուծման վերաբերյալ դրական եզրակացության համար հիմքերը՝ գնագցման սահմանաչափի նշամաք եւ օգտագործված մեթոդաբանության հիմքերի նկարագրով (հակագնագցման մասով քննություն անցկացնելու դեպքում).

գ) սուբսիդավորվող ներմուծման վերաբերյալ դրական եզրակացության համար հիմքերը՝ սուբսիդիայի էության նկարագրով եւ միավորի համար հաշվարկված՝ սուբսիդավորման գումարի նշամաք (փոխհատուցման մասով քննություն անցկացնելու դեպքում).

դ) ներքին տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասի կամ այդպիսի վնաս հասցնելու վտանգի առկայությունը կամ ներքին տնտեսության ճյուղի զարգացման էական դանդաղեցումը որոշելու համար հիմքերը.

ե) գնագցող (հակագնագցման մասով քննություն անցկացնելու նպատակով) կամ սուբսիդավորվող (փոխհատուցման տուրքի մասով քննություն անցկացնելու նպատակով) ներմուծման եւ ներքին տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու, այդպիսի վնաս հասցնելու վտանգի կամ ներքին տնտեսության ճյուղի զարգացումը զգալիորեն դանդաղեցնելու միջեւ պատճառահետեւանքային կապը հաստատելու համար հիմքերը.

զ) այն պատճառները, որոնց հիման վրա կարելի է ընդունել, որ նախնական միջոցներն անհրաժեշտ են քննությունն անցկացնելու ընթացքում հասցվող վնասը կանխելու համար:

36. Ցանկացած վերջնական եզրակացության մասին հրապարակային ծանուցում, որում պատշաճորեն հաշվի են առնվում գաղտնի տեղեկատվության պաշտպանությանը ներկայացվող պահանջները, ի թիվս այլնի, ներառում է՝

ա) պարզաբանումներ՝ քննություն իրականացնող մարմնի կողմից քննության արդյունքների հիման վրա տրված վերջնական եզրակացության վերաբերյալ.

բ) հղում այն փաստերին, որոնց հիման վրա տրվել է այդ եզրակացությունը.

գ) սույն հոդվածի 35-րդ կետում նշված տեղեկատվությունը.

դ) քննության առարկա հանդիսացող ապրանքն արտահանողների ու ներմուծողների փաստարկներն ու պահանջներն ընդունելու կամ մերժելու պատճառները:

37. Կողմը կարող է մյուս Կողմի արտադրողների կամ արտահանողների կողմից վաճառվող ապրանքի ներմուծման նկատմամբ կիրառել պատժամիջոցների շրջանցումը կանխող միջոցներ միայն Կողմի՝ քննություն իրականացնող մարմնի կողմից իրականացված՝ պատժամիջոցների շրջանցումը կանխող ուսումնասիրությունից հետո:

38. Պատժամիջոցների շրջանցումը կանխող միջոցը կարող է չկիրառվել մյուս Կողմի արտադրողների կամ արտահանողների կողմից վաճառվող ապրանքի ներմուծման նկատմամբ, եթե քննություն իրականացնող մարմինը հավաստի ապացույցներով չի հաստատում շրջանցման փաստը:

Հոդված 3.3

Համընդհանուր պաշտպանական միջոցները

1. Յուրաքանչյուր Կողմ կիրառում է պաշտպանական միջոցներ՝ իր օրենսդրության համաձայն, եթե սույն գլխով այլ բան նախատեսված չէ:

2. Կողմը կարող է կիրառել ապրանքի նկատմամբ համընդհանուր պաշտպանական միջոց միայն այն դեպքում, երբ տվյալ Կողմը որոշել է, որ այդպիսի ապրանքն իր տարածք է ներմուծվում ներքին արտադրության նկատմամբ բացարձակ կամ հարաբերական այնպիսի ավելացված քանակով եւ այնպիսի պայմաններով, որոնք կարող են լուրջ վնաս հասցնել կամ դրա առաջացման վտանգ ներկայացնել համանման կամ ուղղակիորեն մրցակից ապրանքներ արտադրող ներքին տնտեսության ճյուղի համար:

3. Վնասը կամ դրա վտանգը որոշելիս «ներքին տնտեսության ճյուղ» եզրույթը պետք է հասկանալ այնպես, որ դա նշանակում է Կողմի տարածքում գործող համանման կամ ուղղակիորեն մրցակից ապրանքների արտադրողները՝ ամբողջությամբ վերցրած, կամ այն արտադրողները, որոնց համանման կամ ուղղակիորեն մրցակից ապրանքների արտադրությունը կազմում է այդ ապրանքի ամբողջ ներքին արտադրության մեծ մասը:

4. Համընդհանուր պաշտպանական միջոցները կիրառվում են ներմուծվող ապրանքի նկատմամբ՝ անկախ արտահանող երկրից: Չհակասելով սույն համաձայնագրի 2.7 եւ 2.3 հոդվածներին՝ համընդհանուր պաշտպանական միջոցը կարող է դրսեւորվել քանակական սահմանափակման ձեւով: Եթե օգտագործվում է քանակական սահմանափակում, ապա այդպիսի միջոցը չի նվազեցնում ներմուծումների քանակը վերջին ժամանակահատվածի մակարդակից ավելի ցածր, որը ներմուծման միջինն է այն 3 վերջին ներկայացուցչական տարիների կտրվածքով, որոնց համար առկա է վիճակագրություն, եթե չկա հստակ հիմնավորում առ այն, որ լուրջ վնասները կանխելու կամ հատուցելու համար անհրաժեշտ են տարբեր մակարդակներ: Այն դեպքերում, երբ քվոտան բաշխվում է մատակարարող երկրների միջեւ, համընդհանուր պաշտպանական միջոցը կիրառող Կողմը կարող է քվոտայում մասնաբաժինների բաշխման վերաբերյալ համաձայնություն ձեռք բերել մյուս Կողմի հետ, որն էական շահագրգռվածություն ունի համապատասխան ապրանքը մատակարարելու հարցում: Այն դեպքերում, երբ այս մեթոդը ողջամտորեն

կիրառելի չէ, շահագրգիռ Կողմն ապրանքի մատակարարման հարցում էական շահագրգռվածություն ունեցող մյուս Կողմին հատկացնում է մասնաբաժին՝ հիմնվելով նախորդ 3 տարվա ընթացքում այդ Կողմի կողմից մատակարարված ապրանքի ընդհանուր քանակի կամ ներմուծման արժեքի համամասնությունների վրա՝ պատշաճ կերպով հաշվի առնելով ցանկացած հատուկ գործոն, որը կարող է ազդած լինել կամ կարող է ազդել ապրանքի առետրի վրա: Եթե Իրանի Իսլամական Հանրապետությունը մտադրվի կիրառել համընդհանուր պաշտպանական միջոց՝ քվոտայի տեսքով, եւ այն բաշխել մատակարարող երկրների միջեւ, այդպիսի քվոտան կհաշվարկվի եւ կկիրառվի ԵԱՏՄ յուրաքանչյուր անդամ պետության համար առանձին: Կողմերը պաշտպանական միջոցներ կիրառում են միայն այնքանով, որքանով դա անհրաժեշտ է լուրջ վնասը կանխելու կամ հատուցելու եւ կարգավորումների գործընթացը դյուրացնելու համար:

5. Կողմը պաշտպանական միջոցներ կիրառում է միայն այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է լուրջ վնասը կանխելու կամ հատուցելու եւ կարգավորումների գործընթացը դյուրացնելու համար: Պաշտպանական միջոցի կիրառման ժամկետը չպետք է գերազանցի 4 տարին, եթե միայն այն չի երկարաձգվում: Պաշտպանական միջոցի կիրառման ընդհանուր ժամկետը, ներառյալ՝ ցանկացած ժամանակավոր միջոցի կիրառման ժամկետը, նախնական կիրառման ժամկետը եւ դրա երկարաձգումը, սահմանվում են Կողմի օրենսդրությանը համապատասխան եւ չպետք է գերազանցեն 10 տարին: Այս ժամկետը կարող է երկարաձգվել՝ պայմանով, որ ներմուծող Կողմի՝ քննություն իրականացնող մարմինները որոշել են, որ պաշտպանական միջոցը շարունակում է անհրաժեշտ լինել լուրջ վնասը կանխելու կամ հատուցելու համար, եւ որ կան ապացույցներ, որ տնտեսության ճյուղը կարգավորվում է, եւ պայմանով, որ սույն հոդվածի 11-15-րդ կետերի համապատասխան դրույթները պահպանվում են:

6. Լուրջ վնաս ասելով՝ պետք է հասկանալ ներքին տնտեսության ճյուղի վիճակի ընդհանուր զգալի խաթարում: Լուրջ վնասի վտանգ ասելով՝ պետք է

հասկանալ լուրջ վնաս, որն ակնհայտորեն անխուսափելի է: Լուրջ վնասի վտանգի առկայությունը որոշելը պետք է հիմնված լինի փաստերի, այլ ոչ թե անհիմն պնդումների, ենթադրությունների կամ ոչ հստակ հավանականության վրա: Քննության ընթացքում, որն իրականացվում է պարզելու համար, թե արդյոք ներմուծման ծավալների ավելացումը լուրջ վնաս է պատճառել ներքին տնտեսության ճյուղին կամ լուրջ վնաս պատճառելու վտանգ է ներկայացնում դրա համար, քննություն իրականացնող մարմինները գնահատում են օբյեկտիվ բնույթ կրող եւ քանակապես հաշվելի բոլոր համապատասխան գործոնները, որոնք ազդում են տնտեսության տվյալ ճյուղի այդ վիճակի վրա, մասնավորապես՝ բացարձակ եւ հարաբերական արտահայտությամբ տվյալ ապրանքի ներմուծման աճի տեմպը եւ չափը, ներմուծման ավելացած ծավալներով զբաղեցված ներքին շուկայի մասնաբաժինը, վաճառքի, արտադրության, արտադրողականության, արտադրական կարողությունների օգտագործման, շահույթների եւ կորուստների եւ զբաղվածության մակարդակի փոփոխությունները: Այս որոշումը չպետք է կայացվի, քանի դեռ այս քննությամբ օբյեկտիվ ապացույցների հիման վրա չի պարզվել պատճառահետեանքային կապի առկայությունը տվյալ ապրանքի ներմուծման ավելացման եւ դրան հասցվող լուրջ վնասի կամ վնաս հասցնելու վտանգի միջեւ: Երբ ներմուծման ավելացումից բացի այլ գործոններ միաժամանակ վնաս են պատճառում ներքին տնտեսության ճյուղին, ապա այդպիսի վնասը չի վերագրվում ներմուծման ավելացմանը:

7. Իրավիճակի կարգավորումը հեշտացնելու համար, երբ պաշտպանական միջոցի գործողության ակնկալվող տեւողությունը մեկ տարուց ավելի է, միջոցը կիրառող Կողմը դրա կիրառման ընթացքում կանոնավոր պարբերականությամբ աստիճանաբար ազատականացնում է այն: Եթե միջոցի գործողության տեւողությունը գերազանցում է 3 տարին, ապա այդ միջոցը կիրառող Կողմը վերանայում է իրավիճակը միջոցի գործողության ժամկետի կեսերից ոչ ուշ եւ անհրաժեշտության դեպքում հետ է կանչում այն կամ արագացնում է դրա ազատականացման տեմպերը: Սույն հոդվածի 5-րդ կետով

երկարաձգված միջոցը չպետք է լինի ավելի սահմանափակող, քան այն եղել է սկզբնական ժամանակահատվածի վերջում, եւ պետք է շարունակվի դրա ազատականացումը:

8. Կողմերը կարող են պաշտպանական միջոց կիրառել միայն քննություն իրականացնող մարմնի կողմից իրականացված քննությունից հետո: Քննությունը ներառում է շահագրգիռ բոլոր կողմերի հրապարակային ծանուցում եւ հնարավորություն է ընձեռում շահագրգիռ կողմերին ներկայացնելու ապացույցներ եւ իրենց տեսակետները, ներառյալ՝ այլ կողմերի կողմից ներկայացված այն կարծիքներին պատասխանելու հնարավորությունը, *ի թիվս այլնի*, որոնք վերաբերում են այն հարցին՝ արդյոք պաշտպանական միջոցի կիրառումը բխում է հանրության շահերից, թե՛ ոչ: Քննություն իրականացնող մարմինը հրապարակում է հաշվետվություն, որտեղ ներառված են բացահայտումներ եւ եզրակացություններ՝ համապատասխան փաստական եւ իրավական բոլոր հարցերի վերաբերյալ:

9. Ծայրահեղ դեպքերում, երբ ուշացնելու հետեանքով կարող է պատճառվել այնպիսի վնաս, որը դժվար կլինի հատուցել, Կողմը կարող է ձեռնարկել ժամանակավոր պաշտպանական միջոց՝ համաձայն նախնական այն որոշման, որ կան հստակ ապացույցներ առ այն, որ ավելացած ծավալներով ներմուծման հետեանքով լուրջ վնաս է պատճառվել կամ լուրջ վնաս պատճառելու վտանգ է առաջացել: Ժամանակավոր միջոցի գործողության տեւողությունը չպետք է գերազանցի 200 օրը: Այդպիսի միջոցները պետք է լինեն սակագների աճի տեսքով, որոնք պետք է անհապաղ փոխհատուցվեն, եթե հետագա քննությամբ չպարզվի, որ ավելացած ծավալներով ներմուծման հետեանքով ներքին տնտեսության ճյուղին լուրջ վնաս է պատճառվել, կամ լուրջ վնաս պատճառելու վտանգ կա: Այդպիսի ցանկացած ժամանակավոր միջոցի գործողության տեւողությունը հաշվվում է որպես սույն հոդվածի 5-րդ կետում նշված սկզբնական ժամանակահատվածի եւ ցանկացած երկարաձգման մաս:

10. Յանկացած տեղեկություն, որն իր բնույթով գաղտնի է, կամ որը տրամադրվում է գաղտնի հիմունքներով, պատճառները ցույց տալուց հետո պետք է քննություն իրականացնող մարմնի կողմից համարվի որպես այդպիսին: Այդպիսի տեղեկությունը չի հրապարակվում առանց այն ներկայացնող Կողմի թույլտվության: Գաղտնի տեղեկություն տրամադրող Կողմերից կարող է պահանջվել ներկայացնել դրանց ոչ գաղտնի ամփոփագրերը, կամ եթե այդ Կողմերը նշում են, որ այդ տեղեկությունը հնարավոր չէ ամփոփ ներկայացնել, ապա նրանք ներկայացնում են այն պատճառները, թե ինչու չեն կարող դրանք ներկայացնել ամփոփ ձևով: Այնուամենայնիվ, եթե քննություն իրականացնող մարմինները համարում են, որ գաղտնիության պահանջն արդարացված չէ, եւ եթե տվյալ Կողմը չի ցանկանում տեղեկությունը հանրայնացնել կամ թույլատրել դրա բացահայտումն ընդհանրացված կամ ամփոփ տեսքով, ապա քննություն իրականացնող մարմինները կարող են հաշվի չառնել այդպիսի տեղեկությունը, քանի դեռ համապատասխան աղբյուրները նրանց չեն հավաստիացում, որ տեղեկությունները ճշգրիտ են:

11. Կողմերն ապահովում են պաշտպանական միջոցների մասով քննության արդար, թափանցիկ եւ արդյունավետ ընթացակարգեր:

12. Յուրաքանչյուր Կողմ անհապաղ տեղեկացնում է մյուս Կողմին հետեւյալի մասին.

ա) պաշտպանական միջոցների մասով քննության մեկնարկ.

բ) ավելացած ծավալներով ներմուծման հետեւանքով հասցված լուրջ վնասի կամ դրա վտանգի նախնական եւ (կամ) վերջնական բացահայտում.

գ) պաշտպանական միջոց կիրառելու կամ դրա գործողությունը երկարաձգելու մասին որոշման ընդունում:

13. Պաշտպանական միջոցների մասով քննություն սկսելու հետ կապված տեղեկությունները, *ի թիվս այլնի, ներառում են՝*

ա) քննությունն սկսելու ամսաթիվը.

բ) քննության ենթակա ապրանքի ճշգրիտ նկարագրությունը եւ դրա դասակարգումը՝ ըստ Ներդաշնակեցված համակարգի.

գ) քննության ենթակա ժամանակահատվածը.

դ) բացատրություն՝ քննություն սկսելու պատճառների վերաբերյալ.

ե) հանրային լսումների ժամանակացույցը եւ (կամ) լսումներ անցկացնելու վերաբերյալ պահանջի վերջնաժամկետը.

զ) շահագրգիռ կողմերի կողմից ապացույցներ ներկայացնելու, այլ շահագրգիռ կողմերի ներկայացրած նյութերի վերաբերյալ մեկնաբանություններ անելու եւ դրանց պատասխանելու վերջնաժամկետները.

է) այն հասցեն, որին կարող են ուղղվել դիմումը եւ քննությանն առնչվող այլ փաստաթղթեր.

ը) քննություն իրականացնող մարմնի անվանումը, հասցեն եւ հեռախոսահամարը:

14. Պաշտպանական միջոց կիրառելու կամ այդ միջոցի գործողությունը երկարաձգելու մտադրություն ունեցող Կողմը մյուս Կողմին է տրամադրում վերաբերելի բոլոր տեղեկությունները, որոնք, *ի թիվս այլնի*, պարունակում են հետեւյալը.

ա) ավելացած ծավալներով ներմուծման հետեւանքով պատճառված վնասի կամ դրա վտանգի վերաբերյալ ապացույցները.

բ) տվյալ ապրանքի ճշգրիտ նկարագրությունը.

գ) առաջարկվող պաշտպանական միջոցի ճշգրիտ նկարագրությունը.

դ) պաշտպանական միջոցի ներդրման համար առաջարկվող ամսաթիվը.

ե) միջոցի աստիճանական ազատականացման ակնկալվող տեսողությունը եւ ժամանակացույցը.

զ) պաշտպանական միջոցից ազատված զարգացող երկրների ցանկը

(կիրառելիության դեպքում).

է) ապացույց այն մասին, որ տնտեսության տվյալ ճյուղը կարգավորվում է (միջոցի գործողությունը երկարաձգելու դեպքում).

ը) հիմք՝ որոշելու համար, որ առկա են այնպիսի ծայրահեղ դեպքեր, որոնց դեպքում ուշացումը կհանգեցնի այնպիսի վնասի, որը դժվար կլինի վերացնել (ժամանակավոր պաշտպանական միջոցների դեպքում):

15. Համընդհանուր պաշտպանական միջոցներ կիրառելիս Կողմերը պահպանում են սույն համաձայնագրին համապատասխան տրված արտոնության սահմանաչափը:

16. Կողմերն ընձեռում են պաշտպանական միջոցների կիրառման հետ կապված խորհրդակցություններ անցկացնելու հնարավորություն:

Հոդված 3.4

Երկկողմ պաշտպանական միջոցները

1. Եթե սույն համաձայնագրով մաքսատուրքի նվազեցման կամ վերացման արդյունքում Կողմի՝ սույն համաձայնագրի 1-ին հավելվածում նշված՝ ծագում ունեցող ցանկացած ապրանք մյուս Կողմի տարածք է ներմուծվում ներքին արտադրության նկատմամբ բացարձակ կամ հարաբերական այնպիսի ավելացված քանակով եւ այնպիսի պայմաններով, որոնք ներմուծող Կողմի տարածքում համանման կամ ուղղակիորեն մրցակից ապրանքներ արտադրող ներքին տնտեսության ճյուղի համար կարող են լինել լուրջ վնասի կամ դրա առաջացման վտանգի էական պատճառ, ապա ներմուծող Կողմը կարող է կիրառել երկկողմ պաշտպանական միջոց այն ծավալով, որն անհրաժեշտ է լուրջ վնասը կամ դրա առաջացման վտանգը հատուցելու կամ կանխելու համար՝ սույն հոդվածի դրույթների համաձայն:

2. Երկկողմ պաշտպանական միջոցը կիրառվում է միայն այն դեպքում, երբ հստակ ապացույց է ներկայացվում այն մասին, որ ավելացած ծավալներով ներմուծումը կարող է լինել լուրջ վնասի կամ դրա առաջացման վտանգի էական պատճառ:

3. Կողմը երկկողմ պաշտպանական միջոց է կիրառում միայն Կողմի՝ քննություն իրականացնող մարմնի կողմից երկկողմ պաշտպանական միջոցին առնչվող վարույթի իրականացումից հետո: Երկկողմ պաշտպանական միջոցին առնչվող վարույթն ավարտվում է 9 ամսվա ընթացքում:

4. Կողմն անհապաղ գրավոր ծանուցում է մյուս Կողմին սույն հոդվածով նախատեսված երկկողմ պաշտպանական միջոցին առնչվող վարույթ սկսելու մասին: Այդ ծանուցումը ներառում է հետեւյալը.

ա) Երկկողմ պաշտպանական միջոցին առնչվող վարույթի առարկա հանդիսացող ապրանքի ճշգրիտ նկարագրությունը՝ ներառյալ ըստ ՆՀ ծածկագրի դրա վերնագիրը կամ ենթավերնագիրը, որի վրա հիմնված են սույն

համաձայնագրի 1-ին հավելվածում ներկայացված սակագնային պարտավորությունների ժամանակացույցները.

բ) երկկողմ պաշտպանական միջոցին առնչվող վարույթ սկսելու ամսաթիվը.

գ) երկկողմ պաշտպանական միջոցին առնչվող վարույթ սկսելու համար կիրառված ապացույցները.

դ) քննություն իրականացնող մարմնի անվանումը, հասցեն եւ հեռախոսահամարը:

5. Սույն հոդվածով երկկողմ պաշտպանական միջոց կիրառելու մտադրություն ունեցող Կողմն անմիջապես եւ ցանկացած դեպքում նախքան միջոցի կիրառումը դրա մասին ծանուցում է մյուս Կողմին: Ծանուցումը պարունակում է բոլոր այն համապատասխան տեղեկությունները, այդ թվում՝ սույն համաձայնագրին համապատասխան մաքսատուրքի նվազման կամ վերացման արդյունքում այլ Կողմի ծագում ունեցող ապրանքի՝ ավելացած ծավալներով ներմուծման հետեւանքով հասցված լուրջ վնասի կամ դրա առաջացման վտանգի վերաբերյալ ապացույցները, տվյալ ապրանքի եւ առաջարկվող միջոցի ճշգրիտ նկարագրությունը, ինչպես նաեւ ներդրման առաջարկվող ամսաթիվը, միջոցի ձեւը, անհրաժեշտության դեպքում՝ միջոցի աստիճանական վերացման ակնկալվող տեւողությունը եւ ժամանակացույցը եւ փոխհատուցման առաջարկությունը՝ սույն հոդվածի 6-րդ կետի համաձայն:

6. Այն Կողմին, որը կարող է ազդեցություն կրել համապատասխան միջոցի կիրառումից, առաջարկվում է առետրի զգալի համարժեք ազատականացման տեսքով փոխհատուցում՝ այդ Կողմից կատարվող ներմուծումների առնչությամբ: Սույն հոդվածի 5-րդ կետում նշված ծանուցման օրվանից 30 օրվա ընթացքում Կողմն ուսումնասիրում է տրամադրված տեղեկատվությունը՝ հարցի փոխադարձ ընդունելի լուծումը դյուրացնելու նպատակով, եւ կարող է տրամադրել ներմուծող Կողմին փոխհատուցման առաջարկության վերաբերյալ իր առաջարկը:

7. Հարցի փոխադարձ ընդունելի լուծման նպատակով Կողմերը կարող են անցկացնել խորհրդակցություններ եւ փոխանակել սույն հոդվածի 5-րդ կետում նշված ծանուցման վերաբերյալ տեսակետներ:

8. Նման լուծման բացակայության դեպքում եւ սույն հոդվածի 5-րդ կետում նշված ծանուցման ամսաթվից 60 օր հետո ներմուծող Կողմը հարցի լուծման համար կարող է կիրառել երկկողմ պաշտպանական միջոց, իսկ փոխադարձաբար համաձայնեցվող փոխհատուցման բացակայության դեպքում այն Կողմը, որի ապրանքի նկատմամբ կիրառվել է երկկողմ պաշտպանական միջոց, կարող է ձեռնարկել փոխհատուցման գործողություն:

9. Մյուս Կողմը պետք է անմիջապես ծանուցվի երկկողմ պաշտպանական միջոցի մասին: Երկկողմ պաշտպանական միջոց կիրառող Կողմը երկկողմ պաշտպանական միջոցի կիրառման մասին ծանուցման մեջ ներառում է հետեւյալը.

ա) Երկկողմ պաշտպանական միջոցի առարկա հանդիսացող ապրանքի ճշգրիտ նկարագրությունը, ներառյալ՝ ըստ ՆՀ ծածկագրի դրա վերնագիրը կամ ենթավերնագիրը, որի վրա հիմնված են սույն համաձայնագրի 1-ին հավելվածում ներկայացված սակագնային պարտավորությունների ժամանակացույցները.

բ) բացահայտումներ եւ եզրակացություններ՝ համապատասխան փաստական եւ իրավական բոլոր հարցերի վերաբերյալ.

գ) երկկողմ պաշտպանական միջոցի ճշգրիտ նկարագրությունը.

դ) երկկողմ պաշտպանական միջոցի ներդրման ամսաթիվը եւ դրա ակնկալվող տեսողությունը.

ե) անհրաժեշտության դեպքում՝ միջոցի աստիճանական վերացման ժամանակացույցը:

10. Փոխհատուցման գործողության մասին ծանուցվում է անմիջապես, եւ դա սովորաբար բաղկացած է առետրի վրա էականորեն համարժեք

ազդեցություն ունեցող զիջումների եւ (կամ) երկկողմ պաշտպանական միջոցի կիրառման արդյունքում ակնկալվող լրացուցիչ տուրքերի արժեքին էականորեն համարժեք զիջումների կասեցումից: Փոխհատուցման գործողությունը ձեռնարկվում է միայն առետորի վրա էականորեն համարժեք ազդեցություն գործելու համար պահանջվող նվազագույն ժամանակահատվածում եւ ցանկացած դեպքում՝ միայն սույն հոդվածի 11-րդ կետի համաձայն երկկողմ պաշտպանական միջոցը կիրառելու ընթացքում:

11. Սույն հոդվածի 1-ին կետով սահմանված պայմանները բավարարելու դեպքում ներմուծող Կողմը կարող է երկկողմ պաշտպանական միջոց կիրառել հետեւյալ ձեւով.

ա) տվյալ ապրանքի համար մաքսատուրքի կիրառելի դրույքաչափի ավելացում մինչեւ այն անհրաժեշտ մակարդակը, որը չի գերազանցում երկկողմ պաշտպանական միջոցի կիրառման պահին կիրառվող մաքսատուրքի՝ ազգերի առավել բարենպաստության ռեժիմի շրջանակներում կիրառվող դրույքաչափը, եթե ներմուծող Կողմը ցույց է տալիս, որ ավելացած ծավալներով ներմուծումը ներքին տնտեսության ճյուղի համար լուրջ վնասի էական պատճառ է. կամ

բ) տվյալ ապրանքի համար սակագնային դրույքաչափի քվոտա, եթե ներմուծող Կողմը ցույց է տալիս, որ ավելացած ծավալներով ներմուծումը ներքին տնտեսության ճյուղի համար լուրջ վնասի վտանգ է ներկայացնում:

Սույն հոդվածի նպատակներով «սակագնային դրույքաչափի քվոտա» նշանակում է՝

ա) ապրանքների այն քանակությունը, որը թույլատրվում է ներմուծել սույն համաձայնագրով նախատեսված արտոնյալ մաքսատուրքի դրույքաչափով (քվոտայի շրջանակներում նախատեսվող քանակ)՝ երկկողմ պաշտպանական միջոցը ձեռնարկելու պահին. եւ

բ) սակագնային դրույքաչափի քվոտայի շրջանակներից դուրս ներմուծված՝ ծագում ունեցող ապրանքների համար մաքսատուրքի կիրառելի

դրույքաչափը, որն ավելացվում է մինչեւ այն անհրաժեշտ մակարդակը, որը չի գերազանցում երկկողմ պաշտպանական միջոցի կիրառման պահին կիրառվող մաքսատուրքի՝ ազգերի առավել բարենպաստության ռեժիմի շրջանակներում կիրառվող դրույքաչափը:

Քվոտայի շրջանակներում նախատեսվող քանակով չի նվազեցվում դիմող Կողմի տարածք Կողմի ծագում ունեցող տվյալ ապրանքի ներմուծումների քանակը՝ վերջին ժամանակահատվածի ցուցանիշի մակարդակից ավելի ցածր, որը ներմուծման միջինն է այն 3 վերջին ներկայացուցչական տարիների կտրվածքով, որոնց համար վիճակագրություն կա:

12. Եթե Իրանի Իսլամական Հանրապետությունը մտադրվի կիրառել երկկողմ պաշտպանական միջոց՝ սակագնային դրույքաչափի քվոտայի տեսքով, ապա ԵԱՏՄ-ն կարող է պահանջել, որ Իրանի Իսլամական Հանրապետությունն անհատական քվոտա հատկացնի ԵԱՏՄ յուրաքանչյուր անդամ պետության համար: ԵԱՏՄ-ի կողմից այդպիսի պահանջ ներկայացվելու դեպքում Իրանի Իսլամական Հանրապետությունն անհատական քվոտաները հատկացնում է հատկացման վերաբերյալ ԵԱՏՄ-ի առաջարկությանը համապատասխան: Հատկացման վերաբերյալ ԵԱՏՄ-ի պահանջն ու առաջարկությունն արվում է սույն հոդվածի 5-րդ կետում նշված ծանուցման ամսաթվից հետո 60 օրվա ընթացքում:

13. Երկկողմ պաշտպանական միջոցը կիրառվում է մեկ տարին չգերազանցող ժամկետով: Երկկողմ պաշտպանական միջոցի կիրառման ժամկետը կարող է երկարաձգվել մինչեւ եւս մեկ տարով, եթե առկա է ապացույց այն մասին, որ դա անհրաժեշտ է լուրջ վնասը կամ դրա առաջացման վտանգը հատուցելու կամ կանխելու համար, եւ որ տվյալ ճյուղը կարգավորվում է: Կողմը միեւնույն ապրանքի նկատմամբ երկկողմ պաշտպանական միջոց կրկին չի կիրառում այն ժամանակահատվածում, որը համարժեք է այն ժամանակահատվածին, որի ընթացքում նման միջոց նախկինում կիրառվել է:

14. Կողմը մյուս Կողմին գրավոր տեղեկացնում է երկկողմ պաշտպանական միջոցի գործողությունը երկարաձգելու վերաբերյալ որոշում կայացնելու մասին: Այդ ծանուցման մեջ ներառվում են սույն հոդվածի 9-րդ կետում նշված

տեղեկությունները, ինչպես նաև ապացույցներ այն մասին, որ երկկողմ պաշտպանական միջոցի գործողության երկարաձգումն անհրաժեշտ է լուրջ վնասը կամ դրա առաջացման վտանգը կանխելու կամ հատուցելու համար, եւ որ տնտեսության ճյուղը կարգավորվում է:

15. Երկկողմ պաշտպանական միջոցի կիրառումը դադարեցնելուց հետո մաքսատուրքի դրույքաչափն այն դրույքաչափն է, որը կգործեր միջոցի կիրառումը դադարեցնելու օրը՝ համաձայն սույն համաձայնագրի 1-ին հավելվածի:

16. Երկկողմ պաշտպանական միջոցներ չեն կիրառվում սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ առաջին 6 ամիսների ընթացքում:

17. Երկկողմ առեւտրի մասով ոչ մի Կողմ միեւնույն ապրանքի նկատմամբ միաժամանակ չի կիրառում՝

ա) երկկողմ պաշտպանական միջոց, եւ

բ) պաշտպանական միջոց՝ սույն համաձայնագրի 3.3 հոդվածի իմաստով:

Հոդված 3.5

Հակազնազգման եւ փոխհատուցման միջոցների կիրառումը

Հակազնազգման եւ փոխհատուցման տուրքի առնչությամբ քննություններ եւ պատժամիջոցների շրջանցումը կանխող գործողություններ ներառող հետագա վարույթներ եւ այլ ուսումնասիրություններ իրականացնելու նպատակներով Իրանի Իսլամական Հանրապետությունը ԵԱՏՄ անդամ պետություններին դիտարկում է առանձին վերցրած, այլ ոչ թե ԵԱՏՄ-ն որպես մեկ ամբողջություն, եւ ընդհանուր առմամբ, ԵԱՏՄ-ից իրականացվող ներմուծումների նկատմամբ չի կիրառում հակազնազգման եւ փոխհատուցման, այդ թվում՝ պատժամիջոցների շրջանցումը կանխող միջոցներ: Եթե սույն համաձայնագրի 3.2 հոդվածի իմաստով առկա են ԵԱՏՄ մակարդակով շնորհված եւ ԵԱՏՄ բոլոր անդամ պետություններից արտադրողներին տրամադրված սուբսիդիաներ, ապա Իրանի

Իսլամական Հանրապետությունը կարող է ԵԱՏՄ-ն դիտարկել որպես մեկ ամբողջություն:

Հոդված 3.6

Ծանուցումները

1. Սույն գլխով կարգավորվող հարցերի շուրջ Կողմերի միջև բոլոր պաշտոնական հաղորդակցությունների եւ փաստաթղթերի փոխանակումը կատարվում է Կողմերի իրավասու մարմինների եւ քննություն իրականացնող մարմինների միջև:

2. Որպես սույն գլխով կարգավորվող բոլոր հարցերին առնչվող հաղորդակցության հիմք՝ Կողմերը գործածելու են անգլերենը՝ բացառությամբ հակազնագցման, փոխհատուցման, համընդհանուր պաշտպանական, երկկողմ պաշտպանական միջոցներին առնչվող վարույթների եւ ուսումնասիրությունների վերաբերյալ փաստաթղթերի:

3. Կողմերն իրավասու մարմինների եւ քննություն իրականացնող մարմինների անվանումների եւ կոնտակտային տվյալների մասին տեղեկությունները փոխանակում են սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրվա ընթացքում: Կողմերն իրավասու մարմիններին եւ քննություն իրականացնող մարմիններին առնչվող ցանկացած փոփոխության մասին միմյանց անմիջապես ծանուցում են անգլերենով:

Հոդված 3.7

Համագործակցությունը եւ խորհրդակցությունները

1. Կողմերը ձգտում են ամրապնդել իրենց համագործակցությունը հետեւյալ ոլորտներում.

ա) հաղորդակցության ուղիներ առեւտրի պաշտպանական միջոցների առնչությամբ (այդ թվում՝ ուսումնասիրություններ).

բ) համագործակցություն եւ տեղեկատվության փոխանակում Կողմերի իրավասու եւ քննություն իրականացնող մարմինների միջեւ.

գ) առեւտրի պաշտպանական միջոցների վերաբերյալ օրենքներ եւ այդ ոլորտում գործելակերպ:

2. Կողմերը կարող են խորհրդակցել սույն գլխով կարգավորվող հարցերի շուրջ: Այդ նպատակով Կողմը պետք է մյուս Կողմին տրամադրի խորհրդակցություններ անցկացնելու գրավոր պահանջ: Խորհրդակցությունները պետք է տեղի ունենան հնարավորինս շուտ, սակայն այդ գրավոր պահանջն ստանալուց հետո 30 օրվանից ոչ ուշ: Այդպիսի խորհրդակցությունները չպետք է խոչընդոտեն Կողմերի կողմից հակազնագցման, փոխհատուցման տուրքի, համընդհանուր պաշտպանական միջոցի մասով քննություն սկսելը կամ երկկողմ պաշտպանական միջոցին առնչվող վարույթ սկսելը եւ չպետք է խոչընդոտեն այդ քննությունը կամ վարույթը:

ԳԼՈՒԽ 4. ԱՌԵՎՏՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ

Հոդված 4.1

Նպատակները

Սույն գլխի նպատակն է դյուրացնել Կողմերի միջեւ ապրանքների առեւտուրը՝

ա) ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի, համապատասխանության գնահատման ընթացակարգերի ընդունման եւ կիրառման ոլորտում համագործակցության խթանման միջոցով՝ առեւտրի անհարկի տեխնիկական խոչընդոտները վերացնելու նպատակով.

բ) յուրաքանչյուր Կողմի ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերի մասին փոխըմբռնումը խթանելու միջոցով.

գ) ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերի մշակման, ընդունման եւ կիրառման վերաբերյալ Կողմերի միջեւ տեղեկատվության փոխանակման ամրապնդման միջոցով.

դ) Կողմերի միջեւ՝ ստանդարտացման եւ համապատասխանության գնահատման միջազգային մարմինների աշխատանքի ոլորտում համագործակցության ամրապնդման միջոցով.

ե) այս նպատակներն իրագործելու համար դաշտ ապահովելու միջոցով. եւ

զ) առեւտրի տեխնիկական խոչընդոտներին առնչվող հարցերի շուրջ համագործակցության խթանման միջոցով:

Հոդված 4.2

Գործողության ոլորտը

1. Սույն գլուխը կիրառվում է Կողմերի բոլոր այն ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերի նկատմամբ, որոնք կարող են ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդել Կողմերի միջեւ ապրանքների առեւտրի վրա, բացառությամբ՝

ա) պետական մարմինների՝ արտադրության կամ սպառման պահանջների համար պետական մարմինների կողմից պատրաստված գնման մասնագրերի.

բ) սույն համաձայնագրի 5-րդ գլխում սահմանված սանիտարական կամ բուսասանիտարական միջոցառումների:

2. Սույն գլխում տեխնիկական կանոնակարգերին, ստանդարտներին եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերին արված բոլոր հղումները պետք է պարունակեն դրանցում արված ցանկացած փոփոխություն եւ կանոններում կամ դրանց շրջանակներում ընդգրկված ապրանքներում կատարված ցանկացած լրացում՝ բացառությամբ ոչ կարեւոր բնույթի փոփոխությունների ու լրացումների:

3. Սույն գլխի համաձայն՝ յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի մշակելու, ընդունելու եւ կիրառելու ստանդարտներ, տեխնիկական կանոնակարգեր եւ համապատասխանության գնահատման ընթացակարգեր:

Հոդված 4.3

Սահմանումները

1. Ստանդարտացմանը եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերին առնչվող ընդհանուր եզրույթները սովորաբար ունեն այն նշանակությունը, որը դրանց տրվում է Միավորված ազգերի կազմակերպության համակարգում եւ ստանդարտացման միջազգային մարմինների կողմից ընդունված սահմանումներով՝ հաշվի առնելով դրանց համատեքստը եւ սույն գլխի առարկայի ու նպատակի լույսի ներքո:

2. Սույն գլխի նպատակներով՝

ա) **«տեխնիկական կանոնակարգ»**՝ փաստաթուղթ, որը սահմանում է ապրանքի բնութագրերը կամ դրա հետ կապված գործընթացները եւ արտադրության մեթոդները, ներառյալ՝ կիրառելի այն վարչական դրույթները, որոնց հետ համապատասխանությունը պարտադիր է: Այն կարող է նաեւ ներառել բացառապես տերմինաբանությունը, պայմանանշանները, փաթեթավորման, մակնշման կամ պիտակավորման պահանջները կամ վերաբերել դրանց, քանի որ դրանք կիրառվում են ապրանքի, գործընթացի կամ արտադրության մեթոդի նկատմամբ.

Բացարկյալ կան ծանոթագրություն.

ԻՍՕ/ՄԷՀ 2-րդ ուղեցույցում սահմանումն ինքնաբերական չէ, այլ հիմնված է այսպես կոչված «կառուցվածքային տարր» համակարգի վրա:

բ) **«ստանդարտ»**՝ ճանաչված մարմնի կողմից հաստատված փաստաթուղթ, որով նախատեսվում են ապրանքի ընդհանուր եւ բազմակի օգտագործումը, կանոններ, ուղեցույցներ կամ բնութագրեր՝ ապրանքի կամ դրա հետ կապված գործընթացների եւ արտադրության այնպիսի մեթոդների վերաբերյալ, որոնց հետ համապատասխանությունը պարտադիր չէ: Այն կարող է նաեւ ներառել բացառապես տերմինաբանությունը, պայմանանշանները, փաթեթավորման, մակնշման կամ պիտակավորման պահանջները կամ

վերաբերել դրանց, քանի որ դրանք կիրառվում են ապրանքի, գործընթացի կամ արտադրության մեթոդի նկատմամբ.

Բացառական ծանոթագրություն.

ԻՍՕ/ՄԷՀ 2-րդ ուղեցույցում սահմանված եզրույթները ներառում են ապրանքներ, գործընթացներ եւ ծառայություններ: Սույն գլուխը վերաբերում է միայն այն տեխնիկական կանոնակարգերին, ստանդարտներին եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերին, որոնք կապված են ապրանքների կամ գործընթացների եւ արտադրության մեթոդների հետ: ԻՍՕ/ՄԷՀ 2-րդ ուղեցույցով սահմանված ստանդարտները կարող են լինել պարտադիր կամ ոչ պարտադիր: Սույն գլխի նպատակներով ստանդարտները սահմանվում են որպես ոչ պարտադիր, իսկ տեխնիկական կանոնակարգերը՝ պարտադիր փաստաթղթեր: Ստանդարտացման միջազգային հանրության կողմից պատրաստված ստանդարտները հիմնված են կոնսենսուսի վրա: Այս գլուխը ներառում է նաեւ փաստաթղթեր, որոնք հիմնված չեն կոնսենսուսի վրա:

զ) **«համապատասխանության գնահատման ընթացակարգեր»**՝ ցանկացած ընթացակարգ, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն օգտագործվում է տեխնիկական կանոնակարգերի կամ ստանդարտների համապատասխան պահանջների բավարարումը որոշելու համար.

Բացառական ծանոթագրություն.

Համապատասխանության գնահատման ընթացակարգերը ներառում են, *ի թիվս այլնի*, նմուշառման, փորձարկման եւ ստուգման ընթացակարգեր. համապատասխանության գնահատում, ստուգում եւ հավաստում. գրանցում, հավատարմագրում եւ հաստատում, ինչպես նաեւ դրանց համակցությունները:

դ) **«կենտրոնական կառավարման մարմին»**՝ կենտրոնական կառավարություն, դրա նախարարություններն ու վարչությունները կամ ցանկացած մարմին, որը ենթակա է կենտրոնական կառավարության կողմից հսկողության՝ տվյալ գործունեության մասով:

Հոդված 4.4

Տեխնիկական կանոնակարգերի եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերի մշակումը, ընդունումը եւ կիրառումը

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ տեխնիկական կանոնակարգերի առնչությամբ մյուս Կողմի տարածքից ներմուծվող ապրանքների համար տրամադրվի այնպիսի ռեժիմ, որը պակաս բարենպաստ չէ ազգային ծագում ունեցող համանման ապրանքների եւ որեւէ այլ երկրի ծագում ունեցող համանման ապրանքների համար տրամադրվող ռեժիմից:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է ապահովի, որ տեխնիկական կանոնակարգերը չմշակվեն, չընդունվեն կամ չկիրառվեն այնպես, որ առաջացնեն փոխադարձ առետրի անհարկի արգելքներ կամ հանգեցնեն նման արգելքների: Այս նպատակով տեխնիկական կանոնակարգերը չպետք է սահմանափակեն առետուրն ավելի, քան անհրաժեշտ է օրինական նպատակն ապահովելու համար՝ հաշվի առնելով այն ռիսկերը, որոնք կարող են առաջ գալ դրանք չկատարելու հետեւանքով: Այդպիսի օրինական նպատակներ են, *ի թիվս այլնի*, ազգային անվտանգության պահանջները, մոլորեցնող գործելակերպի կանխարգելումը, մարդու առողջության կամ անվտանգության, կենդանիների կամ բույսերի կյանքի կամ առողջության կամ շրջակա միջավայրի պաշտպանությունը: Այդպիսի ռիսկերը գնահատելիս հաշվի են առնվում, *ի թիվս այլնի*, առկա գիտական եւ տեխնիկական տեղեկությունները, ապրանքի վերամշակման հետ կապված տեխնոլոգիան կամ ապրանքի նախատեսված վերջնական օգտագործումը:

3. Տեխնիկական կանոնակարգերը չեն պահպանվում, եթե այլեւս գոյություն չունեն դրանց ընդունմանը նպաստող հանգամանքները կամ նպատակները, կամ եթե փոփոխված հանգամանքները կամ նպատակները կարելի է հասցեագրել առետուրն ավելի քիչ սահմանափակող եղանակով:

4. Եթե պահանջվում են տեխնիկական կանոնակարգեր, եւ առկա են համապատասխան միջազգային ստանդարտներ, կամ դրանց ավարտի ժամկետը մոտ է, Կողմերը դրանք կամ դրանց համապատասխան մասերն օգտագործում են որպես իրենց տեխնիկական կանոնակարգերի հիմք՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ միջազգային ստանդարտները կամ համապատասխան մասերն անարդյունավետ կամ չհամապատասխանող միջոցներ են հետապնդվող օրինական նպատակների իրականացման համար, օրինակ՝ կլիմայական կամ աշխարհագրական առանցքային գործոնների կամ տեխնոլոգիական էական խնդիրների պատճառով:

5. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ այն դեպքերում, երբ պահանջվում է տեխնիկական կանոնակարգերի կամ ստանդարտների հետ համապատասխանության դրական հավաստում, իր կենտրոնական կառավարման մարմինները մյուս Կողմի տարածքի ծագում ունեցող ապրանքների նկատմամբ կիրառեն հետեւյալ դրույթները.

ա) համապատասխանության գնահատման ընթացակարգերը մշակվում, ընդունվում եւ կիրառվում են այնպես, որ մյուս Կողմի տարածքի ծագում ունեցող համանման ապրանքների մատակարարների համար հնարավորություններ ընձեռվեն այնպիսի պայմաններով, որոնք պակաս բարենպաստ չեն ազգային ծագում ունեցող կամ որեւէ այլ երկրի ծագում ունեցող համանման ապրանքների մատակարարներին տրամադրվող պայմաններից՝ նմանատիպ իրավիճակում. այդ հնարավորության ընձեռումը մատակարարներին տալիս է ընթացակարգի կանոններով համապատասխանության գնահատման իրավունք, ներառյալ՝ սույն ընթացակարգով նախատեսված լինելու դեպքում նաեւ օբյեկտների տարածքում համապատասխանության գնահատման գործողություններ ձեռնարկելու եւ համակարգի նշանը ստանալու հնարավորություն.

բ) համապատասխանության գնահատման ընթացակարգերը չեն մշակվում, ընդունվում կամ կիրառվում այնպես, որ առաջացնեն փոխադարձ առետրի անհարկի արգելքներ կամ հանգեցնեն նման արգելքների: Սա

նշանակում է, որ, *ի թիվս այլնի*, համապատասխանության գնահատման ընթացակարգերը չպետք է լինեն ավելի խիստ կամ կիրառվեն ավելի խիստ, քան անհրաժեշտ է ներմուծող Կողմին համարժեք վստահություն հաղորդելու համար, որ ապրանքը համապատասխանում է կիրառելի տեխնիկական կանոնակարգերին կամ ստանդարտներին՝ հաշվի առնելով այն ռիսկերը, որ կարող են առաջանալ անհամապատասխանության պատճառով:

6. Սույն հոդվածի 5-րդ կետի դրույթներն իրականացնելիս յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ՝

ա) համապատասխանության գնահատման ընթացակարգերը ձեռնարկվեն եւ ավարտվեն հնարավորինս արագ եւ մյուս Կողմի տարածքի ծագում ունեցող ապրանքների համար կիրառվող այնպիսի կարգով, որը պակաս բարենպաստ չէ համանման ազգային ապրանքների համար կիրառվող կարգից.

բ) հրապարակվի համապատասխանության գնահատման յուրաքանչյուր ընթացակարգին ընդունված կարգով ընթացք տալու ժամկետ, կամ պահանջի դեպքում դիմումատուին տեղեկացվի դրան ընթացք տալու ակնկալվող ժամկետի մասին. դիմում ստանալու ժամանակ իրավասու մարմինն անհապաղ ուսումնասիրում է փաստաթղթերի ամբողջականությունը եւ բոլոր թերությունների մասին ճշգրիտ եւ ամբողջական ձեռով տեղեկացնում դիմումատուին. իրավասու մարմինը գնահատման արդյունքները հնարավորինս արագ, ճշգրիտ ու ամբողջական փոխանցում է դիմումատուին, որպեսզի անհրաժեշտության դեպքում վերջինս կարողանա ուղղիչ գործողություններ ձեռնարկել. նույնիսկ այն դեպքում, երբ դիմումը թերություններ է ունենում, իրավասու մարմինը հնարավորինս իրականացնում է համապատասխանության գնահատումը, եթե դիմումատուն այդպես է պահանջում. եւ պահանջի դեպքում դիմումատուին տեղեկացվի ընթացակարգի փուլի մասին՝ ցանկացած ուշացման համար բացատրություն տալով.

գ) տեղեկություններ ներկայացնելու պահանջները սահմանափակվեն համապատասխանության գնահատման եւ վճարները որոշելու համար անհրաժեշտ գործընթացներով.

դ) մյուս Կողմի տարածքի ծագում ունեցող այն ապրանքների մասին տեղեկությունների գաղտնիությունը, որոնք ծագում կամ մատակարարվում են համապատասխանության գնահատման այդպիսի ընթացակարգերից ելնելով, պահպանվի նույն կերպ, ինչպես ազգային ապրանքների դեպքում, եւ այնպես, որ օրինական առետրային շահերը լինեն պաշտպանված:

ե) մյուս Կողմի տարածքի ծագում ունեցող ապրանքների համապատասխանությունը գնահատելու համար սահմանվող ցանկացած վճար համաչափ լինի ազգային ծագում կամ որեւէ այլ երկրի ծագում ունեցող համանման ապրանքների համապատասխանությունը գնահատելու համար գանձվող ցանկացած վճարի՝ հաշվի առնելով հաղորդակցության, փոխադրման եւ այլ ծախսեր, որոնք առաջանում են դիմումատուի օբյեկտների գտնվելու վայրի եւ համապատասխանության գնահատման մարմնի գտնվելու վայրի միջեւ եղած տարբերությունից:

զ) համապատասխանության գնահատման ընթացակարգերում օգտագործվող օբյեկտների տեղակայումը եւ նմուշների ընտրությունը չլինեն այնպիսին, որ անհարկի անհարմարություններ պատճառեն դիմումատուին կամ նրանց գործակալներին:

է) երբ ապրանքի մասնագրերը փոխվեն կիրառելի տեխնիկական կանոնակարգերին կամ ստանդարտներին դրա համապատասխանությունը որոշելու հետեւանքով, փոփոխված ապրանքի համար համապատասխանության գնահատման ընթացակարգը սահմանափակվի այնքանով, որքանով անհրաժեշտ է որոշելու համար՝ արդյոք կա բավարար վստահություն, որ ապրանքը դեռ համապատասխանում է տվյալ տեխնիկական կանոնակարգերին կամ ստանդարտներին:

ը) լինի այնպիսի ընթացակարգ, որով վերանայվում են համապատասխանության գնահատման ընթացակարգի գործողության վերաբերյալ բողոքները, եւ բողոքը հիմնավորված լինելու դեպքում ձեռնարկվում են ուղղիչ գործողություններ:

7. Սույն հոդվածի 5-րդ եւ 6-րդ կետերում ոչինչ չի խոչընդոտում Կողմերին իրենց տարածքներում ողջամիտ տեղային ստուգումներ իրականացնելու համար:

8. Այն դեպքերում, երբ պահանջվում է դրական հավաստիացում առ այն, որ ապրանքը համապատասխանում է տեխնիկական կանոնակարգերին կամ ստանդարտներին, եւ առկա են ստանդարտացման միջազգային մարմինների կողմից տրված համապատասխան ուղեցույցներ կամ առաջարկություններ, կամ որ դրանց ավարտը մոտ է, Կողմերն ապահովում են, որ կենտրոնական կառավարման մարմինները դրանք կամ դրանց համապատասխան մասերն օգտագործեն որպես հիմք իրենց համապատասխանության գնահատման ընթացակարգերի համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ինչպես պատշաճ կերպով բացատրվում է պահանջի հիման վրա, այդ ուղեցույցները կամ առաջարկները կամ համապատասխան մասերը Կողմերի համար անհամապատասխան են, *ի թիվս այլնի*, այնպիսի պատճառներով, ինչպիսիք են ազգային անվտանգության պահանջները, մոլորեցնող գործելակերպի կանխարգելումը, մարդու առողջության կամ անվտանգության, կենդանիների կամ բույսերի կյանքի կամ առողջության կամ շրջակա միջավայրի պաշտպանությունը, կլիմայական կամ այլ աշխարհագրական առանցքային գործոնները, տեխնոլոգիական կամ ենթակառուցվածքային էական խնդիրները:

Հոդված 4.5

Համապատասխանության գնահատման ճանաչումը

1. Չհակասելով սույն հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերի դրույթներին՝ յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ հնարավորության դեպքում մյուս Կողմի համապատասխանության գնահատման ընթացակարգերի արդյունքներն ընդունվեն, նույնիսկ եթե այդ ընթացակարգերը տարբերվում են իր ընթացակարգերից՝ պայմանով, որ բավարարվի այն պահանջը, որ այդ ընթացակարգերով ապահովվում է համապատասխանությունը կիրառելի

տեխնիկական կանոնակարգերի կամ ստանդարտների հետ, որոնք համարժեք են այդ Կողմի սեփական ընթացակարգերին: Հայտնի է, որ գոհացուցիչ փոխըմբռնման հասնելու համար կարող են անհրաժեշտ լինել նախնական խորհրդատվություններ, մասնավորապես՝

ա) արտահանող Կողմի համապատասխանության գնահատման համապատասխան մարմինների համարժեք եւ կայուն տեխնիկական գիտելիքներ, որպեսզի լինի վստահություն նրա՝ համապատասխանության գնահատման արդյունքների շարունակական հավաստիության նկատմամբ. այս առումով, օրինակ, հավատարմագրման միջոցով ստուգված համապատասխանությունը միջազգային ստանդարտացնող մարմինների կողմից տրված համապատասխան ուղեցույցներին կամ առաջարկություններին պետք է հաշվի առնվի որպես համարժեք տեխնիկական գիտելիքների ցուցանիշ.

բ) համապատասխանության գնահատման արդյունքների ընդունման սահմանափակում՝ արտահանող Կողմում նշանակված մարմինների կողմից ստացված արդյունքներով:

2. Կողմերն ապահովում են, որ իրենց համապատասխանության գնահատման ընթացակարգերը հնարավորինս թույլ տան սույն հոդվածի 1-ին կետի դրույթների իրականացումը:

3. Խրախուսվում է, որ Կողմը մյուս Կողմի խնդրանքով պատրաստակամ լինի բանակցություններ սկսելու միմյանց համապատասխանության գնահատման ընթացակարգերի արդյունքների փոխադարձ ճանաչման առնչությամբ համաձայնագրերի կնքման համար: Կողմերը կարող են պահանջել, որ այդպիսի համաձայնագրերը բավարարեն սույն հոդվածի 1-ին կետի չափորոշիչները եւ փոխադարձ գոհունակություն արտահայտեն տվյալ ապրանքների առետուրը դյուրացնելու իրենց ներուժի մասով:

4. Խրախուսվում է, որ յուրաքանչյուր Կողմ թույլատրի մյուս Կողմի տարածքում գտնվող համապատասխանության գնահատման մարմինների

մասնակցությունը համապատասխանության գնահատման իր ընթացակարգերին այնպիսի պայմաններով, որոնք պակաս բարենպաստ չեն իրենց տարածքում գտնվող կամ որեւէ երրորդ երկրի տարածքում գտնվող մարմիններին տրամադրվող պայմաններից:

Հոդված 4.6

ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Կողմերն ընդունում են ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերի մշակման, ընդունման եւ կիրառման առնչությամբ թափանցիկության ապահովման կարելիությունը:

2. Յուրաքանչյուր Կողմ, որը մշակում, ընդունում կամ կիրառում է տեխնիկական կանոնակարգ, որը կարող է էական ազդեցություն ունենալ մյուս Կողմի առևտրի վրա, մյուս Կողմի խնդրանքով բացատրում է այդ տեխնիկական կանոնակարգի հիմնավորումը սույն համաձայնագրի 4.4. հոդվածի 2-4-րդ կետերի դրույթների առումով: Երբ տեխնիկական կանոնակարգը մշակվում, ընդունվում կամ կիրառվում է սույն համաձայնագրի 4.4 հոդվածի 2-րդ կետում հստակ կերպով նշված օրինական նպատակներից մեկի համար, եւ այն համապատասխանում է համապատասխան միջազգային ստանդարտներին, ապա անհերքելիորեն պետք է ենթադրվի, որ այն անհարկի խոչընդոտ չի ստեղծում փոխադարձ առևտրի համար:

3. Անհրաժեշտության դեպքում Կողմերը հստակեցնում են տեխնիկական կանոնակարգերը, որոնք հիմնված են ապրանքին ներկայացվող պահանջների վրա ոչ թե նախագծման կամ նկարագրական բնութագրերի, այլ ավելի շուտ՝ իրագործման տեսանկյունից:

4. Երբ համապատասխան միջազգային ստանդարտ գոյություն չունի, կամ առաջարկվող տեխնիկական կանոնակարգի տեխնիկական բովանդակությունը չի

համապատասխանում համապատասխան միջազգային ստանդարտների տեխնիկական բովանդակությանը, եւ եթե տեխնիկական կանոնակարգը կարող է էական ազդեցություն ունենալ Կողմերի փոխադարձ առեստրի վրա, ապա յուրաքանչյուր Կողմ՝

ա) համապատասխան վաղ փուլում հայտարարության մեջ հրապարակում է ծանուցում այնպես, որ մյուս Կողմի շահագրգիռ անձանց հնարավորություն ընձեռվի ծանոթանալու դրա հետ, որպեսզի նրանք առաջարկեն ներդնել որոշակի տեխնիկական կանոնակարգ.

բ) նշանակված կապի ապահովման կենտրոնի միջոցով մյուս Կողմին ծանուցում է առաջարկվող տեխնիկական կանոնակարգի շրջանակներում ընդգրկված ապրանքների մասին՝ դրա նպատակի եւ հիմնավորման վերաբերյալ համառոտ նշումով: Այդպիսի ծանուցումները պետք է իրականացվեն համապատասխան վաղ փուլում, երբ դեռ կարող են կատարվել փոփոխություններ եւ հաշվի առնվել դիտողությունները.

գ) պահանջի դեպքում մյուս Կողմին տրամադրում է առաջարկվող տեխնիկական կանոնակարգի մանրամասները կամ պատճենները եւ հնարավորության դեպքում վերհանում է այն մասերը, որոնք, ըստ էության, շեղվում են համապատասխան միջազգային ստանդարտներից.

դ) առանց խտրականության՝ մյուս Կողմին տրամադրում է սույն կետի «ա» ենթակետով նախատեսված ծանուցման հրապարակումից հետո 60 օր՝ գրավոր մեկնաբանություններ անելու, պահանջի դեպքում այդ դիտողությունները քննարկելու եւ այդ գրավոր դիտողություններն ու դրանց քննարկումների արդյունքները հաշվի առնելու համար:

5. Երբ գոյություն չունի ստանդարտացման միջազգային մարմնի կողմից տրված համապատասխան ուղեցույց կամ առաջարկություն, կամ համապատասխանության գնահատման համար առաջարկվող ընթացակարգի տեխնիկական բովանդակությունը չի համապատասխանում ստանդարտացման

միջազգային մարմինների կողմից տրված համապատասխան ուղեցույցներին եւ առաջարկներին, եւ եթե համապատասխանության գնահատման ընթացակարգը կարող է էական ազդեցություն ունենալ մյուս Կողմի առեւտրի վրա, ապա յուրաքանչյուր Կողմ՝

ա) համապատասխան վաղ փուլում հայտարարության մեջ հրապարակում է ծանուցում այնպես, որ մյուս Կողմերի շահագրգիռ անձանց հնարավորություն ընձեռվի ծանոթանալու դրա հետ, որպեսզի նրանք առաջարկեն ներդնել համապատասխանության գնահատման որոշակի ընթացակարգ.

բ) նշանակված կապի ապահովման կենտրոնի միջոցով մյուս Կողմերին ծանուցում է առաջարկվող համապատասխանության գնահատման ընթացակարգի շրջանակներում ընդգրկված ապրանքների մասին՝ դրա նպատակի եւ հիմնավորման վերաբերյալ համառոտ նշումով: Այդպիսի ծանուցումները պետք է իրականացվեն համապատասխան վաղ փուլում, երբ դեռ կարող են կատարվել փոփոխություններ եւ հաշվի առնվել դիտողությունները.

գ) պահանջի դեպքում մյուս Կողմին տրամադրում է առաջարկվող ընթացակարգի մանրամասները կամ պատճենները եւ հնարավորության դեպքում վերհանում է այն մասերը, որոնք, ըստ էության, շեղվում են ստանդարտացման միջազգային մարմինների կողմից տրված համապատասխան ուղեցույցներից կամ առաջարկություններից.

դ) առանց խտրականության՝ մյուս Կողմին տրամադրում է սույն կետի «ա» ենթակետով նախատեսված ծանուցման հրապարակումից հետո 60 օր՝ գրավոր մեկնաբանություններ անելու, պահանջի դեպքում այդ դիտողությունները քննարկելու եւ այդ գրավոր դիտողություններն ու դրանց քննարկումների արդյունքները հաշվի առնելու համար:

6. Ելնելով սույն հոդվածի 4-5-րդ կետերի առաջաբանում սահմանված դրույթներից՝ երբ որեւէ Կողմի համար առաջանում են անվտանգության, առողջության, շրջակա միջավայրի պաշտպանության կամ ազգային

անվտանգության հրատապ խնդիրներ, կամ կա դրանց առաջացման վտանգ, ապա այդ Կողմն անհրաժեշտ համարելու դեպքում կարող է շրջանցել սույն հոդվածի 4-5-րդ կետերում թվարկված քայլերը՝ պայմանով, որ տեխնիկական կանոնակարգի եւ (կամ) համապատասխանության գնահատման ընթացակարգի ընդունումից հետո Կողմը՝

ա) կապի ապահովման կենտրոնների միջոցով անհապաղ ծանուցի մյուս Կողմին կոնկրետ տեխնիկական կանոնակարգի եւ (կամ) համապատասխանության գնահատման ընթացակարգի եւ դրանց շրջանակներում ընդգրկված ապրանքների մասին՝ հակիրճ նշելով տեխնիկական կանոնակարգի եւ (կամ) համապատասխանության գնահատման ընթացակարգի նպատակը եւ հիմնավորումը, ներառյալ՝ հրատապ խնդիրների բնույթը.

բ) պահանջի դեպքում մյուս Կողմին տրամադրի տեխնիկական կանոնակարգի եւ (կամ) համապատասխանության գնահատման ընթացակարգի պատճենները.

գ) առանց խտրականության՝ մյուս Կողմին թույլատրի ներկայացնել իր գրավոր դիտողությունները, պահանջի դեպքում քննարկել այդ դիտողությունները եւ հաշվի առնել այդ գրավոր դիտողություններն ու այդ քննարկումների արդյունքները:

7. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ ընդունված բոլոր տեխնիկական կանոնակարգերը եւ (կամ) համապատասխանության գնահատման ընթացակարգերն անհապաղ հրապարակվեն կամ այլ կերպ հասանելի լինեն այնպես, որ մյուս Կողմի շահագրգիռ անձանց հնարավորություն ընձեռվի ծանոթանալու դրանց:

8. Բացառությամբ այդ հրատապ հանգամանքների՝ Կողմերը տրամադրում են տեխնիկական կանոնակարգերի հրապարակման եւ դրանց ուժի մեջ մտնելու միջեւ առնվազն 180 օր, որպեսզի արտահանող Կողմի

արտադրողներին տրվի ժամանակ՝ իրենց ապրանքները կամ արտադրության մեթոդները ներմուծող Կողմի պահանջներին հարմարեցնելու համար:

9. Բացառությամբ այդ հրատապ հանգամանքների՝ Կողմերը տրամադրում են համապատասխանության գնահատման ընթացակարգերին ներկայացվող պահանջների հրապարակման եւ դրանց ուժի մեջ մտնելու միջեւ առնվազն 180 օր, որպեսզի արտահանող Կողմի արտադրողներին տրվի ժամանակ իրենց ապրանքները կամ արտադրության մեթոդները ներմուծող Կողմի պահանջներին հարմարեցնելու համար:

10. Յուրաքանչյուր Կողմ սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 90 օրվա ընթացքում մյուս Կողմին ծանուցում է ապրանքների ներմուծման պարտադիր պահանջների մասին:

11. Կողմերը հնարավորության սահմաններում պետք է փորձեն տեղեկությունների փոխանակումն իրականացնել անգլերենով: Հիմնական օրենքներն ու կանոնակարգերը կամ դրանց ամփոփագրերը պահանջի դեպքում պետք է տրամադրվեն անգլերենով:

Հոդված 4.7

Խորհրդատվությունը

1. Եթե ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերի ամենօրյա կիրառումն ազդեցություն է թողնում Կողմերի միջեւ առետրի վրա, ապա Կողմը կարող է ներկայացնել խնդիրը լուծելու նպատակով խորհրդակցություններ անցկացնելու պահանջ: Խորհրդակցություններ անցկացնելու պահանջն ուղղվում է մյուս Կողմի՝ սույն համաձայնագրի 4.9-րդ հոդվածի համաձայն ստեղծված կապի ապահովման կենտրոնին:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է բոլոր ջանքերը գործադրի մյուս Կողմից ստացված՝ սույն գլխի իրականացմանն առնչվող խնդիրների վերաբերյալ

խորհրդակցություններ անցկացնելու մասին ցանկացած պահանջ արագ եւ դրականորեն դիտարկելու համար:

3. Սույն գլխի արդյունավետ իրականացման եւ գործառման նպատակով ստեղծվում է առեւտրի տեխնիկական խոչընդոտների հարցերով աշխատանքային խումբ: Կողմերի ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խումբն իր արդյունքների մասին զեկուցում է Համատեղ կոմիտեին: Եթե սույն գլխում ընդգրկված որեւէ հարց չի կարող պարզաբանվել կամ լուծվել խորհրդակցությունների արդյունքում, ապա Կողմերը կարող են դիմել առեւտրի տեխնիկական խոչընդոտների հարցերով աշխատանքային խմբին՝ աշխատող եւ գործնական այնպիսի լուծում գտնելու նպատակով, որը կոյուրացնի առեւտուրը:

Հոդված 4.8

Համագործակցությունը

1. Կողմերը հնարավորության դեպքում պետք է համագործակցեն ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերի ոլորտում՝ ապահովելու այն, որ ստանդարտները, տեխնիկական կանոնակարգերը եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերն անհարկի արգելքներ չստեղծեն Կողմերի միջեւ ապրանքների առեւտրի համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի համաձայն՝ համագործակցությունը կարող է ներառել հետեւյալը.

ա) համատեղ սեմինարների իրականացում՝ յուրաքանչյուր Կողմում ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերի վերաբերյալ փոխըմբռնումը բարելավելու նպատակով.

բ) վերապատրաստման նպատակով Կողմերի պաշտոնատար անձանց փոխանակում.

գ) ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերի մասին տեղեկությունների փոխանակում.

դ) յուրաքանչյուր Կողմում ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերի համար պատասխանատու մարմինների խրախուսում՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ համագործակցելու նպատակով.

ե) գիտատեխնիկական ոլորտում համագործակցության ապահովում՝ տեխնիկական կանոնակարգերի որակի բարելավման նպատակով:

3. Սույն հոդվածի 2-րդ կետի իրականացումը պայմանավորված է յուրաքանչյուր Կողմի հատկացված ֆինանսական միջոցների եւ համապատասխան օրենքների ու կարգավորումների առկայությամբ:

4. Առետրի տեխնիկական խոչընդոտներին առնչվող հարցերի շուրջ կարող է իրականացվել համագործակցություն՝ ի թիվս այլնի, համապատասխան ուղիներով երկխոսության, համատեղ ծրագրերի եւ տեխնիկական աջակցության միջոցով:

5. Կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են իրականացնել համատեղ ծրագրեր, տրամադրել տեխնիկական աջակցություն եւ համագործակցել ընտրված ոլորտներում ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերի ուղղությամբ:

6. Կողմերը ձեռնարկում են տեսակետների փոխանակում՝ շուկայի վերահսկողության եւ այդ ոլորտում կատարմանն ուղղված գործողությունների՝ առետրի տեխնիկական խոչընդոտներին առնչվող հարցերի վերաբերյալ:

7. Պահանջի դեպքում՝ Կողմը պետք է համապատասխան կերպով ուսումնասիրի սույն գլխի շրջանակներում համագործակցության նպատակներով ներկայացված մյուս Կողմի առաջարկությունները:

8. Սույն գլխի շրջանակներում համագործակցությունը խթանելու նպատակով Կողմերը կարող են ձեռք բերել դրանում ներառված խնդիրների վերաբերյալ պայմանավորվածություններ:

Հոդված 4.9

Իրավասու մարմինները եւ կապի ապահովման կենտրոնները

1. Կողմերը նշանակում են իրավասու մարմիններ եւ կապի ապահովման կենտրոններ եւ փոխանակում են նշանակված իրավասու մարմինների եւ կապի ապահովման կենտրոնների անվանումները, այդ իրավասու մարմինների եւ կապի ապահովման կենտրոնների համապատասխան պաշտոնատար անձանց կոնտակտային տվյալները, ներառյալ՝ հեռախոսի եւ ֆաքսի համարները, էլեկտրոնային փոստի հասցեները եւ այլ համապատասխան մանրամասներ:

2. Կողմերն անմիջապես միմյանց տեղեկացնում են իրենց իրավասու մարմիններում եւ կապի ապահովման կենտրոններում տեղի ունեցած ցանկացած փոփոխության կամ համապատասխան պաշտոնատար անձանց վերաբերյալ տեղեկությունների փոփոխման մասին:

3. Կապի ապահովման կենտրոնների գործառույթները ներառում են՝

ա) Կողմերի միջեւ ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերի մասին տեղեկությունների փոխանակման դյուրացումը՝ ի պատասխան Կողմից այդպիսի տեղեկություն ստանալու մասին բոլոր հիմնավորված պահանջների. եւ

բ) Կողմից ստացված հարցումները համապատասխան կարգավորող մարմիններին ուղարկելը:

4. Իրավասու մարմինների գործառույթները ներառում են՝

ա) սույն գլխի իրականացման նկատմամբ մշտադիտարկումը (մոնիթորինգը).

բ) համագործակցության գործողությունների իրականացման դիտարկումը, անհրաժեշտության դեպքում՝ սույն համաձայնագրի 4.8 հոդվածին համապատասխան.

գ) Կողմի՝ ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերի մշակման, ընդունման, կիրառման կամ կատարման հետ կապված ցանկացած բարձրացված խնդրին արագ արձագանքելը.

դ) Կողմի պահանջով սույն գլխի շրջանակներից բխող ցանկացած խնդրի վերաբերյալ խորհրդակցությունների անցկացման դիտարկումը.

ե) ցանկացած այլ գործողության ձեռնարկում, որը, Կողմերի կարծիքով, իրենց կաջակցի սույն գլխի դրույթների իրականացման հարցում. եւ

զ) ցանկացած այլ գործառույթի իրականացում, որը կարող է պատվիրակվել Համատեղ կոմիտեի կողմից:

ԳԼՈՒԽ 5. ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԵՒ ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Հոդված 5.1

Նպատակները

Սույն գլխի նպատակներն են պաշտպանել Կողմերի տարածքներում մարդկանց, կենդանիների կամ բույսերի կյանքը կամ առողջությունը՝ միեւնույն ժամանակ՝

ա) ձգտելով լուծել սանիտարական եւ բուսասանիտարական միջոցառումներին առնչվող խնդիրները.

բ) ամրապնդելով համագործակցությունը Կողմերի միջեւ եւ նրանց իրավասու մարմինների շրջանում, ներառյալ՝ սանիտարական եւ բուսասանիտարական միջոցառումների մշակման եւ կիրառման ոլորտը, եւ

գ) դյուրացնելով տեղեկությունների փոխանակումը սանիտարական եւ բուսասանիտարական միջոցառումների ոլորտում եւ ավելացնել յուրաքանչյուր Կողմի կարգավորող համակարգի մասին գիտելիքները եւ բարելավել դրա ընկալումը:

Հոդված 5.2

Սահմանումները²⁹

1. Սույն գլխի նպատակներով՝

ա) **«սանիտարական կամ բուսասանիտարական միջոցառում»**՝ ցանկացած միջոցառում, որը կիրառվում է՝

²⁹ Այս սահմանումների նպատակների համար «կենդանի» եզրույթը ներառում է ձուկ եւ վայրի կենդանական աշխարհի, «բույս» եզրույթը ներառում է անտառներ եւ վայրի բուսական աշխարհի, «վնասատուներ» եզրույթը ներառում է մոլախոտեր, իսկ «աղտոտիչներ» եզրույթը ներառում է թունաքիմիկատների եւ անասնաբուժական դեղամիջոցների մնացորդներ եւ կողմնակի նյութեր:

- i. Կողմի տարածքում կենդանիների կամ բույսերի կյանքը կամ առողջությունը վնասատուների, հիվանդությունների, հիվանդություն կրող օրգանիզմների կամ հիվանդություն առաջացնող օրգանիզմների ներթափանցումից, արմատավորումից կամ տարածումից բխող ռիսկերից պաշտպանելու համար.
- ii. Կողմի տարածքում մարդու կամ կենդանիների կյանքը կամ առողջությունը սննդամթերքում, խմիչքներում կամ կերային մթերքներում առկա հավելումներից, աղտոտիչներից, տոքսիններից կամ հիվանդություն առաջացնող օրգանիզմներից բխող ռիսկերից պաշտպանելու համար.
- iii. Կողմի տարածքում մարդու կյանքը կամ առողջությունը կենդանիների, բույսերի կամ դրանցից ստացված արտադրանքի հետեանքով առաջացած հիվանդություններից կամ վնասատուների ներթափանցումից, արմատավորումից կամ տարածումից բխող ռիսկերից պաշտպանելու համար. կամ
- iv. Կողմի տարածքում վնասատուների ներթափանցումից, արմատավորումից կամ տարածումից բխող այլ վնասներ կանխելու կամ սահմանափակելու համար:

Սանիտարական կամ բուսասանիտարական միջոցառումները ներառում են բոլոր համապատասխան օրենքները, հրամանագրերը, կանոնակարգերը, պահանջները եւ ընթացակարգերը, ներառյալ, *ի թիվս այլնի*, վերջնական արտադրանքին ներկայացվող չափորոշիչները. գործընթացները եւ արտադրության մեթոդները. փորձարկման, ստուգման, հավաստագրման եւ հաստատման ընթացակարգերը. կարանտինային բուժումը, ներառյալ՝ համապատասխան պահանջները՝ կապված կենդանիների կամ բույսերի փոխադրման կամ փոխադրման ընթացքում նրանց գոյատեւման համար անհրաժեշտ նյութերի հետ. համապատասխան վիճակագրական մեթոդների

վերաբերյալ դրույթները, նմուշառման ընթացակարգերը եւ ռիսկերի գնահատման մեթոդները. եւ փաթեթավորմանն ու պիտակավորմանը ներկայացվող պահանջները, որոնք ուղղակիորեն կապված են սննդի անվտանգության հետ.

բ) **«վնասատուներից կամ հիվանդություններից զերծ տարածք»**` իրավասու մարմինների կողմից նշված տարածք` անկախ այն հանգամանքից, թե այդ տարածքն ամբողջությամբ գտնվում է մեկ Կողմի տարածքում, Կողմի տարածքի մի մաս է կազմում, թե ամբողջությամբ կամ մասամբ գտնվում է մի քանի Կողմերի տարածքում, որտեղ որոշակի տեսակի վնասատու կամ հիվանդություն չի հանդիպում: Վնասատուներից կամ հիվանդություններից զերծ տարածքը կարող է շրջապատել մի տարածք, շրջապատված լինել մի տարածքով կամ հարակից լինել մի տարածքի` լինի դա Կողմի տարածքում, թե այնպիսի աշխարհագրական տարածաշրջանում, որը ներառում է երկու Կողմերի ամբողջ տարածքը կամ տարածքի մի մասը, որտեղ հանդիպում է որոշակի վնասատու կամ հիվանդություն, սակայն որտեղ պետք է իրականացվեն տարածաշրջանային հսկողության այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են պաշտպանության, վերահսկողության եւ բուժերային գոտիների ստեղծումը, որոնք կսահմանափակեն կամ կվերացնեն տվյալ վնասատուին կամ հիվանդությունը.

գ) **«վնասատուների կամ հիվանդությունների տարածվածության ցածր մակարդակ ունեցող տարածք»**` իրավասու մարմինների կողմից նշված տարածք` անկախ այն հանգամանքից, թե այդ տարածքն ամբողջությամբ գտնվում է մեկ Կողմի տարածքում, Կողմի տարածքի մի մաս է կազմում, թե ամբողջությամբ կամ մասամբ գտնվում է երկու Կողմերի տարածքում, որտեղ որոշակի տեսակի վնասատուի կամ հիվանդության տարածվածության մակարդակը ցածր է, եւ որտեղ պետք է իրականացվեն արդյունավետ վերահսկողության, հսկողության կամ վերացման միջոցառումներ.

դ) **«սանիտարական եւ բուսասանիտարական կանոնակարգեր»**` սանիտարական եւ բուսասանիտարական այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են ընդհանուր առմամբ կիրառելի օրենքները, հրամանագրերը կամ

կարգադրությունները:

2. Հետեյալ միջազգային կազմակերպությունների կողմից մշակված համապատասխան սահմանումները՝ համապատասխան փոփոխություններով (mutatis mutandis), կիրառվում են սույն գլխի իրականացման ընթացքում. Կողքս Ալիմենտարիուս հանձնաժողով, Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպություն (այսուհետ՝ ԿԱՀԿ) եւ Բույսերի պաշտպանության միջազգային կոնվենցիայի (այսուհետ՝ ԲՊՄԿ) շրջանակներում գործող միջազգային եւ տարածաշրջանային կազմակերպություններ:

3. Միջազգային ստանդարտները, ուղեցույցները եւ առաջարկությունները հետեյալն են.

ա) սննդամթերքի անվտանգության համար՝ Կողքս Ալիմենտարիուս հանձնաժողովի կողմից սահմանված ստանդարտներ, ուղեցույցներ եւ առաջարկություններ՝ կապված սննդային հավելումների, անասնաբուժական դեղամիջոցների եւ թունաքիմիկատների մնացորդների, աղտոտիչների, վերլուծության եւ նմուշառման մեթոդների, ինչպես նաեւ հիգիենիկ պատշաճ գործելակերպի կանոնների ու ուղեցույցների հետ.

բ) կենդանիների առողջության եւ կենդանիներից մարդուն փոխանցվող հիվանդությունների համար՝ ԿԱՀԿ-ի հովանու ներքո մշակված ստանդարտներ, ուղեցույցներ եւ առաջարկություններ.

գ) բույսերի առողջության համար՝ միջազգային ստանդարտներ, ուղեցույցներ եւ առաջարկություններ, որոնք մշակվել են ԲՊՄԿ-ի քարտուղարության հովանու ներքո՝ ԲՊՄԿ-ի շրջանակներում գործող տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցությամբ. եւ

դ) վերոնշյալ կազմակերպությունների իրավասությունների սահմաններից դուրս հարցերի համար՝ համապատասխան ստանդարտներ, ուղեցույցներ եւ առաջարկություններ, որոնք հրապարակվել են այլ համապատասխան միջազգային կազմակերպությունների կողմից, որոնք գործընկերության

նպատակով բաց են բոլոր Կողմերի համար:

4. Ռիսկի գնահատումը ներմուծող Կողմի տարածքում վնասատուի կամ հիվանդության ներթափանցման, արմատավորման կամ տարածման հավանականության գնահատումն է՝ համաձայն սանիտարական կամ բուսասանիտարական միջոցառումների, որոնք կարող էին կիրառվել, եւ դրա հետ կապված հնարավոր կենսաբանական եւ տնտեսական հետեւանքների գնահատումը. կամ մարդկանց կամ կենդանիների առողջության վրա անբարենպաստ ազդեցության հավանականության գնահատումը, որն առաջանում է սննդամթերքում, խմիչքներում կամ կերային մթերքներում հավելումների, աղտոտիչների, տոքսինների կամ հիվանդություն առաջացնող օրգանիզմների առկայությունից:

5. Սանիտարական կամ բուսասանիտարական պաշտպանության համապատասխան մակարդակը պաշտպանության այն մակարդակն է, որն իր տարածքում մարդկանց, կենդանիների կամ բույսերի կյանքը կամ առողջությունը պաշտպանելու համար նպատակահարմար է համարում սանիտարական կամ բուսասանիտարական միջոցառումներ սահմանող Կողմը: Կողմերն այս հայեցակարգն այլ կերպ անվանում են «ռիսկի ընդունելի մակարդակ»:

Հոդված 5.3

Գործողության ոլորտը

Սույն գլուխը կիրառվում է Կողմերի այն սանիտարական եւ բուսասանիտարական միջոցառումների նկատմամբ, որոնք ուղղակի կամ անուղղակի ձեւով կարող են ազդել Կողմերի միջեւ առետրի վրա:

Հոդված 5.4

Ընդհանուր դրույթներ

1. Կողմերն իրավունք ունեն ձեռնարկելու սանիտարական եւ բուսասանիտարական միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են մարդկանց, կենդանիների կամ բույսերի կյանքի կամ առողջության պաշտպանության համար՝ պայմանով, որ այդպիսի միջոցառումները չեն հակասում սույն գլխի դրույթներին:

2. Կողմերն ապահովում են, որ՝

ա) ցանկացած սանիտարական կամ բուսասանիտարական միջոցառում կիրառվի միայն այնքանով, որքանով անհրաժեշտ է մարդու, կենդանիների կամ բույսերի կյանքը կամ առողջությունը պաշտպանելու համար՝ հիմնված գիտական սկզբունքների վրա, եւ չպահպանվի առանց բավարար ապացույցների՝ հաշվի առնելով համապատասխան գիտական տեղեկատվության առկայությունը եւ տարածաշրջանային պայմանները.

բ) ցանկացած սանիտարական կամ բուսասանիտարական միջոցառում հիմնված լինի մարդու, կենդանիների կամ բույսերի կյանքի կամ առողջության համար ռիսկերի գնահատման վրա՝ հաշվի առնելով համապատասխան միջազգային կազմակերպությունների կողմից մշակված ռիսկերի գնահատման մեթոդները՝ համապատասխան հանգամանքներին համապատասխան.

գ) այն դեպքերում, երբ համապատասխան գիտական ապացույցները բավարար չեն, համապատասխան Կողմերը ժամանակավորապես ընդունեն արտակարգ սանիտարական կամ բուսասանիտարական միջոցառումներ՝ առկա համապատասխան տեղեկատվության, այդ թվում՝ համապատասխան միջազգային կազմակերպություններից ստացված տեղեկատվության, ինչպես նաեւ մյուս Կողմերի կողմից կիրառվող սանիտարական կամ բուսասանիտարական միջոցառումների հետ կապված տեղեկատվության հիման վրա: Նման հանգամանքներում Կողմերը ձգտում են ստանալ ռիսկի ավելի օբյեկտիվ գնահատման համար անհրաժեշտ լրացուցիչ տեղեկություններ եւ հետեւաբար ողջամիտ ժամկետում վերանայել սանիտարական կամ

բուսասանիտարական միջոցառումը.

դ) իրենց սանիտարական եւ բուսասանիտարական միջոցառումները կամայականորեն կամ անհիմն կերպով խտրականություն չդնեն Կողմերի միջեւ, որտեղ առկա են նույնական կամ նմանատիպ պայմաններ, այդ թվում՝ իրենց եւ մյուս Կողմի տարածքի միջեւ:

3. Սույն գլխում ոչինչ չի ազդում Կողմերի՝ սույն համաձայնագրի 4-րդ գլխով նախատեսված իրավունքների վրա, որոնք կապված են սույն գլխի գործողության ոլորտում չընդգրկված միջոցառումների հետ:

Հոդված 5.5

Համարժեքությունը

1. Ներմուծող Կողմն արտահանող Կողմի սանիտարական կամ բուսասանիտարական միջոցառումներն ընդունում է որպես համարժեք, նույնիսկ եթե այդ միջոցառումները տարբերվում են իր միջոցառումներից կամ նույն արտադրանքի առետրով զբաղվող երրորդ երկրների կողմից կիրառվող միջոցառումներից, եթե արտահանող Կողմը ներմուծող Կողմին օբյեկտիվորեն ցույց է տալիս, որ իր միջոցառումներն ապահովում են ներմուծող Կողմի սանիտարական կամ բուսասանիտարական պաշտպանության համապատասխան մակարդակը: Այդ նպատակով ներմուծող Կողմին, ըստ պահանջի, տրվում է տեսչական ստուգմանը, փորձաքննությանը եւ համապատասխան այլ ընթացակարգերի մասնակցելու ողջամիտ հնարավորություն:

2. Պահանջի դեպքում Կողմերը խորհրդակցություններ են անցկացնում՝ նպատակ ունենալով ձեռք բերել երկկողմ համաձայնություններ՝ նշված սանիտարական կամ բուսասանիտարական միջոցառումների համարժեքության ճանաչման վերաբերյալ:

Հողված 5.6

ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Կողմերն ընդունում են սանիտարական եւ բուսասանիտարական միջոցառումների կիրառման թափանցիկությունն ապահովելու կարելիությունը, մասնավորապես՝ իրենց համապատասխան սանիտարական եւ բուսասանիտարական միջոցառումների վերաբերյալ ժամանակին տեղեկություններ փոխանակելու միջոցով, բայց չսահմանափակվելով դրանով:

2. Կողմերն ապահովում են, որ ընդունված սանիտարական եւ բուսասանիտարական կանոնակարգերը հրապարակվեն Կողմերի իրավասու մարմինների կայքերում այնպես, որ շահագրգիռ կողմերին հնարավորություն ընձեռվի ծանոթանալու դրանց հետ:

3. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ ԵԱՏՄ յուրաքանչյուր անդամ պետությունում, Եվրասիական տնտեսական հանձնաժողովում եւ Իրանի Իսլամական Հանրապետությունում լինի կապի ապահովման մեկ կենտրոն, որը պատասխանատու է շահագրգիռ Կողմերի բոլոր ողջամիտ հարցերին պատասխաններ, ինչպես նաեւ ներքոհիշյալի առնչությամբ համապատասխան փաստաթղթեր տրամադրելու համար.

ա) իր տարածքում ընդունված կամ առաջարկվող ցանկացած սանիտարական կամ բուսասանիտարական կանոնակարգ.

բ) հսկողության եւ տեսչական ստուգման ցանկացած ընթացակարգ, արտադրության եւ կարանտինային բուժման, թունաքիմիկատների նկատմամբ հանդուրժողականության եւ սննդային հավելումների հաստատման ընթացակարգեր, որոնք գործում են իր տարածքում.

գ) ռիսկերի գնահատման ընթացակարգեր, հաշվի առնված գործոններ, ինչպես նաեւ սանիտարական կամ բուսասանիտարական պաշտպանության

համապատասխան մակարդակի սահմանում.

դ) Կողմի կամ դրա տարածքում համապատասխան մարմինների անդամակցությունն ու մասնակցությունը միջազգային եւ տարածաշրջանային սանիտարական եւ բուսասանիտարական կազմակերպություններին եւ համակարգերին, ինչպես նաեւ սույն համաձայնագրի շրջանակներում երկկողմ եւ բազմակողմ համաձայնագրերին եւ պայմանավորվածություններին, եւ այդ համաձայնագրերի եւ պայմանավորվածությունների տեքստերը:

4. Կողմերն ապահովում են, որ շահագրգիռ Կողմի կողմից փաստաթղթերի պատճենները պահանջվելու դեպքում դրանք տրամադրվեն նույն գնով (եթե այդպիսիք կան)³⁰՝ անկախ առաքման արժեքից, ինչպես տրամադրվում են համապատասխան Կողմի քաղաքացիներին³⁰:

5. Եթե գոյություն չունի միջազգային ստանդարտ, ուղեցույց կամ առաջարկություն, կամ առաջարկվող սանիտարական կամ բուսասանիտարական կանոնակարգի բովանդակությունը միջազգային ստանդարտի, ուղեցույցի կամ առաջարկության բովանդակության հետ էապես նույնը չէ, եւ եթե կանոնակարգը կարող է էական ազդեցություն ունենալ մյուս Կողմի կամ Կողմերի առեւտրի վրա, ապա Կողմը՝

ա) կապի ապահովման կենտրոնների միջոցով մյուս Կողմին տրամադրում է ծանուցում այդպիսի կարգավորման վերաբերյալ.

բ) պահանջի դեպքում մյուս Կողմին տրամադրում է առաջարկվող կանոնակարգի մանրամասները կամ պատճենները եւ հնարավորության դեպքում վերհանում է այն մասերը, որոնք, ըստ էության, շեղվում են միջազգային ստանդարտներից, ուղեցույցներից կամ առաջարկություններից.

գ) առանց խտրականության՝ մյուս Կողմին տրամադրում է առնվազն 60

³⁰ Երբ սույն համաձայնագրում նշվում է «քաղաքացիներ», ապա Կողմերի առանձին մաքսային տարածքների դեպքում եզրույթը նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը բնակվում է այդ մաքսային տարածքում կամ այդ մաքսային տարածքում ունի փաստացի եւ գործող արդյունաբերական կամ առեւտրային օբյեկտ:

օր՝ գրավոր մեկնաբանություններ անելու, պահանջի դեպքում այդ դիտողությունները քննարկելու եւ այդ դիտողություններն ու քննարկումների արդյունքները հաշվի առնելու համար:

6. Բացառությամբ հրատապ դեպքերի՝ Կողմերը ողջամիտ ժամանակ են նախատեսում սանիտարական կամ բուսասանիտարական միջոցառման հրապարակման եւ դրա ուժի մեջ մտնելու միջեւ, որպեսզի արտահանող Կողմի արտադրողները հարմարվեն ներմուծող Կողմի պահանջներին:

7. Այնուամենայնիվ, եթե որեւէ Կողմի համար առաջանում են առողջության պահպանման հետ կապված հրատապ խնդիրներ, կամ կա դրա առաջացման վտանգ, այդ Կողմն անհրաժեշտ համարելու դեպքում կարող է բաց թողնել սույն հոդվածի 6-րդ կետում թվարկված քայլերը՝ պայմանով, որ Կողմը՝

ա) կապի ապահովման կենտրոնների միջոցով մյուս Կողմին անհապաղ ծանուցի կոնկրետ կանոնակարգի եւ դրա շրջանակներում ընդգրկված ապրանքների մասին՝ հակիրճ նշելով կանոնակարգի նպատակը եւ հիմնավորումը, ներառյալ՝ հրատապ խնդրի (խնդիրների) բնույթը.

բ) պահանջի դեպքում կանոնակարգի պատճենները տրամադրի մյուս Կողմերին.

գ) մյուս Կողմերին հնարավորություն տա գրավոր դիտողություններ անել, պահանջի դեպքում քննարկել այդ դիտողությունները եւ հաշվի առնել այդ դիտողություններն ու քննարկումների արդյունքները:

8. Կողմերը միմյանց տրամադրում են տեղեկություններ՝ սանիտարական եւ բուսասանիտարական միջոցառումների մասին, որոնք գործում են կամ ուժի մեջ են մտնում սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 90 օրվա ընթացքում:

9. Կողմերը պետք է ձգտեն քայլեր ձեռնարկել տեղեկություններն անգլերենով փոխանակելու համար:

10. Հիմնական օրենքներն ու կանոնակարգերը կամ դրանց

ամփոփագրերը պահանջի դեպքում պետք է տրամադրվեն անգլերենով:

Հոդված 5.7

Տարածաշրջանային պայմաններին հարմարեցումը

1. Կողմերն ընդունում են տարածաշրջանային պայմաններին հարմարեցման հայեցակարգը, ներառյալ՝ վնասատուներից կամ հիվանդություններից զերծ տարածքները եւ վնասատուների կամ հիվանդությունների տարածվածության ցածր մակարդակը՝ որպես առետրի դյուրացման կարեւոր պայմաններ:

2. Այս տարածքները որոշելիս Կողմերը պետք է դիտարկեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են Կողմերի՝ վնասատուներից կամ հիվանդություններից զերծ տարածքների եւ վնասատուների կամ հիվանդությունների տարածվածության ցածր մակարդակ ունեցող տարածքների կարգավիճակը հաստատող տեղեկությունները, աուդիտի արդյունքները, տեսչական ստուգումների մոնիթորինգը, ԿԱՀԿ-ի եւ ԲՊՄԿ-ի կողմից տրամադրվող տեղեկությունները եւ այլ գործոններ:

3. Արտահանող Կողմը, որը հայտարարում է, որ իր տարածքում գտնվող տարածքները վնասատուներից կամ հիվանդություններից զերծ տարածքներ կամ վնասատուների կամ հիվանդությունների տարածվածության ցածր մակարդակ ունեցող տարածքներ են, այդ մասին անհրաժեշտ ապացույցներ է ներկայացնում ներմուծող Կողմին՝ օբյեկտիվորեն ցույց տալու համար, որ այդպիսի տարածքները համապատասխանաբար վնասատուներից կամ հիվանդություններից զերծ տարածքներ կամ վնասատուների կամ հիվանդությունների տարածվածության ցածր մակարդակ ունեցող տարածքներ են եւ ամենայն հավանականությամբ կշարունակեն մնալ այդպիսին: Այդ նպատակով ներմուծող Կողմին, ըստ պահանջի, տրվում է տեսչական ստուգմանը, փորձաքննությանը եւ համապատասխան այլ ընթացակարգերի մասնակցելու ողջամիտ հնարավորություն:

4. Եթե ներմուծող Կողմը չի ընդունում արտահանող Կողմի տրամադրած ապացույցները, այն պետք է բացատրի պատճառները եւ պատրաստ լինի մասնակցելու տեխնիկական խորհրդակցությունների՝ կապված այս հարցի հետ:

Հոդված 5.8

Աուդիտը եւ տեսչական ստուգումները

1. Յուրաքանչյուր Կողմ կարող է իրականացնել աուդիտ եւ (կամ) տեսչական ստուգում՝ արտադրանքի (ապրանքների) անվտանգությունն ապահովելու նպատակով:

2. Կողմերը համաձայնում են բարելավել աուդիտի եւ տեսչական ստուգումների ոլորտում իրենց համագործակցությունը:

3. Աուդիտ եւ (կամ) տեսչական ստուգումներ նախաձեռնելիս յուրաքանչյուր Կողմ պետք է հաշվի առնի համապատասխան միջազգային ստանդարտները, ուղեցույցները եւ առաջարկությունները:

4. Աուդիտ կամ տեսչական ստուգում իրականացնող Կողմը աուդիտի կամ տեսչական ստուգման ենթարկված Կողմին պետք է ապահովի աուդիտի եւ (կամ) տեսչական ստուգումների արդյունքների վերաբերյալ դիտողություններ ներկայացնելու հնարավորությամբ:

5. Աուդիտ կամ տեսչական ստուգում իրականացնող Կողմի կրած ծախսերը հոգում է աուդիտ կամ տեսչական ստուգում իրականացնող Կողմը, եթե Կողմերի միջեւ այլ համաձայնություն չկա:

Հոդված 5.9

Անվտանգությունը հաստատող փաստաթղթերը

1. Ներմուծող Կողմը պետք է ապահովի, որ Կողմերի միջև իրականացվող առևտրում ընդգրկված արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հավաստող փաստաթղթերի պահանջները կիրառվեն միայն մարդկանց, կենդանիների կամ բույսերի կյանքը կամ առողջությունը պաշտպանելու անհրաժեշտության սահմաններում:

2. Կողմերն արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հավաստող փաստաթղթեր մշակելիս անհրաժեշտության դեպքում պետք է հաշվի առնեն համապատասխան միջազգային ստանդարտները, ուղեցույցները եւ առաջարկությունները:

3. Կողմերը կարող են համաձայնել մշակել երկկողմ փաստաթղթեր՝ Կողմերի միջև իրականացվող առևտրում ընդգրկված որոշակի արտադրանքի (ապրանքների) կամ արտադրանքի (ապրանքների) խմբերի անվտանգությունը հավաստելու համար:

4. Առևտրի իրականացումը դյուրացնելու նպատակով Կողմերը պետք է խրախուսեն էլեկտրոնային տեխնոլոգիաների կիրառումն արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հավաստող փաստաթղթերի մշակման ժամանակ:

Հոդված 5.10

Ժամանակավոր արտակարգ միջոցառումները

1. Եթե Կողմը ձեռնարկում է մարդկանց, կենդանիների կամ բույսերի կյանքը կամ առողջությունը պաշտպանելու համար անհրաժեշտ ժամանակավոր արտակարգ միջոցառումներ, ինչպես նշված է սույն համաձայնագրի 5.4 հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետում, ապա այդ Կողմը հնարավորինս շուտ ծանուցում է

մյուս Կողմին այդ միջոցառումների մասին: Արտակարգ միջոցառումներ ձեռնարկած Կողմը հաշվի է առնում մյուս Կողմի տրամադրած համապատասխան տեղեկությունները:

2. Մյուս Կողմի պահանջի դեպքում համապատասխան իրավասու մարմինների քննարկումներն արտակարգ միջոցառումների վերաբերյալ պետք է իրականացվեն հնարավորինս շուտ, եթե այլ համաձայնություն ձեռք չի բերվել Կողմերի միջև:

Հոդված 5.11

Կապի ապահովման կենտրոնները եւ տեղեկությունների փոխանակումը

1. Կողմերը միմյանց ծանուցում են կապի ապահովման կենտրոնների մասին՝ սույն գլխի համաձայն տեղեկությունների տրամադրման համար, եւ իրենց նշանակած իրավասու մարմինների մասին, որոնք պատասխանատու են սույն գլխում ներառված խնդիրների եւ այդ իրավասու մարմինների պատասխանատվության ոլորտների համար:

2. Կողմերը միմյանց տեղեկացնում են իրենց կապի ապահովման կենտրոնների ցանկացած փոփոխության կամ իրենց իրավասու մարմինների կառուցվածքում կամ իրավասությունների շրջանակի ցանկացած էական փոփոխության մասին:

3. Կողմերն իրենց կապի ապահովման կենտրոնների միջոցով պատշաճ ժամկետներում միմյանց գրավոր ծանուցում են՝

ա) սննդամթերքի անվտանգության հետ կապված որեւէ կարեւոր հարցի կամ իրենց տարածքներում կենդանիների կամ բույսերի առողջության, հիվանդությունների կամ վնասատուների տարածվածության փոփոխության մասին, որը բացասաբար է ազդում Կողմերի միջև առետրի վրա. եւ

բ) իրավական շրջանակների կամ այլ սանիտարական կամ

բուսասանիտարական միջոցառումների ցանկացած փոփոխության մասին:

4. Կողմերն իրենց կապի ապահովման կենտրոնների միջոցով միմյանց տեղեկացնում են սանիտարական եւ բուսասանիտարական միջոցառումները չկատարելու՝ պարբերաբար կրկնվող կամ լուրջ դեպքերի եւ այդ հանգամանքը հաստատող համապատասխան փաստաթղթերի փոխանակման մասին:

Հոդված 5.12

Համագործակցությունը

1. Կողմերը համաձայնում են համագործակցել սույն գլխի իրականացումը խթանելու նպատակով:

2. Կողմերն ուսումնասիրում են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող սանիտարական եւ բուսասանիտարական հարցերի շուրջ հետագա համագործակցության հնարավորությունները եւ տեղեկությունների փոխանակումը սույն գլխի դրույթներին համապատասխան: Նման հնարավորությունները կարող են ներառել առետրի խթանման նախաձեռնությունները եւ տեխնիկական աջակցությունը:

3. Սույն գլխի շրջանակներում համագործակցությունը խթանելու նպատակով Կողմերը կարող են ձեռք բերել սանիտարական եւ բուսասանիտարական միջոցառումների վերաբերյալ ժամանակավոր պայմանավորվածություններ:

Հոդված 5.13

Խորհրդատվությունը

1. Եթե Կողմը համարում է, որ սանիտարական կամ բուսասանիտարական միջոցառումն ազդեցություն է թողնում մյուս Կողմի հետ իր

առեւտրի վրա, ապա տվյալ Կողմը կարող է համապատասխան կապի ապահովման կենտրոնների միջոցով պահանջել խորհրդակցություններ անցկացնել խնդիրը լուծելու նպատակով:

2. Կողմը սույն գլխի համատեքստում խորհրդակցություններ է անցկացնում 60 օրը չգերազանցող ժամկետում մյուս Կողմի պահանջով՝ սույն գլխի շրջանակներում ծագող խնդիրները լուծելու նպատակով: Եթե պահանջը ներկայացնող Կողմը համարում է, որ հարցը հրատապ է, այն կարող է պահանջել, որ սույն կետում նշված խորհրդակցությունները տեղի ունենան ավելի կարճ ժամկետում, իսկ մյուս Կողմը ձգտի այդպիսի խորհրդակցություններին մասնակցել առաջարկվող ժամկետներում:

3. Սույն գլխի արդյունավետ իրականացման եւ գործառման նպատակով ստեղծվում է սանիտարական եւ բուսասանիտարական միջոցառումների հարցերով աշխատանքային խումբ: Կողմերի ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խումբն իր արդյունքների մասին զեկուցում է Համատեղ կոմիտեին:

4. Եթե սույն գլխում ընդգրկված որեւէ հարց չի կարող պարզաբանվել կամ լուծվել խորհրդակցությունների արդյունքում, ապա Կողմերը կարող են դիմել սանիտարական եւ բուսասանիտարական միջոցառումների հարցերով աշխատանքային խմբին՝ աշխատող եւ գործնական այնպիսի լուծում գտնելու նպատակով, որը կոչվում է առեւտուրը:

Հոդված 5.14

Առեւտրի դյուրացումը

Բացառությամբ սույն գլխով նախատեսված դեպքերի՝ ներմուծող Կողմը մյուս Կողմի հետ առեւտուրը սովորաբար չի կասեցնում այն հիմքով, որ մեկ խմբաքանակ չի համապատասխանում իր սանիտարական կամ բուսասանիտարական պահանջներին:

ԳԼՈՒԽ 6. ԾԱԳՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 6.1.

Գործողության ոլորտը

Սույն գլխով նախատեսված Ծագման կանոնները կիրառվում են սույն համաձայնագրին համապատասխան սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ տրամադրելու նպատակներով:

Հոդված 6.2

Սահմանումները

Սույն գլխի նպատակներով՝

ա) **«ջրային կուլտուրա»**՝ ջրային օրգանիզմների՝ ձկների, կակղամորթների, խեցգետնանմանների, ջրային այլ անողնաշարավորների եւ ջրային բույսերի բուծում այնպիսի հումքից, ինչպիսիք են ձկնկիթները, մանրաձկները, մատղաշ ձկները եւ թրթուրները՝ արտադրության խթանման նպատակով զարգացման կամ աճի գործընթացներում այնպիսի միջամտությունների միջոցներով, ինչպիսիք են կանոնավոր կերպով ավազաններում դրանց տեղադրումը, կերակրումը կամ գիշատիչներից պաշտպանությունը.

բ) **«լիազորված մարմին»**՝ սույն համաձայնագրով Ծագման

սերտիֆիկատ շնորհելու համար Կողմի նշանակած իրավասու մարմին.

գ) **«CIF արժեք»**՝ ներմուծված ապրանքների արժեքը, ներառյալ՝ մինչև նավահանգիստ կամ ներմուծման երկիր մուտք գործելու վայր հասնելու համար փոխադրավարձի (ֆրախտի) եւ ապահովագրության ծախսերը՝ կիրառելի եւ գործող միջազգային առևտրային պայմաններին (միջազգային առևտրային պայմաններ) համապատասխան՝ բացառությամբ ներքին հարկերի, որոնք կարող են վերադարձվել արտադրանքի արտահանման ժամանակ.

դ) **«խմբաքանակ»**՝ մեկ կամ ավելի տրանսպորտային փաստաթղթերում ներառված, արտահանողից բեռն ստացողին միաժամանակ ուղարկվող ապրանքներ, ինչպես նաև առաքման հաշիվ-ապրանքագրով ուղարկվող կամ որպես սահմանը հատող անձի ուղեբեռ տեղափոխվող ապրանքներ.

ե) **«արտահանող»**՝ արտաքին առևտրային համաձայնագրի (պայմանագրի) համաձայն ապրանքների վաճառող, բեռնառաքող, մատակարար կամ արտադրող.

զ) **«EXW արժեք»**՝ ապրանքի համար վճարված գինն այն Կողմի արտադրողին, որտեղ իրականացվել է վերջին մշակումը կամ վերամշակումը՝ կիրառելի եւ գործող միջազգային առևտրային պայմաններին (միջազգային առևտրային պայմաններ) համապատասխան՝ բացառությամբ ներքին հարկերի, որոնք կարող են վերադարձվել արտադրանքի արտահանման ժամանակ.

է) **«ներմուծող»**՝ արտաքին առևտրային համաձայնագրի (պայմանագրի) համաձայն ապրանքների գնորդ կամ ապրանքների բեռն ստացող.

ը) **«նյութ»**՝ ապրանքների արտադրության մեջ օգտագործվող կամ սպառվող կամ ապրանքների մեջ ֆիզիկապես ներառվող կամ այլ ապրանքների արտադրության ժամանակ մշակման ենթարկվող ցանկացած նյութ, այդ թվում՝ բաղադրամաս, հումք, բաղադրիչ կամ մաս.

թ) **«ծագում չունեցող ապրանքներ»** կամ **«ծագում չունեցող նյութեր»**՝ սույն գլխով սահմանված ծագման չափորոշիչներին չհամապատասխանող

ապրանքներ կամ նյութեր.

ժ) «**ծագում ունեցող ապրանքներ**» կամ «**ծագում ունեցող նյութեր**»՝ սույն գլխով սահմանված ծագման չափորոշիչներին համապատասխանող ապրանքներ կամ նյութեր.

ժա) «**արտադրող**»՝ Կողմի տարածքում արտադրություն իրականացնող անձ.

ժբ) «**արտադրություն**»՝ ապրանքների ստանալու մեթոդներ, ներառյալ՝ աճեցնելը, արդյունահանելը, բերքահավաքը, պահելը, բուծելը, լուծամզման միջոցով ստանալը, քաղելը, բռնելը, ձկնորսությունը, որսալը, արտադրելը, վերամշակելը կամ հավաքակցելը.

ժգ) «**ծագման ապացույց**»՝ Ծագման սերտիֆիկատ կամ Ծագման հայտարարագիր.

ժդ) «**ստուգող մարմին**»՝ ստուգման ընթացակարգերն իրականացնելու նպատակով Կողմի նշանակած իրավասու պետական մարմին:

Հոդված 6.3

Ծագման չափորոշիչները

Սույն գլխի նպատակներով ապրանքները համարվում են Կողմի ծագում ունեցող, եթե՝

ա) սույն համաձայնագրի 6.4 հոդվածին համապատասխան՝ ամբողջությամբ ձեռք են բերվել կամ արտադրվել տվյալ Կողմում, կամ

բ) ամբողջությամբ արտադրվել են մեկ կամ ավելի Կողմերում՝ բացառապես մեկ կամ ավելի Կողմերի ծագում ունեցող նյութերից, կամ

գ) արտադրվել են ծագում չունեցող նյութեր օգտագործող Կողմում՝ պայմանով, որ Կողմի ավելացված արժեքի մասնաբաժինը կազմում է EXW արժեքի 50 տոկոսից ոչ պակաս՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ

ապրանքների ծագման հատուկ չափորոշիչը սահմանված է սույն համաձայնագրի 2-րդ հավելվածում:

Հոդված 6.4

Ամբողջությամբ ձեռք բերված կամ արտադրված ապրանքները

Սույն համաձայնագրի 6.3 հոդվածի նպատակներով՝ Կողմի տարածքում ամբողջությամբ ձեռք բերված կամ արտադրված ապրանքներ են՝

ա) Կողմի տարածքում աճեցված, բերքահավաքված կամ հավաքված բույսերը եւ բուսական ապրանքները, այդ թվում՝ մրգերը, հատապտուղները, ծաղիկները, բանջարեղենը, ծառերը, ջրիմուռները, սնկերը եւ կենդանի բույսերը.

բ) Կողմի տարածքում ծնված եւ աճեցված կենդանի կենդանիները.

գ) Կողմի տարածքում կենդանի կենդանիներից ստացված ապրանքները.

դ) Կողմի տարածքում հավաքելու, որսալու, բռնելու, ձկնորսության, աճեցնելու, բուծելու եւ ջրային կուլտուրայի միջոցով ստացված ապրանքները.

ե) Կողմի տարածքում օդից, հողից, ջրից կամ ծովի հատակից եւ ընդերքից լուծանգված կամ արդյունահանված հանքանյութերը եւ բնության մեջ հանդիպող այլ օգտակար հանածոներ.

զ) Կողմում գրանցված կամ հաշվառված եւ Կողմի դրոշի տակ նավարկող նավով միջազգային իրավունքին համապատասխան ծովային ձկնորսությունից ստացված ապրանքները եւ բաց ծովից ստացված ծովային այլ ապրանքներ.

է) ապրանքները, որոնք պատրաստվում են բացառապես Կողմում գրանցված կամ հաշվառված եւ Կողմի դրոշի տակ նավարկող ձկնամշակող գործարան-նավերի վրա՝ սույն հոդվածի «գ» ենթակետում նշված ապրանքներից.

ը) Կողմի տարածքում իրականացվող արտադրության եւ սպառման հետեւանքով առաջացած թափոնները եւ մնացուկները.

թ) Կողմի տարածքում հավաքված եւ օգտագործված ապրանքները՝ պայմանով, որ նման ապրանքները պիտանի են միայն հումքի վերականգնման համար.

ժ) տիեզերանավի վրա տիեզերական տարածությունում արտադրված ապրանքները՝ պայմանով, որ տվյալ տիեզերանավը գրանցված լինի Կողմում. եւ

ժա) Կողմի տարածքում միայն սույն հոդվածի «ա»-«ժ» ենթակետերում նշված ապրանքներից արտադրված կամ ստացված ապրանքները:

Հոդված 6.5

Ավելացված արժեքի մասնաբաժինը

1. Սույն գլխի եւ սույն համաձայնագրի 2-րդ հավելվածով սահմանված՝ առանձին արտադրատեսակներին առնչվող կանոնների նպատակներով ավելացված արժեքի մասնաբաժինը (այսուհետ՝ ԱԱՄ) հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով.

$$\frac{\text{EXW արժեք} - \text{Ծագում չունեցող նյութերի արժեք}}{\text{EXW արժեք}} \times 100\%$$

որտեղ ծագում չունեցող նյութերի արժեքը՝

ա) նյութերի CIF արժեքն է՝ Կողմի տարածք ներմուծվելու պահի դրությամբ, կամ

բ) սկզբում որոշված գինը, որը ծագում չունեցող նյութերի համար վճարվել է կամ ենթակա է վճարման այն Կողմի տարածքում, որտեղ իրականացվում է մշակումը կամ վերամշակումը:

Եթե ապրանքներն արտադրողը Կողմի տարածքում ձեռք է բերում ծագում չունեցող նյութեր, ապա այդ Կողմի տարածքում այդպիսի նյութերի արժեքը չի

ներառում փոխադրավարձը, ապահովագրության, փաթեթավորման ծախսերը եւ չկանխատեսված ցանկացած այլ ծախս՝ կապված այդ նյութերը մատակարարի գտնվելու վայրից արտադրության վայր փոխադրելու հետ:

2. Յուրաքանչյուր Կողմ նախատեսում է, որ ծագում չունեցող նյութերի համար ապրանքների արտադրության մեջ այդ նյութերի օգտագործման հետեանքով առաջացած թափոնների եւ խոտանի արժեքը կարող է հանվել նյութերի արժեքից:

Հոդված 6.6

Ոչ բավարար մշակումը կամ վերամշակումը

1. Առանձին կամ համակցությամբ իրականացվող հետեյալ գործողությունները համարվում են ոչ բավարար սույն համաձայնագրի 6.3 հոդվածի պահանջների կատարման համար.

ա) փոխադրման եւ պահպանման ընթացքում արտադրանքի պահպանվածությունն ապահովելու համար իրականացվող գործողություններ,

բ) սառեցում կամ հալեցում,

գ) փաթեթավորում եւ վերափաթեթավորում,

դ) փոշու, օքսիդի, յուղի, ներկի կամ այլ պատվածքների լվացում, մաքրում, հեռացում,

ե) մանածագործվածքի (տեքստիլի) արդուկում կամ մամլում,

զ) ներկում, ողորկում, լաքապատում, յուղում,

է) հացահատիկների եւ բրնձի թեփահանում, մասնակի կամ լրիվ սպիտակեցում, ողորկում եւ հղկում,

ը) շաքարի գունավորման կամ կտոր շաքարի ստացման հետ կապված գործողություններ,

թ) մրգերի, ընկույզների եւ բանջարեղենի կեղեւահանում, կորիզների եւ կեղեւի հեռացում,

ժ) սրում, աղում,

ժա) կտրատում,

ժբ) մաղում, ընտրում, տեսակավորում, դասակարգում,

ժգ) շերի, բանկաների, սրվակների, պարկերի, արկղերի, տուփերի մեջ լցնում, մակերեսային վրա ամրակցում եւ փաթեթավորման մյուս բոլոր գործողությունները,

ժդ) մականշվածքի, պիտակների, լոգոտիպերի եւ նման այլ տարբերակիչ նշանների զետեղում կամ տպում արտադրանքի կամ դրա փաթեթվածքի վրա,

ժե) արտադրանքի (բաղադրիչների) խառնում, որը չի հանգեցնում ստացված արտադրանքի՝ սկզբնական բաղադրիչներից էական տարբերության,

ժզ) արտադրանքի պարզ հավաքակցում կամ արտադրանքի կազմատում մասերի,

ժէ) կենդանիների սպանդ, մսի տեսակավորում:

2. Սույն հոդվածի 1-ին կետի նպատակներով «պարզ» բառը բնութագրում է այնպիսի գործողություններ, որոնց համար չեն պահանջվում հատուկ հմտություններ կամ հենց այդպիսի գործողությունների կատարման համար նախատեսված մեքենաներ, ապարատներ կամ սարքավորումներ:

Հոդված 6.7

Ծագման բնութագրերի համակցումը

Չհակասելով սույն համաձայնագրի 6.3 հոդվածին՝ մի Կողմի ծագում ունեցող ապրանքները կամ նյութերը, որոնք որպես նյութեր օգտագործվում են մյուս Կողմում արտադրանքի արտադրության մեջ, համարվում են այն Կողմի ծագում ունեցող, որտեղ իրականացվել են վերջին գործողությունները՝ բացի սույն համաձայնագրի 6.6 հոդվածի 1-ին կետում նշված գործողություններից: Այդպիսի նյութերի ծագումը հաստատվում է լիազորված մարմնի կողմից տրամադրված Ծագման սերտիֆիկատով (Ձեւ CT-3) (այսուհետ՝ Ծագման սերտիֆիկատ):

Հոդված 6.8

De Minimis (Ոչ էական լինելը)

1. Այն ապրանքները, որոնք, սույն համաձայնագրի 2-րդ հավելվածի համաձայն, սակագնային դասակարգման փոփոխության չեն ենթարկվում, այնուամենայնիվ, համարվում են ծագում ունեցող, եթե՝

ա) ապրանքների արտադրության մեջ օգտագործվող եւ սակագնային դասակարգման անհրաժեշտ փոփոխության չենթարկվող՝ ծագում չունեցող բոլոր նյութերի արժեքը չի գերազանցում այդպիսի ապրանքների EXW արժեքի 5 տոկոսը, եւ պայմանով, որ այդ նյութերն անհրաժեշտ են ապրանքների արտադրության համար, եւ

բ) ապրանքները բավարարում են սույն գլխի՝ դրանց նկատմամբ կիրառելի մյուս բոլոր պահանջները:

2. Սույն հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետում նշված նյութերի արժեքը ներառվում է ծագում չունեցող նյութերի արժեքի մեջ՝ դրանց նկատմամբ կիրառելի ցանկացած ԱԱՄ պահանջի դեպքում:

Հոդված 6.9

Խմբաքանակի անմիջական փոխադրումը

1. Սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ, սույն գլխին համապատասխան, ծագում ունեցող ապրանքների համար տրամադրվում է պայմանով, որ այդպիսի ապրանքները ներմուծող Կողմի տարածք փոխադրվեն անմիջապես արտահանող Կողմի տարածքից:

2. Չնայած սույն հոդվածի 1-ին կետին՝ ծագում ունեցող ապրանքները կարող են փոխադրվել երրորդ երկրների տարածքներով՝ պայմանով, որ՝

ա) երրորդ երկրների տարածքով տարանցումը հիմնավորված է աշխարհագրական պատճառներով կամ պայմանավորված է բացառապես փոխադրմանն առնչվող հարցերով,

բ) ապրանքներն այնտեղ վաճառքի կամ սպառման մեջ չեն, եւ

գ) բեռնաթափումից, փոխաբեռնումից, պահպանումից կամ դրանց պահպանվածությունն ապահովելու համար նախատեսված որեւէ անհրաժեշտ գործողությունից բացի՝ ապրանքներն այնտեղ չենթարկվեն որեւէ այլ գործողության:

3. Հայտարարատուն ներմուծող Կողմի մաքսային մարմիններ է ներկայացնում համապատասխան փաստաթղթային ապացույց, որով հաստատվում է սույն հոդվածի 2-րդ կետում նշված պայմանների կատարումը: Այդ ապացույցները ներմուծող Կողմի մաքսային մարմիններին են տրամադրվում ներկայացնելով՝

ա) մի Կողմի տարածքից մյուս Կողմի տարածք տեղափոխման ընթացքի վերաբերյալ տրանսպորտային փաստաթղթերը, որոնցում ներառվում են՝

i. ապրանքների ճշգրիտ նկարագրությունը,

ii. ապրանքների բեռնաթափման եւ փոխաբեռնման ամսաթվերը

(եթե տրանսպորտային փաստաթղթերում չեն ներառվում ապրանքների բեռնաթափման եւ փոխաբեռնման ամսաթվերը, ապա տրանսպորտային փաստաթղթերից բացի՝ ներկայացվում է այդպիսի տեղեկություններ պարունակող այլ օժանդակ փաստաթուղթ), եւ

iii. կիրառելիության դեպքում՝

- նավերի կամ օգտագործված մյուս տրանսպորտային միջոցների անվանումները,
- բեռնարկղերի համարները,
- այն պայմանները, որոնցում ապրանքները տարանցման երրորդ երկրում պահվել են պատշաճ վիճակում,
- տարանցման երկրի մաքսային մարմինների նշումները.

բ) ապրանքների վերաբերյալ առետրային հաշիվ-ապրանքագիրը:

4. Հայտարարատուն կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, որոնցով ապացուցվում է սույն հոդվածի 2-րդ կետի պահանջների կատարումը:

5. Այն դեպքում, երբ տրանսպորտային փաստաթղթերը չեն կարող տրամադրվել, պետք է ներկայացվի տարանցման երրորդ երկրի մաքսային մարմինների կողմից տրված փաստաթուղթ, որը պետք է պարունակի սույն հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի մեջ նշված բոլոր տեղեկությունները:

6. Եթե հայտարարատուն ներմուծող Կողմի մաքսային մարմիններին չի տրամադրում խմբաքանակի անմիջական փոխադրման փաստը հաստատող փաստաթղթային ապացույցներ, ապա սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ չի տրամադրվում:

Հոդված 6.10

Մանրածախ վաճառքի համար նախատեսված փաթեթավորման նյութերը

1. Փաթեթավորման նյութերը եւ կոնտեյներները, որոնցում ապրանքները փաթեթավորվում են մանրածախ վաճառքի նպատակով, ապրանքների հետ դասակարգվելու դեպքում հաշվի չեն առնվում՝ որոշելու համար այն հարցը, թե արդյոք այդ ապրանքների արտադրության համար օգտագործված՝ ծագում չունեցող բոլոր նյութերը ենթարկվել են սույն համաձայնագրի 2-րդ հավելվածով սահմանված սակագնային դասակարգման կիրառելի փոփոխությանը:

2. Չնայած սույն հոդվածի 1-ին կետին՝ որոշելու համար, թե արդյոք ապրանքները բավարարում են ԱԱՄ-ի վերաբերյալ պահանջը, ապրանքների ԱԱՄ-ն հաշվարկելիս մանրածախ վաճառքի համար օգտագործվող փաթեթվածքի արժեքը, կախված կոնկրետ դեպքից, հաշվի է առնվում որպես ծագում ունեցող կամ ծագում չունեցող նյութեր:

Հոդված 6.11

Բեռնառքման համար նախատեսված փաթեթավորման նյութերը

Փաթեթավորման նյութերը եւ կոնտեյներները, որոնցում ապրանքները փաթեթավորվում են բացառապես փոխադրման համար, հաշվի չեն առնվում ապրանքների ծագում ունենալը որոշելու հարցում:

Հոդված 6.12

Պարագաները, պահեստամասերը, գործիքները եւ հրահանգչական կամ տեղեկատվական նյութերը

1. Որոշելու համար, թե արդյոք ապրանքները համապատասխանում են սույն համաձայնագրի 2-րդ հավելվածում նշված սակագնային դասակարգման

պահանջների փոփոխմանը, պարագաներին, պահեստամասերին, գործիքներին եւ հրահանգչական կամ տեղեկատվական այլ նյութերին, որոնք սովորական սարքավորման մաս են կազմում եւ ներառված են դրա EXW արժեքի մեջ, կամ որոնց համար առանձին հաշիվ-ապրանքագիր չի ներկայացվում, համարվում են տվյալ ապրանքի մաս եւ հաշվի չեն առնվում ապրանքը որպես ծագում ունեցող որակելու վերաբերյալ որոշում կայացնելու հարցում:

2. Չնայած սույն հոդվածի 1-ին կետին՝ որոշելու համար, թե արդյոք ապրանքները բավարարում են ԱԱՄ-ի վերաբերյալ պահանջը, ապրանքների ԱԱՄ-ն հաշվարկելիս պարագաների, պահեստամասերի, գործիքների եւ հրահանգչական կամ տեղեկատվական այլ նյութերի արժեքը, կախված կոնկրետ դեպքից, հաշվի է առնվում որպես ծագում ունեցող կամ ծագում չունեցող նյութեր:

3. Սույն հոդվածը կիրառվում է միայն, եթե՝

ա) ապրանքների հետ ներկայացվող պարագաների, պահեստամասերի եւ գործիքների, հրահանգչական կամ տեղեկատվական այլ նյութերի համար այդ ապրանքներից առանձին հաշիվ-ապրանքագիր չի ներկայացվում, եւ

բ) ապրանքների հետ ներկայացվող պարագաների, պահեստամասերի, գործիքների, հրահանգչական կամ տեղեկատվական նյութերի քանակները եւ արժեքը սովորական են այդպիսի ապրանքների համար:

Հոդված 6.13

Հավաքածուները

Ներդաշնակեցված համակարգի մեկնաբանության Ընդհանուր կանոնների 3-րդ կանոնի համաձայն՝ սահմանված հավաքածուները համարվում են ծագում ունեցող, եթե բոլոր բաղադրիչները ծագում ունեցող են: Այնուամենայնիվ, եթե հավաքածուն կազմված է ծագում ունեցող եւ ծագում չունեցող ապրանքներից, ապա հավաքածուն ամբողջությամբ համարվում է ծագում ունեցող՝ պայմանով, որ ծագում չունեցող ապրանքների արժեքը չի գերազանցում հավաքածուի EXW արժեքի 15 տոկոսը:

Հոդված 6.14

Չեզոք տարրերը

Որոշելու համար՝ արդյոք ապրանքը ծագում ունեցող է, թե՛ ոչ, հաշվի չի առնվում հետեւյալ չեզոք տարրերի ծագումը, որոնք տվյալ ապրանքի արտադրության մեջ կարող են օգտագործվել, սակայն այդ ապրանքների մաս չկազմել.

- ա) վառելիք եւ էլեկտրական էներգիա,
- բ) գործիքներ, դրոշմներ եւ մամլակաղապարներ,
- գ) սարքավորումների ու շենքերի պահպանության համար օգտագործվող պահեստամասեր եւ նյութեր,
- դ) արտադրության մեջ կամ սարքավորումների ու շենքերի շահագործման համար օգտագործվող քսանյութեր, քսուքներ, բաղադրանյութեր եւ այլ նյութեր,
- ե) ձեռնոցներ, ակնոցներ, կոշիկներ, հագուստ, անվտանգության սարքավորումներ,

զ) ապրանքների փորձարկման կամ զննման համար օգտագործվող սարքավորումներ, սարքեր,

է) կատալիզատոր եւ լուծիչներ, եւ

ը) ցանկացած այլ ապրանք, որը տվյալ ապրանքի մաս չի կազմում, սակայն դրա օգտագործումն այդ ապրանքի արտադրության մեջ կարող է ներկայացվել որպես տվյալ արտադրության մի մաս:

ԲԱԺԻՆ II. ԾԱԳՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԱՊԱՑՈՒՅՑԸ

Հոդված 6.15

Սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրման հայցումը

1. Մի Կողմի տարածքից ծագող ապրանքների համար մյուս Կողմի տարածք ներմուծման դեպքում տրամադրվում է սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ՝ ծագման հետեւյալ ապացույցներից որեւէ մեկը ներկայացնելու դեպքում.

ա) սույն գլխի համաձայն տրամադրված Ծագման սերտիֆիկատ: Ներմուծող Կողմի մաքսային մարմիններ ներկայացված Ծագման սերտիֆիկատը պետք է լինի բնօրինակ, վավեր, սույն համաձայնագրի 3-րդ հավելվածով սահմանված ձեւաչափին համապատասխան պատշաճ ձեւակերպված եւ տրամադրված՝ բացառությամբ սույն համաձայնագրի 6.28 հոդվածով նախատեսված դեպքերի.

բ) սույն համաձայնագրի 6.17 հոդվածին համապատասխան տրամադրված Ծագման հայտարարագիր:

2. Ծագման ապացույցը վավեր է տրամադրման օրվանից սկսած՝ 12 ամսվա ընթացքում, եւ ներմուծող Կողմի մաքսային մարմիններին պետք է

ներկայացվի այդ ժամանակահատվածի ընթացքում, սակայն մաքսային հայտարարագրի ներկայացման պահից ոչ ուշ՝ բացառությամբ սույն հոդվածի 3-րդ կետում սահմանված հանգամանքների:

3. Եթե ներմուծողը ներմուծման պահին չունի ծագման ապացույցը, ներմուծող Կողմը սահմանում է կիրառելի ԱԱԲՌ մաքսատուրք կամ պահանջում է ներմուծված ապրանքների մասով ապահովման վճարում, եթե կիրառելի է: Այս դեպքում ներմուծողը կարող է հայցել սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրում եւ ցանկացած ավել վճարված ներմուծման մաքսատուրքի փոխհատուցում կամ ապահովման վճարում՝ ներմուծող Կողմի համապատասխան օրենքների եւ կարգավորումների համաձայն մաքսային հայտարարագրի գրանցման պահից 12 ամսվա ընթացքում՝ պայմանով, որ պահպանվել են սույն համաձայնագրի 6.23 հոդվածի բոլոր պահանջները:

Հոդված 6.16

Հանգամանքները, որոնց դեպքում ծագման ապացույց չի պահանջվում

Ծագման ապացույց չի պահանջվում ծագում ունեցող ապրանքների ներմուծման համար սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ ստանալու նպատակով այն դեպքում, երբ մաքսային արժեքը չի գերազանցում 200 եվրոն կամ ներմուծող Կողմի արժույթով համարժեք գումարը՝ պայմանով, որ տվյալ ներմուծումը չի կազմում մեկ կամ մեկից ավելի խմբաքանակների մաս, որոնք ողջամտորեն կարող են դիտարկվել որպես ծագման ապացույց ներկայացնելուց խուսափելու նպատակով նախաձեռնված կամ իրականացված միջոց:

Հոդված 6.17

Ծագման հայտարարագիրը

1. Սույն համաձայնագրի 6.15 հոդվածի 1-ին կետում նշված Ծագման հայտարարագիրը կարող է կազմվել արտադրողի կամ արտահանողի կողմից՝

ծագում ունեցող ապրանքներ պարունակող ցանկացած խմբաքանակի համար, որոնց մաքսային արժեքը չի գերազանցում 5000 եվրոն կամ ներմուծող Կողմի արժույթով համարժեք գումարը:

Կողմերը պետք է ապահովեն, որ տվյալ ներմուծումը չկազմի մեկ կամ մեկից ավելի խմբաքանակների մաս, որոնք ողջամտորեն կարող են դիտարկվել որպես Ծագման սերտիֆիկատը ներկայացնելուց խուսափելու նպատակով նախաձեռնված կամ իրականացված միջոց:

2. Ծագման հայտարարագիրն արտադրողի կամ արտահանողի կողմից կազմված ծագման մասին հայտարարություն է՝ ապրանքներին առնչվող ցանկացած առետրային փաստաթղթի վերաբերյալ, եւ դա պետք է համապատասխանի սույն համաձայնագրի 4-րդ հավելվածում սահմանված ձեւանմուշին:

3. Ծագման հայտարարագրերը պետք է լինեն տպագիր, ստորագրված լինեն արտադրողի կամ արտահանողի կողմից եւ լինեն անգլերեն:

4. Ծագման հայտարարագիրը ներառում է մեկ խմբաքանակի մեջ մտնող՝ ծագում ունեցող ապրանքները, եւ այն վավեր է կազմման օրվանից 12 ամիս: Հայտարարագրված ներմուծվող ապրանքների փաստացի քաշը չպետք է գերազանցի Ծագման հայտարարագիրը պարունակող առետրային փաստաթղթի մեջ նշված քաշի 5 տոկոսը:

5. Եթե ներմուծող Կողմի մաքսային մարմինները ողջամիտ կասկածներ ունեն Ծագման հայտարարագրի իսկության եւ/կամ ծագման չափորոշիչներին ապրանքների համապատասխանության վերաբերյալ, նրանք կարող են պահանջել, որ Ծագման սերտիֆիկատ ներկայացվի:

Հոդված 6.18

Ծագման սերտիֆիկատի տրամադրումը

1. Ապրանքներն արտադրողը կամ արտահանողը կամ դրա լիազորված ներկայացուցիչը գրավոր կամ եթե կիրառելի է՝ էլեկտրոնային եղանակով դիմում է լիազորված մարմին՝ Ծագման սերտիֆիկատի համար:

2. Ծագման սերտիֆիկատը լիազորված մարմնի կողմից տրամադրվում է արտահանող Կողմի արտադրողին կամ արտահանողին կամ դրա լիազորված ներկայացուցչին արտահանումից առաջ կամ դրա ընթացքում բոլոր այն դեպքերում, երբ արտահանվելիք ապրանքները սույն գլխի իմաստով կարող են համարվել Կողմի տարածքի ծագում ունեցող:

3. Արտահանող Կողմի լիազորված մարմինն ապահովում է, որ Ծագման սերտիֆիկատները լրացվեն պատշաճորեն՝ սույն համաձայնագրի 3-րդ հավելվածով սահմանված պահանջներին համապատասխան:

4. Ծագման սերտիֆիկատը ներառում է մեկ խմբաքանակի մեջ ընդգրկված ապրանքները:

5. Յուրաքանչյուր Ծագման սերտիֆիկատ ունի լիազորված մարմնի կողմից տրված եզակի գրանցման համար:

6. Եթե Ծագման սերտիֆիկատի մեջ ներառված բոլոր ապրանքները հնարավոր չէ տեղավորել մեկ էջի վրա, պետք է օգտագործվեն լրացուցիչ էջեր, ինչպես սահմանված է սույն համաձայնագրի 3-րդ հավելվածում:

7. Ծագման սերտիֆիկատը պետք է կազմված լինի մեկ բնօրինակից եւ երկու օրինակից:

8. Մեկ օրինակը պահվում է արտահանող Կողմի լիազորված մարմնի մոտ: Մյուս օրինակը պահվում է արտահանողի մոտ:

9. Չհակասելով սույն հոդվածի 2-րդ կետին՝ բացառիկ դեպքերում, երբ Ծագման սերտիֆիկատը չի տրամադրվել արտահանումից առաջ կամ դրա

ընթացքում, այն կարող է տրվել հետադարձ կարգով՝ դրա վրա զետեղելով «ՏՐՎԱԾ Է ՀԵՏԱԴԱՐՁ ՈՒԺՈՎ» կամ «ՏՐՎԱԾ Է ՀԵՏԻՆ ԱՄՍԱԹՎՈՎ» գրառումը:

10. Ներկայացված Ծագման սերտիֆիկատի բնօրինակը պահվում է ներմուծող Կողմի մաքսային մարմինների մոտ՝ բացառությամբ Կողմի համապատասխան ներպետական օրենքներով եւ կարգավորումներով սահմանված հանգամանքների:

Հոդված 6.19

Աննշան անհամապատասխանությունները

1. Եթե ապրանքների ծագումը կասկածների տեղիք չի տալիս, ծագման ապացույցի մասին տեղեկությունների եւ ներմուծող Կողմի մաքսային մարմիններին ներկայացված փաստաթղթերի միջեւ աննշան անհամապատասխանությունների հայտնաբերումն ինքնին չպետք է հանգեցնի ծագման ապացույցի անվավեր ճանաչմանը, եթե այդ տեղեկությունները փաստացիորեն համապատասխանում են ներկայացված ապրանքներին:

2. Եթե ծագման միեւնույն ապացույցի համաձայն մի քանի ապրանքներ են հայտարարագրված, նշված ապրանքներից որեւէ մեկի հետ ծագած խնդիրը չպետք է ազդեցություն ունենա ծագման ապացույցի մեջ ներառված մնացած ապրանքների համար սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրման վրա կամ որեւէ կերպ հետաձգի դա:

Հոդված 6.20

Ծագման սերտիֆիկատի տրամադրման առանձնահատուկ դեպքերը

1. Ծագման սերտիֆիկատը գողացվելու, կորչելու կամ ոչնչացվելու դեպքում արտադրողը, արտահանողը կամ դրա լիազորված ներկայացուցիչը կարող են դիմել լիազորված մարմին՝ նշելով Ծագման սերտիֆիկատի բնօրինակի հաստատված կրկնօրինակի տրամադրման համար դիմելու պատճառները: Կրկնօրինակը պետք է կազմվի նախկինում տրված Ծագման սերտիֆիկատի եւ օժանդակ փաստաթղթերի հիման վրա: Հաստատված կրկնօրինակի վրա պետք է առկա լինեն «___ԱՄՍԱԹՎՈՎ ԹԻՎ ___ԾԱԳՄԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿ» (“DUPLICATE OF THE CERTIFICATE OF ORIGIN NUMBER_DATE_”) բառերը: Ծագման սերտիֆիկատի հաստատված կրկնօրինակը վավեր է Ծագման սերտիֆիկատի բնօրինակի տրամադրման ամսաթվից հետո ոչ ավելի, քան 12 ամիս:

2. Ծագման սերտիֆիկատում տեղ գտած պատահական սխալների կամ բացթողումների դեպքում լիազորված մարմինը տալիս է նախկինում տրված Ծագման սերտիֆիկատին փոխարինող Ծագման սերտիֆիկատ: Այս դեպքում Ծագման սերտիֆիկատի վրա պետք է առկա լինեն հետեւյալ բառերը. «ՏՐՎԱԾ Է ___ԱՄՍԱԹՎՈՎ ԹԻՎ ___ԾԱԳՄԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏԻ ՓՈԽԱՐԵՆ» (“ISSUED IN SUBSTITUTION FOR THE CERTIFICATE OF ORIGIN NUMBER__DATE__”): Այդ Ծագման սերտիֆիկատը վավեր է դրա տրամադրման ամսաթվից հետո ոչ ավելի, քան 12 ամիս:

Հոդված 6.21

Ծագման սերտիֆիկատում կատարվող փոփոխությունները

Ծագման սերտիֆիկատում չեն թույլատրվում ջնջումներ, ինչպես նաեւ վրայից ուղղումներ: Ցանկացած փոփոխություն պետք է կատարվի սխալ տվյալների վրա գիծ քաշելու եւ պահանջվող լրացուցիչ ցանկացած տեղեկություն

տպելու միջոցով: Այդպիսի փոփոխությունը պետք է հաստատվի Ծագման սերտիֆիկատը ստորագրելու համար լիազորված անձի կողմից եւ հաստատվի համապատասխան լիազորված մարմնի պաշտոնական կնիքով:

Հոդված 6.22

Փաստաթղթերի պահպանությանը ներկայացվող պահանջները

1. Ծագման սերտիֆիկատ ստանալու համար դիմած արտադրողը կամ արտահանողը պետք է պահպանի ամբողջ փաստաթղթաբանությունը եւ լիազորված մարմին ներկայացված փաստաթղթերի օրինակները՝ Ծագման սերտիֆիկատի տրման ամսաթվից սկսած՝ առնվազն 3 տարի ժամկետով:

2. Ներմուծողը, որին տրամադրվել է սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ, պետք է իր մոտ պահի սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրման ամսաթվի վրա հիմնված՝ ծագման ապացույցի օրինակը՝ առնվազն 3 տարի ժամկետով:

3. Ծագման սերտիֆիկատի դիմումը եւ դրա հետ կապված բոլոր փաստաթղթերը պահվում են լիազորված մարմնի մոտ՝ Ծագման սերտիֆիկատի տրման ամսաթվից առնվազն 3 տարի ժամկետով:

4. Ծագման հայտարարագիր կազմող արտադրողը կամ արտահանողը պետք է պահպանի տվյալ ապրանքների ծագումը հաստատող ամբողջ փաստաթղթաբանությունը եւ փաստաթղթերի օրինակները՝ Ծագման հայտարարագրի տրման ամսաթվից սկսած՝ առնվազն 3 տարի ժամկետով:

ԲԱԺԻՆ III. ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀՈՒՄՆԵՐԻ ՌԵԺԻՄԸ

Հոդված 6.23

Սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրումը

1. Սույն համաձայնագրով նախատեսված սակագնային առանձնաշնորհումների ռեժիմը կիրառվում է սույն գլխի պահանջները բավարարող՝ ծագում ունեցող ապրանքների նկատմամբ:

2. Ներմուծող Կողմի մաքսային մարմիններն արտահանող Կողմի՝ ծագում ունեցող ապրանքների համար տրամադրում են սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ՝ պայմանով, որ՝

ա) ներմուծվող ապրանքները բավարարում են սույն համաձայնագրի 6.3 հոդվածում նշված ծագման չափորոշիչները,

բ) հայտարարատուն ապահովում է սույն գլխի պահանջների հետ համապատասխանությունը,

գ) ապրանքների ծագումը հաստատվել է ծագման ապացույցով՝ սույն գլխում նախատեսված պահանջների համաձայն:

3. Չհակասելով սույն հոդվածի 2-րդ կետին՝ եթե ներմուծող Կողմի մաքսային մարմիններն ունեն ողջամիտ կասկածներ այն ապրանքների ծագման վերաբերյալ, որոնց համար սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ է հայցվում, եւ (կամ) ներկայացված ծագման ապացույցի իսկության վերաբերյալ, ապա տվյալ մաքսային մարմինները կարող են կասեցնել կամ մերժել այդ ապրանքների համար սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ տրամադրելու դիմումը: Այդուհանդերձ, ապրանքները կարող են բաց թողնվել այդ Կողմի համապատասխան օրենքների եւ կարգավորումների պահանջների համաձայն:

Հոդված 6.24

Սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրման մերժումը

1. Եթե ապրանքները չեն բավարարում սույն գլխի պահանջները, կամ եթե ներմուծողը կամ արտահանողը չի պահպանում սույն գլխի պահանջները, ապա ներմուծող Կողմի մաքսային մարմինները կարող են մերժել սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրումը եւ գանձել չվճարված մաքսատուրքերը՝ այդ Կողմի համապատասխան օրենքների եւ կարգավորումների համաձայն:

2. Ներմուծող Կողմի մաքսային մարմինները կարող են մերժել սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրումը, եթե՝

ա) ապրանքները չեն բավարարում սույն գլխի պահանջները՝ կապված դրանք արտահանող Կողմի ծագում ունեցող համարելու հետ, եւ (կամ)

բ) չեն բավարարվել սույն գլխի մյուս պահանջները, ներառյալ՝

i. սույն համաձայնագրի 6.9 հոդվածի պահանջները,

ii. ներկայացված ծագման ապացույցը պատշաճ չի լրացվել, ինչպես սահմանված է սույն համաձայնագրի 3-րդ կամ 4-րդ հավելվածում.

գ) սույն համաձայնագրի 6.29 հոդվածի համաձայն ձեռնարկված ստուգման ընթացակարգերով հնարավոր չէ որոշել ապրանքների ծագումը, կամ դրանց միջոցով մատնանշել ծագման չափորոշիչների անհամապատասխանությունը.

դ) արտահանող Կողմի ստուգող մարմինը կամ լիազորված մարմինը հաստատել է, որ Ծագման սերտիֆիկատը չի տրվել (այսինքն՝ կեղծված է) կամ չեղարկվել է (հետ է կանչվել).

ե) ներմուծող Կողմի մաքսային մարմիններն արտահանող Կողմի ստուգող մարմնին կամ լիազորված մարմնին ստուգման պահանջով դիմելու ամսաթվից հետո առավելագույնը վեց ամսվա ընթացքում որեւէ պատասխան չեն ստանում,

կամ եթե պահանջի վերաբերյալ տրված պատասխանը չի պարունակում բավարար տեղեկություններ, որոնք թույլ կտան եզրակացնել ապրանքների՝ Կողմի ծագում ունենալու վերաբերյալ.

զ) Ծագման սերտիֆիկատի բնօրինակի կամ դրա օրինակի մեջ ներառված տեղեկությունները սույն համաձայնագրի 6.28 հոդվածում նշված՝ համացանցային տվյալների բազայում պարունակվող տեղեկություններին չեն համապատասխանում մաքսային հայտարարագրի գրանցման ամսաթվի դրությամբ.

է) Ծագման սերտիֆիկատը չի ներկայացվել ներմուծող Կողմի մաքսային մարմնի պահանջով՝ սույն համաձայնագրի 6.17 հոդվածի 5-րդ կետով եւ 6.28 հոդվածի 7-րդ եւ 12-րդ կետերով նախատեսված դեպքերում:

3. Եթե ներմուծող Կողմը ստուգման ընթացակարգերի միջոցով որոշում է, որ արտահանողը կամ արտադրողը ներգրավված է եղել Ծագման սերտիֆիկատներ ստանալու նպատակով կեղծ եւ (կամ) ոչ ամբողջական տեղեկություններ տրամադրելու գործընթացում, ապա ներմուծող Կողմի մաքսային մարմինները կարող են մերժել սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրումը նույնական այն ապրանքների համար, որոնք ընդգրկված են այդ արտահանողին կամ արտադրողին տրված Ծագման սերտիֆիկատների մեջ՝ համապատասխան ներպետական օրենքների եւ կարգավորումների համաձայն:

4. Սույն հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված դեպքերում ներմուծող Կողմի մաքսային մարմիններից չի պահանջվում սույն համաձայնագրի 6.29 հոդվածով նախատեսված կարգով ստուգման պահանջով դիմել ստուգող մարմնին կամ լիազորված մարմնին՝ սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրումը մերժելու վերաբերյալ որոշումներ կայացնելու համար:

ԲԱԺԻՆ IV. ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 6.25

Վարչական համագործակցության լեզուն

Սույն բաժնին համապատասխան Կողմերի միջեւ ցանկացած ծանուցում կամ հաղորդակցություն իրականացվում է համապատասխան մարմինների միջոցով՝ անգլերենով:

Հոդված 6.26

Լիազորված մարմինը եւ ստուգող մարմինը

Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո Կողմերի կառավարություններից յուրաքանչյուրը նշանակում կամ պահում է լիազորված մարմին եւ ստուգող մարմին:

Հոդված 6.27

Ծանուցումները

1. Նախքան լիազորված մարմնի կողմից սույն համաձայնագրի համաձայն որեւէ Ծագման սերտիֆիկատ տրամադրելը յուրաքանչյուր Կողմ համապատասխանաբար Իրանի Իսլամական Հանրապետության արդյունաբերության, հանքերի եւ առետրի նախարարության եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջոցով մյուս Կողմերին է տրամադրում յուրաքանչյուր լիազորված մարմնի եւ ստուգող մարմնի անվանումներն ու հասցեներն այդ մարմինների կնիքների բնօրինակ եւ ընթեռնելի նմուշային դրոշմվածքների, կիրառվելիք Ծագման սերտիֆիկատի նմուշի եւ Ծագման սերտիֆիկատի պաշտպանության միջոցների առանձնահատկությունների

վերաբերյալ տվյալների հետ:

2. Իրանի Իսլամական Հանրապետությունը սույն հոդվածի 1-ին կետում նշված բնօրինակ տեղեկությունները Եվրասիական տնտեսական հանձնաժողովին է տրամադրում վեց օրինակից: Եվրասիական տնտեսական հանձնաժողովը Իրանի Իսլամական Հանրապետությանը կարող է դիմել այդ տեղեկությունների լրացուցիչ օրինակներ տրամադրելու համար:

3. Իրանի Իսլամական Հանրապետությունը եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովը համացանցի միջոցով հրապարակում են յուրաքանչյուր Կողմի լիազորված մարմնի եւ ստուգող մարմնի անվանումների եւ հասցեների վերաբերյալ տեղեկությունները:

4. Վերետում սահմանված տեղեկությունների որեւէ փոփոխության վերաբերյալ սույն հոդվածի 1-ին կետում նշված մարմինները ծանուցվում են նախօրոք եւ միեւնույն կարգով:

5. Սույն հոդվածի 1-ին կետի համաձայն ներկայացված բոլոր տեղեկությունները կիրառվում են դրանք պարունակող բնօրինակի թղթային տարբերակը համապատասխանաբար Իրանի Իսլամական Հանրապետության արդյունաբերության, հանքերի եւ առետրի նախարարության կամ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից ստանալու օրվանից:

6. Կողմերը համապատասխանաբար Իրանի Իսլամական Հանրապետության արդյունաբերության, հանքերի եւ առետրի նախարարության կամ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջոցով միմյանց են տրամադրում ստուգման գործընթացներում ներգրավված մարմինների կոնտակտային էլեկտրոնային հասցեները:

Հոդված 6.28

Համացանցային տվյալների բազաների օգտագործումը:

Ծագման ստուգման էլեկտրոնային համակարգի մշակումը եւ կիրառումը

1. Սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրման ընթացակարգերը դյուրացնելու համար Կողմերը համացանցի միջոցով կարող են օգտվել լիազորված մարմինների պաշտպանված տվյալների բազաներից, որոնք պարունակում են տրված Ծագման սերտիֆիկատների վերաբերյալ տեղեկություններ եւ ներմուծող Կողմի մաքսային մարմիններին թույլ են տալիս ստուգել տրամադրված ցանկացած Ծագման սերտիֆիկատի իսկությունը (այսուհետ՝ համացանցային տվյալների բազաներ):

2. Համացանցային տվյալների բազաները պետք է բավարարեն հետեւյալ պահանջները.

- i. պարունակվող տեղեկությունների ամբողջականություն, վերաբերելիություն եւ հուսալիություն.
- ii. պարունակվող տեղեկությունների պաշտպանություն՝ չթույլատրված մուտքից, ոչնչացումից, ձեւափոխումից կամ ցանկացած այլ անօրինական գործողությունից.
- iii. պատշաճ շուրջօրյա գործառություն.
- iv. Ծագման սերտիֆիկատի մասին տեղեկությունների մուտքագրում համացանցային տվյալների բազայում՝ դրա տրամադրման օրվանից ոչ ուշ, քան 1 օրվա ընթացքում.
- v. տրված Ծագման սերտիֆիկատների մասին տեղեկությունների պահպանում՝ սույն համաձայնագրի 6.22 հոդվածի 3-րդ կետի մեջ նշված ժամանակահատվածի ընթացքում.
- vi. համացանցային տվյալների բազայում պարունակվող տեղեկությունները ներմուծող Կողմի մաքսային մարմինների

կողմից պահպանելու (տպելու) հնարավորություն:

3. Ծագման սերտիֆիկատի՝ համացանցային տվյալների բազա մուտքագրված տվյալները պետք է նույնական լինեն սույն համաձայնագրի 3-րդ հավելվածի համաձայն տրված այդ Ծագման սերտիֆիկատի մեջ պարունակվող տվյալներին՝ բացառությամբ ստորագրությունների եւ կնիքների:

4. Շահագրգիռ լիազորված մարմինների կողմից համացանցային տվյալների բազաների ներդրման կամ սույն հոդվածի 9-րդ կետում նշված Ծագման ստուգման էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ ԾՍԷՀ) կիրառման դեպքում Ծագման սերտիֆիկատները կարող են տրվել էլեկտրոնային տարբերակով՝ առանց թղթային տարբերակով բնօրինակ կազմելու (այսուհետ՝ Ծագման էլեկտրոնային սերտիֆիկատ):

5. Եթե Կողմերն օգտվում են համացանցային տվյալների բազաներից, ներմուծող Կողմի մաքսային մարմինը Ծագման սերտիֆիկատի բնօրինակ չի պահանջում: Այս դեպքում Ծագման սերտիֆիկատի օրինակը (թղթային կամ էլեկտրոնային տարբերակը) կամ Ծագման էլեկտրոնային սերտիֆիկատը բավարար է սակագնային առանձնաշնորհումների տրամադրման համար:

6. Չհակասելով սույն հոդվածի 5-րդ կետին՝ սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 6 ամսվա ընթացքում Ծագման սերտիֆիկատի բնօրինակը պետք է ներկայացվի Կողմերի մաքսային մարմիններին՝ ծագում ունեցող ապրանքների համար սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրման նպատակով:

7. Եթե Ծագման սերտիֆիկատի մասին տեղեկությունները համացանցային տվյալների բազայում հասանելի չեն մաքսային հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ, ապա ներմուծող Կողմի մաքսային մարմինը պահանջում է ներկայացնել Ծագման սերտիֆիկատի բնօրինակը, եթե միայն Ծագման սերտիֆիկատը չի տրվում էլեկտրոնային տարբերակով, ինչպես նախատեսված է սույն հոդվածի 4-րդ կետում:

8. Նախքան համացանցային տվյալների բազաների գործարկումը՝ Կողմերը համապատասխանաբար Իրանի Իսլամական Հանրապետության արդյունաբերության, հանքերի եւ առետրի նախարարության եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջոցով միմյանց են տրամադրում համացանցային տվյալների բազաների էլեկտրոնային հասցեները եւ համացանցային այդ տվյալների բազաների հասանելիությանը ներկայացվող պահանջների մասին տեղեկությունները (օգտատերերի անունները, գաղտնաբառերը, եթե այդպիսիք կան):

9. Ոչ թղթային առետրի հետագա զարգացման համար Կողմերը պետք է ձգտեն սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ, քան 5 տարվա ընթացքում մշակել եւ ապահովել էլեկտրոնային տվյալների փոխանակման հայեցակարգի վրա հիմնված ԾՍԷՀ:

10. ԾՍԷՀ-ը ներմուծող Կողմի մաքսային մարմինների համար նախատեսում է արտահանող Կողմի լիազորված մարմինների կողմից տրված Ծագման սերտիֆիկատների տեղեկություններն էլեկտրոնային տվյալների փոխանցման միջոցով ստանալու հնարավորություն:

11. Եթե Կողմերը կիրառում են ԾՍԷՀ-ը, ներմուծող Կողմի մաքսային մարմինը Ծագման սերտիֆիկատի բնօրինակ, դրա օրինակ կամ Ծագման էլեկտրոնային սերտիֆիկատ չի պահանջում: Այս դեպքում այդ Ծագման սերտիֆիկատի ամսաթիվը եւ համարը պետք է նշվեն մաքսային հայտարարագրում: Այնուամենայնիվ, Ծագման սերտիֆիկատի բնօրինակը տրվում է լիազորված մարմինների կողմից, եթե միայն Ծագման սերտիֆիկատը չի տրվում էլեկտրոնային տարբերակով, ինչպես նախատեսված է սույն հոդվածի 4-րդ կետում:

12. Եթե Ծագման սերտիֆիկատի մասին տեղեկությունները ԾՍԷՀ-ում հասանելի չեն մաքսային հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ, ապա ներմուծող Կողմի մաքսային մարմինը պահանջում է ներկայացնել Ծագման սերտիֆիկատի օրինակը եւ ստուգում է դրա իսկությունը՝ օգտվելով

համացանցային տվյալների բազայից: Եթե լիազորված մարմինը համացանցային տվյալների բազա չունի, ապա ներկայացվում է Ծագման սերտիֆիկատի բնօրինակը, եթե միայն Ծագման սերտիֆիկատը չի տրվում միայն էլեկտրոնային տարբերակով, ինչպես նախատեսված է սույն հոդվածի 4-րդ կետի մեջ:

13. ԾԱԷՀ-ի կիրառմանը ներկայացվող բոլոր պահանջները եւ պայմանները պետք է սահմանվեն առանձին Արձանագրությամբ:

Հոդված 6.29

Ծագման ստուգումը

1. Եթե ներմուծող Կողմի մաքսային մարմինները ողջամիտ կասկածներ ունեն ծագման ապացույցի իսկության եւ/կամ ծագման չափորոշիչներին ծագման ապացույցի մեջ ներառված ապրանքների համապատասխանության վերաբերյալ՝ սույն համաձայնագրի 6.3 հոդվածի համաձայն, ինչպես նաեւ ընտրանքային ստուգման դեպքում, նրանք կարող են արտահանող Կողմի ստուգող մարմնին կամ լիազորված մարմնին ուղարկել հարցում՝ ծագման ապացույցի իսկությունը եւ/կամ ծագման չափորոշիչներին ապրանքների համապատասխանությունը հաստատելու եւ (կամ) պահանջի դեպքում՝ ապրանքներն արտահանողի եւ (կամ) արտադրողի կողմից փաստաթղթային ապացույց տրամադրելու համար:

2. Ստուգման բոլոր պահանջներին կցվում են տվյալ ապրանքները նույնականացնելու համար բավարար տեղեկություններ: Արտահանող Կողմի ստուգող մարմնին կամ լիազորված մարմնին ուղղված պահանջին կցվում է ծագման ապացույցի օրինակը, եւ դրանում նշվում են պահանջը ներկայացնելու հանգամանքներն ու պատճառները:

3. Ստուգման պահանջի օրինակը եւ դրան կցված փաստաթղթերը, ինչպես նաեւ այդ պահանջին տրված ստուգման պատասխանը ներմուծող Կողմի մաքսային մարմնի եւ արտահանող Կողմի ստուգող մարմնի կամ լիազորված

մարմնի միջեւ փոխանցվում են էլեկտրոնային տարբերակով՝ սույն համաձայնագրի 6.27 հոդվածի 6-րդ կետում նշված կոնտակտային հասցեների միջոցով:

4. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան պահանջ ստացողը ներմուծող Կողմի՝ պահանջ ներկայացրած մաքսային մարմիններին պատասխանում է ստուգման պահանջի ստացման ամսաթվից հետո՝ 6 ամսվա ընթացքում:

5. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան պահանջին ի պատասխան՝ արտահանող Կողմի ստուգող մարմինը կամ լիազորված մարմինը պետք է հստակորեն նշի, թե արդյոք ծագման ապացույցն իսկական է, եւ (կամ) արդյոք ապրանքները կարող են համարվել այդ Կողմի ծագում ունեցող, այդ թվում՝ արտահանողից եւ (կամ) արտադրողից ստացված անհրաժեշտ փաստաթղթային ապացույցները տրամադրելու միջոցով: Նախքան ստուգման պահանջին պատասխանելը կարող է կիրառվել սույն համաձայնագրի 6.23 հոդվածի 3-րդ կետը: Վճարված մաքսատուրքերը փոխհատուցվում են, եթե ստուգման գործընթացի ստացված արդյունքներով հաստատվում եւ հստակ նշվում է, որ ապրանքները որակվել են որպես ծագում ունեցող, եւ որ սույն գլխի մյուս բոլոր պահանջները բավարարվել են:

Հոդված 6.30

Գաղտնիությունը

Սույն գլխին համապատասխան տրամադրված բոլոր տեղեկությունները Կողմերը պետք է համարեն գաղտնի՝ իրենց համապատասխան ներպետական օրենքների եւ կարգավորումների համաձայն: Այդ տեղեկությունները չպետք է բացահայտվեն առանց այդ տեղեկությունները տրամադրող անձի կամ Կողմի մարմնի թույլտվության՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք բացահայտելը

կարող է անհրաժեշտ լինել դատական գործընթացների նպատակներից ելնելով:

Հոդված 6.31

Խարդախության համար պատասխանատվության միջոցները կամ այլ միջոցներ

Յուրաքանչյուր Կողմ քրեական կամ վարչական պատասխանատվության միջոց է նախատեսում սույն գլխի հետ կապված համապատասխան ներպետական օրենքների եւ կարգավորումների խախտման համար:

Հոդված 6.32

Ծագման կանոնների հարցերով ենթակոմիտեն

1. Սույն գլխի արդյունավետ կիրարկման եւ կատարման նպատակներով ստեղծվում է Ծագման կանոնների հարցերով ենթակոմիտե (այսուհետ՝ ԾԿԸ ենթակոմիտե):

2. ԾԿԸ ենթակոմիտեին վերապահվում են հետեւյալ գործառույթները.

ա) քննարկել եւ Համատեղ կոմիտեին ու Ապրանքների կոմիտեին ներկայացնել համապատասխան առաջարկություններ՝ հետեւյալի վերաբերյալ.

- i. սույն համաձայնագրի 2-րդ հավելվածի փոխարկումը՝ ՆՀ-ն պարբերաբար փոփոխելուց հետո վերանայված ՆՀ-ի անվանացանկի առնչությամբ: Այդ փոխարկումը պետք է իրականացվի ժամանակին եւ առանց ստանձնած պարտավորությունների կատարումը խախտելու,
- ii. սույն գլխի կիրարկումը եւ կատարումը, ներառյալ՝ կիրարկմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ առաջարկները,
- iii. սույն բաժնով սահմանված պարտավորությունները Կողմերի

կողմից չկատարելը,

- iv. սույն գլխում կատարվող տեխնիկական բնույթի փոփոխությունները,
- v. սույն գլխի կիրարկման ընթացքում Կողմերի միջև ծագող վեճերը,
- vi. սույն գլխի դրույթների եւ սույն համաձայնագրի 2-րդ, 3-րդ եւ 4-րդ հավելվածների ցանկացած փոփոխություն,

բ) քննարկել որեւէ Կողմի առաջարկած՝ սույն գլխի հետ կապված ցանկացած այլ հարց.

գ) ԾԿՀ ենթակոմիտեի բացահայտումների վերաբերյալ հաշվետվություն ներկայացնել Ապրանքների առևտրի կոմիտեին, եւ

դ) իրականացնել այլ գործառույթներ, որոնք կարող են պատվիրակվել Համատեղ կոմիտեի կողմից՝ սույն համաձայնագրի 1.5 հոդվածի համաձայն:

3. ԾԿՀ ենթակոմիտեն կազմված է Կողմերի ներկայացուցիչներից, եւ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ դրանում կարող են ներգրավվել Կողմերի այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնք ունեն քննարկվելիք հարցերին առնչվող անհրաժեշտ փորձագիտական գիտելիքներ:

4. ԾԿՀ ենթակոմիտեի նիստերն անցկացվում են Կողմերի կողմից համաձայնեցված ժամանակ եւ վայրում, սակայն տարին առնվազն մեկ անգամ:

5. Յուրաքանչյուր նիստի նախնական օրակարգը, որպես կանոն, Կողմերին է ուղարկվում ոչ ուշ, քան նիստից մեկ ամիս առաջ:

Հոդված 6.33

Փոխադրման կամ պահպանման գործընթացում գտնվող ապրանքները

Սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ է տրամադրվում ծագում ունեցող այն ապրանքների համար, որոնք մինչև սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելը 6 ամիսը չգերազանցող ժամկետով գտնվել են արտահանող Կողմից ներմուծող Կողմ փոխադրման կամ ներմուծող Կողմի մաքսային հսկողության շրջանակներում ժամանակավոր պահպանման մեջ, եթե դրանք ներմուծող Կողմ են ներմուծվում սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը կամ դրանից հետո՝ պայմանով, որ պահպանվել են սույն համաձայնագրի 6.23 հոդվածի բոլոր պահանջները, եւ հաշվի են առնվել ներմուծող Կողմի համապատասխան օրենքները եւ կարգավորումները:

ԳԼՈՒԽ 7. ԱՌԵՎՏՐԻ ԴՅՈՒՐԱՑՈՒՄԸ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 7.1

Գործողության ոլորտը

Սույն գլուխը կիրառվում է մաքսային վարչարարության միջոցների եւ Կողմերի միջեւ առեւտրում ընդգրկված ապրանքների բացթողման համար անհրաժեշտ մաքսային գործառնությունների իրականացման նկատմամբ՝ խթանելու համար՝

ա) մաքսային ընթացակարգերի եւ մաքսային ձեւակերպումների թափանցիկությունը,

բ) առեւտրի դյուրացումը եւ մաքսային գործառնությունների ներդաշնակեցումը,

գ) մաքսային համագործակցությունը, ներառյալ՝ Կողմերի կենտրոնական մաքսային մարմինների միջեւ տեղեկությունների փոխանակումը:

Հոդված 7.2

Սահմանումները

Սույն գլխի նպատակներով՝

ա) **«կենտրոնական մաքսային մարմին»**՝ ԵԱՏՄ անդամ պետություններից յուրաքանչյուրի կամ Իրանի Իսլամական Հանրապետության բարձրագույն լիազորված մաքսային մարմինը, որը, համապատասխան ներպետական օրենքների եւ կարգավորումների համաձայն, կատարում է մաքսային ոլորտում կառավարության համապատասխան քաղաքականությունների, կանոնակարգերի, հսկողության եւ վերահսկողության իրականացման գործառույթները.

բ) **«մաքսային վարչարարություն»**՝ Կողմի մաքսային մարմինների կազմակերպչական եւ կառավարման գործողությունները, ինչպես նաեւ մաքսային ոլորտում նպատակների իրագործման ընթացքում իրավական կարգավորման շրջանակներում իրականացվող գործողությունները.

գ) **«մաքսային օրենսդրություն եւ կարգավորումներ»**՝ Կողմի մաքսային մարմինների կողմից գործողության մեջ դրված ցանկացած նորմ եւ կանոնակարգում, ներառյալ՝ օրենքները, որոշումները, հրամանագրերը, հանձնարարականները, կանոնները եւ այլն.

դ) **«էքսպրես բեռներ»**՝ այն ապրանքները, որոնք մատակարարվում են արագընթաց տրանսպորտային համակարգերով՝ ցանկացած տրանսպորտային միջոցով՝ օգտագործելով տեղեկությունների էլեկտրոնային կառավարման համակարգ եւ հետագծելով երթուղին՝ առանձին հաշիվ-ապրանքագրին

համապատասխան ապրանքները հնարավոր նվազագույն կամ սահմանված ժամանակահատվածում ստացողին հասցնելու նպատակով՝ բացառությամբ միջազգային փոստային առաքանիով առաքվող ապրանքների.

ե) **«մաքսային տարածքում վերամշակում»**՝ մաքսային ընթացակարգը, որով օտարերկրյա ապրանքները կարող են ներս բերվել Կողմի մաքսային տարածք՝ մաքսատուրքերի եւ հարկերի վճարումից պայմանական ազատմամբ, այն հիմքով, որ այդ ապրանքները նախատեսված են վերամշակման կամ վերանորոգման համար եւ սահմանված ժամկետում այդ Կողմի մաքսային տարածքից հետագայում արտահանվելու են.

զ) **«մաքսային տարածքից դուրս վերամշակում»**՝ մաքսային ընթացակարգը, որով Կողմի մաքսային տարածքում ազատ շրջանառության մեջ գտնվող ապրանքները կարող են արտասահմանում արտադրման, վերամշակման կամ վերանորոգման նպատակով ժամանակավորապես արտահանվել եւ այնուհետեւ վերաներմուծվել.

է) **«ժամանակավոր թույլտվություն»**՝ մաքսային ընթացակարգը, որով օտարերկրյա ապրանքները կարող են Կողմի մաքսային տարածք ներս բերվել մաքսատուրքերի եւ հարկերի վճարումից լրիվ կամ մասնակի պայմանական ազատմամբ այն հիմքով, որ այդ ապրանքները սահմանված ժամկետում պետք է վերաարտահանվեն՝ այդ Կողմի մաքսային օրենսդրությանը եւ կարգավորումներին համապատասխան:

Հոդված 7.3

Մաքսային վարչարարության միջոցների դյուրացումը

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է իր մաքսային մարմինների կողմից կիրառվող մաքսային վարչարարության միջոցների կանխատեսելիությունը, հետետողականությունը եւ թափանցիկությունը:

2. Յուրաքանչյուր Կողմի մաքսային վարչարարության միջոցները հնարավորության դեպքում եւ այդ Կողմի մաքսային օրենսդրությամբ ու կարգավորումներով սահմանված դեպքերում պետք է հիմնված լինեն Համաշխարհային մաքսային կազմակերպության ստանդարտների ու առաջարկվող գործելակերպերի վրա:

3. Յուրաքանչյուր Կողմի կենտրոնական մաքսային մարմինները պետք է ձգտեն վերանայել իրենց մաքսային վարչարարության միջոցները՝ առետրի դյուրացման նպատակով այդ միջոցները պարզեցնելու համար:

Հոդված 7.4

Լիազորված տնտեսավարող սուբյեկտների փոխադարձ ճանաչումը

1. Կողմերը պետք է ձգտեն իրենց համապատասխան օրենքների եւ կարգավորումների շրջանակներում ստեղծել եւ կիրառել Լիազորված տնտեսավարող սուբյեկտների (այսուհետ՝ LSU) ծրագիր:

2. Մաքսային ընթացակարգերի իրագործումը դյուրացնելու նպատակով Կողմերը հնարավորինս պետք է քայլեր ձեռնարկեն համապատասխան LSU ծրագրերի փոխադարձ ճանաչման ուղղությամբ: Կողմերը պետք է ձգտեն բանակցել իրենց համապատասխան LSU ծրագրերի փոխադարձ ճանաչման ուղղությամբ այն ժամանակ, երբ Կողմերը պատրաստ կլինեն այդ համաձայնությանն ուղղված աշխատանքն սկսելուն:

Հոդված 7.5

Ապրանքների բացթողումը

1. Յուրաքանչյուր Կողմ սահմանում է կամ շարունակում է կիրառել ապրանքների արդյունավետ բացթողմանն ուղղված մաքսային ընթացակարգեր ու գործառնություններ՝ Կողմերի միջև առեւտուրը դյուրացնելու նպատակով: Դա Կողմին չի պարտավորեցնում բաց թողնել ապրանքները, եթե տվյալ ապրանքների բացթողման հետ կապված այդ Կողմի պահանջները չեն բավարարվել:

2. Սույն հոդվածի 1-ին կետի համաձայն եւ հնարավորության դեպքում յուրաքանչյուր Կողմ պետք է՝

ա) նախատեսի ապրանքների բացթողումը մաքսային հայտարարագիրը գրանցվելուց հետո ոչ ավելի, քան 48 ժամվա ընթացքում՝ բացառությամբ Կողմերի մաքսային օրենսդրությամբ եւ կարգավորումներով նախատեսված հանգամանքների.

բ) ձգտի ընդունել եւ կիրառել մինչեւ ապրանքների ժամանումը մաքսային տեղեկատվության էլեկտրոնային ներկայացման եւ մշակման ապահովումը՝ ժամանումից հետո ապրանքների բացթողումն արագացնելու նպատակով:

3. Այն դեպքում, երբ ապրանքների բացթողման ժամկետը ներմուծող Կողմի մաքսային մարմնի կողմից երկարացվում է այդ Կողմի մաքսային օրենսդրության եւ կարգավորումների համաձայն, համապատասխան մաքսային մարմինը հայտարարատուին պետք է տեղեկացնի այդ երկարացման պատճառների եւ իրավական հիմքերի մասին:

Հոդված 7.6

Մինչև ժամանումը կատարվող ձեակերպումները

1. Յուրաքանչյուր Կողմ ընդունում է եւ շարունակում է կիրառել այնպիսի ընթացակարգեր, որոնք հնարավորություն են տալիս ներկայացնել ներմուծման առնչվող փաստաթղթեր եւ այլ պահանջվող տեղեկություններ, այդ թվում՝ ամփոփագրեր (մանիֆեստներ)՝ մինչև ապրանքների ժամանումը ձեակերպումները սկսելու համար՝ ապրանքների ժամանումից հետո դրանց բացթողումն արագացնելու նպատակով:

2. Յուրաքանչյուր Կողմ անհրաժեշտության դեպքում նախատեսում է փաստաթղթերն էլեկտրոնային ձեւաչափով նախապես ներկայացնելու հնարավորություն՝ մինչև այդ փաստաթղթերի ժամանումը դրանց ձեակերպումները կատարելու համար:

Հոդված 7.7

Օժանդակ փաստաթղթերին, այդ թվում՝ մաքսային հայտարարագրին կցված փաստաթղթերին ներկայացվող պահանջները

1. Յուրաքանչյուր Կողմ հնարավորության դեպքում պետք է ձգտի ընդունել ներմուծման, արտահանման կամ տարանցման համար պահանջվող օժանդակ փաստաթղթերի, այդ թվում՝ մաքսային հայտարարագրին կցված փաստաթղթերի թղթային կամ էլեկտրոնային օրինակները:

2. Այն դեպքում, երբ Կողմի պետական գերատեսչությունն արդեն ունի այդ փաստաթղթի բնօրինակը, այդ Կողմի ցանկացած այլ գերատեսչություն բնօրինակ փաստաթղթի փոխարեն ընդունում է թղթային կամ էլեկտրոնային օրինակ այն գերատեսչությունից, որի մոտ գտնվում է բնօրինակը, եթե դա կիրառելի է:

3. Որեւէ Կողմ չպետք է պահանջի արտահանող Կողմի մաքսային մարմիններին ներկայացված արտահանման հայտարարագրերի բնօրինակը կամ

օրինակը՝ որպես ներմուծման պահանջ³¹:

Հոդված 7.8

Ռիսկերի կառավարումը

Կողմերի մաքսային մարմինները պետք է կիրառեն ռիսկերի կառավարման համակարգ՝ ռիսկերի կանոնավոր գնահատման միջոցով՝ ջանքերը կենտրոնացնելով բարձր ռիսկայնության ապրանքների զննումների վրա եւ պարզեցնելով ցածր ռիսկայնության ապրանքների հետ իրականացվող մաքսային գործառնությունների կիրառումը:

Հոդված 7.9

Մաքսային համագործակցությունը

1. Սույն համաձայնագրի արդյունավետ կիրարկումը դյուրացնելու նպատակով Կողմերի կենտրոնական մաքսային մարմինները խթանում են միմյանց հետ համագործակցությունը՝ Կողմերի միջեւ առեստրում ընդգրկված ապրանքների վրա ազդող առանցքային մաքսային հարցերի շուրջ:

2. Եթե որեւէ Կողմի կենտրոնական մաքսային մարմինն այդ Կողմի համապատասխան օրենքների եւ կարգավորումների համաձայն անօրինական գործունեության վերաբերյալ ողջամիտ կասկածներ ունի, ապա այդ կենտրոնական մաքսային մարմինը կարող է դիմել մյուս Կողմի կենտրոնական մաքսային մարմին՝ ապրանքների արտահանման եւ (կամ) ներմուծման վերաբերյալ սովորաբար հավաքվող հատուկ տեղեկություններ տրամադրելու պահանջով:

³¹ Սույն կետի ոչ մի դրույթ որևէ Կողմի չի խոչընդոտում պահանջել այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են սերտիֆիկատները, թույլտվությունները կամ լիցենզիաները՝ որպես հսկողության վերցված կամ կարգավորվող ապրանքների ներմուծման պահանջ:

3. Սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան Կողմի ներկայացրած հարցումը պետք է լինի գրավոր, դրա մեջ պետք է նշվի տվյալ տեղեկությունների հարցման նպատակը, եւ դրան պետք է կցվեն տվյալ ապրանքները նույնականացնելու համար բավարար տեղեկություններ:

4. Հարցումն ստացող Կողմը սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան պահանջվող տեղեկությունները ներառող գրավոր պատասխանը պետք է տրամադրի այդ հարցումն ստանալու օրվանից 2 ամսվա ընթացքում, եթե այդ պահանջվող տեղեկությունների տրամադրումը չի հակասում հարցումն ստացող Կողմի օրենքներին եւ կարգավորումներին: Եթե ամբողջական կամ մասնակի պատասխան հնարավոր չէ տրամադրել սահմանված ժամկետի ընթացքում, ապա հարցումն ստացող Կողմը հարցումը ներկայացնող Կողմին պետք է տեղեկացնի այդ տեղեկությունները տրամադրելու ակնկալվող ժամկետի մասին:

5. Հարցումն ստացող Կողմի կենտրոնական մաքսային մարմինը պետք է ձգտի հարցումը ներկայացնող Կողմի կենտրոնական մաքսային մարմին տրամադրել ցանկացած այլ տեղեկություն, որն այդ կենտրոնական մաքսային մարմինն կօգնի որոշել, թե արդյոք հարցումը ներկայացնող Կողմի տարածքից ներմուծված կամ դրա տարածք արտահանված ապրանքները համապատասխանում են այդ Կողմի համապատասխան օրենքներին եւ կարգավորումներին:

6. Կողմերի կենտրոնական մաքսային մարմինները պետք է ձգտեն ստեղծել եւ կիրառել մաքսային համագործակցության համար կապուղիներ, այդ թվում՝ ստեղծել կապի ապահովման կենտրոններ, որոնք կոյուրացնեն տեղեկությունների արագ ու անվտանգ փոխանակումը եւ կբարելավեն մաքսային հարցերի համակարգումը:

Հոդված 7.10

Տեղեկությունների փոխանակումը

1. Մաքսային գործառնությունների կատարումը դյուրացնելու, ապրանքների բացթողումն արագացնելու եւ մաքսային օրենսդրության ու կարգավորումների խախտումները կանխելու նպատակով Կողմերը հնարավորության սահմաններում պետք է ստեղծեն եւ ներդնեն Կողմերի միջեւ առեստրում ընդգրկված բոլոր ապրանքների վերաբերյալ տեղեկությունները պարբերաբար փոխանակելու էլեկտրոնային համակարգ (այսուհետ՝ տեղեկությունների էլեկտրոնային փոխանակում)՝ պայմանով, որ ապահովվեն բոլոր տեղեկությունների անվտանգությանն ուղղված միջոցները:

2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովը ԵԱՏՄ-ի անունից համակարգում է տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման համակարգի ստեղծումը եւ նպաստում դրա աշխատանքին:

3. Սույն հոդվածի նպատակներով «տեղեկություններ» նշանակում է մաքսային հայտարարագրերից եւ տրանսպորտային փաստաթղթերից վերցված համապատասխան եւ իսկական տվյալներ:

4. Սույն հոդվածի 1-ին կետի նպատակներով Եվրասիական տնտեսական հանձնաժողովը, ԵԱՏՄ անդամ պետությունների եւ Իրանի Իսլամական Հանրապետության լիազորված մարմինները ջանքեր են գործադրում համագործակցությունը զարգացնելու եւ խորհրդակցությունները շարունակելու ուղղությամբ՝ տեղեկությունների էլեկտրոնային փոխանակումը խթանելու նպատակով:

5. Տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման համակարգի գործառությանը ներկայացվող բոլոր պահանջները եւ տեխնիկական պայմանները, ինչպես նաեւ փոխանակվող տեղեկությունների կոնկրետ բովանդակությունը սահմանվում են ԵԱՏՄ անդամ պետությունների եւ Իրանի Իսլամական Հանրապետության լիազորված մարմինների միջեւ առանձին

արձանագրությամբ: Այդ տեղեկությունները պետք է բավարար լինեն փոխադրվող ապրանքների նույնականացման եւ արդյունավետ մաքսային հսկողություն իրականացնելու համար:

6. Սույն հոդվածի դրույթների համաձայն՝ փոխանակվող ցանկացած տեղեկություն համարվում է գաղտնի եւ օգտագործվում է միայն մաքսային նպատակներով:

7. ԵԱՏՄ անդամ պետությունների եւ Իրանի Իսլամական Հանրապետության մաքսային մարմինները պետք է հրաժարվեն տեղեկությունների փոխանակումից, եթե տեղեկությունների այդպիսի փոխանակումը կարող է վնաս հասցնել ազգային անվտանգությանը:

Հոդված 7.11

Սահմանային վերահսկողություն իրականացնող մարմինների միջեւ համագործակցությունը

Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ սահմանային վերահսկողության եւ ապրանքների ներմուծմանը, արտահանմանը եւ տարանցմանն առնչվող ընթացակարգերի իրականացման համար պատասխանատու իր մարմինները եւ գերատեսչությունները համագործակցեն միմյանց հետ եւ համակարգեն իրենց գործողությունները՝ առեւտուրը դյուրացնելու եւ բարդացված վարչական ընթացակարգերը թեթեացնելու նպատակով:

Հոդված 7.12

Հրապարակումը

1. Կողմերը հնարավորության սահմաններում պետք է ջանքեր գործադրեն ընդհանուր կիրառման մաքսային օրենսդրությունը եւ կարգավորումները անգլերենով հրապարակելու ուղղությամբ: Առետուրը կարգավորող ենթաօրենսդրական ակտերի եւ կարգավորումների ամփոփագրերը հարցման դեպքում տրամադրվում են անգլերենով՝ չհակասելով հարցումն ստացող Կողմի ազգային օրենսդրությանը:

2. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 8 ամսվա ընթացքում յուրաքանչյուր Կողմի իրավասու մարմինները պետք է ստեղծեն կամ պահեն մեկ կամ մեկից ավելի տեղեկատու կետեր՝ շահագրգիռ անձանցից ստացված՝ մաքսային հարցերին առնչվող հարցումներին ընթացք տալու նպատակով, եւ համացանցում հրապարակեն այդ տեղեկատու կետերին վերաբերող տեղեկություններ:

3. Յուրաքանչյուր Կողմի իրավասու մարմինները փոխանակում են ստեղծված տեղեկատու կետերի կոնտակտային տվյալները: Յուրաքանչյուր Կողմի տեղեկատու կետ, մյուս Կողմի իրավասու մարմինների հարցման համաձայն, հնարավորության դեպքում անգլերենով տրամադրում է սույն համաձայնագրի իրականացման հետ կապված իր օրենքների եւ կարգավորումների վերաբերյալ տեղեկություններ՝ հետեւյալ հարցերի առնչությամբ.

ա) առկա ոչ սակագնային կարգավորման միջոցներ, ներառյալ՝ ներմուծման եւ արտահանման արգելքները եւ սահմանափակումները.

բ) մաքսատուրքերի վերադարձի կամ դրանց վճարումից ազատման, մաքսատուրքերի, վճարների եւ հարկերի վճարման հետաձգման համար դիմելը.

գ) ապրանքների մաքսազերծման վրա անդրադարձող տեխնիկական խոչընդոտների եւ սանիտարական ու բուսասանիտարական պահանջների

կիրառումը.

դ) սակագնային դրույքաչափերի քվոտաներ ստանալու համար համապատասխանությանը ներկայացվող պահանջները.

ե) ծագման երկրի նշումը, եթե դա պահանջվում է ներմուծման համար. եւ

զ) Կողմերի օրենքների եւ կարգավորումների համաձայն Կողմերի կողմից որոշվող այլ հարցեր:

4. Յուրաքանչյուր Կողմ հնարավորության սահմաններում նախօրոք հրապարակում է մաքսային հարցերը կարգավորող ընդհանուր կիրառության իր օրենքներն ու կարգավորումները, որոնք առաջարկում է ընդունել, եւ շահագրգիռ անձանց ընձեռում է նախքան այդ օրենքները եւ կարգավորումներն ընդունելն իրենց դիտողությունները ներկայացնելու հնարավորություն:

Հոդված 7.13

Նախնական որոշումները

1. Կողմերի մաքսային մարմինները ներմուծող Կողմում գրանցված ցանկացած դիմումատուի գրավոր տրամադրում են սակագների դասակարգմանը, ապրանքների ծագմանը եւ Կողմի կողմից նպատակահարմար համարվող ցանկացած լրացուցիչ հարցի առնչվող նախնական որոշումներ:

2. Յուրաքանչյուր Կողմ ընդունում կամ կիրառում է նախնական որոշումներին առնչվող ընթացակարգեր, որոնցով՝

ա) նախատեսվում է, որ դիմումատուն նախնական որոշում ստանալու համար կարող է դիմել մինչեւ ապրանքների ներմուծումը.

բ) պահանջվում է, որ նախնական որոշման համար դիմած դիմումատուն տրամադրի ապրանքների մանրամասն նկարագիր եւ բոլոր համապատասխան տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են այդ նախնական որոշման համար.

գ) նախատեսվում է, որ իր մաքսային մարմինը կարող է դիմումը

ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում պահանջել, որ դիմումատուն տրամադրի լրացուցիչ տեղեկություններ.

դ) նախատեսվում է, որ ցանկացած նախնական որոշման հիմքում պետք է ընկած լինեն դիմումատուի կողմից ներկայացված փաստերը եւ հանգամանքները, ինչպես նաեւ իր մաքսային մարմնին հասանելի ցանկացած այլ համապատասխան տեղեկություն.

ե) նախատեսվում է, որ նախնական որոշումը դիմումատուին տրամադրվի անհապաղ կամ ցանկացած դեպքում՝ դիմելու օրվանից 90 օրվա ընթացքում՝ չներառելով այն ժամանակահատվածը, որն անհրաժեշտ է սույն կետի «գ» ենթակետի համաձայն պահանջվող բոլոր լրացուցիչ տեղեկությունները ներկայացնելու համար:

3. Կողմի մաքսային մարմինը կարող է մերժել նախնական որոշման համար ներկայացված հարցումները, եթե սույն հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետի համաձայն իր կողմից հարցված լրացուցիչ տեղեկությունները չեն տրամադրվել սահմանված ժամկետում:

4. Նախնական որոշումը վավեր է դա տրամադրվելուց հետո առնվազն մեկ տարվա ընթացքում, եթե այդ որոշման համար հիմք հանդիսացող օրենսդրությունը, փաստերը կամ հանգամանքները չեն փոխվել:

5. Կողմի մաքսային մարմինը կարող է փոփոխել կամ չեղարկել նախնական որոշումը՝

ա) եթե որոշվել է, որ նախնական որոշման հիմքում ընկած են կեղծ կամ ոչ ճշգրիտ տեղեկություններ,

բ) եթե մաքսային օրենսդրության եւ կարգավորումների մեջ, սույն համաձայնագրին համապատասխան, փոփոխություն է կատարվել, կամ

գ) եթե փոփոխություն է կատարվել նախնական որոշման հիմքում ընկած էական փաստերում կամ հանգամանքներում:

6. Կողմը կարող է մերժել դիմումատուին նախնական որոշման տրամադրումն այն դեպքում, երբ դիմումի մեջ բարձրացված հարցը՝

ա) արդեն իսկ քննվում է դիմումատուի գործի շրջանակներում որեւէ պետական գերատեսչությունում, վերաքննիչ տրիբունալում կամ դատարանում. կամ

բ) վերաքննիչ տրիբունալի կամ դատարանի կողմից արդեն կայացվել է դրա վերաբերյալ որոշում:

Հոդված 7.14

Մաքսային արժեքի որոշումը

Կողմերի միջեւ առեւտրում ընդգրկված ապրանքների մաքսային արժեքը որոշվում է ներմուծող Կողմի մաքսային օրենսդրությանը եւ կարգավորումներին համապատասխան, որոնք, ի թիվս այլնի, հիմնված են սույն համաձայնագրի 5-րդ հավելվածով նախատեսված դրույթների վրա:

Հոդված 7.15

Սակագնային դասակարգումը

Կողմերն իրենց միջեւ առեւտրում ընդգրկված ապրանքների նկատմամբ կիրառում են ապրանքների անվանացանկերը՝ Ներդաշնակեցված համակարգի գործող խմբագրության հիման վրա:

Հոդված 7.16

Ապրանքների տարանցիկ փոխադրումը

1. Յուրաքանչյուր Կողմ ջանքեր է գործադրում Կողմից (Կողմին) որեւէ երրորդ կողմին (երրորդ կողմից) տարանցիկ փոխադրվող ապրանքների նկատմամբ կիրառվող մաքսային գործառնությունները դյուրացնելու համար:

2. Կողմերը կարող են փոխադարձաբար ճանաչել Կողմերի կողմից կիրառվող նույնականացման գործիքները եւ փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են ապրանքների եւ նավերի, ինչպես նաեւ այլ տրանսպորտային միջոցների հսկողության համար, որոնք տեղափոխվում են տարանցիկ ռեժիմով:

Հոդված 7.17

Էքսպրես բեռները

1. Կողմերի մաքսային մարմինները պետք է ապահովեն արագացված մաքսազերծում էքսպրես բեռների համար՝ պահպանելով համապատասխան մաքսային հսկողությունը:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի կամ կիրառի էքսպրես բեռներին առնչվող դյուրացված ընթացակարգեր: Նշված ընթացակարգերը պետք է՝

ա) նախատեսեն էքսպրես բեռի բացթողման համար անհրաժեշտ տեղեկությունների տրամադրում եւ մշակում մինչեւ բեռների ժամանումը.

բ) թույլատրեն էքսպրես բեռի մեջ առկա բոլոր ապրանքների վերաբերյալ տեղեկությունների ներկայացում միայն մեկ անգամ, ինչպես օրինակ՝ բեռնային մանիֆեստը, հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային տարբերակով.

գ) հնարավորության դեպքում նախատեսեն նվազագույն ծավալով փաստաթղթերով ուղեկցվող կոնկրետ ապրանքների բացթողում.

դ) սովորական հանգամանքներում նախատեսեն անհրաժեշտ մաքսային փաստաթղթերը ներկայացնելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում էքսպրես բեռների բացթողում՝ բեռի ժամանման պայմանով.

ե) կիրառվեն ցանկացած կշռով կամ արժեքով բեռների նկատմամբ՝ հաշվի առնելով այն, որ Կողմը որպես բացթողման պայման կարող է պահանջել մուտքի ֆորմալ ընթացակարգեր, այդ թվում՝ հայտարարագիր եւ օժանդակ փաստաթղթեր եւ ապրանքի կշռից կամ արժեքից կախված՝ մաքսատուրքերի վճարում:

Հոդված 7.18

Արագ փչացող ապրանքները

Արագ փչացող ապրանքների խուսափելի կորուստը կամ փչանալը կանխելու նպատակով եւ պայմանով, որ Կողմի բոլոր նորմատիվ պահանջները պահպանվել են, յուրաքանչյուր Կողմ ապահովում է արագ փչացող ապրանքների անհապաղ բացթողումը:

Հոդված 7.19

Ապրանքների ժամանակավոր ներմուծումը, մաքսային տարածքում վերամշակումը եւ մաքսային տարածքից դուրս վերամշակումը

Միջազգային ստանդարտներին համապատասխան՝ Կողմերի մաքսային մարմինները պետք է ձգտեն դյուրացնել ապրանքների, ինչպես նաեւ մաքսային տարածքում կամ մաքսային տարածքից դուրս վերամշակման համար ժամանակավորապես ներմուծված եւ արտահանված ապրանքների ժամանակավոր ներմուծմանն առնչվող մաքսային ընթացակարգի մաքսային գործառնությունների կատարումը:

Հոդված 7.20

Բեռնառաքմանը նախորդող ստուգումը

1. Բեռնառաքմանը նախորդող ստուգման աշխատանքները որակի, քանակի, զնի, այդ թվում՝ արժույթի փոխարժեքի ստուգման հետ կապված բոլոր գործողություններն են եւ Կողմի տարածք արտահանվող ապրանքների հետ կապված ֆինանսական պայմանները:

2. Կողմերը չեն պահանջում բեռնառաքման ստուգումների իրականացում՝ կապված սակագնային դասակարգման եւ մաքսային արժեքի որոշման հետ:

3. Չհակասելով Կողմերի՝ սույն հոդվածի 2-րդ կետով չնախատեսված բեռնառաքման ստուգման այլ տեսակներ կիրառելու իրավունքներին՝ Կողմերին խորհուրդ է տրվում չսահմանել կամ չկիրառել բեռնառաքման ստուգմանը վերաբերող նոր պահանջներ եւ հնարավորության դեպքում՝ վերացնել գործող պահանջները՝ Կողմերի միջեւ առեւտուրը դյուրացնելու նպատակով:

Հոդված 7.21

Մաքսային գործակալները

Յուրաքանչյուր Կողմի մաքսային օրենսդրությամբ եւ կարգավորումներով հայտարարատուներին պետք է տրվի հնարավորություն իրենց մաքսային հայտարարագրերը ներկայացնել առանց մաքսային գործակալների ծառայություններից պարտադիր կերպով օգտվելու:

Հոդված 7.22

Ավտոմատացումը

1. Կողմերի մաքսային մարմինները հնարավորության սահմաններում ապահովում են, որ մաքսային գործառնությունները հնարավոր լինի

իրականացնել նաեւ հաղորդակցության էլեկտրոնային միջոցների վրա հիմնված տեղեկատվական համակարգերի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ՝ տեղեկատվական անվտանգության բոլոր միջոցների ապահովման պայմանով:

2. Կողմերի կենտրոնական մաքսային մարմինները հնարավորության սահմաններում հայտարարատուներին տալիս են ապրանքներն էլեկտրոնային եղանակով հայտարարագրելու հնարավորություն եւ ապահովում են մաքսային ծառայություններից օգտվողների համար էլեկտրոնային համակարգերի հասանելիությունը:

Հոդված 7.23

Գաղտնիությունը

Սույն գլխի համաձայն տրամադրված բոլոր տեղեկությունները, բացառությամբ վիճակագրական տվյալների, Կողմերի կողմից պետք է համարվեն գաղտնի՝ Կողմերի համապատասխան օրենքների եւ կարգավորումների համաձայն: Դրանք Կողմերի մարմինների կողմից չպետք է բացահայտվեն առանց այդ տեղեկությունները տրամադրող անձի կամ Կողմի մարմնի գրավոր թույլտվության՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք պետք է բացահայտվեն դատավարական նպատակներից ելնելով:

Հոդված 7.24

Վերանայումը եւ բողոքարկումը

Յուրաքանչյուր Կողմ պետք է ապահովի շահագրգիռ անձի իրավունքների վրա ազդող մաքսային մարմինների որոշումները վարչական կարգով վերանայելու եւ այդ որոշումները դատական կարգով բողոքարկելու հնարավորություն՝ այդ Կողմի օրենքների եւ կարգավորումների համաձայն:

Հոդված 7.25

Տույժերը

1. Յուրաքանչյուր Կողմ ընդունում կամ կիրառում է այնպիսի միջոցներ, որոնք ապահովում են ներմուծման եւ արտահանման ժամանակ մաքսային օրենսդրության եւ կարգավորումների խախտումների համար վարչական տույժեր կիրառելու հնարավորությունը, այդ թվում՝ սակագնային դասակարգման, մաքսային արժեքի որոշման, ծագման երկրի որոշման եւ սույն համաձայնագրի շրջանակներում սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ ստանալու մասին դրույթների վերաբերյալ:

2. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ մաքսային օրենսդրության, կարգավորումների կամ ընթացակարգերի պահանջների խախտման համար տույժերը նշանակվեն միայն իր օրենսդրությամբ նախատեսված խախտման համար պատասխանատու անձի (անձանց) նկատմամբ:

3. Նշանակվող տույժը կախված է տվյալ գործի փաստերից ու հանգամանքներից եւ պետք է համաչափ լինի խախտման աստիճանին եւ ծանրությանը:

4. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ ձեռնարկվեն միջոցներ խուսափելու համար՝

ա) տույժերի եւ տուրքերի գնահատման եւ գանձման ընթացքում շահերի բախման դեպքերից, եւ

բ) սույն հոդվածի 3-րդ կետին չհամապատասխանող տույժի գնահատման կամ գանձման համար պատճառներ առաջանալուց:

5. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ մաքսային օրենսդրությունը, կարգավորումները կամ ընթացակարգերի պահանջները խախտելու համար տույժ նշանակելիս գրավոր բացատրություն տրամադրվի այն անձին (անձանց), որի (որոնց) նկատմամբ նշանակվել է տույժը՝ նշելով խախտման բնույթը եւ կիրառելի

այն օրենքը, կարգավորումը կամ ընթացակարգը, որի համաձայն սահմանվել է տույժի գումարը կամ չափը:

6. Եթե անձը Կողմի որեւէ մաքսային օրենք, կարգավորում կամ ընթացակարգի պահանջ խախտելու հանգամանքները մաքսային ծառայությանը կամավոր հայտնում է նախքան մաքսային ծառայության կողմից այդ խախտումը հայտնաբերելը, Կողմը անձի նկատմամբ տույժ նշանակելիս հարկ եղած դեպքում այդ փաստը կարող է դիտարկել որպես հնարավոր մեղմացնող հանգամանք:

Հոդված 7.26

Իրանի Իսլամական Հանրապետության համար սահմանված հատուկ անցումային ժամանակահատվածը

ԵԱՏՄ անդամ պետությունները եւ ԵԱՏՄ-ն պետք է զերծ մնան սույն համաձայնագրի 7.6 հոդվածի համաձայն որեւէ պահանջ ներկայացնելուց՝ սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 12 ամսվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 8. ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 8.1

Նպատակները

Սույն գլխի նպատակը սույն համաձայնագրի շրջանակներում ծագող վեճերի կարգավորման արդյունավետ եւ թափանցիկ գործընթացի ապահովումն է հնարավորության դեպքում փոխադարձ համաձայնությամբ լուծման հասնելու համար:

Հոդված 8.2

Սահմանումները

Սույն գլխի նպատակներով՝

ա) «**Հայցվոր**»՝ վեճի Կողմ, որը պահանջ է ներկայացրել սույն համաձայնագրի 8.5, 8.6 եւ 8.7 հոդվածների համաձայն վեճի կարգավորման գործընթաց սկսելու համար.

բ) «**վեճի Կողմեր**»՝ հայցվոր Կողմ (Հայցվոր) եւ պատասխանող Կողմ (Պատասխանող): ԵԱՏՄ անդամ պետությունները եւ ԵԱՏՄ-ն կարող են հանդես գալ որպես վեճի Կողմ՝ համատեղ կամ առանձին: Երկրորդ դեպքում, եթե միջոցը ձեռնարկվում է ԵԱՏՄ-ի կողմից, ապա վեճի Կողմը ԵԱՏՄ-ն է, իսկ եթե միջոցը ձեռնարկվում է ԵԱՏՄ անդամ պետության կողմից, ապա վեճի Կողմը միայն տվյալ պետությունն է.

գ) «**Ծանուցագիր**»՝ ընթացիկ դեպքերի եւ ընթացակարգերի մասին տեղեկատվություն պարունակող պաշտոնական փաստաթուղթ, որը Կողմերն ուղարկում են սույն գլխով նախատեսված դեպքերում:

դ) «**Պատասխանող**»՝ վեճի Կողմ, որին պահանջ է ներկայացվել սույն

համաձայնագրի 8.5, 8.6 եւ 8.7 հոդվածների համաձայն վեճի կարգավորման գործընթաց սկսելու մասին:

Հոդված 8.3

Կիրառության ոլորտը եւ շրջանակները

Եթե սույն համաձայնագրով հստակորեն այլ բան նախատեսված չէ, ապա սույն գլխի դրույթները կիրառվում են այն վեճերի կարգավորման առնչությամբ, որոնք ծագում են սույն համաձայնագրի մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված:

Հոդված 8.4

Բարի ծառայությունները, հաշտությունը կամ միջնորդ-հաշտարարությունը

1. Վեճի Կողմերը կարող են ցանկացած ժամանակ պայմանավորվել բարի ծառայություններ, հաշտություն կամ միջնորդ-հաշտարարություն կիրառելու շուրջ: Բարի ծառայությունների, հաշտության կամ միջնորդ-հաշտարարության ընթացակարգերը կարող են սկսվել եւ դադարեցվել ցանկացած ժամանակ՝ վեճի Կողմերից ցանկացածի պահանջով:

2. Վեճի Կողմերի համաձայնության դեպքում բարի ծառայությունների, հաշտության կամ միջնորդ-հաշտարարության ընթացակարգերը կարող են շարունակվել սույն գլխով նախատեսված՝ արբիտրների կազմի կողմից իրականացվող վարույթի ընթացքում:

3. Բարի ծառայությունների, հաշտության եւ միջնորդ-հաշտարարության կիրառմամբ վարույթները, մասնավորապես՝ այդ վարույթների ընթացքում վեճի Կողմերի զբաղեցրած դիրքորոշումները գաղտնի են եւ չպետք է ոտնահարեն հետագա ցանկացած վարույթի շրջանակներում վեճի Կողմերից որեւէ մեկի իրավունքները:

Հոդված 8.5

Խորհրդակցությունները

1. Ցանկացած Կողմ կարող է ներկայացնել ցանկացած այլ Կողմի հետ սույն համաձայնագրի շրջանակներում ծագող ցանկացած այնպիսի հարցի շուրջ խորհրդակցություններ անցկացնելու պահանջ, որի վրա տարածվում են սույն համաձայնագրի 8.3 հոդվածի դրույթները: Կողմերը պետք է ձեռնարկեն բոլոր հնարավոր ջանքերը՝ սույն գլխին համապատասխան ծագած ցանկացած հարցի վերաբերյալ փոխադարձ ընդունելի լուծումը խորհրդակցությունների միջոցով գտնելու համար:

2. Խորհրդակցություններ անցկացնելու պահանջը ձեակերպվում է գրավոր՝ սույն համաձայնագրին համապատասխան նշանակված կապի ապահովման կենտրոնի միջոցով, ինչպես նաեւ ուղարկվում է Համատեղ կոմիտե: Պահանջը ներկայացնող Կողմը պահանջը համապատասխանաբար ուղարկում է մյուս Կողմերին՝ նշանակված կապի ապահովման կենտրոնների միջոցով: Պահանջի մեջ նշվում են դա ներկայացնելու պատճառները, այդ թվում՝ վերհանվում են խնդրահարույց բոլոր միջոցները կամ հարցերը, ինչպես նաեւ նշվում է պահանջի իրավական հիմքը (սույն համաձայնագրի համապատասխան դրույթներ):

3. Խորհրդակցություններ անցկացնելու մասին պահանջն ստանալուց հետո Պատասխանողը՝

ա) գրավոր պատասխանում է պահանջին՝ իր կապի ապահովման կենտրոնի կողմից դա ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում, եւ

բ) պահանջն ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում կամ հրատապ դեպքերում, այդ թվում՝ արագ փչացող ապրանքների առնչությամբ, 10 օրվա ընթացքում բարեխիղճ կերպով խորհրդակցություններ է սկսում՝ քննարկվող հարցին արագ եւ փոխադարձ ընդունելի լուծում տալու նպատակով:

4. Սույն հոդվածի 3-րդ կետում սահմանված ժամկետները կարող են վեճի Կողմերի փոխադարձ համաձայնությամբ փոփոխվել:

5. Խորհրդակցություններն անցկացվում են գաղտնի եւ առանց ոտնահարելու հետագա ցանկացած վարույթի ժամանակ վեճի երկու Կողմերի իրավունքները:

6. Խորհրդակցություններն անցկացվում են Պատասխանողի տարածքում, եթե վեճի Կողմերն այլ բան չեն պայմանավորվել: Խորհրդակցությունները կարող են վեճի Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ ամբողջությամբ կամ մասամբ անցկացվել հեռահար կապի միջոցներով, այդ թվում, *ի թիվս այլնի,* տեսահամաժողովի միջոցով:

Հոդված 8.6

Արբիտրաժային խորհրդի ստեղծումը

1. Հայցվորն իրավունք ունի պահանջելու ստեղծել արբիտրաժային խորհուրդ՝

ա) եթե Պատասխանողը չի պահպանում սույն համաձայնագրի 8.5 հոդվածով սահմանված ժամկետները, կամ

բ) եթե վեճի Կողմերը խորհրդակցություններ անցկացնելու պահանջ ստանալու օրվանից 60 օրվա ընթացքում կամ հրատապ դեպքերում, այդ թվում՝ արագ փչացող ապրանքների առնչությամբ, 20 օրվա ընթացքում չեն կարողանում կարգավորել վեճը խորհրդակցությունների միջոցով:

2. Հայցվորն արբիտրաժային խորհուրդ ստեղծելու պահանջը սույն համաձայնագրին համապատասխան նշանակված կապի ապահովման կենտրոնի միջոցով գրավոր ուղարկում է Պատասխանողին, ինչպես նաեւ Համատեղ կոմիտե: Հայցվորն արբիտրաժային խորհուրդ ստեղծելու պահանջի վերաբերյալ ծանուցագիրը նշանակված կապի ապահովման կենտրոնների միջոցով գրավոր ուղարկում է մյուս Կողմերին: Պահանջի մեջ պետք է նշվեն խորհրդակցություններ

անցկացրած լինելու կամ չլինելու հանգամանքը, տվյալ խնդրահարույց միջոցները, ինչպես նաև բողոք ներկայացնելու իրավական հիմքի համառոտ նկարագրությունը, որը բավարար կլինի խնդիրը հստակ ընկալելու համար:

3. Սույն հոդվածում նշված պահանջներն ու ընթացակարգերը կարող են վեճի Կողմերի փոխադարձ համաձայնությամբ փոփոխվել:

Հոդված 8.7

Արբիտրների նշանակումը

1. Արբիտրաժային խորհուրդը կազմված է երեք անդամից:

2. Արբիտրաժային խորհուրդ ստեղծելու պահանջը Պատասխանողի կողմից ստանալուց հետո 30 օրվա ընթացքում վեճի Կողմերից յուրաքանչյուրը նշանակում է արբիտր եւ նշանակված կապի ապահովման կենտրոնների միջոցով վեճի մյուս Կողմին գրավոր տեղեկացնում է այդ նշանակման մասին:

3. Նշանակված արբիտրները երկրորդ արբիտրին նշանակելուց հետո 15 օրվա ընթացքում ընտրում են երրորդ արբիտրին՝ արբիտրաժային խորհրդի նախագահին, որը պարտադիր չէ, որ համապատասխանի հետեւյալ չափանիշներից որեւէ մեկին.

ա) ԵԱՏՄ անդամ պետության կամ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի լինելը, կամ

բ) ԵԱՏՄ անդամ պետության կամ Իրանի Իսլամական Հանրապետության տարածքում մշտական բնակության վայր ունենալը, կամ

գ) այնպիսի պետության քաղաքացի լինելը, որը չունի դիվանագիտական հարաբերություններ ԵԱՏՄ որեւէ անդամ պետության կամ Իրանի Իսլամական Հանրապետության հետ:

4. Եթե երրորդ արբիտրը չի նշանակվել սույն հոդվածի 3-րդ կետում

նշված ժամկետում, ապա վեճի Կողմերը փոխադարձ համաձայնությամբ 30 օրվա ընթացքում նշանակում են երրորդ արբիտրին՝ որպես արբիտրաժային խորհրդի նախագահ:

5. Եթե անհրաժեշտ նշանակումները չեն կատարվում սույն հոդվածի 2-րդ եւ 4-րդ կետերով սահմանված ժամկետներում, ապա վեճի Կողմերից ցանկացածը կարող է, եթե վեճի Կողմերն այլ համաձայնության չեն եկել, հրավիրել Արդարադատության միջազգային դատարանի նախագահին՝ որպես նշանակող մարմին հանդես գալու համար:

Այն դեպքում, երբ Արդարադատության միջազգային դատարանի նախագահը ԵԱՏՄ անդամ պետության կամ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի է, Արդարադատության միջազգային դատարանի նախագահի տեղակալից կամ ավագության կարգով հաջորդ պաշտոնյայից, որն այդ պետությունների քաղաքացի չէ, պահանջվում է կատարել անհրաժեշտ նշանակումները:

6. Բոլոր արբիտրները պետք է՝

ա) ունենան բավարար գիտելիքներ եւ (կամ) փորձ իրավագիտության, միջազգային առետրի եւ սույն համաձայնագրի շրջանակների մեջ մտնող այլ հարցերի կամ միջազգային առետրային համաձայնագրերի շրջանակներում վեճերի կարգավորման ոլորտում.

բ) ընտրվեն բացառապես օբյեկտիվության, անկողմնակալության, հուսալիության եւ ծանրակշիռ դատողություններ կատարելու սկզբունքների հիման վրա.

գ) կախված չլինեն, ոչ մի կապ չունենան կամ որեւէ հրահանգ չստանան որեւէ Կողմից. եւ

դ) վեճի Կողմերին տեղեկացնեն քննվող հարցի հետ կապված շահերի ցանկացած ուղղակի կամ անուղղակի բախման մասին:

7. Անձինք որպես արբիտր վեճին չպետք է մասնակցություն ունենան, եթե

նրանք նախկինում որեւէ կերպ առնչվել են այդ վեճին:

8. Եթե սույն հոդվածի համաձայն նշանակված արբիտրը հրաժարվում է իր լիազորություններից կամ այլեւս ունակ չէ իրականացնելու իր գործառույթները, ապա 15 օրվա ընթացքում պետք է նշանակվի նրան փոխարինող արբիտր այն նույն ընթացակարգին համապատասխան, որը սահմանվել է սկզբնական արբիտրի նշանակման համար, ընդ որում, փոխարինողն ստանձնում է սկզբնական արբիտրի բոլոր լիազորություններն ու պարտականությունները: Վարույթի համար կիրառելի ցանկացած ժամկետ կասեցվում է՝ սկսած այն օրվանից, երբ արբիտրը հրաժարվել է իր լիազորություններից կամ այլեւս ունակ չէ իրականացնելու իր գործառույթները՝ մինչեւ այն օրը, երբ ընտրվում է նրան փոխարինող անձը:

9. Արբիտրաժային խորհրդի ստեղծման ամսաթիվ է համարվում արբիտրաժային խորհրդի նախագահի նշանակման ամսաթիվը:

10. Սույն հոդվածում նշված պահանջներն ու ընթացակարգերը կարող են փոփոխվել վեճի Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Հոդված 8.8

Արբիտրաժային խորհրդի գործառույթները

1. Արբիտրաժային խորհրդի գործառույթներն են վերջինիս ներկայացված վեճի օբյեկտիվ քննությունը, այդ թվում՝ գործի փաստական հանգամանքների, սույն համաձայնագրի կիրառելիության եւ դրան համապատասխանության օբյեկտիվ գնահատումը, խորհրդի քննությանը ներկայացված վեճի կարգավորման համար խորհրդի կարծիքով անհրաժեշտ եզրահանգումների կատարումը եւ որոշումների կայացումը, ինչպես նաեւ վեճի Կողմի պահանջով՝ կիրարկվող ցանկացած միջոցի եւ (կամ) համապատասխան օգուտների կասեցման համապատասխանության որոշումը՝ արբիտրաժային խորհրդի վերջնական զեկույցի միջոցով:

2. Արբիտրաժային խորհրդի եզրահանգումները եւ որոշումները չեն

կարող ավելացնել կամ պակասեցնել Կողմերի՝ սույն համաձայնագրով նախատեսված իրավունքները եւ պարտավորությունները:

Հոդված 8.9

Արբիտրաժային խորհրդի աշխատակարգը

1. Արբիտրաժային խորհրդի աշխատանքային գործընթացն իրականացվում է սույն գլխի դրույթներին համապատասխան:

2. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ արբիտրաժային խորհուրդը, խորհրդակցելով վեճի Կողմերի հետ, սահմանում է իր աշխատակարգը՝ հաշվի առնելով վեճի Կողմերի լավագույն լինելու իրավունքը: Վեճի Կողմերը, խորհրդակցելով արբիտրաժային խորհրդի հետ, կարող են պայմանավորվել սույն հոդվածի դրույթներին չհակասող լրացուցիչ կանոններ եւ ընթացակարգեր ընդունելու մասին:

3. Վեճի Կողմերի հետ խորհրդակցելուց հետո արբիտրաժային խորհուրդը հնարավորինս կարճ ժամանակահատվածում, սակայն ոչ ուշ, քան ստեղծվելուց հետո 10 օրվա ընթացքում, սահմանում է արբիտրաժային խորհրդի աշխատանքի ժամանակացույցը: Այդ ժամանակացույցը պետք է ներառի վեճի Կողմերի կողմից գրավոր նյութերը ներկայացնելու հստակ ժամկետներ: Վեճի Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ արբիտրաժային խորհրդի հետ խորհրդակցելով՝ այդ ժամանակացույցում կարող են փոփոխություններ կատարվել:

4. Վեճի Կողմի պահանջով կամ սեփական նախաձեռնությամբ արբիտրաժային խորհուրդը կարող է իր հայեցողությամբ տեղեկություններ եւ (կամ) տեխնիկական խորհուրդներ ստանալու համար դիմել ցանկացած անձի կամ մարմին, որն ինքը նպատակահարմար է համարում: Սակայն տեղեկություններ եւ (կամ) խորհուրդներ ստանալու համար դիմելուց առաջ արբիտրաժային խորհուրդը դրա մասին պետք է տեղեկացնի վեճի Կողմերին: Այդ կերպ ստացված ցանկացած տեղեկություն եւ (կամ) տեխնիկական խորհուրդ

պետք է ներկայացվի վեճի Կողմերին՝ մեկնաբանություններ անելու համար: Եթե արբիտրաժային խորհուրդն այդ տեղեկությունները եւ (կամ) տեխնիկական խորհուրդները հաշվի է առնում իր զեկույցը պատրաստելիս, ապա նաեւ պետք է հաշվի առնի տվյալ տեղեկությունների եւ (կամ) տեխնիկական խորհուրդների վերաբերյալ վեճի Կողմերի ցանկացած մեկնաբանություն:

5. Արբիտրաժային խորհուրդն իր ընթացակարգային որոշումները, եզրահանգումները եւ որոշումներն ընդունում է ընդհանուր համաձայնության (կոնսենսուսի) հիման վրա՝ պայմանով, որ եթե արբիտրաժային խորհուրդը չի կարողանում ընդհանուր համաձայնության (կոնսենսուսի) գալ, ապա այդպիսի ընթացակարգային որոշումները, եզրահանգումներն ու որոշումները կարող են ընդունվել ձայների մեծամասնությամբ: Արբիտրաժային խորհուրդը չպետք է հրապարակի, թե որ արբիտրներն են միացել մեծամասնության կամ փոքրամասնության կարծիքներին:

6. Արբիտրաժային խորհրդի նիստերը փակ են: Վեճի Կողմերը նիստին կարող են ներկա գտնվել միայն արբիտրաժային խորհրդի հրավերով:

7. Արբիտրաժային խորհրդի նիստերը պետք է փակ լինեն հանրության համար, եթե վեճի Կողմերն այլ համաձայնության չեն եկել:

8. Վեճի Կողմերին հնարավորություն է ընձեռվում ներկա գտնվելու քննության ընթացքում տեղի ունեցող ցանկացած ելույթի, արվող ցանկացած հայտարարության կամ ցանկացած ապացույցի հերքման ժամանակ: Վեճի Կողմերից որեւէ մեկի կողմից արբիտրաժային խորհրդին ներկայացված ցանկացած տեղեկություն կամ գրավոր նյութ, այդ թվում՝ նախնական զեկույցի նկարագրական մասին առնչվող ցանկացած մեկնաբանություն եւ արբիտրաժային խորհրդի հարցադրումներին տրված ցանկացած պատասխան պետք է հասանելի լինեն վեճի մյուս Կողմի համար:

9. Արբիտրաժային խորհրդի քննարկումներն ու դրան փոխանցված փաստաթղթերը գաղտնի են:

10. Սույն գլխում ոչինչ չի խոչընդոտում վեճի Կողմին հրապարակավ հայտնել իր դիրքորոշումը: Վեճի Կողմը վեճի մյուս Կողմի կողմից արբիտրաժային խորհրդին ներկայացված՝ որպես գաղտնի նշված տեղեկությունները դիտարկում է գաղտնի տեղեկություններ: Վեճի Կողմը ցանկացած Կողմի պահանջով տրամադրում է նաեւ իր կողմից ներկայացված գրավոր նյութերում պարունակվող տեղեկությունների ոչ գաղտնի ամփոփագիր, որը կարող է հրապարակվել:

11. Լսումների անցկացման վայրն ընտրվում է վեճի Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Համաձայնության չգալու դեպքում լսումները հաջորդաբար անցկացվում են վեճի Կողմերի մայրաքաղաքներում, ընդ որում, առաջին լսումն անցկացվում է Պատասխանողի մայրաքաղաքում:

Հոդված 8.10

Արբիտրաժային խորհրդի լիազորությունների շրջանակը

Եթե արբիտրաժային խորհրդի ստեղծման մասին պահանջն ստանալու օրվանից 20 օրվա ընթացքում վեճի Կողմերն այլ բան չեն պայմանավորվում, ապա սահմանվում են հետեւյալ լիազորությունները. «Սույն համաձայնագրի համապատասխան դրույթների համատեքստում ուսումնասիրել սույն համաձայնագրի 8.6 հոդվածին համապատասխան արբիտրաժային խորհուրդ ստեղծելու պահանջի մեջ ուսումնասիրման ներկայացված հարցը, կատարել եզրահանգումներ եւ ընդունել որոշումներ՝ օրենքի եւ փաստերի հիման վրա՝ պարզելով պատճառները՝ տվյալ վեճի կարգավորման նպատակով»:

Հոդված 8.11

Աշխատանքի դադարեցումը կամ կասեցումը

1. Արբիտրաժային խորհուրդը դադարեցնում է իր աշխատանքը վեճի Կողմերի համատեղ պահանջով: Այդ դեպքում վեճի Կողմերը դրա մասին պետք է համատեղ տեղեկացնեն արբիտրաժային խորհրդի նախագահին եւ Համատեղ կոմիտեին:

2. Արբիտրաժային խորհուրդը վեճի Կողմերի համատեղ պահանջով ցանկացած ժամանակ կասեցնում է իր աշխատանքը այդ պահանջն ստանալու օրվանից 12 հաջորդական ամիսները չգերազանցող ժամկետով: Այս դեպքում վեճի Կողմերը պետք է դրա մասին համատեղ տեղեկացնեն արբիտրաժային խորհրդի նախագահին: Այդ ժամկետի ընթացքում վեճի Կողմերից ցանկացածը կարող է լիազորել արբիտրաժային խորհրդին՝ վերսկսելու իր աշխատանքը՝ դրա մասին տեղեկացնելով արբիտրաժային խորհրդի նախագահին եւ վեճի մյուս Կողմին: Այդ դեպքում սույն գլխում սահմանված բոլոր համապատասխան ժամկետները երկարաձգվում են այն ժամանակահատվածով, որով կասեցվել է արբիտրաժային խորհրդի աշխատանքը: Եթե արբիտրաժային խորհրդի աշխատանքը 12 հաջորդական ամիսներից ավելի ժամկետով մնում է կասեցված, ապա արբիտրաժային խորհուրդը դադարեցնում է իր աշխատանքը:

3. Սկզբնական արբիտրաժային խորհուրդ ստեղծելու պահանջի մեջ բարձրացված հարցի հետ կապված վեճի սկզբնական Կողմերի կողմից նոր արբիտրաժային խորհուրդ ստեղծելու իրավասության գործողության ժամկետը լրանում է, եթե վեճի Կողմերն այլ բան չեն պայմանավորվել:

Հոդված 8.12

Արբիտրաժային խորհրդի զեկույցները

1. Արբիտրաժային խորհրդի զեկույցների նախագծերը կազմվում են վեճի Կողմերի բացակայությամբ եւ պետք է հիմնված լինեն սույն համաձայնագրի համապատասխան դրույթների, վեճի Կողմերի ներկայացրած նյութերի եւ փաստարկների, ինչպես նաեւ սույն համաձայնագրի 8.9 հոդվածի 4-րդ կետին համապատասխան արբիտրաժային խորհրդին տրամադրված տեղեկությունների եւ (կամ) տեխնիկական խորհուրդների վրա:

2. Արբիտրաժային խորհուրդն իր նախնական զեկույցը պատրաստում է արբիտրաժային խորհուրդն ստեղծվելու պահից 90 օրվա ընթացքում կամ հրատապ դեպքերում, այդ թվում՝ արագ փչացող ապրանքների առնչությամբ, 60 օրվա ընթացքում: Նախնական զեկույցը պետք է, *ի թիվս այլնի*, ներառի ինչպես նկարագրական բաժինները, այնպես էլ արբիտրաժային խորհրդի եզրահանգումներն ու եզրակացությունները:

3. Բացառիկ դեպքերում, երբ արբիտրաժային խորհուրդը կարծում է, որ իր նախնական զեկույցը չի կարող ներկայացնել սույն հոդվածի 2-րդ կետում նշված ժամկետներում, ապա վեճի Կողմերին գրավոր տեղեկացնում է այդ ուշացման պատճառների մասին եւ նշում, թե մոտավորապես ինչ ժամկետներում է նախատեսում ներկայացնել իր նախնական զեկույցը: Ցանկացած դեպքում ուշացումը չպետք է գերազանցի 30 օր տևողությամբ լրացուցիչ ժամկետը, եթե վեճի Կողմերն այլ բան չեն պայմանավորվել:

4. Վեճի Կողմը նախնական զեկույցի վերաբերյալ իր գրավոր մեկնաբանություններն արբիտրաժային խորհրդին կարող է ներկայացնել նախնական զեկույցն ստանալու պահից 15 օրվա ընթացքում, եթե վեճի Կողմերն այլ բան չեն պայմանավորվել:

5. Վեճի Կողմերի ցանկացած գրավոր մեկնաբանություն ուսումնասիրելուց եւ անհրաժեշտության դեպքում լրացուցիչ ուսումնասիրություն

կատարելուց հետո արբիտրաժային խորհուրդն իր վերջնական զեկույցը վեճի Կողմերին է ուղարկում նախնական զեկույցն ուղարկելու պահից 30 օրվա ընթացքում, եթե վեճի Կողմերն այլ բան չեն պայմանավորվել:

6. Եթե արբիտրաժային խորհուրդն իր վերջնական զեկույցում գալիս է այն եզրահանգմանը, որ վեճի Կողմի ձեռնարկած միջոցի պատճառով սույն համաձայնագիրը խախտվում է, ապա այն իր որոշումներում պետք է ներառի խախտումը վերացնելու մասին առաջարկություն:

7. Վեճի Կողմերն արբիտրաժային խորհրդի վերջնական զեկույցը հրապարակում են դա ներկայացնելու օրվանից 15 օրվա ընթացքում՝ գաղտնի տեղեկությունների գաղտնիության պահպանման պայմանով, եթե վեճի Կողմերից որեւէ մեկը չի առարկում: Այդ դեպքում վերջնական զեկույցը, այնուամենայնիվ, տրամադրվում է սույն համաձայնագրի բոլոր Կողմերին:

8. Վեճի Կողմերն անվերապահորեն ընդունում են կոնկրետ վեճի առնչությամբ արբիտրաժային խորհրդի վերջնական վճիռը: Դա ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար իրավունքներ կամ պարտավորություններ չպետք է առաջացնի:

Հոդված 8.13

Որոշումների կատարումը

1. Վեճի Կողմերը պետք է անհապաղ կատարեն արբիտրաժային խորհրդի որոշումները: Եթե դրանց անհապաղ կատարումը հնարավոր չէ, ապա վեճի Կողմերն այդ որոշումները պետք է կատարեն ողջամիտ ժամկետում: Ողջամիտ ժամկետը սահմանվում է վեճի Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Եթե վեճի Կողմերը չեն կարողանում ողջամիտ ժամկետի վերաբերյալ փոխադարձ համաձայնության գալ արբիտրաժային խորհրդի վերջնական զեկույցի հրապարակման օրվանից 45 օրվա ընթացքում, ապա վեճի Կողմերից ցանկացածն այդ հարցը կարող է փոխանցել սկզբնական արբիտրաժային խորհրդի քննարկմանը, որը վեճի Կողմերի հետ

խորհրդակցելուց հետո սահմանում է ողջամիտ ժամկետ:

2. Վեճի Կողմերի միջև արբիտրաժային խորհրդի զեկույցի մեջ հայտնաբերված անհամապատասխանությունը վեճի Կողմի կողմից վերացված լինելու մասով տարածայնությունների առաջացման դեպքում սույն հոդվածին համապատասխան նախատեսված ողջամիտ ժամկետում վեճի մյուս Կողմը կարող է այդ հարցը փոխանցել սկզբնական արբիտրաժային խորհրդի քննարկմանը:

3. Արբիտրաժային խորհուրդն իր զեկույցը տրամադրում է սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կետում նշված հարցն արբիտրաժային խորհրդի քննարկմանը ներկայացնելու օրվանից 60 օրվա ընթացքում: Ձեկույցը պետք է ներառի արբիտրաժային խորհրդի որոշումը եւ այդ որոշման հիմնավորումը: Եթե արբիտրաժային խորհուրդը կարծում է, որ իր զեկույցը չի կարող տրամադրել այդ ժամկետում, ապա նա վեճի Կողմերին գրավոր տեղեկացնում է ուշացման պատճառների մասին՝ նշելով զեկույցը տրամադրելու մոտավոր ժամկետը: Ցանկացած դեպքում ուշացումը չպետք է գերազանցի 30 օր տեւողությամբ լրացուցիչ ժամկետը, եթե վեճի Կողմերն այլ բան չեն պայմանավորվել:

4. Վեճի Կողմերը ցանկացած ժամանակ կարող են շարունակել փնտրել փոխադարձ ընդունելի լուծում՝ արբիտրաժային խորհրդի վերջնական զեկույցի իրականացման համար:

Հոդված 8.14

Փոխհատուցումը եւ օգուտների կասեցումը

1. Եթե վեճի Կողմը սույն համաձայնագրի 8.13 հոդվածին համապատասխան սահմանված ողջամիտ ժամկետում չի կատարում արբիտրաժային խորհրդի որոշումը կամ վեճի մյուս Կողմին տեղեկացնում է, որ մտադիր չէ դա կատարել, եւ (կամ) եթե սկզբնական արբիտրաժային խորհուրդը որոշում է, որ վեճի Կողմը արբիտրաժային խորհրդի որոշումները չի կատարել սույն համաձայնագրի 8.13 հոդվածին համապատասխան, ապա վեճի այդ Կողմը վեճի մյուս Կողմի պահանջով սկսում է խորհրդակցությունների անցկացումը՝ փոխադարձ ընդունելի փոխհատուցման վերաբերյալ համաձայնության գալու նպատակով: Եթե այդպիսի համաձայնություն ձեռք չի բերվում պահանջն ստանալուց հետո 20 օրվա ընթացքում, ապա վեճի մյուս Կողմն իրավունք ունի կասեցնելու Պատասխանողի նկատմամբ սույն համաձայնագրին համապատասխան տրամադրվող օգուտների կիրառումը, սակայն միայն այն օգուտներին համապատասխանող ծավալով, որոնց վրա ազդեցություն են ունեցել արբիտրաժային խորհրդի կողմից սույն համաձայնագրին չհամապատասխանող ճանաչված միջոցները:

2. Այն հարցը որոշելիս, թե որ օգուտների գործողությունն է պետք կասեցնել, վեճի Կողմն առաջին հերթին ձգտում է կասեցնել օգուտներն այն նույն ոլորտում կամ ոլորտներում, որոնց վրա ազդեցություն են ունեցել արբիտրաժային խորհրդի կողմից սույն համաձայնագրին չհամապատասխանող ճանաչված միջոցները: Եթե վեճի այդ Կողմը կարծում է, որ այդ նույն ոլորտում կամ ոլորտներում օգուտների կասեցումը գործնականում իրագործելի կամ արդյունավետ չէ, ապա նա իրավունք ունի կասեցնելու օգուտներն այլ ոլորտներում:

3. Վեճի մի Կողմը վեճի մյուս Կողմին տեղեկացնում է այն մասին, թե որ օգուտներն է մտադիր կասեցնել, կասեցման պատճառների եւ կասեցման

գործողությունն սկսելու մասին կասեցումն ուժի մեջ մտնելու օրվանից առնվազն 30 օր առաջ: Տեղեկացվելուց հետո՝ 15 օրվա ընթացքում, վեճի մյուս Կողմը կարող է դիմել սկզբնական արբիտրաժային խորհուրդ՝ խնդրելով որոշում կայացնել այն մասին, թե արդյոք այն օգուտները, որոնք վեճի Կողմը մտադիր է կասեցնել, համարժեք են այն օգուտներին, որոնց վրա ազդեցություն է ունեցել տվյալ համաձայնագրին չհամապատասխանող ճանաչված միջոցը, եւ արդյոք առաջարկվող կասեցումը համապատասխանում է սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերին: Արբիտրաժային խորհրդի որոշումն ընդունվում է նշված պահանջն ստանալու պահից 45 օրվա ընթացքում, եւ դա վերջնական ու պարտադիր է վեճի Կողմերի կողմից կատարման համար: Օգուտները չեն կասեցվում, քանի դեռ արբիտրաժային խորհուրդը չի տրամադրել իր որոշումը:

4. Փոխհատուցումը եւ (կամ) օգուտների կասեցումը կրում են ժամանակավոր բնույթ եւ չեն փոխարինում արբիտրաժային խորհրդի վերջնական զեկույցում սահմանված անհամապատասխանության հիմնովին վերացմանը: Փոխհատուցումը եւ (կամ) օգուտների կասեցումը վեճի Կողմի կողմից կիրառվում են միայն մինչեւ Համաձայնագրին չհամապատասխանող ճանաչված միջոցի չեղարկումը կամ փոփոխումն այնպես, որ դա համապատասխանի սույն համաձայնագրին, կամ մինչեւ վեճի Կողմերի կողմից իրենց վեճն այլ կերպ կարգավորելը:

5. Վեճի Կողմի պահանջով սկզբնական արբիտրաժային խորհուրդը որոշում է կայացնում օգուտների կասեցումից հետո ընդունված ցանկացած կիրարկող միջոցի՝ իր վերջնական զեկույցին համապատասխանության եւ այդ որոշման լույսի ներքո՝ օգուտների կասեցումը դադարեցնելու կամ փոփոխելու վերաբերյալ: Արբիտրաժային խորհուրդը որոշումը կայացնում է նշված պահանջն ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում:

Հոդված 8.15

Ծախսերը

1. Եթե վեճի Կողմերն այլ բան չեն պայմանավորվում, ապա՝
 - ա) վեճի Կողմերից յուրաքանչյուրը կրում է իր կողմից նշանակված արբիտրի հետ կապված՝ իր սեփական ծախսերն ու դատական ծախսերը, եւ
 - բ) արբիտրաժային խորհրդի նախագահի եւ խորհրդի վարույթի հետ կապված մյուս ծախսերը վեճի Կողմերը կրում են հավասար չափով:
2. Վեճի ցանկացած Կողմի պահանջով արբիտրաժային խորհուրդը կարող է որոշում կայացնել սույն հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետում նշված ծախսերի վերաբերյալ՝ հաշվի առնելով գործի հատուկ հանգամանքները:

Հոդված 8.16

Լեզուն

1. Ամբողջ վարույթը եւ բոլոր փաստաթղթերը, սույն գլխին համապատասխան, անցկացվում եւ ձեւակերպվում են անգլերենով:
2. Վարույթի շրջանակներում օգտագործվելու համար սույն գլխին համապատասխան ներկայացված ցանկացած փաստաթուղթ պետք է կազմվի անգլերենով: Եթե փաստաթղթերի բնօրինակներն անգլերենով չեն կազմված, ապա դրանք ներկայացնող վեճի Կողմը պետք է տրամադրել այդ փաստաթղթերի անգլերեն թարգմանությունը:

Հոդված 8.17

Ժամկետները

Սույն գլխում նշված ցանկացած ժամկետ կարող է ճշգրտվել վեճի Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

ԳԼՈՒԽ 9. ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԸ

Հոդված 9.1

Համագործակցությունը

1. Կողմերն ընդունում են պետական գնումների ոլորտում համագործակցության կարելիությունը եւ համագործակցում են պետական գնումների ոլորտում ավելի մեծ թափանցիկություն ապահովելու նպատակով:

2. Կողմերը համագործակցում են մասնավորապես հետեւյալ ոլորտներում.

ա) օրենքների եւ կարգավորումների, գործելակերպերի եւ վիճակագրության հետ կապված փորձի եւ տեղեկությունների փոխանակում.

բ) պետական գնումների էլեկտրոնային ձեւերի մշակում.

գ) պետական գնումների հետ կապված հարցերի առնչությամբ իրավասու մարմինների փոխգործակցության ամրապնդում.

դ) էլեկտրոնային գնումների ոլորտում անվտանգ, վստահելի տարածության մշակում, այդ թվում՝ պետական գնումների ոլորտում էլեկտրոնային փաստաթղթերի հոսքի դյուրացում.

ե) մյուս Կողմերի պետական գնումների վերաբերյալ տեղեկությունների հասանելիության համար բարենպաստ եւ իրավահավասար միջավայրի ստեղծում.

զ) Կողմերի համար հետաքրքրություն ներկայացնող այլ ոլորտներ:

Հոդված 9.2

Գնումների համակարգի վերաբերյալ տեղեկությունները

1. Կողմերը հրապարակում են իրենց համապատասխան օրենքներն ու կարգավորումները, ինչպես նաեւ պետական գնումների վերաբերյալ

տեղեկությունները սույն համաձայնագրի 6-րդ հավելվածում թվարկված աղբյուրներում: Ավելի մեծ թափանցիկություն ապահովելու նպատակով Կողմերն ապահովում են այդ տեղեկատվության աղբյուրների հանրային հասանելիությունը:

2. Կողմերն էլեկտրոնային եղանակով հրապարակում են պետական գնումների վերաբերյալ հասանելի տեղեկությունները (գնման հայտ ներկայացնելու հայտարարությունը, գնումների փաստաթղթերը, այդ ծանուցումների եւ փաստաթղթերի փոփոխությունները, գնումների փաստաթղթերի պարզաբանումները, գնումների գործընթացի ընթացքում կազմված արձանագրությունները, գնումների արդյունքների վերաբերյալ տեղեկությունները) Կողմերի պետական լեզուներով:

3. Կողմերը համապատասխան օրենքներում եւ կարգավորումներում եւ (կամ) պետական գնումների ընթացակարգերում կատարված էական փոփոխությունները հրապարակում են սույն համաձայնագրի 6-րդ հավելվածում թվարկված աղբյուրներում կամ հնարավորինս շուտ այլ միջոցներով միմյանց ծանուցում են այդ փոփոխությունների վերաբերյալ:

4. Յուրաքանչյուր Կողմ ձգտում է ընդլայնել պետական գնումների վերաբերյալ էլեկտրոնային եղանակով հրապարակված տեղեկությունների բովանդակությունը:

Հոդված 9.3

Խորհրդակցությունները

1. Սույն գլխի դրույթները ենթակա չեն վիճարկման՝ սույն համաձայնագրի 8-րդ գլխին համապատասխան:

2. Կողմերից որեւէ մեկի խնդրանքով մյուս կողմը ողջամիտ ժամկետներում տրամադրում է պարզաբանումներ՝ պետական գնումների հետ կապված հարցերի վերաբերյալ:

3. Կողմերի միջեւ հարաբերություններում սույն գլխի կիրառմանը վերաբերող բոլոր հարցերի, այդ թվում՝ դրա մեկնաբանման եւ կիրառման հետ կապված ցանկացած տարաձայնության դեպքում Կողմերից որեւէ մեկի խնդրանքով անցկացվում են խորհրդակցություններ:

4. Այդ խորհրդակցությունների անցկացման խնդրանքը ներկայացվում է մյուս Կողմի՝ սույն համաձայնագրի 9.4 հոդվածի համաձայն ստեղծված կապի ապահովման կենտրոն: Այլ պայմանավորվածություն չլինելու դեպքում խնդրանքն ստանալուց հետո 60 օրվա ընթացքում Կողմերն անցկացնում են խորհրդակցություններ:

5. Խորհրդակցությունները կարող են անցկացվել հանդիպումների ձեւով կամ Կողմերի հետ համաձայնեցված ցանկացած այլ միջոցով:

Հոդված 9.4

Կապի ապահովման կենտրոնները

1. Յուրաքանչյուր Կողմ սույն գլխի իրականացումը մշտադիտարկելու նպատակով նշանակում է կապի ապահովման կենտրոն: Կապի ապահովման կենտրոնները միմյանց հետ համագործակցում են սույն գլխի իրականացումը դյուրացնելու նպատակով:

2. Կողմերը միմյանց տրամադրում են իրենց կապի ապահովման կենտրոնների անվանումները եւ կոնտակտային տվյալները:

3. Կողմերն անհապաղ միմյանց ծանուցում են իրենց կապի ապահովման կենտրոնների հետ կապված ցանկացած փոփոխության մասին:

ԳԼՈՒԽ 10. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 10.1

Նպատակները

Սույն գլխի նպատակներն են՝

ա) խթանել համագործակցությունը Կողմերի եւ Կողմերի տնտեսավարող սուբյեկտների միջեւ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում, որոնք կարող են ներառել, *ի թիվս այլնի*, տրանսպորտը, հետազոտությունները, նորարարությունը, միկրո, փոքր եւ միջին ձեռնարկությունները, էներգետիկան, կրթությունը, առողջապահությունը, շրջակա միջավայրը, հեռահաղորդակցությունը, շինարարությունը, ավտոմոբիլային արդյունաբերությունը, հատուկ տնտեսական գոտիների գործունեությունը.

բ) ստեղծել ավելացված արժեքի նոր շղթաներ.

գ) դյուրացնել համատեղ ծրագրերի իրականացումը.

դ) նպաստել առետրաշրջանառության ավելացմանը.

ե) զարգացնել տարանցման ներուժը:

Հոդված 10.2

Ոլորտային համագործակցության սկզբունքները եւ միջոցները

1. Սույն գլխի համաձայն իրականացված համագործակցությունը հիմնվում է՝

- ա) փոխադարձ շահի,
- բ) Կողմերի ազգային շահերի եւ նրանց օրենքների ու կարգավորումների պահպանման,

- գ) արդար մրցակցության,

- դ) թափանցիկության վրա,

եւ իրականացվում է՝ հաշվի առնելով Կողմերի ազգային առաջնահերթությունները եւ առկա ռեսուրսները եւ չհակասելով ԵԱՏՄ անդամ պետությունների եւ Իրանի Իսլամական Հանրապետության միջեւ առկա կամ պլանավորված երկկողմ համագործակցության նախաձեռնություններին:

2. Սույն գլխի համաձայն իրականացված համագործակցության միջոցները Կողմերի նախաձեռնությամբ եւ ցանկությամբ կարող են ներառել՝

- ա) տրանսպորտի բնագավառում համագործակցության խթանումը, ներառյալ՝ տրանսպորտային եւ լոգիստիկ ենթակառուցվածքների ու տրանսպորտային միջանցքների համատեղ զարգացումը,

- բ) բազմամոդալ (համակցված) փոխադրումների զարգացումը,

- գ) հետազոտությունների, զարգացման եւ նորարարությունների բնագավառում համատեղ նախագծերը,

- դ) Կողմերի ձեռնարկությունների միջեւ համագործակցային կապերի հաստատումը,

- ե) նավթի եւ գազի հետախուզման, արտադրման եւ փոխադրման, վերամշակման, նավթաքիմիական եւ վառելիքաէներգետիկ համալիրի՝

ժամանակակից տեխնոլոգիաներ կիրառող այլ ոլորտներում համատեղ նախագծերի իրականացումը,

զ) էներգետիկ ոլորտում տեխնոլոգիաների եւ նորարարությունների փոխանակմանը նպաստելը,

է) էներգաարդյունավետության, էներգախնայողության եւ վերականգնվող էներգիայի աղբյուրների ոլորտում համագործակցության խթանումը,

ը) կրթության բնագավառում համագործակցության դյուրացումը,

թ) բժշկության եւ բժշկական տեխնոլոգիաների բնագավառում համագործակցության խթանումը՝ նորարարական, մրցունակ եւ արդյունավետ առողջապահություն զարգացնելու նպատակով,

ժ) կանաչ աճի բնագավառում համագործակցության խթանումը,

ժա) հեռահաղորդակցության զարգացումը եւ արդիականացումը:

Հոդված 10.3

Համագործակցության ձեւերը

Կողմերը համաձայնում են խորացնել համագործակցությունը՝

ա) տեղեկությունների փոխանակման եւ խորհրդակցությունների, ինչպես նաեւ Կողմերի բիզնես գործունեությանը տեղեկատվական օժանդակման,

բ) Կողմերի բիզնես գործունեության միջեւ երկխոսության ու հաղորդակցության խթանման,

գ) համատեղ նախագծերի դյուրացման,

դ) ոլորտային համագործակցության հարցերի քննարկման համար համատեղ ֆորումների, համատեղ ցուցահանդես-վաճառքների, միջազգային սեմինարների եւ գիտաժողովների,

ե) սույն գլխում ընդգրկված հարցերի առնչությամբ փորձագետների վերապատրաստման փորձի փոխանակման միջոցով:

Հոդված 10.4

Ենթակոմիտեները եւ ժամանակավոր (*ad hoc*) աշխատանքային խմբերը

1. Կողմերը կարող են քննարկել սույն համաձայնագրի 1.5 հոդվածի համաձայն ստեղծված Համատեղ կոմիտեին առընթեր ենթակոմիտեների կամ ժամանակավոր (*ad hoc*) աշխատանքային խմբերի ստեղծման հարցը սույն գլխի շրջանակներում համագործակցությունը խթանելու նպատակով:

2. Այդպիսի ենթակոմիտեների կամ ժամանակավոր (*ad hoc*) աշխատանքային խմբերի ստեղծումն ու մակարդակը համաձայնեցվում են Կողմերի համապատասխան մարմինների կողմից՝ ինքնուրույն:

Հոդված 10.5

Կապի ապահովման կենտրոնները

1. Սույն համաձայնագրի 10.1 հոդվածում նշված ոլորտային համագործակցության յուրաքանչյուր բնագավառի առնչությամբ Կողմերի համապատասխան մարմինները նշանակում են կապի ապահովման կենտրոններ՝ սույն գլխի իրականացումից բխող ցանկացած հարցի առնչությամբ հաղորդակցվելու համար: Կապի ապահովման կենտրոնների գործառույթները ներառում են՝

ա) սույն գլխի շրջանակներում տեղեկությունների փոխանակման ապահովումը,

բ) սույն գլխի շրջանակներում համագործակցության մասին հարցումների ստացումը եւ կատարումը եւ համապատասխան պատասխանների տրամադրումը,

գ) սույն համաձայնագրի 10.3 հոդվածի համաձայն համաձայնեցված համագործակցության նախագծերի ցանկի վարումը,

դ) սույն համաձայնագրի 10.6 հոդվածի համաձայն խորհրդակցությունների մասին հարցումների ստացումը եւ կատարումը եւ համապատասխան պատասխանների տրամադրումը,

ե) սույն գլխում ընդգրկված հարցերի վերաբերյալ մյուս Կողմի շահագրգիռ մարմինների ողջամիտ հարցումների հիման վրա տեղեկությունների տրամադրումը:

2. Կողմերը միմյանց տրամադրում են իրենց կապի ապահովման կենտրոնների անվանումները եւ կոնտակտային տվյալները:

3. Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմին անհապաղ տեղեկացնում է իր կապի ապահովման կենտրոնի ցանկացած փոփոխության մասին:

Հոդված 10.6

Խորհրդակցությունները

1. Կողմերի միջեւ փոխըմբռնումը խթանելու կամ սույն գլխի շրջանակներում ծագած կոնկրետ հարցերը լուծելու համար յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի հարցման հիման վրա խորհրդակցություններ է սկսում սույն գլխի շրջանակներում ծագած եւ մյուս Կողմի բարձրացրած հարցերի շուրջ: Հարցումն ստացող Կողմն ամբողջական եւ համապարփակ կերպով հնարավորինս շուտ ուսումնասիրում է խորհրդակցությունների մասին մյուս Կողմի հարցումը:

2. Խորհրդակցությունների առարկա հանդիսացող հարցի քննարկումը դյուրացնելու համար յուրաքանչյուր Կողմ ձգտում է մյուս Կողմին տրամադրել վերաբերելի ոչ գաղտնի տեղեկություններ:

3. Խորհրդակցությունները կարող են անցկացվել հանդիպումների ձեւով

կամ Կողմերի համաձայնեցրած ցանկացած այլ միջոցներով:

Հոդված 10.7

Տրանսպորտային համագործակցության եւ տարանցման հարցերով ենթակոմիտեն

Սույն համաձայնագրի արդյունավետ իրականացման եւ կիրառման, ինչպես նաեւ տարանցումը դյուրացնելու եւ ծախսարդյունավետությունն ավելացնելու ոլորտում համագործակցության խորացման նպատակով ստեղծվում է Տրանսպորտային համագործակցության եւ տարանցման հարցերով ենթակոմիտե, որը բաղկացած կլինի յուրաքանչյուր Կողմի ներկայացուցիչներից: Տրանսպորտային համագործակցության եւ տարանցման հարցերով ենթակոմիտեն հանդիպումներ է անցկացնում Կողմերի կողմից համաձայնեցված ժամանակ եւ վայրում, բայց ոչ ուշ, քան սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարի հետո: Տրանսպորտային համագործակցության եւ տարանցման հարցերով ենթակոմիտեն իր եզրահանգումների մասին զեկուցում է Համատեղ կոմիտեին:

Հոդված 10.8

Ց-րդ գլուխը չկիրառելը (Վեճերի կարգավորումը)

Սույն համաձայնագրի Ց-րդ գլուխը չի կիրառվում սույն գլխի նկատմամբ, եւ Կողմերից ոչ մեկը չի կարող դիմել սույն համաձայնագրի Ց-րդ գլխի համաձայն՝ սույն գլխի շրջանակներում ծագած որեւէ հարցի առնչվող վեճերի կարգավորման համար:

ԳԼՈՒԽ 11. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 11.1

Հավելվածները եւ լրացուցիչ արձանագրությունները

Սույն համաձայնագրի բոլոր հավելվածները եւ լրացուցիչ արձանագրությունները սույն համաձայնագրի անբաժանելի մասն են կազմում:

Հոդված 11.2

Ուժի մեջ մտնելը

Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ազգային օրենսդրությամբ պահանջվող ներքին իրավական ընթացակարգերը ԵԱՏՄ անդամ պետությունների եւ Իրանի Իսլամական Հանրապետության կողմից կատարելու, այդ թվում՝ ԵԱՏՄ-ի մասին պայմանագրի 7-րդ հոդվածին համապատասխան՝ ԵԱՏՄ-ի եւ երրորդ կողմի միջեւ կնքված միջազգային պայմանագիրը ԵԱՏՄ-ի համար պարտադիր լինելու վերաբերյալ ԵԱՏՄ-ի համաձայնությունն արտահայտող որոշումն ընդունելու մասին վերջին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից 60 օր հետո: Այդ ծանուցումները պետք է կատարվեն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի եւ Իրանի Իսլամական Հանրապետության միջեւ:

Հոդված 11.3

Փոփոխությունները

Սույն համաձայնագիրը կարող է փոփոխվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ: Բոլոր փոփոխություններն ուժի մեջ են մտնում սույն համաձայնագրի 11.2 հոդվածի դրույթներին համապատասխան: Բոլոր փոփոխությունները սույն համաձայնագրի անբաժանելի մասն են:

Հոդված 11.4

ԵԱՏՄ-ին նոր անդամ պետության միանալը

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովը Իրանի Իսլամական Հանրապետությանն անմիջապես տեղեկացնում է ցանկացած երրորդ երկրի կողմից ԵԱՏՄ անդամության թեկնածուի կարգավիճակ ձեռք բերելու եւ ԵԱՏՄ-ին միացած ցանկացած նոր անդամի մասին:

2. ԵԱՏՄ նոր անդամ պետությունը սույն համաձայնագրին միանում է Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Սույն համաձայնագրին միանալը կատարվում է սույն համաձայնագրի լրացուցիչ արձանագրություն կազմելու միջոցով:

Հոդված 11.5

Համաձայնագրից դուրս գալը եւ գործողությունը դադարեցնելը

1. Յուրաքանչյուր Կողմ կարող է դուրս գալ սույն համաձայնագրից՝ դրա մասին մյուս Կողմին վեց ամիս առաջ նախօրոք գրավոր տեղեկացնելով:

2. Սույն համաձայնագրի գործողությունը դադարում է ԵԱՏՄ-ի մասին պայմանագրից դուրս եկող ԵԱՏՄ ցանկացած անդամ պետության համար: ԵԱՏՄ ցանկացած անդամ պետություն, որը դուրս է գալիս ԵԱՏՄ-ի մասին պայմանագրից, *փաստի ուժով (ipso facto)* դադարում է սույն համաձայնագրի կողմ լինել այն նույն օրը, երբ ԵԱՏՄ-ի մասին պայմանագրից դուրս գալն իրավական ուժ է ստանում: Եվրասիական տնտեսական միությունն Իրանի Իսլամական Հանրապետությանը դուրս գալու ցանկացած դեպքի մասին գրավոր տեղեկացնում է նախօրոք՝ դուրս գալու օրվանից 6 ամիս առաջ: Համաձայնագրից դուրս գալու դեպքում յուրաքանչյուր Կողմ կարող է առաջարկել փոփոխություններ կատարել սույն համաձայնագրում՝ սույն համաձայնագրի 11.3 հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

3. Եթե ԵԱՏՄ անդամ պետությունը սույն համաձայնագրից դուրս է գալիս սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն, ապա սույն համաձայնագիրը շարունակում է

ուժի մեջ մնալ ԵԱՏՄ-ի եւ ԵԱՏՄ մնացած անդամ պետությունների եւ Իրանի Իսլամական Հանրապետության համար:

Կատարված է Սանկտ Պետերբուրգում 2023 թվականի դեկտեմբերի 25-ին, որը համապատասխանում է 1402 Իրանական օրացույցի 10-րդ ամսվա [Dey] 4-րդ օրվան, երկու բնօրինակից՝ անգլերեն, ընդ որում, երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Հայաստանի Հանրապետության կողմից՝

Իրանի Իսլամական
Հանրապետության կողմից՝

Բելառուսի Հանրապետության կողմից՝

Ղազախստանի Հանրապետության կողմից՝

Ղրղզական Հանրապետության կողմից՝

Ռուսաստանի Դաշնության կողմից՝

Եվրասիական տնտեսական միության
կողմից՝

ՀԱՎԵԼՎԱԾ 1.

ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՆԵՐԸ

Սույն հավելվածի նպատակներով՝

1. Եվ՝ Եվրասիական տնտեսական միության, եւ՝ Իրանի Իսլամական Հանրապետության Սակագնային պարտավորությունների ժամանակացույցների դեպքում մաքսատուրքի 0% պարտադիր դրույքաչափը բոլոր ապրանքների նկատմամբ կիրառվում է Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ սույն հավելվածի 1-ին եւ 2-րդ բաժիններով այլ բան է նախատեսված:

2. Սույն հավելվածի 1-ին եւ 2-րդ բաժինների համապատասխան ենթաբաժիններում «Սակագնային արտոնություններ» եւ «Մաքսատուրքի դրույքաչափը քվոտայի շրջանակներից դուրս» սյունակների նպատակներով «ԱԱԲԴ» նշանակում է մաքսատուրքի դրույքաչափ, որը Կողմը կիրառում է ցանկացած երրորդ երկրի կոնկրետ ապրանքի նկատմամբ՝ բացառությամբ սույն համաձայնագրի 2.1 հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերի:

3. Այն դեպքերում, երբ սույն հավելվածի 1-ին եւ 2-րդ բաժինների համապատասխան ենթաբաժիններում «Սակագնային արտոնություններ» կամ «Մաքսատուրքի դրույքաչափը քվոտայի շրջանակներից դուրս» սյունակներում սահմանված է արտոնյալ ռեժիմ, Կողմը մյուս Կողմի ծագում ունեցող ապրանքների նկատմամբ կիրառում է մաքսատուրքերի արտոնյալ դրույքաչափեր՝ հետեւյալ բանաձեւին համապատասխան.

$$\text{Մաքսատուրքի արտոնյալ դրույքաչափը} = \text{ԱԱԲԴ} * \frac{(100\% - \text{Նվազեցում})}{(100\%)},$$

որտեղ՝

«Նվազեցում» նշանակում է սույն հավելվածի 1-ին եւ 2-րդ բաժինների համապատասխան ենթաբաժիններում «Սակագնային արտոնություններ» կամ

«Մաքսատուրքի դրույքաչափը քվոտայի շրջանակներից դուրս» սյունակներում նշված համապատասխան թիվ եւ նշանակում է մաքսատուրքի արտոնյալ դրույքաչափի հաշվարկման համար կիրառվող տոկոսի նվազեցում.

«ԱԱԲՈ» նշանակում է մաքսատուրքի դրույքաչափ, որը Կողմը կիրառում է ցանկացած երրորդ երկրի կոնկրետ ապրանքի նկատմամբ՝ բացառությամբ սույն համաձայնագրի 2.1 հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերի:

4. Մաքսատուրքի արտոնյալ դրույքաչափը հաշվարկելիս ադվալորային (արժեքային) տուրքը կլորացվում է ներքեւ՝ մինչեւ առաջին տասնորդական նիշը, յուրահատուկ (հաստատագրված) տուրքը կլորացվում է ներքեւ՝ մինչեւ երրորդ տասնորդական նիշը:

5. Մաքսատուրքի արտոնյալ դրույքաչափը ոչ մի դեպքում չպետք է բարձր լինի սույն հավելվածի 1-ին եւ 2-րդ բաժինների համապատասխան ենթաբաժիններում «Սակագնային արտոնություններ» կամ «Մաքսատուրքի դրույքաչափը քվոտայի շրջանակներից դուրս» սյունակներում նշված համապատասխան պարտադիր դրույքաչափից:

ԲԱԺԻՆ 1

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն բաժնի նպատակներով «ՆՀ-ի ծածկագիրը» եւ «Նկարագրությունը» վերաբերում են Եվրասիական տնտեսական միության անվանացանկի համապատասխան ապրանքային ենթադիրքերին եւ 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ գործող դրա համապատասխան նկարագրությանը:

ՆՀ-ի ծածկագիրը	Նկարագրություն	Սակագնային արտոնություններ
0101 30	- ավանակներ	ԱԱԲՌ
0101 90	- այլ	ԱԱԲՌ
0102 31	- - զտարյուն տոհմային կենդանիներ	ԱԱԲՌ
0103 91	- - 50 կգ-ից պակաս զանգվածով	ԱԱԲՌ
0103 92	- - 50 կգ կամ ավելի զանգվածով	ԱԱԲՌ
0105 14	- - սագեր	ԱԱԲՌ
0105 15	- - խայտահավեր	ԱԱԲՌ
0106 11	- - պրիմատներ	ԱԱԲՌ
0106 20	- սողուններ (ներառյալ օձերը եւ կրիաները)	ԱԱԲՌ
0201 10	- մսեղիք եւ կիսամսեղիք	ԱԱԲՌ
0201 20	- ոսկրահան չարված այլ հատվածամասեր	ԱԱԲՌ
0201 30	- ոսկրահան արված միս	ԱԱԲՌ
0202 10	- մսեղիք եւ կիսամսեղիք	ԱԱԲՌ
0202 20	- ոսկրահան չարված այլ հատվածամասեր	ԱԱԲՌ
0202 30	- ոսկրահան արված միս	ԱԱԲՌ
0206 10	- խոշոր եղջերավոր անասունների՝ թարմ կամ պաղեցրած	ԱԱԲՌ
0206 21	- - լեզուներ	ԱԱԲՌ
0206 22	- - լյարդ	ԱԱԲՌ
0206 29	- - այլ	ԱԱԲՌ
0206 30	- խոզի՝ թարմ կամ պաղեցրած	ԱԱԲՌ
0206 41	- - լյարդ	ԱԱԲՌ
0206 49	- - այլ	ԱԱԲՌ
0206 80	- այլ՝ թարմ կամ պաղեցրած	ԱԱԲՌ
0206 90	- այլ՝ սառեցրած	ԱԱԲՌ
0207 24	- - չմասնատված՝ թարմ կամ պաղեցրած	ԱԱԲՌ
0207 25	- - չմասնատված՝ սառեցրած	ԱԱԲՌ
0207 26	- - մասեր եւ ենթամթերք՝ թարմ կամ պաղեցրած	ԱԱԲՌ
0207 27	- - մասեր եւ ենթամթերք՝ սառեցրած	ԱԱԲՌ
0207 41	- - չմասնատված՝ թարմ կամ պաղեցրած	ԱԱԲՌ
0207 42	- - չմասնատված՝ սառեցրած	ԱԱԲՌ
0207 43	- - յուղոտ լյարդ՝ թարմ կամ պաղեցրած	ԱԱԲՌ
0207 44	- - այլ՝ թարմ կամ պաղեցրած	ԱԱԲՌ
0207 45	- - այլ՝ սառեցրած	ԱԱԲՌ

ՆՀ-ի ծածկագիրը	Նկարագրություն	Սակագնային արտոնություններ
0207 51	- - չմասնատված՝ թարմ կամ պաղեցրած	ԱԱԲՌ
8481 80 55	-- թթվածնի ելքի, անգայացման նյութերի ելքի, վակուումի ելքի, սեղմված օդի ելքի (կլինիկական սենյակի ելքի փականների վահանակ)՝ հիվանդանոցներում բժշկական գազերի վերահսկման եւ բաշխման համար օգտագործվող	Նվազեցում՝ 30%, պարտադիր՝ 7%
8481 80 60	-- փականների արկղ (փականների եւ ճնշման հարակից չափիչների լրակազմ տուփի մեջ՝ հիվանդանոցներում օգտագործվող բժշկական գազերի վերահսկման եւ կարգավորման համար)	Նվազեցում՝ 30%, պարտադիր՝ 7%
8481 80 65	-- տրանսպորտային միջոցի շարժիչի թերմոստատ (թերմոստատիկ փական)	Նվազեցում՝ 30%, պարտադիր՝ 10.5%
8481 80 69	-- թերմոստատիկ փական՝ ջեռուցման ռադիատորի համար	Նվազեցում՝ 30%, պարտադիր՝ 10.5%
8481 80 70	-- ինժեկցիոն մեքենաների օդային փականի կարգավորիչ (գծային շարժաբեր-քայլային թվային շարժիչ)	Նվազեցում՝ 30%, պարտադիր՝ 10.5%
8481 80 80	-- ջեռուցման ռադիատորի բոլոր տեսակի ծորակներ՝ բացառությամբ 8481 80 69 ապրանքային դիրքում ընդգրկվածների	Նվազեցում՝ 30%, պարտադիր՝ 14%
8481 80 81	-- ելանցքային փական	Նվազեցում՝ 30%, պարտադիր՝ 7%

ՆՀ-ի ծածկագիրը	Նկարագրությունը	Սակագնային արտոնությունները
8481 80 82	- - զատիչ եւ հսկիչ փականներ՝ ուրանի իզոտոպային անջատման համար հատուկ նախատեսված կամ պատրաստված՝ UF6 կոռոզիայի նկատմամբ դիմացկուն, 40-ից 1500 մմ տրամագծով	ԱԱԲՌ
8481 80 83	- - - պլաստիկ գնդաձեւ փականներ	ԱԱԲՌ
8481 80 90	- - - այլ	Նվազեցում՝ 30%, պարտադիր՝ 7%
8481 90	- մասեր	ԱԱԲՌ
8484 20	- մեխանիկական խցվածքներ	ԱԱԲՌ
8501 61	- - 75 կՎԱ-ից ոչ ավելի ելքային հզորությամբ	ԱԱԲՌ
8501 62	- - 75 կՎԱ-ից ավելի, սակայն 375 կՎԱ-ից ոչ ավելի ելքային հզորությամբ	ԱԱԲՌ
8501 64	- - 750 կՎԱ-ից ավելի ելքային հզորությամբ	ԱԱԲՌ
8504 22	- - 650 կՎԱ-ից ավելի, սակայն 10,000 կՎԱ-ից ոչ ավելի թույլատրելի հզորությամբ	ԱԱԲՌ
8504 40 10	- - - բոլոր տեսակի DC/DC էլեկտրոնային (հիբրիդային) փոխարկիչներ՝ մուտքային եւ ելքային 0-100 վոլտ եւ 150 Վտ-ից պակաս հզորությամբ	Նվազեցում՝ 20%, պարտադիր՝ 4%
8504 40 20	- - - մարտկոցի լիցքավորիչ	ԱԱԲՌ
8504 40 30	- - - համակարգչի սնուցման աղբյուր	ԱԱԲՌ
8504 40 40	- - - այլ սնուցման աղբյուր	ԱԱԲՌ
8504 40 41	- - - բարձր լարման սնուցման աղբյուր՝ էլեկտրամագնիսականության ուժեղացման մեջ օգտագործելու նպատակով ուրանի իզոտոպային անջատման համար հատուկ նախատեսված կամ պատրաստված, անընդհատ աշխատելու ունակ, 20,000 Վ կամ ավելի ելքային լարումով, 1Ա կամ ավելի ելքային հոսանքով եւ	ԱԱԲՌ
8504 40 42	- - - բարձր հզորությամբ մագնիսական սնուցման աղբյուր՝ էլեկտրամագնիսականության ուժեղացման մեջ օգտագործելու նպատակով ուրանի իզոտոպային անջատման համար հատուկ նախատեսված կամ պատրաստված, 100 կամ ավելի Վ լարման տակ 500 Ա կամ ավելի ելքային հոսանք անընդհատ արտադրելու ունակ եւ	ԱԱԲՌ
8504 40 50	- - - կերպափոխիչ	ԱԱԲՌ
8504 40 60	- - - անխափան սնուցման սարքեր՝ բոլոր տեսակների	ԱԱԲՌ
8504 40 70	- - - - S.M.D. ինքնավերականգնման ապահովիչ	Նվազեցում՝ 20%, պարտադիր՝ 4%
8504 40 80	- - - փոխարկիչ (դրայվեր)՝ լուսադիոդային (ԼԵԴ)	ԱԱԲՌ

ՆՀ-ի ծածկագիրը	Նկարագրությունը	Սակագնային արտոնությունները
	լամպերում կամ լույսերում օգտագործվող	
8504 40 85	- - հաճախականության փոխիչներ՝ ուրանի իզոտոպային անջատման համար հատուկ նախատեսված կամ պատրաստված	ԱԱԲՌ
8504 40 86	- - - արեային կերպափոխիչներ	ԱԱԲՌ
8504 40 87	- - - C եւ X հաճախականության ծավալային ռադար 3Վտ-ից ավելի հզորությամբ, 3 կմ հեռավորության վրա 0.01 քմ հայտնաբերման ճշգրտությամբ	ԱԱԲՌ
8504 40 90	- - - այլ	ԱԱԲՌ
8507 10 10	- - - հերմետիկ տեսակի	Նվազեցում՝ 30%, պարտադիր՝ 38.5%
8507 10 90	- - - այլ	Նվազեցում՝ 30%, պարտադիր՝ 38.5%
8507 20 10	- - - հերմետիկ տեսակի	Նվազեցում՝ 30%, պարտադիր՝ 22.4%
8507 20 90	- - - այլ	Նվազեցում՝ 30%, պարտադիր՝ 22.4%
8508 11	- - 1500 Վտ-ից ոչ ավելի հզորությամբ եւ փոշու հավաքման համար պարկ կամ 20 լ-ից ոչ ավելի ծավալով այլ փոշեհավաքարան ունեցող	ԱԱԲՌ
8508 19	- - այլ	ԱԱԲՌ
8509 40	- սննդամթերքների մանրիչներ եւ հարիչներ, հյութաքամիչներ՝ մրգերի կամ բանջարեղենի համար	ԱԱԲՌ
8509 80	- այլ սարքեր	ԱԱԲՌ
8511 10	- վառքի մոմեր	ԱԱԲՌ
8516 10	- էլեկտրական հոսանուտ կամ կուտակային (ունակային) ջրատաքացուցիչներ եւ ընկղմվող էլեկտրատաքացուցիչներ	ԱԱԲՌ
8516 29	- - այլ	ԱԱԲՌ
8516 31	- - մազերի չորացուցիչներ	ԱԱԲՌ
8516 32	- - մազերի խնամքի այլ ապարատներ	ԱԱԲՌ
8516 40	- էլեկտրական արդուկներ	ԱԱԲՌ
8516 50	- միկրոալիքային վառարաններ	ԱԱԲՌ
8516 60	- այլ վառարաններ, էլեկտրական սալօջախներ, էլեկտրասալիկներ, եփման էլեկտրական կաթսաներ, գրիլներ եւ ռոստերներ	ԱԱԲՌ
8516 71	- - սուրճ կամ թեյ պատրաստելու համար սարքեր	ԱԱԲՌ

ՆՀ-ի ծածկագիրը	Նկարագրությունը	Սակագնային արտոնությունները
8516 72	- - տոստերներ	ԱԱԲՌ
8516 79	- - այլ	ԱԱԲՌ
8516 90	- մասեր	ԱԱԲՌ
8517 61	- - բազային կայաններ	ԱԱԲՌ
8517 62	- - մեքենաներ՝ ձայնի, պատկերի կամ այլ տվյալների ընդունման, փոխակերպման եւ հաղորդման կամ վերականգնման համար, ներառյալ՝ կոմուտացիոն սարքվածքները եւ երթուղիները	ԱԱԲՌ
8518 29	- - այլ	ԱԱԲՌ
8536 50	- այլ փոխարկիչներ	ԱԱԲՌ
8536 69	- - այլ	ԱԱԲՌ
8539 29	- - այլ	ԱԱԲՌ
8539 31	- - լյումինեսցենտային ջերմակատողով	ԱԱԲՌ
8603 10	- էլեկտրաէներգիայի արտաքին աղբյուրից սնուցումով	ԱԱԲՌ
8605 00	Ուղեւորատար վագոններ՝ երկաթուղային կամ տրամվայի, ոչ ինքնագնաց. վագոններ՝ ուղեբեռային, փոստային եւ երկաթուղային, կամ տրամվայի այլ հատուկ վագոններ, ոչ ինքնագնաց (բացի 8604 ապրանքային դիրքում նշվածներից)	Նվազեցում՝ 30%, պարտադիր՝ 7%
8606 10	- վագոն-ցիստեռներ եւ նույնանման արտադրատեսակներ	ԱԱԲՌ
8606 30	- ինքնաբեռնաթափվող վագոններ եւ ֆուրգոններ՝ բացի 8606 10 ենթադիրքում նշվածներից	ԱԱԲՌ
8606 92	- - բաց, 60 սմ-ից ավելի բարձրությամբ ոչ հանովի կողմամասերով	ԱԱԲՌ
8606 99	- - այլ	ԱԱԲՌ
8607 19	- - այլ, ներառյալ՝ մասերը	ԱԱԲՌ
8701 20	- ճանապարհային տրակտորներ՝ կիսակցորդների համար	ԱԱԲՌ
8701 91	- - 18 կՎտ-ից ոչ ավելի	ԱԱԲՌ
8701 92	- - 18 կՎտ-ից ավելի, սակայն 37 կՎտ-ից ոչ ավելի	ԱԱԲՌ
8701 93	- - 37 կՎտ-ից ավելի, սակայն 75 կՎտ-ից ոչ ավելի	ԱԱԲՌ
8701 94 10	- - - գյուղատնտեսական այգեգործական տրակտորներ	ԱԱԲՌ
8701 94 20	- - - տրակտորներ՝ գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու համար, 120 ձիաուժից պակաս հզորությամբ	ԱԱԲՌ
8701 94 90	- - - այլ	Նվազեցում՝ 20%, պարտադիր՝ 4%

ՆՀ-ի ծածկագիրը	Նկարագրությունը	Սակագնային արտոնությունները
8701 95 10	- - - գյուղատնտեսական այգեգործական տրակտորներ	ԱԱԲՌ
8701 95 90	- - - այլ	Նվազեցում՝ 20%, պարտադիր՝ 4%
8702 10	- միայն սեղմումով բոցավառվող ներքին այրման միտոցային շարժիչով (դիզելով կամ կիսադիզելով)	ԱԱԲՌ
8703 21	- - գլանների՝ 1,000 սմ ³ -ից ոչ ավելի աշխատանքային ծավալով	ԱԱԲՌ
8703 22	- - գլանների՝ 1,000 սմ ³ -ից ավելի, սակայն 1,500 սմ ³ -ից ոչ ավելի աշխատանքային ծավալով	ԱԱԲՌ
8703 23	- - գլանների՝ 1,500 սմ ³ -ից ավելի, սակայն 3000 սմ ³ -ից ոչ ավելի աշխատանքային ծավալով	ԱԱԲՌ
8703 24	- - գլանների՝ 3,000 սմ ³ -ից ավելի աշխատանքային ծավալով	ԱԱԲՌ
8703 31	- - գլանների՝ 1,500 սմ ³ -ից ոչ ավելի աշխատանքային ծավալով	ԱԱԲՌ
8703 32	- - գլանների՝ 1,500 սմ ³ -ից ավելի, սակայն 2,500 սմ ³ -ից ոչ ավելի աշխատանքային ծավալով	ԱԱԲՌ
8703 33	- - գլանների՝ 2,500 սմ ³ -ից ավելի աշխատանքային ծավալով	ԱԱԲՌ
8703 40	- ինչպես կայծային բռնկմամբ ներքին այրման միտոցային շարժիչով, այնպես էլ էլեկտրական շարժիչով շարժման մեջ դրվող այլ տրանսպորտային միջոցներ՝ բացի նրանցից, որոնք կարող են լիցքավորվել՝ միանալով էլեկտրաէներգիայի արտաքին աղբյուրի	ԱԱԲՌ
8703 60	- ինչպես կայծային բռնկմամբ ներքին այրման միտոցային շարժիչով, այնպես էլ էլեկտրական շարժիչով շարժման մեջ դրվող այլ տրանսպորտային միջոցներ, որոնք կարող են լիցքավորվել՝ միանալով էլեկտրաէներգիայի արտաքին աղբյուրի	ԱԱԲՌ
8704 21	- - 5 տ-ից ոչ ավելի տրանսպորտային միջոցի լրիվ զանգվածով	ԱԱԲՌ
8704 22	- - 5 տ-ից ավելի, բայց 20 տ-ից ոչ ավելի տրանսպորտային միջոցի լրիվ զանգվածով	ԱԱԲՌ
8704 23	- - 20 տ-ից ավելի տրանսպորտային միջոցի լրիվ զանգվածով	ԱԱԲՌ
8704 31	- - 5 տ-ից ոչ ավելի տրանսպորտային միջոցի լրիվ զանգվածով	ԱԱԲՌ
8704 32	- - 5 տ-ից ավելի տրանսպորտային միջոցի լրիվ զանգվածով	ԱԱԲՌ

ՆՀ-ի ծածկագիրը	Նկարագրությունը	Սակագնային արտոնությունները
8704 90	- այլ	ԱԱԲՌ
8705 10 10	- - երկու առանձին խցիկներ ունեցող (ղեկի խցիկ եւ կոունկի խցիկ)՝ հիմնականում միմյանց համապատասխանելու համար նախագծված	Պարտադիր՝ 5%
8705 10 90	- - - այլ	ԱԱԲՌ
8707 90	- այլ	ԱԱԲՌ
8708 29	- - այլ	ԱԱԲՌ
8708 30	- արգելակներ եւ օժանդակ ուժեղարարով արգելակներ, դրանց մասերը	ԱԱԲՌ
8708 40	- փոխանցման տուփեր եւ դրանց մասերը	ԱԱԲՌ
8708 70 11	- - - - թեթեւ մարդատար ավտոմոբիլների, փիքափների համար	ԱԱԲՌ
8708 70 19	- - - - այլ	ԱԱԲՌ
8708 70 21	- - - - թեթեւ մարդատար ավտոմոբիլների, փիքափների համար	ԱԱԲՌ
8708 70 29	- - - - այլ	Նվազեցում՝ 20%, պարտադիր՝ 4%
8708 70 31	- - - - թեթեւ մարդատար ավտոմոբիլների, փիքափների համար	ԱԱԲՌ
8708 70 39	- - - - այլ	ԱԱԲՌ
8708 70 40	- - - ընթացային անիվներ անվադողերով	ԱԱԲՌ
8708 80	- կախոցների համակարգեր եւ դրանց մասերը (ներառյալ հարվածամեղմիչները)	ԱԱԲՌ
8708 91	- - ռադիատորներ եւ դրանց մասերը	ԱԱԲՌ
8708 92	- - խլացուցիչներ (ծայնակլանիչ սարքվածքներ) եւ արտանետիչ խողովակներ, դրանց մասերը	ԱԱԲՌ
8708 93	- - հավաքված կցորդումներ եւ դրանց մասերը	ԱԱԲՌ
8708 99	- - այլ	ԱԱԲՌ
8711 10 11	- - - - հիբրիդային տեսակի	ԱԱԲՌ
8711 10 12	- - - - հիբրիդային տեսակի	Նվազեցում՝ 20%, պարտադիր՝ 4%
8711 10 19	- - - - նախատեսված հատկապես մրցարշավի եւ քարթինգի բոլոր տեսակների օգտագործման համար	Նվազեցում՝ 20%, պարտադիր՝ 4%
8711 10 91	- - - - հիբրիդային տեսակի	ԱԱԲՌ
8711 10 92	- - - - - նախատեսված հատկապես մրցարշավի եւ քարթինգի բոլոր տեսակների օգտագործման համար	ԱԱԲՌ

ՆՀ-ի ծածկագիրը	Նկարագրությունը	Սակագնային արտոնությունները
8711 10 99	- - - - այլ	ԱԱԲՌ
8711 20	- ներքին այրման շարժիչով՝ մխոցի հետադարձ-առաջընթաց շարժումով, 50 սմ ³ -ից ավելի, բայց 250 սմ ³ -ից ոչ ավելի շարժիչի գլանների աշխատանքային ծավալով	ԱԱԲՌ
8711 30	- ներքին այրման շարժիչով՝ մխոցի հետադարձ-առաջընթաց շարժումով, 250 սմ ³ -ից ավելի, բայց 500 սմ ³ -ից ոչ ավելի շարժիչի գլանների աշխատանքային ծավալով	ԱԱԲՌ
8711 40	- ներքին այրման շարժիչով՝ մխոցի հետադարձ-առաջընթաց շարժումով, 500 սմ ³ -ից ավելի, բայց 800 սմ ³ -ից ոչ ավելի շարժիչի գլանների աշխատանքային ծավալով	ԱԱԲՌ
8711 50	- ներքին այրման շարժիչով՝ մխոցի հետադարձ-առաջընթաց շարժումով, 800 սմ ³ -ից ավելի շարժիչի գլանների աշխատանքային ծավալով	ԱԱԲՌ
8711 60 10	- - - սկուտեր	ԱԱԲՌ
8711 60 20	- - - էլեկտրական շարժիչ՝ այլ, 500Վտ-ից պակաս հզորությամբ	ԱԱԲՌ
8711 60 30	- - - էլեկտրական մոտոցիկլ	ԱԱԲՌ
8711 60 90	- - - այլ	Նվազեցում՝ 20%, պարտադիր՝ 4%
8711 90	- այլ	ԱԱԲՌ
8715 00	Մանկական սայլակներ եւ դրանց մասերը	ԱԱԲՌ
8716 20	- ինքնաբեռնավորվող կամ ինքնաբեռնաթափվող կցորդներ եւ կիսակցորդներ՝ գյուղատնտեսության համար	ԱԱԲՌ
8716 31	- - կցորդ-ցիստեռներ եւ կիսակցորդ-ցիստեռներ	ԱԱԲՌ
8716 40	- այլ կցորդներ եւ կիսակցորդներ	ԱԱԲՌ
8716 80	- այլ տրանսպորտային միջոցներ	ԱԱԲՌ
8716 90	- մասեր	ԱԱԲՌ
9004 90	- այլ	ԱԱԲՌ
9018 19	- - այլ	ԱԱԲՌ
9018 31	- - ներարկիչներ՝ ասեղներով կամ առանց ասեղների	ԱԱԲՌ
9026 20	- ճնշումը չափելու կամ հսկելու համար	ԱԱԲՌ
9028 20	- հեղուկահաշվիչներ	ԱԱԲՌ
9028 30	- էլեկտրաէներգիայի հաշվիչներ	Նվազեցում՝ 30%, պարտադիր՝ 38.5%

ՆՀ-ի ծածկագիրը	Նկարագրությունը	Սակագնային արտոնությունները
9031 80	- այլ սարքեր, սարքվածքներ եւ մեքենաներ	ԱԱԲՌ
9401 40	- կահույք՝ նստելու համար՝ բացի ամառանոցայինից կամ արշավայինից, որոնք ձեւավորվում են մահճակալի	ԱԱԲՌ
9401 61	- - պաստառապատ կահույք	ԱԱԲՌ
9401 69	- - այլ	ԱԱԲՌ
9401 90	- մասեր	ԱԱԲՌ
9402 90	- այլ	ԱԱԲՌ
9403 30	- փայտե կահույք՝ գրասենյակային	ԱԱԲՌ
9403 40	- փայտե կահույք՝ խոհանոցային	ԱԱԲՌ
9403 50	- փայտե ննջարանային կահույք	ԱԱԲՌ
9403 60	- փայտե այլ կահույք	ԱԱԲՌ
9403 70	- կահույք պլաստմասսայից	ԱԱԲՌ
9403 89	- - այլ	ԱԱԲՌ
9403 90	- մասեր	ԱԱԲՌ
9404 90	- այլ	ԱԱԲՌ
9405 10	- ջահեր եւ էլեկտրական լուսավորման այլ սարքավորումներ՝ կախովի կամ պատի՝ բացի լուսավորման սարքավորումներից, որոնք օգտագործվում են բացօթյա հասարակական տեղերում եւ տրանսպորտային մայրուղիների լուսավորման համար	ԱԱԲՌ
9503 00	Եռանիվ հեծանիվներ, ինքնագլորներ, ոտնակավոր ավտոմոբիլներ եւ անիվներով նույնանման խաղալիքներ, սայլակներ տիկնիկների համար, տիկնիկներ, այլ խաղալիքներ, նվազեցված չափերով (փոքրացված) մոդելներ եւ ժամանցային նույնանման մոդելներ՝ սարքին կամ անսարք, ամեն տեսակի գլուխկոտրուկներ	ԱԱԲՌ
9506 62	- - փչովի	ԱԱԲՌ
9603 21	- - ատամի խոզանակներ, ներառյալ՝ ատամի պրոթեզների համար խոզանակները	ԱԱԲՌ
9603 50	- այլ մեխանիզմների, սարքերի կամ տրանսպորտային միջոցների մաս հանդիսացող խոզանակներ	ԱԱԲՌ
9603 90	- այլ	ԱԱԲՌ
9608 10	- գնդիկավոր գրիչներ	ԱԱԲՌ
9608 20	- գրիչներ եւ գծանշիչներ (մարկերներ) ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութերից ծայրով	ԱԱԲՌ

ՆՀ-ի ծածկագիրը	Նկարագրությունը	Սակագնային արտոնությունները
9609 10	- հասարակ եւ գունավոր մատիտներ՝ կոշտ պատյանով մատիտների գրիֆելներով	ԱԱԲՌ
9617 00	Թերմոսներ եւ վակուումային այլ անոթներ՝ պատյաններով կոմպլեկտավորված. դրանց մասերը՝ բացի ապակե փորձանոթներից	ԱԱԲՌ
9884 29	Լրիվ կազմատած մասեր՝ ճանապարհաշինական մեքենաների արտադրության համար (բացի անվադողերից)	ԱԱԲՌ
9887 01	Լրիվ կազմատած մասեր՝ գյուղատնտեսական տրակտորների արտադրության համար (բացի անվադողերից)	ԱԱԲՌ
9887 02	Լրիվ կազմատած մասեր՝ ավտոբուսների եւ փոքր ավտոբուսների արտադրության համար (բացի անվադողերից)	ԱԱԲՌ
9887 03	Լրիվ կազմատած մասեր՝ 8703 ապրանքային դիրքում ներառված տրանսպորտային միջոցների արտադրության համար (բացի անվադողերից)	ԱԱԲՌ
9887 04	Լրիվ կազմատած մասեր՝ 8704 ապրանքային դիրքում ներառված տրանսպորտային միջոցների արտադրության համար (բացի անվադողերից)	ԱԱԲՌ
9887 11	Լրիվ կազմատած մասեր՝ 15%-ից պակաս ներքին արտադրության հզոր մոտոցիկլների արտադրության համար (բացի անվադողերից)	ԱԱԲՌ
9887 12	Կազմատած մասեր՝ հեծանիվ հավաքելու համար	ԱԱԲՌ

**ՑԱՆԿ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԻ
ՔՎՈՏԱՅԻՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ**

ՆՀ-ի ծածկագիր\Հատուկ պայման	Նկարագրություն	Մաքսատուրքի գումարը եւ մաքսատուրքի պարտադիր դրույքաչափը քվոտայի շրջանակներում	Մաքսատուրքի դրույքաչափը քվոտայի շրջանակներից դուրս
0207 11	- - չմասնատված՝ թարմ կամ պաղեցրած	5 000 տոննա տարեկան, 0%	ԱԱԲՌ
0207 12	- - չմասնատված՝ սառեցրած		
0207 13	- - մասեր եւ ենթամթերք՝ թարմ կամ պաղեցրած		
0207 14	- - մասեր եւ ենթամթերք՝ սառեցրած		
0404 10	- կաթնային շիճուկ եւ ծեւափոխված կաթնային շիճուկ՝ խտացրած կամ չխտացրած, շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր ավելացրած կամ չավելացրած	300 տոննա տարեկան, 0%	ԱԱԲՌ
0713 10	- դլոռ (<i>Pisum sativum</i>)	300 տոննա տարեկան, 0%	Նվազեցում՝ 55%, պարտադիր՝ 25%
0713 20 10	- - - լոբի	25 000 տոննա տարեկան, 0%	Նվազեցում՝ 67%, պարտադիր՝ 5%
0713 20 20	- - - սիսեռի սերմեր		Պարտադիր՝ 5%
0713 20 30	- - - սիսեռ (<i>cicer avietnum</i>)		Պարտադիր՝ 5%
0713 20 40	- - - սիսեռ (<i>desi</i>)		Պարտադիր՝ 5%
0713 20 90	- - - այլ		Պարտադիր՝ 5%
0713 33	- - լոբի սովորական, ներառյալ՝ սպիտակ մանրասերմ լոբին (<i>Phaseolus vulgaris</i>)	3 000 տոննա տարեկան, 0%	Պարտադիր՝ 5%
1001 19	- - այլ	200 000 տոննա տարեկան, 0%,	ԱԱԲՌ
1001 99'	- - այլ	3 միլիոն տոննա տարեկան, 0%	Պարտադիր՝ 10%
1003 90'	- այլ	1.5 միլիոն տոննա տարեկան, 0%	Պարտադիր՝ 5% օգոստոսի 21-ից մինչեւ ապրիլի 19-ը, պարտադիր՝ 10% ապրիլի 20-

ՆՀ-ի ծածկագիր\Հատուկ պայման	Նկարագրություն	Մաքսատուրքի գումարը եւ մաքսատուրքի պարտադիր դրույքաչափը քվոտայի շրջանակներում	Մաքսատուրքի դրույքաչափը քվոտայի շրջանակներից դուրս
			ից մինչեւ օգոստոսի 20-ը
1206 00	Արեւածաղկի սերմեր՝ մանրատած կամ չմանրատած	100 000 տոննա տարեկան, 0%,	Պարտադիր՝ 10%
1512 11	- - հում յուղ	500 000 տոննա տարեկան, 0%,	Նվազեցում՝ 50%, պարտադիր՝ 10%
1514 11	- - հում յուղ	200 000 տոննա տարեկան, 0%,	Նվազեցում՝ 50%, պարտադիր՝ 10%
1516 20	- բուսական ծագման ճարպեր եւ յուղեր ու դրանց զտամասերը	5 000 տոննա տարեկան, 0%	ԱԱԲՌ
1517 10	-մարգարին՝ բացառությամբ հեղուկ մարգարինի	5 000 տոննա տարեկան, 0%	ԱԱԲՌ
1701 99	- - այլ	100 000 տոննա տարեկան, 0%,	ԱԱԲՌ

¹ ԵԱՏՄ անդամ պետությունների միջեւ քվոտայի շրջանակներում գումարի հատկացումը կարգավորվում է ԵԱՏՄ-ի որոշումներով: Եվրասիական տնտեսական հանձնաժողովն Իրանի Իսլամական Հանրապետությանը ծանուցում է այդ հատկացման մասին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԱՌԱՆՁԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՏՈՒԿ ԿԱՆՈՆՆԵՐԸ

2-րդ հավելվածի բացատրական ծանոթագրությունները

Սույն հավելվածում՝

1. Ցանկի առաջին սյունակում ներկայացվում են ապրանքային դիրքերը, իսկ երկրորդ սյունակում՝ առանձին արտադրատեսակների նկարագրությունը: Սույն ցանկի ապրանքները որոշվում են բացառապես ապրանքների ՆՀ-ի ծածկագրերով. ապրանքների անվանումներն օգտագործվում են միայն հարմարության նկատառումներով:

2. «Ապրանքային դիրք» նշանակում է Ներդաշնակեցված համակարգի ապրանքային դիրք (քառանիշ).

«ԱԱՍ X%» նշանակում է, որ ավելացված արժեքի մասնաբաժինը, որը հաշվարկվում է սույն համաձայնագրի 6.5 հոդվածով սահմանված բանաձևի կիրառմամբ, X տոկոսից պակաս չէ, եւ պատրաստի ապրանքների արտադրության գործընթացն իրականացվել է մի Կողմում.

«ԳՓ» նշանակում է, որ պատրաստի ապրանքի արտադրության մեջ օգտագործվող՝ ծագում չունեցող բոլոր նյութերը ենթարկվել են սակագնային դասակարգման փոփոխության ՆՀ-ի երկնիշ մակարդակում:

3. Սակագնային դասակարգման մեջ փոփոխություն կատարելու պահանջը կիրառվում է միայն ծագում չունեցող նյութերի նկատմամբ:

4. Ցանկի երրորդ սյունակում նշված ծագման չափորոշիչներով սահմանվում են արտադրական գործողություններին ներկայացվող նվազագույն պահանջները: Նվազագույն պահանջներից ավելի իրականացված արտադրական գործողությունների ավելի մեծ ծավալը եւս թույլ է տալիս ապրանքը դասել ծագում ունեցողի կարգավիճակին:

Ծածկագիր	Նկարագրություն	Ծագման չափորոշիչ
7303.00	Խողովակներ, փողակներ եւ սնամեջ տրամատներ (պրոֆիլներ)՝ թուջե ձուլվածքից	ԳՓ
73.04	Խողովակներ, փողակներ եւ սնամեջ տրամատներ (պրոֆիլներ)՝ անկար, սեւ մետաղներից (թուջե ձուլվածքից բացի)	ԳՓ
73.05	Այլ խողովակներ եւ փողակներ (օրինակ՝ եռակցման, գամած կամ նույնանման եղանակով միացրած)՝ կլոր հատմամբ, որոնց արտաքին տրամագիծը 406,4 մմ-ից ավելի է, սեւ մետաղներից	ԳՓ
73.06	Այլ խողովակներ, փողակներ եւ սնամեջ տրամատներ (պրոֆիլներ) (օրինակ՝ բաց կարով կամ եռակցման, գամած կամ նույնանման եղանակով միացրած)՝ սեւ մետաղներից	ԳՓ
73.07	Կցամասեր՝ խողովակների կամ փողակների համար (օրինակ՝ միացքներ, ծունկեր, խողովակակցիչներ), սեւ մետաղներից.	ԳՓ
87.02	Շարժիչային տրանսպորտային միջոցներ՝ նախատեսված տասը կամ ավելի մարդ, ներառյալ՝ վարորդը, փոխադրելու համար	<p>ԱԱՄ 50%՝ պայմանով, որ իրականացվել են հետևյալ տեխնոլոգիական գործողությունները.</p> <ul style="list-style-type: none"> - թափքի (խցիկի) եռակցում կամ ցանկացած այլ կերպ թափքի (խցիկի) արտադրում այն դեպքում, երբ կիրառվում են տեխնոլոգիաներ, որոնք չեն ներառում եռակցման գործողություններ թափքի (խցիկի) արտադրության ընթացքում. - թափքի (խցիկի) ներկում. - շարժիչի մոնտաժում (ներքին այրման շարժիչով շարժիչային տրանսպորտային միջոցների եւ հիբրիդային ուժային ագրեգատների համար). - քարշային էլեկտրական շարժիչի (գեներատորներ, էլեկտրական շարժիչներ) մոնտաժում (էլեկտրական շարժաբերով կամ հիբրիդային ուժային ագրեգատներով գործարկվող տրանսպորտային միջոցների

Ծածկագիր	Նկարագրություն	Ծագման չափորոշիչ
		<p>համար).</p> <ul style="list-style-type: none"> - փոխանցման տուփերի տեղադրում. - հետեւի եւ առջեւի կախոցների մոնտաժում (էլեկտրական շարժաբերով կամ հիբրիդային ուժային ագրեգատներով գործարկվող տրանսպորտային միջոցների կամ կայծային բռնկումով ներքին այրման շարժիչով տրանսպորտային միջոցների համար). - ղեկի կառավարման եւ արգելակման համակարգերի մոնտաժում. - խլացուցչի եւ արտանետման խողովակի մոնտաժում (կայծային բռնկումով ներքին այրման շարժիչով տրանսպորտային միջոցների համար). - շարժիչի արատորոշում եւ կարգավորում. - արգելակման համակարգի ստուգում. - ռադիոխանգարումների մակարդակի եւ էլեկտրամագնիսական համատեղելիության ստանդարտների ստուգում (էլեկտրական շարժաբերով կամ հիբրիդային ուժային ագրեգատներով գործարկվող տրանսպորտային միջոցների համար). - պատրաստի տրանսպորտային միջոցի հսկիչ փորձարկումներ:
87.03	<p>Թեթեւ մարդատար ավտոմոբիլներ եւ այլ շարժիչային տրանսպորտային միջոցներ՝ հիմնականում մարդկանց փոխադրելու համար նախատեսված (բացի 87.02 ապրանքային դիրքում նշվածներից), ներառյալ՝ ֆուրգոն-ավտոմոբիլներն ու մրցարշավային ավտոմոբիլները</p>	<p>ԱԱՄ 50%՝ պայմանով, որ իրականացվել են հետեւյալ տեխնոլոգիական գործողությունները.</p> <ul style="list-style-type: none"> - թափքի (խցիկի) եռակցում կամ ցանկացած այլ կերպ թափքի (խցիկի) արտադրում այն դեպքում, երբ կիրառվում են տեխնոլոգիաներ, որոնք չեն ներառում եռակցման գործողություններ թափքի

Ծածկագիր	Նկարագրություն	Ծագման չափորոշիչ
		<p>(խցիկի) արտադրության ընթացքում.</p> <ul style="list-style-type: none"> - թափքի (խցիկի) ներկում. - շարժիչի մոնտաժում (ներքին այրման շարժիչով շարժիչային տրանսպորտային միջոցների եւ հիբրիդային ուժային ագրեգատների համար). - քարշային էլեկտրական շարժիչի (գեներատորներ, էլեկտրական շարժիչներ) մոնտաժում (էլեկտրական շարժաբերով կամ հիբրիդային ուժային ագրեգատներով գործարկվող տրանսպորտային միջոցների համար). - փոխանցման տուփերի տեղադրում. - հետեւի եւ առջեւի կախոցների մոնտաժում (էլեկտրական շարժաբերով կամ հիբրիդային ուժային ագրեգատներով գործարկվող տրանսպորտային միջոցների կամ կայծային բռնկումով ներքին այրման շարժիչով տրանսպորտային միջոցների համար). - ղեկի կառավարման եւ արգելակման համակարգերի մոնտաժում. - խլացուցչի եւ արտանետման խողովակի մոնտաժում (կայծային բռնկումով ներքին այրման շարժիչով տրանսպորտային միջոցների համար). - շարժիչի արատորոշում եւ կարգավորում. - արգելակման համակարգի ստուգում. - ռադիոխանգարումների մակարդակի եւ էլեկտրամագնիսական համատեղելիության ստանդարտների ստուգում (էլեկտրական շարժաբերով կամ հիբրիդային ուժային ագրեգատներով գործարկվող

Ծածկագիր	Նկարագրություն	Ծագման չափորոշիչ
		<p>տրանսպորտային միջոցների համար).</p> <ul style="list-style-type: none"> - պատրաստի տրանսպորտային միջոցի հսկիչ փորձարկումներ:
87.04	Շարժիչային տրանսպորտային միջոցների բեռների փոխադրման համար	<p>ԱԱՄ 40%՝ պայմանով, որ իրականացվել են հետևյալ տեխնոլոգիական գործողությունները.</p> <ul style="list-style-type: none"> - թափքի (խցիկի) եռակցում կամ ցանկացած այլ կերպ թափքի (խցիկի) արտադրում այն դեպքում, երբ կիրառվում են տեխնոլոգիաներ, որոնք չեն ներառում եռակցման գործողություններ թափքի (խցիկի) արտադրության ընթացքում. - թափքի (խցիկի) ներկում. - շարժիչի մոնտաժում (ներքին այրման շարժիչով շարժիչային տրանսպորտային միջոցների եւ հիբրիդային ուժային ագրեգատների համար). - քարշային էլեկտրական շարժիչի (գեներատորներ, էլեկտրական շարժիչներ) մոնտաժում (էլեկտրական շարժաբերով կամ հիբրիդային ուժային ագրեգատներով գործարկվող տրանսպորտային միջոցների համար). - փոխանցման տուփերի տեղադրում. - հետեւի եւ առջեւի կախոցների մոնտաժում (էլեկտրական շարժաբերով կամ հիբրիդային ուժային ագրեգատներով գործարկվող տրանսպորտային միջոցների կամ կայծային բռնկումով ներքին այրման շարժիչով տրանսպորտային միջոցների համար). - ղեկի կառավարման եւ արգելակման համակարգերի մոնտաժում. - խլացուցչի եւ արտանետման խողովակի մոնտաժում (կայծային բռնկումով ներքին

Ծածկագիր	Նկարագրություն	Ծագման չափորոշիչ
		<p>այրման շարժիչով տրանսպորտային միջոցների համար).</p> <ul style="list-style-type: none"> - շարժիչի արատորոշում եւ կարգավորում. - արգելակման համակարգի ստուգում. - ռադիոխանգարումների մակարդակի եւ էլեկտրամագնիսական համատեղելիության ստանդարտների ստուգում (էլեկտրական շարժաբերով կամ հիբրիդային ուժային ագրեգատներով գործարկվող տրանսպորտային միջոցների համար). - պատրաստի տրանսպորտային միջոցի հսկիչ փորձարկումներ:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

<p>1. Արտահանողը (առեւտրային անվանումը, հասցեն եւ երկիրը)</p>	<p>4. Թիվ _____</p> <p style="text-align: center;">ԵԱՏՄ-ԻՐԱՆ ԱԱՀ Ծագման սերտիֆիկատ Ձեւ CT-3</p> <p>Տրված է՝</p> <p style="text-align: center;">_____</p> <p style="text-align: center;">(երկիր)</p> <p style="text-align: center;">_____ ին</p> <p style="text-align: center;">ներկայացնելու համար</p> <p style="text-align: center;">_____</p> <p style="text-align: center;">(երկիր)</p>				
<p>2. Ներմուծողը/Ստացողը (առեւտրային անվանումը, հասցեն եւ երկիրը)</p>	<p>5. Պաշտոնական օգտագործման համար</p>				
<p>3. Տրանսպորտային միջոցը եւ երթուղին (որքանով հայտնի է)</p>					
<p>6. Համարը՝ ը/կ</p>	<p>7. Փաթեթվածքների թիվը եւ տեսակը</p>	<p>8. Ապրանքների նկարագրությունը</p>	<p>9. Ծագման չափորոշիչը</p>	<p>10. Ապրանքների քանակը</p>	<p>11. Հաշիվ- ապրանքագրի համարը եւ ամսաթիվը</p>
<p>12. Հավաստում</p> <p>Իրականացված հսկողության հիման վրա սույնով հավաստվում է, որ դիմումատուի հայտարարագիրը համապատասխանում է իրականությանը</p> <p>Վայրը Ամսաթիվը Ստորագրությունը Կնիքը</p>			<p>13. Դիմումատուի հայտարարագիր</p> <p>Սույնով ներքոստորագրյալը հայտարարում է, որ վերոնշյալ տեղեկությունները համապատասխանում են իրականությանը, որ բոլոր ապրանքներն արտադրվել են</p> <p style="text-align: center;">_____</p> <p style="text-align: center;">(երկիր)</p> <p>եւ դրանք համապատասխանում են ԵԱՏՄ-ԻՐԱՆ ԱԱՀ-ի 6-րդ գլխով (Ծագման կանոններ) նախատեսված ծագման կանոններին</p> <p>Վայրը Ամսաթիվը Ստորագրությունը Կնիքը</p>		

Ծագման սերտիֆիկատի լրացուցիչ թերթ, Ձեւ CT-3 թիվ _____					
6. Համարը՝ ը/կ	7. Փաթեթվածքների թիվը եւ տեսակը	8. Ապրանքների նկարագրությունը	9. Ծագման չափորոշիչը	10. Ապրանքների քանակը	11. Հաշիվ- ապրանքագրի համարը եւ ամսաթիվը
12. Հավաստում Իրականացված հսկողության հիման վրա սույնով հավաստվում է, որ դիմումատուի հայտարարագիրը համապատասխանում է իրականությանը Վայրը Ամսաթիվը Ստորագրությունը Կնիքը			13. Դիմումատուի հայտարարագիր Սույնով ներքոստորագրյալը հայտարարում է, որ վերոնշյալ տեղեկությունները համապատասխանում են իրականությանը, որ բոլոր ապրանքներն արտադրվել են _____ (երկիր) Եւ դրանք համապատասխանում են ԵԱՏՄ-ԻՐԱՆ ԱԱՀ-ի 6-րդ գլխով (Ծագման կանոններ) նախատեսված ծագման կանոններին Վայրը Ամսաթիվը Ստորագրությունը Կնիքը		

Ծագման սերտիֆիկատը լրացնելու ցուցումներ (Ձեւ CT-3)

Ծագման սերտիֆիկատը (Ձեւ CT-3) եւ դրա լրացուցիչ թերթերը պետք է ձեւակերպվեն ԻՍՕ Ա4 չափսի գունավոր թղթի վրա՝ սույն հավելվածում ներկայացված նմուշին համապատասխան: Դրանք պետք է կազմվեն անգլերենով:

Վեցից տասնմեկերորդ վանդակներում չօգտագործված դատարկ հատվածների վրա գիծ է քաշվում՝ որեւէ լրացուցիչ տեղեկություն ավելացնելը կանխելու նպատակով:

Ծագման սերտիֆիկատը պետք է՝

ա) լինի թղթային տարբերակով՝ բացառությամբ սույն համաձայնագրի 6.28 հոդվածի 4-րդ կետում նախատեսված դեպքերի, եւ համապատասխանի սույն հավելվածով սահմանված տեքստի նմուշին, որը պետք է տպված լինի անգլերեն.

բ) պարունակի նվազագույն տվյալները, որոնք անհրաժեշտ է լրացնել 1-ին, 2-րդ, 4-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ վանդակներում.

գ) պարունակի ստորագրելու իրավասություն ունեցող լիազորված անձի ստորագրությունը եւ լիազորված մարմնի պաշտոնական կնիքն ու իսկության ապահովման միջոցները՝ բացառությամբ սույն համաձայնագրի 6.28 հոդվածի 4-րդ կետում նախատեսված դեպքերի: Ստորագրությունը պետք է լինի ձեռագիր, իսկ պաշտոնական կնիքը չպետք է լինի ֆաքսիմիլային:

1. **Վանդակ 1.** Նշե՛ք ապրանքներն արտահանողի մասին տեղեկությունները՝ առետրային անվանումը, հասցեն եւ երկիրը:

2. **Վանդակ 2.** Նշե՛ք ապրանքները ներմուծողի (պարտադիր) եւ ստացողի (եթե հայտնի են) մասին տեղեկությունները՝ առետրային անվանումը, հասցեն եւ երկիրը:

3. **Վանդակ 3.** Նշե՛ք տրանսպորտային փոխադրման մասին տեղեկությունները (որքանով հայտնի են), ինչպես օրինակ՝ մեկնման (առաքման) ամսաթիվը, տրանսպորտային միջոցը (նավ, օդանավ եւ այլն), բեռնաթափման վայրը (նավահանգիստ, օդանավակայան):

4. **Վանդակ 4.** Նշե՛ք հղման հատուկ համարի մասին տեղեկությունները, սերտիֆիկատը տրամադրող երկիրը եւ այն երկիրը, որին ներկայացվելու է սերտիֆիկատը:

5. **Վանդակ 5.** Նշե՛ք հետեւյալ բառերը.

«__ ԱՄՍԱԹՎՈՎ _ ԹԻՎ _____ ԾԱԳՄԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿ »՝
Ծագման սերտիֆիկատի բնօրինակի փոխարեն տրամադրելու դեպքում.

«ՏՐՎԱԾ Է _____ ԱՄՍԱԹՎ ԹԻՎ __ ԾԱԳՄԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏԻ ՓՈԽԱՐԵՆ»՝ Ծագման սերտիֆիկատը փոխարինելու դեպքում.

«ՏՐՎԱԾ Է ՀԵՏԱԴԱՐՁ ՈՒԺՈՎ» կամ «ՏՐՎԱԾ Է ՀԵՏԻՆ ԱՄՍԱԹՎՈՎ» այն բացառիկ դեպքերում, երբ Ծագման սերտիֆիկատը չի տրվել մինչեւ արտահանումը կամ արտահանման ժամանակ:

6. **Վանդակ 6.** Նշե՛ք ապրանքի համարը՝ ըստ կարգի:

7. **Վանդակ 7.** Նշե՛ք փաթեթվածքների թիվը եւ տեսակը:

8. **Վանդակ 8.** Նշե՛ք ապրանքների մանրամասն նկարագրությունը եւ անհրաժեշտության դեպքում՝ մոդելն ու առետրային նշանն այնպես, որ հնարավոր լինի դրանք նույնականացնել:

9. **Վանդակ 9.** Բոլոր ապրանքների համար նշե՛ք ծագման չափորոշիչները՝ հետեւյալ աղյուսակում ներկայացված ձեւով.

Ծագման չափորոշիչները	Ներառե՛ք 9-րդ վանդակում
ա) Ապրանքներն ամբողջությամբ ստացվել կամ արտադրվել են Կողմի տարածքում՝ սույն համաձայնագրի 6.4 հոդվածով նախատեսված կարգով	ԱԱ
բ) Ապրանքներն ամբողջությամբ արտադրվել են մեկ Կողմի կամ երկու Կողմերի տարածքում, բացառապես մեկ Կողմի կամ երկու Կողմերի ծագում ունեցող նյութերից	ԱԱ
գ) Ապրանքներն արտադրվել են Կողմի տարածքում՝ ծագում չունեցող նյութերի օգտագործմամբ՝ պայմանով, որ Կողմի ավելացված արժեքի մասնաբաժինը կազմում է EXW արժեքի առնվազն 50 տոկոսը	ԱԱՄ X%*
դ) Ապրանքներն արտադրվել են Կողմի տարածքում՝ ծագում չունեցող նյութերի օգտագործմամբ, եւ դրանք բավարարում են սույն համաձայնագրի 2-րդ հավելվածով սահմանված պահանջները	ԱԲՊ

* Պետք է նշվի սույն համաձայնագրի 6.5 հոդվածի համաձայն հաշվարկված՝ ավելացված արժեքի մասնաբաժնի տոկոսը:

10. **Վանդակ 10.** Նշե՛ք ապրանքների քանակը՝ համաքաշը (կգ) կամ չափման այլ միավորներ (հատ, լիտր եւ այլն): Հայտարարագրված ներմուծվող ապրանքների փաստացի քաշը չպետք է գերազանցի Ծագման սերտիֆիկատում նշված քաշի հինգ տոկոսը:

11. **Վանդակ 11.** Նշե՛ք հաշիվ-ապրանքագրի համարը (համարները) եւ հաշիվ-ապրանքագրի (հաշիվ-ապրանքագրերի) ամսաթիվը (ամսաթվերը), որոնք լիազորված մարմին են ներկայացվել Ծագման սերտիֆիկատի տրամադրման համար:

12. **Վանդակ 12.** Նշե՛ք Ծագման սերտիֆիկատի տրամադրման վայրը եւ ամսաթիվը, ստորագրելու իրավասություն ունեցող անձի ստորագրությունը եւ լիազորված մարմնի կնիքի դրոշմվածքը:

13. **Վանդակ 13.** Նշե՛ք ապրանքների ծագումը (մի կողմից՝ Իրանի Իսլամական Հանրապետություն, մյուս կողմից՝ ԵԱՏՄ անդամ պետություն), հայտարարագրման վայրն ու ամսաթիվը, դիմումատուի ստորագրությունն ու կնիքի դրոշմվածքը:

ՀԱՎԵԼՎԱԾ 4

ԾԱԳՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԸ

«Արտադրողը կամ արտահանողը _____¹ հայտարարում է, որ սույն փաստաթղթով նախատեսված ապրանքների ծագման երկիրը _____² է, արտոնյալ ծագումը՝ ԵԱՏՄ-իրանի Իսլամական Հանրապետության միջև Ազատ առևտրի մասին համաձայնագրով սահմանված՝ ծագման կանոններին ներկայացվող պահանջների համաձայն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հստակ այլ բան է սահմանված»

3

(Ստորագրողի անունը,
ստորագրությունը, ամսաթիվը)

Ծանոթագրություններ.

1. Ապրանքներն արտադրողի կամ արտահանողի առևտրային անվանումը՝ օժանդակ փաստաթղթերի համաձայն:
2. Ապրանքների ծագման երկրի անվանումը:
3. Ստորագրողի ազգանունը, անունը, ստորագրությունը եւ Ծագման հայտարարագրի կազմման ամսաթիվը:

ՀԱՎԵԼՎԱԾ 5

ՄԱՔՍԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Սույն համաձայնագրի 7.14 հոդվածի համաձայն՝ ներմուծող Կողմի մաքսային օրենքները եւ կարգավորումները, ի թիվս այլնի, հիմնված են ստորեւ ներկայացվող դրույթների վրա:

Հոդված 1

1. Ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը գործարքի գինն է՝ սույն հավելվածի 8-րդ հոդվածի դրույթների համաձայն ճշգրտված այն գինը, որը փաստացի վճարվել է կամ ենթակա է վճարման ներմուծման երկիր արտահանելու համար վաճառվող ապրանքների համար՝ պայմանով, որ՝

ա) գնորդի կողմից չլինի ապրանքների տնօրինման կամ օգտագործման որեւէ սահմանափակում՝ բացառությամբ այն սահմանափակումներից, որոնք՝

- i. ներմուծման երկրում սահմանվում կամ պահանջվում են օրենքով կամ երկրի պետական մարմինների կողմից.
- ii. սահմանափակում են այն աշխարհագրական տարածքը, որտեղ ապրանքները կարող են վերավաճառվել. կամ
- iii. էականորեն չեն ազդում ապրանքների գնի վրա.

բ) վաճառքը կամ գինը կախված չէ որեւէ պայմանից կամ նկատառումից, որի պատճառով արժեքը հնարավոր չէ որոշել գնորոշման ենթակա ապրանքների համար.

գ) գնորդի կողմից ապրանքների հետագա վերավաճառքի, տնօրինման կամ օգտագործման արդյունքում ստացված հասույթից որեւէ մաս վաճառողին ուղղակիորեն կամ անուղղակիորեն հասանելիք մաս չէ, եթե սույն հավելվածի 8-րդ

հողվածի դրույթների համաձայն համապատասխան ճշգրտում չի կարող կատարվել, եւ

դ) գնորդն ու վաճառողը փոխկապակցված չեն, կամ եթե գնորդն ու վաճառողը փոխկապակցված են, ապա գործարքի գինը, սույն հողվածի 2-րդ կետի դրույթների համաձայն, մաքսային նպատակների համար ընդունելի է:

2. ա) Որոշելու համար, թե արդյոք գործարքի գինն ընդունելի է սույն հողվածի 1-ին կետի համաձայն մաքսային արժեքի որոշման նպատակով, այն փաստը, որ գնորդը եւ վաճառողը փոխկապակցված են սույն հավելվածի 14-րդ հողվածի իմաստով, չպետք է ինքնին գործարքի գինն անընդունելի համարելու հիմք լինի: Տվյալ դեպքում վաճառքի հանգամանքները պետք է ուսումնասիրվեն, եւ գործարքի գինը պետք է ընդունվի՝ պայմանով, որ փոխկապակցվածությունը ազդեցություն չի ունենա գնի վրա: Եթե ներմուծողի կողմից կամ այլ կերպ տրամադրված տեղեկություններից ելնելով՝ մաքսային ծառայությունը հիմքեր ունի համարելու, որ փոխկապակցվածությունն ազդել է գնի վրա, ապա նա իր ունեցած հիմքերը պետք է ներկայացնի ներմուծողին, եւ վերջինիս պետք է տրվի պատասխան ներկայացնելու բավարար հնարավորություն: Ներմուծողի պահանջի հիման վրա՝ հիմքերը ներկայացվում են գրավոր:

բ) Փոխկապակցված անձանց միջեւ վաճառքի իրականացման դեպքում գործարքի գինն ընդունվում է, եւ ապրանքների արժեքը որոշվում է սույն հողվածի 1-ին կետի դրույթներին համապատասխան որոշված գործարքի գնի հիման վրա, եթե ներմուծողը ներկայացնում է, որ այդ գինը մոտ է նույն կամ գրեթե նույն ժամանակահատվածում եղած հետեւյալ արժեքներից մեկին.

- i. ներմուծման նույն երկիր արտահանման համար չփոխկապակցված գնորդներին նույնական կամ նույնանման ապրանքների վաճառքի գործարքի գինը.
- ii. սույն հավելվածի 5-րդ հողվածի դրույթների համաձայն որոշված նույնական կամ նույնանման ապրանքների մաքսային արժեքը.

- iii. սույն հավելվածի 6-րդ հոդվածի դրույթների համաձայն որոշված՝ նույնական կամ նույնանման ապրանքների մաքսային արժեքը:

Վերը նշված արժեքների համեմատությունը կիրառելիս պետք է պատշաճ կերպով հաշվի առնել կոմերցիոն մակարդակներով, քանակական մակարդակներով առկա ակնհայտ տարբերությունները, սույն հավելվածի 8-րդ հոդվածում թվարկված ապրանքային տարրերը, ինչպես նաև վաճառողի՝ իր եւ գնորդի փոխկապակցված չլինելու դեպքում վաճառքի ժամանակ կրած այն ծախսերը, որոնք վաճառողը չի կրում այն վաճառքի ժամանակ, երբ ինքը եւ գնորդը փոխկապակցված են:

գ) Սույն հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետում տրված արժեքները պետք է կիրառվեն ներմուծողի նախաձեռնությամբ եւ բացառապես համեմատության նպատակով: Փոխարինող արժեքներ չեն կարող սահմանվել սույն հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետի դրույթներին համապատասխան:

Հոդված 2

1.

ա) Եթե ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը հնարավոր չէ որոշել սույն հավելվածի 1-ին հոդվածի դրույթների համաձայն, ապա մաքսային արժեքը պետք է լինի այն արժեքը, որը որոշվել է սույն հավելվածի 1-ին հոդվածի դրույթների համաձայն եւ ընդունվել է նույնական ապրանքների համար, որոնք ներմուծման միեւնոյն երկրին վաճառվել են արտահանման համար եւ արտահանվել են նույն կամ գրեթե նույն ժամանակահատվածում, որում եւ գնորոշվող ապրանքները, սակայն համապատասխան ապրանքների ներմուծումից ոչ պակաս, քան 90 օր առաջ.

բ) սույն հոդվածը կիրառելիս մաքսային արժեքը որոշելու համար կիրառվում է վաճառվող նույնական ապրանքների գործարքի գինը նույն կոմերցիոն մակարդակով եւ հիմնականում նույն քանակությամբ, ինչ գնորոշվող

ապրանքների դեպքում: Նման վաճառքի բացակայության դեպքում պետք է կիրառվի տարբեր կոմերցիոն մակարդակով եւ (կամ) տարբեր քանակություններով վաճառվող նույնական ապրանքների գործարքի գինը, որը ճշգրտվել է՝ հաշվի առնելով կոմերցիոն մակարդակով եւ (կամ) քանակությամբ պայմանավորված տարբերությունները՝ պայմանով, որ այդ ճշգրտումները կարող են կատարվել ներկայացված այն փաստերի հիման վրա, որոնցով հստակ սահմանվում են ճշգրտման ողջամտությունը եւ ճշգրտությունը՝ անկախ նրանից՝ ճշգրտումը բերում է արժեքի ավելացման, թե նվազման:

2. Եթե սույն հավելվածի 8-րդ հոդվածի 1-ին կետի «ե», «զ» եւ «է» ենթակետերում նշված ծախսերը եւ վճարումները ներառված են գործարքի գնի մեջ, ճշգրտումը պետք է կատարվի՝ հաշվի առնելով հեռավորությունների եւ փոխադրման եղանակների տարբերություններից բխող՝ տվյալ ներմուծվող ապրանքների եւ նույնական ապրանքների միջեւ այդ ծախսերի եւ վճարումների զգալի տարբերությունները:

3. Եթե սույն հոդվածը կիրառելիս նույնական ապրանքների ավելի, քան մեկ գործարքի գին է ի հայտ գալիս, այդ արժեքներից նվազագույնը պետք է կիրառվի ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշելիս:

Հոդված 3

1.

ա) Եթե ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը հնարավոր չէ որոշել սույն հավելվածի 1-ին եւ 2-րդ հոդվածի դրույթների համաձայն, ապա մաքսային արժեքը պետք է լինի այն արժեքը, որը որոշվել է սույն հավելվածի 1-ին հոդվածի դրույթների համաձայն եւ ընդունվել է նույնանման ապրանքների համար, որոնք ներմուծման միեւնույն երկրին վաճառվել են արտահանման համար եւ արտահանվել են նույն կամ գրեթե նույն ժամանակահատվածում, որում եւ

գնորոշվող ապրանքները, սակայն համապատասխան ապրանքների ներմուծումից ոչ պակաս, քան 90 օր առաջ.

բ) սույն հոդվածը կիրառելիս մաքսային արժեքը որոշելու համար կիրառվում է վաճառվող նույնանման ապրանքների գործարքի գինը նույն կոմերցիոն մակարդակով եւ հիմնականում նույն քանակությամբ, ինչ գնորոշվող ապրանքների դեպքում: Նման վաճառքի բացակայության դեպքում պետք է կիրառվի տարբեր կոմերցիոն մակարդակով եւ (կամ) տարբեր քանակություններով վաճառվող նույնանման ապրանքների գործարքի գինը, որը ճշգրտվել է՝ հաշվի առնելով կոմերցիոն մակարդակով եւ (կամ) քանակությամբ պայմանավորված տարբերությունները՝ պայմանով, որ այդ ճշգրտումները կարող են կատարվել ներկայացված այն փաստերի հիման վրա, որոնցով հստակ սահմանվում են ճշգրտման ողջամտությունը եւ ճշգրտությունը՝ անկախ նրանից՝ ճշգրտումը բերում է արժեքի ավելացման, թե նվազման:

2. Եթե սույն հավելվածի 8-րդ հոդվածի 1-ին կետի «ե», «զ» եւ «է» ենթակետերում նշված ծախսերը եւ վճարումները ներառված են գործարքի գնի մեջ, ճշգրտումը պետք է կատարվի՝ հաշվի առնելով հեռավորությունների եւ փոխադրման եղանակների տարբերություններից բխող՝ տվյալ ներմուծվող ապրանքների եւ նույնանման ապրանքների միջեւ այդ ծախսերի եւ վճարումների զգալի տարբերությունները:

3. Եթե սույն հոդվածը կիրառելիս նույնանման ապրանքների ավելի, քան մեկ գործարքի գին է ի հայտ գալիս, այդ արժեքներից նվազագույնը պետք է կիրառվի ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշելիս:

Հոդված 4

Եթե ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը հնարավոր չէ որոշել սույն հավելվածի 1-ին, 2-րդ եւ 3-րդ հոդվածների դրույթների համաձայն, ապա մաքսային արժեքը պետք է որոշվի սույն հավելվածի 5-րդ հոդվածի դրույթների համաձայն, կամ նշված հոդվածի համաձայն մաքսային արժեքը որոշելու անհնարինության դեպքում՝ սույն հավելվածի 6-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ներմուծողի պահանջով սույն հավելվածի 5-րդ եւ 6-րդ հոդվածների կիրառման հերթականությունը կարող է փոխվել:

Հոդված 5

1.

ա) Եթե ներմուծվող ապրանքները կամ ներմուծվող նույնական կամ նույնանման ապրանքները ներմուծման երկրում վաճառվում են այն վիճակով, որով ներմուծվել են, ապա ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը սույն հոդվածի դրույթների համաձայն պետք է հիմնված լինի այն միավոր գնի վրա, որով ներմուծվող ապրանքները կամ ներմուծվող նույնական կամ նույնանման ապրանքներն առավելագույն հանրագումարային քանակությամբ, գնորոշվող ապրանքների ներմուծման նույն կամ գրեթե նույն ժամանակահատվածում այդ կերպ վաճառվում են այն անձանց, որոնք փոխկապակցված չեն այն անձանց հետ, որոնցից վերջիններս այդ ապրանքները գնում են՝ պայմանով, որ հանվեն հետեւյալ գումարները.

i. կա՛մ սովորաբար վճարվող կամ վճարման ենթակա միջնորդավճարները, կա՛մ այդ երկրում նույն դասի կամ տեսակի ներմուծվող ապրանքների վաճառքի հետ կապված շահույթի ստացման եւ ընդհանուր ծախսերի համար սովորաբար կատարվող հավելյալ վճարները.

- ii. ներմուծման երկրում սովորաբար կատարվող փոխադրման, ապահովագրման եւ հարակից ծախսերը.
- iii. անհրաժեշտության դեպքում՝ սույն հավելվածի 8-րդ հոդվածի 2-րդ կետում նշված ծախսերը եւ վճարումները. եւ
- iv. ապրանքների ներմուծման կամ վաճառքի նպատակով ներմուծման երկրում վճարման ենթակա մաքսատուրքերը եւ այլ ներքին հարկեր:

բ) Եթե ո՛չ ներմուծվող ապրանքները, ո՛չ էլ ներմուծվող նույնական կամ նույնանման ապրանքները չեն վաճառվում գնորոշվող ապրանքների ներմուծման նույն կամ գրեթե նույն ժամանակահատվածում, մաքսային արժեքը, եթե սույն հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի դրույթներով այլ բան նախատեսված չէ, պետք է հիմնված լինի այն միավոր գնի վրա, որով ներմուծվող ապրանքները կամ ներմուծվող նույնական կամ նույնանման ապրանքները ներմուծման երկրում այն վիճակով, որով ներմուծվել են, վաճառվում են գնորոշվող ապրանքների ներմուծումից հետո ամենավաղ ամսաթվին, սակայն մինչեւ այդ ներմուծումից հետո 90 օրը լրանալը:

2. Եթե ո՛չ ներմուծվող ապրանքները, ո՛չ էլ ներմուծվող նույնական կամ նույնանման ապրանքները ներմուծման երկրում չեն վաճառվում այն վիճակով, որով ներմուծվել են, ապա ներմուծողի պահանջով մաքսային արժեքը պետք է հիմնված լինի այն միավոր գնի վրա, որով ներմուծված ապրանքները հետագա վերամշակում անցնելուց հետո ներմուծման երկրում առավելագույն հանրագումարային քանակությամբ վաճառվում են այն անձանց, որոնք փոխկապակցված չեն այն անձանց հետ, որոնցից վերջիններս գնում են այդ ապրանքները՝ այդ վերամշակման արդյունքում ավելացված արժեքը հաշվի առնելու եւ սույն հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետով նախատեսված գումարները հանելու պայմանով:

Հոդված 6

1. Սույն հոդվածի դրույթների համաձայն՝ ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը պետք է հիմնված լինի հաշվարկային արժեքի վրա: Հաշվարկային արժեքը կազմված է հետևյալի գումարից.

ա) նյութերի եւ ներմուծվող ապրանքների արտադրության հետ կապված պատրաստման կամ այլ գործողությունների ծախսը կամ արժեքը.

բ) ներմուծման երկիր արտահանելու համար արտահանման երկրում արտադրողների կողմից կատարվող՝ շահույթի եւ ընդհանուր ծախսերի գումարը, որը համարժեք է այն մեծությանը, որը սովորաբար արտացոլվում է այն նույն դասի կամ տեսակի ապրանքների վաճառքի դեպքում, ինչ գնորոշվող ապրանքների.

գ) սույն հավելվածի 8-րդ հոդվածի 1-ին կետի «ե», «զ» եւ «է» ենթակետերի համաձայն Կողմի ընտրած գնորոշման տարբերակն արտացոլելու համար անհրաժեշտ ծախսերը կամ դրանց արժեքը:

2. Կողմերից որեւէ մեկը չի կարող պահանջել կամ պարտադրել իր երկրի ռեզիդենտ չհանդիսացող որեւէ անձի՝ ստուգման համար ներկայացնելու կամ տրամադրելու հասանելիություն հաշիվներին կամ այլ տեղեկությունների՝ հաշվարկային արժեքը որոշելու համար: Այնուհանդերձ, սույն հոդվածի դրույթների համաձայն մաքսային արժեքը որոշելու նպատակով ապրանքներն արտադրողի կողմից տրամադրված տեղեկությունները ներմուծման երկրի մարմինների կողմից կարող են ստուգվել մեկ այլ երկրում՝ արտադրողի համաձայնությամբ եւ պայմանով, որ վերջիններս նախօրոք տեղեկացնեն տվյալ երկրի պետական մարմիններին, եւ որ վերջինս չառարկի ստուգման իրականացմանը:

Հոդված 7

1. Եթե ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը չի կարող որոշվել սույն հավելվածի 1-ից ներառյալ 6-րդ հոդվածի դրույթների համաձայն, ապա մաքսային արժեքը պետք է որոշվի սույն հավելվածի սկզբունքներին եւ ընդհանուր դրույթներին համահունչ ողջամիտ միջոցների կիրառմամբ եւ ներմուծման երկրում առկա տվյալների հիման վրա:

2. Որեւէ մաքսային արժեք սույն հոդվածի դրույթների համաձայն չպետք է որոշվի հետեւյալի հիման վրա.

ա) ներմուծման երկրում այն ապրանքների վաճառքի գինը, որոնք արտադրվել են այդ երկրում.

բ) որեւէ համակարգ, որով նախատեսվում է մաքսային նպատակներով երկու այլընտրանքային արժեքներից առավել բարձրի ընդունումը.

գ) արտահանման երկրի ներքին շուկայում ապրանքների գինը.

դ) հաշվարկային արժեքներից բացի այն արտադրական ծախսերը, որոնք որոշվել են նույնական կամ նույնանման ապրանքների համար՝ սույն հավելվածի 6-րդ հոդվածի դրույթների համաձայն.

ե) ներմուծման երկրից տարբերվող այլ երկիր արտահանման համար նախատեսված ապրանքների գինը.

զ) նվազագույն մաքսային արժեքները. կամ

է) կամայական կամ ֆիկտիվ արժեքները:

3. Ներմուծողի պահանջի համաձայն՝ վերջինս գրավոր տեղեկացվում է սույն հոդվածի դրույթների համաձայն սահմանված մաքսային արժեքի եւ այդ արժեքը որոշելու համար կիրառված մեթոդի մասին:

Հոդված 8

1. Սույն հավելվածի 1-ին հոդվածի դրույթների համաձայն մաքսային արժեքը որոշելիս ներմուծվող ապրանքների փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնին ավելացվում է՝

ա) հետեւյալը՝ այն չափով, որքանով դա կրում է գնորդը, սակայն ներառված չէ ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի մեջ.

- i. միջնորդավճարները եւ բրոքերային ծառայությունների դիմաց գանձվող վճարը՝ բացառությամբ գնման միջնորդավճարների.
- ii. բեռնարկղերի արժեքը, որոնք մաքսային նպատակներով դիտարկվում են համապատասխան ապրանքի հետ որպես մեկ ամբողջություն.
- iii. փաթեթավորման արժեքը՝ թե՛ աշխատանքի, թե՛ նյութերի համար.

բ) ներմուծվող ապրանքների արտահանման նպատակով արտադրության եւ վաճառքի հետ կապված կիրառման համար՝ հետեւյալ ապրանքների եւ անվճար կամ նվազեցված գնով գնորդին ուղղակիորեն կամ անուղղակիորեն տրամադրված ծառայությունների համապատասխան կերպով բաշխված արժեքը՝ փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի մեջ չներառված չափով.

- i. նյութեր, բաղադրամասեր, մասեր եւ ներմուծվող ապրանքների մաս կազմող նույնանման ապրանքներ.
- ii. գործիքներ, դրոշմվածքներ, կաղապարներ եւ ներմուծվող ապրանքների արտադրության համար օգտագործվող նույնանման ապրանքներ.
- iii. ներմուծվող ապրանքների արտադրության մեջ սպառվող նյութեր.
- iv. ներմուծման երկրից բացի՝ այլ երկրում կատարված եւ ներմուծվող ապրանքների արտադրության համար անհրաժեշտ նախագծում,

մշակում, գեղարվեստական ձեւավորում, կոնստրուկտորական աշխատանք, էսքիզներ եւ գծագրեր.

գ) գնորոշվող ապրանքների հետ կապված ռոյալթիներ եւ լիցենզիոն վճարներ, որոնք գնորդն ուղղակիորեն կամ անուղղակիորեն պետք է վճարի որպես գնորոշվող ապրանքների վաճառքի պայման՝ այդ ռոյալթիների եւ վճարների փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի մեջ չներառված չափով:

դ) վաճառողին ուղղակիորեն կամ անուղղակիորեն հասանելիք՝ ներմուծվող ապրանքների հետագա վերավաճառքի, տնօրինման կամ օգտագործման արդյունքում ստացվող եկամտի որեւէ մասի արժեքը.

ե) նավահանգիստ կամ ներմուծման վայր ներմուծվող ապրանքների փոխադրման ծախսը.

զ) նավահանգիստ կամ ներմուծման վայր ներմուծվող ապրանքների փոխադրման հետ կապված բեռնման, բեռնաթափման եւ փոխաբեռնման ծախսերը. եւ

է) սույն կետի «ե» եւ «զ» ենթակետերում նշված գործողություններին առնչվող ապահովագրական ծախսերը:

2. Սույն հոդվածի համաձայն փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի ավելացումները պետք է հիմնված լինեն օբյեկտիվ եւ քանակապես որոշվող տվյալների հիման վրա:

3. Մաքսային արժեքը որոշելիս չպետք է կատարվի փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի որեւէ ավելացում՝ բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

Հոդված 9

Եթե մաքսային արժեքի որոշման համար անհրաժեշտ է արժույթի փոխարկում, ապա կիրառվելիք փոխարժեքը սահմանվում է ներմուծման երկրի իրավասու մարմինների կողմից՝ ներմուծման երկրի մաքսային մարմնի կողմից մաքսային հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ:

Հոդված 10

Բոլոր տեղեկությունները, որոնք իրենց բնույթով գաղտնի են, կամ որոնք տրամադրվում են գաղտնիության կարգով մաքսային արժեքի որոշման նպատակով, պետք է դիտարկվեն որպես խիստ գաղտնի համապատասխան մարմինների կողմից, որոնք չպետք է դրանք հրապարակեն առանց այդ տեղեկությունները տրամադրող անձի կամ մարմնի հատուկ թույլտվության՝ բացառությամբ այն դեպքի, երբ դրանք կարող են պահանջվել ներմուծման երկրի ազգային օրենսդրության համաձայն:

Հոդված 11

1. Յուրաքանչյուր Կողմի օրենսդրությամբ մաքսային արժեքի որոշման համար պետք է սահմանվի ներմուծողի կամ տուրքի վճարման պարտավորություն ունեցող այլ անձի՝ առանց տույժերի կիրառման բողոքարկման իրավունքը:

2. Առանց տույժերի կիրառման բողոքարկման նախնական իրավունքով կարող է նախատեսվել մաքսային ծառայության կազմում գործող մարմին կամ անկախ մարմին դիմելու հնարավորություն, սակայն յուրաքանչյուր Կողմի օրենսդրությամբ պետք է նախատեսվի առանց տույժերի կիրառման դատական մարմին դիմելու բողոքարկման իրավունք:

3. Բողոքարկմանն առնչվող որոշման ծանուցումը պետք է տրվի բողոքը ներկայացրած անձին, եւ այդ որոշման պատճառները պետք է ներկայացվեն

գրավոր: Նրան անհրաժեշտ է տեղեկացնել հետագայում բողոքարկելու իր իրավունքների մասին:

Հոդված 12

Եթե ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշելիս անհրաժեշտ է դառնում հետաձգել այդ մաքսային արժեքի վերջնական որոշումը, ապրանքներ ներմուծողը, այնուհանդերձ, պետք է կարողանա իրականացնել մաքսային մարմինների կողմից ապրանքների բացթողումը, եթե նման պահանջի դեպքում ներմուծողն այդ ապրանքների դիմաց մաքսատուրքի վերջնական վճարման մասով ներկայացնում է բավարար երաշխիք՝ երաշխավորության, ապահովման վճարման կամ պարտավորության կատարման այլ ապահովման տեսքով: Յուրաքանչյուր Կողմի օրենսդրությամբ պետք է նախատեսվեն այդպիսի դեպքերի համար դրույթներ:

Հոդված 13

Սույն հավելվածի բացատրական ծանոթագրությունները սույն հավելվածի անբաժանելի մասն են կազմում, եւ սույն հավելվածի հոդվածները պետք է մեկնաբանվեն եւ կիրառվեն իրենց համապատասխան ծանոթագրությունների հետ միասին:

Հոդված 14

1. Սույն հավելվածում՝

ա) **«ներմուծվող ապրանքների մաքսային արժեք»** նշանակում է ապրանքների արժեք՝ ներմուծվող ապրանքների առնչությամբ արժեքի վրա հիմնված (ադվալորային) մաքսատուրքեր կիրառելու նպատակով.

բ) «արտադրված»՝ ներառում է աճեցվածը, արտադրվածը եւ արդյունահանվածը.

գ) «նույնական ապրանքներ» նշանակում է ապրանքներ, որոնք բոլոր առումներով, այդ թվում՝ ֆիզիկական բնութագրերով, որակով եւ համբավով նույնն են: Արտաքին չնչին տարբերությունները ապրանքները ոչ նույնական ճանաչելու հիմք չեն.

դ) «նույնանման ապրանքներ» նշանակում է ապրանքներ, որոնք թեպետ ոչ բոլոր առումներով են նման, ունեն նման բնութագրեր եւ նման բաղադրանյութեր, որոնց շնորհիվ դրանք նույն գործառույթն են կատարում եւ կոմերցիոն առումով փոխադարձ փոխարինելի են: Ապրանքների որակը, դրանց համբավը եւ առետրային նշանի առկայությունն այն գործոններից են, որոնք հաշվի են առնվում այդ ապրանքները որպես նույնանման որակելիս:

«Նույնական ապրանքներ» եւ «նույնանման ապրանքներ» եզրույթները, կոնկրետ իրավիճակից ելնելով, չեն ներառում այն ապրանքները, որոնց մեջ կամ որոնց առնչությամբ կիրառվել են նախագծում, մշակում, գեղարվեստական ձեւավորում, կոնստրուկտորական աշխատանք, էսքիզներ եւ գծագրեր, եւ որոնց նկատմամբ սույն հավելվածի 8-րդ հոդվածի 1-ին կետի «բ» (iv) ենթակետի համաձայն ոչ մի ճշգրտում չի կատարվել, քանի որ ապրանքային այդ տարրերը ստեղծվել են ներմուծման երկրում:

Ապրանքները չպետք է դիտվեն որպես «նույնական ապրանքներ» կամ «նույնանման ապրանքներ», եթե դրանք չեն արտադրվել այն նույն երկրում, որտեղ արտադրվել են գնորոշվող ապրանքները:

Այլ անձի կողմից արտադրված ապրանքները հաշվի են առնվում միայն այն դեպքում, երբ դրանք, կոնկրետ իրավիճակից ելնելով, միեւնույն անձի կողմից արտադրված նույնական ապրանքները կամ նույնանման ապրանքները չեն, ինչ գնորոշվող ապրանքները:

ե) «նույն դասի կամ տեսակի ապրանքներ» նշանակում է կոնկրետ

տնտեսության կամ տնտեսության ճյուղի կողմից արտադրված ապրանքների խմբին կամ շարքին դասվող ապրանքներ եւ ներառում է նույնական կամ նույնանման ապրանքները:

2. Սույն հավելվածի նպատակներով անձինք համարվում են փոխկապակցված միայն, եթե՝

ա) նրանք մեկը մյուսի կազմակերպությունների աշխատակիցներ կամ տնօրեններ են.

բ) նրանք իրավաբանորեն ճանաչված բիզնես գործընկերներ են.

գ) նրանք գործատու եւ աշխատող են.

դ) որեւէ անձ ուղղակիորեն կամ անուղղակիորեն տիրապետում, վերահսկում է նրանց երկուսի՝ շրջանառության մեջ եղած քվեարկող բաժնետոմսերի կամ բաժնեմասերի 5 տոկոսը կամ ավելին կամ դրանց բաժնետերն է.

ե) նրանցից մեկն ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկում է մյուսին.

զ) երկուսն էլ ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկվում են երրորդ անձի կողմից.

է) նրանք միասին ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկում են երրորդ անձին. կամ

ը) նրանք միեւնույն ընտանիքի անդամներ են:

3. Անձինք, որոնք փոխկապակցված են ձեռնարկատիրական այնպիսի գործունեության մեջ, որտեղ մեկը մյուսի միակ գործակալն է, միակ դիստրիբյուտորը կամ միակ կոնցեսիոները, անկախ նրանից, թե ինչպես է դա ներկայացված, համարվում են փոխկապակցված սույն հավելվածի իմաստով, եթե նրանք համապատասխանում են սույն հոդվածի 2-րդ կետի չափորոշիչներին:

Հոդված 15

Գրավոր հարցման հիման վրա՝ ներմուծողն իրավունք ունի ներմուծման երկրի մաքսային ծառայությունից ստանալու գրավոր բացատրություն այն մասին, թե ինչպես է որոշվել իր կողմից ներմուծված ապրանքների մաքսային արժեքը:

Հոդված 16

Սույն հավելվածում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես մաքսային արժեքների որոշման նպատակով ներկայացված ցանկացած հայտարարության, փաստաթղթի կամ հայտարարագրի արժանահավատ կամ ճշգրիտ լինելու հարցում հավաստիանալու համար մաքսային մարմինների իրավունքների բավարարումը սահմանափակող կամ կասկածի տակ դնող:

5-րդ հավելվածի բացատրական ծանոթագրություններ

Ընդհանուր ծանոթագրություն

Մաքսային արժեքի որոշման մեթոդների հաջորդական կիրառումը

1. 1-7-րդ հոդվածներով սահմանվում է, թե ներմուծվող ապրանքների մաքսային արժեքն ինչպես պետք է որոշվի 5-րդ հավելվածի դրույթների համաձայն: Մաքսային արժեքի որոշման մեթոդները սահմանվում են կիրառման հաջորդական կարգով: Մաքսային արժեքի որոշման սկզբնական մեթոդը սահմանված է 1-ին հոդվածով, եւ ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշվում է սույն հոդվածի դրույթներին համապատասխան՝ դրա մեջ սահմանված պայմանների կատարված լինելու դեպքում:

2. Եթե մաքսային արժեքը չի կարող որոշվել 1-ին հոդվածի դրույթների համաձայն, ապա այն որոշվում է հաջորդ հոդվածները հերթականությամբ դիտարկելու միջոցով՝ մինչեւ դրանցից այն առաջին հոդվածը, որի համաձայն մաքսային արժեքը կարող է որոշվել: Բացառությամբ 4-րդ հոդվածով նախատեսված դրույթի՝ հաջորդող հոդվածի դրույթները կարող են կիրառվել միայն այն դեպքում, երբ կոնկրետ հոդվածի դրույթների համաձայն մաքսային արժեքը չի կարող որոշվել:

3. Եթե ներմուծողը չի դիմում 5-րդ եւ 6-րդ հոդվածների կիրառման հերթականությունը փոփոխելու խնդրանքով, անհրաժեշտ է պահպանել սահմանված հաջորդականությունը: Եթե ներմուծողը դիմում է այդ հաջորդականությունը փոփոխելու խնդրանքով, սակայն հետագայում պարզվում է 6-րդ հոդվածի դրույթների համաձայն մաքսային արժեքը որոշելու անհնարինությունը, մաքսային արժեքը պետք է որոշվի 5-րդ հոդվածի դրույթների համաձայն, եթե այդ կերպ այն կարող է որոշվել:

4. Եթե մաքսային արժեքը չի կարող որոշվել 1-6-րդ հոդվածների

դրույթների համաձայն, այն պետք է որոշվի 7-րդ հոդվածի դրույթների համաձայն:

Ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքների կիրառումը

1. «Ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքներ» նշանակում է ընդհանուր համաձայնության հիման վրա ճանաչված կամ երկրում կոնկրետ ժամանակահատվածով էապես ընդունելի նորմեր այն մասին, թե որ տնտեսական ռեսուրսները եւ պարտավորությունները պետք է գրանցվեն որպես ակտիվներ եւ պասիվներ, թե ակտիվներում եւ պասիվներում որ փոփոխությունները պետք է գրանցվեն, թե ինչպես պետք է չափվեն ակտիվները եւ պասիվներն ու դրանցում կատարվող փոփոխությունները, թե ինչ տեղեկություններ պետք է հրապարակվեն եւ ինչպես, եւ թե ինչ ֆինանսական հաշվետվություններ պետք է կազմվեն: Այս ստանդարտները կարող են լինել համընդհանուր կիրառման ընդհանուր ուղեցույցներ, ինչպես նաեւ մանրամասն գործնական մեթոդներ եւ ընթացակարգեր:

2. 5-րդ հավելվածի նպատակներով յուրաքանչյուր Կողմի մաքսային ծառայությունը կիրառում է երկրում ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքներին համապատասխան կազմված այն տեղեկությունները, որոնք համապատասխանում են տվյալ հոդվածին: Օրինակ՝ 5-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ սովորական շահույթը եւ ընդհանուր ծախսերը որոշվում են ներմուծման երկրի ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքներին համապատասխան կազմված տեղեկությունների օգտագործմամբ: Մյուս կողմից՝ 6-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ սովորական շահույթը եւ ընդհանուր ծախսերը որոշվում են արտադրող երկրի հաշվապահական հաշվառման ընդունված սկզբունքներին համապատասխան կազմված տեղեկությունների օգտագործմամբ: Որպես եւս մեկ օրինակ կարելի է բերել այն, որ 8-րդ հոդվածի 1-ին կետի «բ» (ii) ենթակետում նշվածներից որեւէ մեկին առնչվող ցանկացած հարց ներմուծման երկրում որոշվում է այդ երկրի հաշվապահական հաշվառման

ընդունված սկզբունքներին համապատասխան տեղեկատվության օգտագործմամբ:

1-ին հոդվածի ծանոթագրություն

Փաստացի վճարված կամ վճարման ենթակա գինը

1. Փաստացի վճարված կամ վճարման ենթակա գինը ներմուծվող ապրանքների համար վաճառողին կամ ի շահ վաճառողի գնորդի կողմից կատարված կամ կատարման ենթակա ընդհանուր վճարումն է: Պարտադիր չէ, որ վճարումը լինի դրամական փոխանցման տեսքով: Վճարումը կարող է կատարվել ըստ ակրեդիտիվի կամ այլ վճարային ֆինանսական գործիքների կիրառմամբ: Վճարումը կարող է կատարվել ուղղակի կամ անուղղակի կերպով: Անուղղակի վճարման օրինակ կարող է լինել գնորդի կողմից վաճառողի ունեցած պարտքի ամբողջական կամ մասնակի մարումը:

2. Գնորդի կողմից իր իսկ հաշվին կատարված գործողություններով պայմանավորված ծախսերը, բացառությամբ նրանց, որոնց մասով 8-րդ հոդվածով նախատեսված է ճշգրտում, չեն համարվում անուղղակի վճարում վաճառողին, նույնիսկ եթե դրանք կարող են շահավետ լինել վաճառողի համար: Հետևաբար, այդ գործողություններով պայմանավորված ծախսերը փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնին չպետք է ավելացվեն մաքսային արժեքը որոշելիս:

3. Մաքսային արժեքը չի ներառում հետեւյալ վճարումները կամ ծախսերը՝ պայմանով, որ դրանք տարանջատված են ներմուծվող ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնից.

ա) շինարարության, կառուցման, հավաքման, սպասարկման կամ տեխնիկական աջակցության ծախսերը, որոնք կատարվել են ներմուծված այնպիսի ապրանքների ներմուծումից հետո, ինչպիսիք են արդյունաբերական կայանքները, մեքենաները կամ սարքավորումները.

բ) ներմուծումից հետո փոխադրման ծախսը.

գ) ներմուծման երկրի տուրքերը եւ հարկերը:

4. Փաստացի վճարված կամ վճարման ենթակա գինը վերաբերում է ներմուծվող ապրանքների գնին: Այսպիսով, ներմուծվող ապրանքներին չառնչվող շահաբաժինների կամ այլ վճարումների փոխանցումը գնորդից վաճառողին մաքսային արժեքի մաս չի կազմում:

5. Փաստացի վճարված կամ վճարման ենթակա գինը ներառում է գնորդի կողմից վաճառողին կամ գնորդի կողմից երրորդ անձին որպես ներմուծվող ապրանքների վաճառքի պայման փաստացի կատարվող կամ վճարման ենթակա բոլոր վճարումները՝ վաճառողի պարտավորությունը կատարելու համար:

1-ին կետի «ա» (iii) ենթակետ

Փաստացի վճարված կամ վճարման ենթակա գինն անընդունելի չդարձնող սահմանափակումների շարքին են դասվում այն սահմանափակումները, որոնք էական ազդեցություն չունեն ապրանքների արժեքի վրա: Այդպիսի սահմանափակումների օրինակ կարող է լինել այն դեպքը, երբ վաճառողը ավտոմոբիլների գնորդից պահանջում է չվաճառել կամ ցուցադրել այն մինչեւ սահմանված օրը, որը մոդելի թողարկման տարվա սկիզբն է:

1-ին կետի «բ» ենթակետ

1. Եթե վաճառքը կամ գինը կախված է այնպիսի պայմանից կամ նկատառումից, որի պատճառով գնորդման ենթակա ապրանքների արժեք չի կարող որոշվել, ապա գործարքի գինը մաքսային նպատակների համար ընդունելի չէ: Դրա որոշ օրինակներ ներառում են՝

ա) վաճառողը սահմանում է ներմուծվող ապրանքների գինն այն պայմանով, որ գնորդը կգնի նաեւ սահմանված քանակներով այլ ապրանքներ,

բ) ներմուծվող ապրանքների գինը կախված է այն գնից կամ գներից, որոնցով ներմուծվող ապրանքների գնորդն այլ ապրանքներ է վաճառում ներմուծվող ապրանքների վաճառողին,

գ) գինը սահմանվում է ներմուծվող ապրանքներին չառնչվող վճարման ձեւի հիման վրա, օրինակ, երբ ներմուծվող ապրանքները կիսաֆաբրիկատներ են, որոնք վաճառողի կողմից տրամադրվել են այն պայմանով, որ վաճառողը պատրաստի ապրանքների որոշակի քանակություն կստանա:

2. Այնուամենայնիվ, ներմուծվող ապրանքների արտադրության կամ շուկայահանման հետ կապված պայմանները կամ նկատառումները չպետք է հանգեցնեն գործարքի գնի մերժմանը: Օրինակ՝ այն փաստը, որ գնորդը վաճառողին տրամադրում է ներմուծման երկրում իրականացված ինժեներական նախագծման փաստաթղթերը եւ ծրագրերը, չպետք է հանգեցնի 1-ին հոդվածի նպատակներով գործարքի գնի մերժմանը: Նմանապես, եթե գնորդն իր հաշվին, նույնիսկ չնայած վաճառողի հետ համաձայնությանը, ձեռնարկում է ներմուծվող ապրանքների շուկայահանման հետ կապված գործողություններ, ապա այդ գործողությունների արդյունքում ձեւավորվող արժեքը մաքսային արժեքի մաս չպետք է կազմի, իսկ այդ գործողությունները չպետք է հանգեցնեն այդ գործարքի գնի մերժմանը:

2-րդ կետ

1. 2-րդ կետի «ա» եւ «բ» ենթակետերը տարբեր միջոցներ են սահմանում գործարքի գնի ընդունելիությունը որոշելու համար:

2. 2-րդ կետի «ա» ենթակետով նախատեսվում է, որ եթե գնորդը եւ վաճառողը փոխկապակցված են, ապա վաճառքի հանգամանքներն ուսումնասիրվում են, եւ գործարքի գինն ընդունվում է որպես մաքսային արժեք՝ պայմանով, որ նրանց հարաբերություններն ազդեցություն չեն ունենա գնի վրա: Պարտադիր չէ հանգամանքներն ուսումնասիրել բոլոր այն դեպքերում, երբ գնորդը եւ վաճառողը փոխկապակցված են: Նման ուսումնասիրություն կապահանջվի միայն այն դեպքում, երբ գնի ընդունելիության հետ կապված կասկածներ կան: Այն դեպքում, երբ մաքսային ծառայությունը գնի ընդունելիության հետ կապված կասկածներ չունի, ապա դա պետք է ընդունվի առանց ներմուծողից լրացուցիչ տեղեկություններ պահանջելու: Օրինակ՝ մաքսային ծառայությունը կարող է նախկինում ուսումնասիրած լինել հարաբերությունները կամ կարող է արդեն մանրամասն տեղեկություններ ունենալ գնորդի եւ վաճառողի վերաբերյալ, եւ այդ ուսումնասիրությունը կամ տեղեկություններն այն մասին, որ տվյալ փոխկապակցությունը գնի վրա ազդեցություն չի ունեցել, կարող են արդեն բավարար լինել մաքսային ծառայության համար:

3. Եթե մաքսային ծառայությունը չի կարողանում գործարքի գինն ընդունել առանց լրացուցիչ հարցման, ապա նա պետք է ներմուծողին հնարավորություն ընձեռի տրամադրել այնպիսի մանրամասն տեղեկություններ, որոնք իրեն կարող են անհրաժեշտ լինել վաճառքի հետ կապված հանգամանքներն ուսումնասիրելու համար: Այս համատեքստում մաքսային ծառայությունը պետք է պատրաստ լինի ուսումնասիրելու գործարքի համապատասխան մանրամասները, այդ թվում՝ այն եղանակը, որով գնորդը եւ վաճառողը կազմակերպում են իրենց առետրային հարաբերությունները, այն եղանակը, որով ստացվել է տվյալ գինը, որպեսզի որոշի, թե արդյոք փոխհարաբերությունը գնի վրա ազդեցություն ունեցել է, թե՛ ոչ: Այն դեպքում, երբ

կարելի է ցույց տալ, որ գնորդն ու վաճառողը, չնայած 14-րդ հոդվածի դրույթների համաձայն միմյանց հետ փոխկապակցված լինելով, միմյանցից գնում եւ միմյանց վաճառք են իրականացնում այնպես, կարծես միմյանց հետ կապ չունեն, ապա դա ցույց կտա, որ հարաբերությունները գնի վրա ազդեցություն չեն ունեցել: Որպես նշվածի օրինակ, եթե գինը սահմանված լիներ տվյալ ոլորտի սովորական գնագոյացման գործելակերպերին համապատասխան կամ այնպիսի եղանակով, որով վաճառողը վաճառքի գները սահմանում է վաճառողի հետ կապ չունեցող գնորդների համար, ապա դա ցույց կտար, որ փոխհարաբերություններն ազդեցություն չեն ունեցել գնի վրա: Որպես եւս մեկ օրինակ, եթե ցույց է տրվում, որ գինը համարժեք է բոլոր ծախսերի, գումարած այն շահույթի փոխհատուցումն ապահովելու համար, որը ներկայացնում է ընկերության՝ ներկայացվող ժամանակահատվածում (օրինակ՝ տարեկան կտրվածքով) նույն դասի կամ տեսակի ապրանքների վաճառքից ձեւավորված ընդհանուր շահույթը, ապա դա ցույց կտար, որ գինն ազդեցություն չի կրել:

4. 2-րդ կետի «բ» ենթակետով ներմուծողի համար նախատեսվում է հնարավորություն՝ ցույց տալու, որ գործարքի գինը խիստ մոտ է նախկինում մաքսային ծառայության կողմից ընդունված «փորձնական» գնին եւ հետեւաբար ընդունելի է 1-ին հոդվածի դրույթների համաձայն: Եթե 2-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված՝ փորձնական գնի հետ կապված պահանջներն ապահովվում են, ապա անհրաժեշտ չէ ուսումնասիրել 2-րդ կետի «ա» ենթակետում նշված ազդեցության հարցը: Եթե մաքսային ծառայությունը, առանց լրացուցիչ մանրամասն հարցումներ կատարելու, արդեն ունի բավարար տեղեկություններ համոզվելու համար, որ 2-րդ կետի «բ» ենթակետում նշված պահանջներից որեւէ մեկը կատարվել է, ապա կարիք չկա, որ նա ներմուծողից խնդրի ներկայացնել պահանջների ապահովման ապացույցներ: 2-րդ կետի «բ» ենթակետով սահմանված «չփոխկապակցված գնորդներ» եզրույթը նշանակում է գնորդներ, որոնք վաճառողի հետ ցանկացած կոնկրետ դեպքում փոխկապակցված չեն:

2-րդ կետի «բ» ենթակետ

Մի շարք գործոններ պետք է հաշվի առնվեն՝ որոշելու, թե արդյոք մի արժեքը «խիստ մոտ է» մյուս արժեքին: Այս գործոնները ներառում են ներմուծվող ապրանքների բնույթը, բուն ոլորտի բնույթը, ապրանքների ներմուծման սեզոնը եւ այն, թե արդյոք արժեքների տարբերությունը կոմերցիոն տեսանկյունից էական է, թե՛ ոչ: Քանի որ այս գործոնները դեպքից դեպք կարող են տարբեր լինել, ուստի անհնար կլինի յուրաքանչյուր դեպքում կիրառել մեկ միասնական չափանիշ, ինչպիսին ֆիքսված տոկոսն է: Օրինակ՝ մի տեսակի ապրանքի դեպքում արժեքի փոքր տարբերությունը կարող է անընդունելի լինել, մինչդեռ մեկ այլ տեսակի ապրանքի դեպքում մեծ տարբերությունը կարող է ընդունելի լինել՝ որոշելու, թե արդյոք գործարքի գինը խիստ մոտ է «փորձնական» արժեքներին, որոնք սահմանված են 1-ին հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետով:

2-րդ հոդվածի ծանոթագրություն

1. 2-րդ հոդվածը կիրառելիս մաքսային ծառայությունը, հնարավորության դեպքում, օգտագործում է նույն կոմերցիոն մակարդակով եւ էապես նույն քանակությամբ նույնական ապրանքների վաճառքի տվյալները, ինչ գնորոշվող ապրանքների դեպքում: Եթե նման վաճառք չի հայտնաբերվում, ապա կարող են օգտագործվել նույնական ապրանքների այն վաճառքի տվյալները, որը տեղի է ունենում հետեւյալ երեք պայմաններից որեւէ մեկի դեպքում.

ա) նույն կոմերցիոն մակարդակով, սակայն տարբեր քանակությամբ վաճառք,

բ) տարբեր կոմերցիոն մակարդակներով, սակայն էապես նույն քանակությամբ վաճառք, կամ

գ) տարբեր կոմերցիոն մակարդակներով եւ տարբեր քանակությամբ վաճառք:

2. Այս երեք պայմաններից որեւէ մեկով վաճառք հայտնաբերելու դեպքում, ըստ անհրաժեշտության, կոնկրետ դեպքից ելնելով՝ կկատարվեն ճշգրտումներ՝

- ա) միայն քանակական գործոնների համար,
- բ) միայն կոմերցիոն մակարդակի գործոնների համար, կամ
- գ) թե՛ կոմերցիոն մակարդակի, թե՛ քանակական գործոնների համար:

3. «Եվ (կամ)» արտահայտությունը նախատեսում է ճկունություն՝ վաճառքի հետ կապված տվյալներն օգտագործելու եւ վերելում նկարագրված երեք պայմաններից որեւէ մեկում անհրաժեշտ ճշգրտումներ կատարելու համար:

4. 2-րդ հոդվածի նպատակներով՝ ներմուծվող նույնական ապրանքների գործարքի գինը նշանակում է մաքսային արժեք, որը ճշգրտվել է 1-ին կետի «բ» ենթակետով եւ 2-րդ կետով նախատեսված կարգով, որն արդեն ընդունվել է 1-ին հոդվածի համաձայն:

5. Տարբեր կոմերցիոն մակարդակների կամ տարբեր քանակությունների պատճառով ճշգրտման պայմանն այն է, որ այդ ճշգրտումը, անկախ նրանից՝ արդյոք հանգեցնում է արժեքի ավելացման կամ նվազման, թե՛ ոչ, կատարվի միայն ներկայացված ապացույցների հիման վրա, որոնք հստակորեն հաստատում են ճշգրտումների ողջամտությունն ու ճշգրտությունը, օրինակ՝ վավեր գնացուցակներ, որոնք պարունակում են տարբեր մակարդակներին կամ տարբեր քանակություններին առնչվող գներ: Որպես նշվածի օրինակ, եթե գնորոշվող ներմուծվող ապրանքները բաղկացած են 10 միավորի խմբաքանակից, եւ գործարքի գին ունեցող՝ ներմուծվող նույնական ապրանքներում ներառված է եղել 500 միավորի վաճառք, ինչպես նաեւ պարզ է դառնում, որ վաճառողը քանակության դիմաց տրամադրում է զեղչեր, ապա պահանջվող ճշգրտումը կարող է կատարվել՝ հիմք ընդունելով վաճառողի գնացուցակը եւ օգտագործելով այն գինը, որը կիրառելի է 10 միավորի վաճառքի դեպքում: Սրանով չի պահանջվում, որ վաճառքը պետք է իրականացված լինի 10 միավորի քանակության դեպքում, եթե գնացուցակը կազմվել է այլ քանակությամբ

վաճառքների նկատմամբ բարեխիղճ կերպով: Նման օբյեկտիվ միջոցի բացակայության դեպքում, սակայն, 2-րդ հոդվածի դրույթների համաձայն մաքսային արժեքի որոշումն անընդունելի է:

3-րդ հոդվածի ծանոթագրություն

1. 3-րդ հոդվածը կիրառելիս մաքսային ծառայությունը հնարավորության դեպքում օգտագործում է նույն կոմերցիոն մակարդակով եւ էապես նույն քանակությամբ նույնանման ապրանքների վաճառքի տվյալները, ինչ գնորոշվող ապրանքների դեպքում: Եթե նման վաճառք չի հայտնաբերվում, ապա կարող են օգտագործվել նույնանման ապրանքների այն վաճառքի տվյալները, որը տեղի է ունենում հետեւյալ երեք պայմաններից որեւէ մեկի դեպքում.

ա) նույն կոմերցիոն մակարդակով, սակայն տարբեր քանակությամբ վաճառք,

բ) տարբեր կոմերցիոն մակարդակներով, սակայն էապես նույն քանակությամբ վաճառք, կամ

գ) տարբեր կոմերցիոն մակարդակներով եւ տարբեր քանակությամբ վաճառք:

2. Այս երեք պայմաններից որեւէ մեկով վաճառք հայտնաբերելու դեպքում, ըստ անհրաժեշտության, կոնկրետ դեպքից ելնելով՝ կկատարվեն ճշգրտումներ՝

ա) միայն քանակական գործոնների համար,

բ) միայն կոմերցիոն մակարդակի գործոնների համար, կամ

գ) թե՛ կոմերցիոն մակարդակի, թե՛ քանակական գործոնների համար:

3. «Եվ (կամ)» արտահայտությունը նախատեսում է ճկունություն՝ վաճառքի հետ կապված տվյալներն օգտագործելու եւ վերելում նկարագրված երեք պայմաններից որեւէ մեկում անհրաժեշտ ճշգրտումներ կատարելու համար:

4. 3-րդ հոդվածի նպատակով՝ ներմուծվող նույնանման ապրանքների գործարքի գինը նշանակում է մաքսային արժեք, որը ճշգրտվել է 1-ին կետի «բ» ենթակետով եւ 2-րդ կետով նախատեսված կարգով, որն արդեն ընդունվել է 1-ին հոդվածի համաձայն:

5. Տարբեր կոմերցիոն մակարդակների կամ տարբեր քանակությունների պատճառով ճշգրտման պայմանն այն է, որ այդ ճշգրտումը, անկախ նրանից՝ արդյոք հանգեցնում է արժեքի ավելացման կամ նվազման, թե՛ ոչ, կատարվի միայն ներկայացված ապացույցների հիման վրա, որոնք հստակորեն հաստատում են ճշգրտումների ողջամտությունն ու ճշգրտությունը, օրինակ՝ վավեր գնացուցակներ, որոնք պարունակում են տարբեր մակարդակներին կամ տարբեր քանակություններին առնչվող գներ: Որպես նշվածի օրինակ, եթե գնորոշվող ներմուծվող ապրանքները բաղկացած են 10 միավորի խմբաքանակից, եւ գործարքի գին ունեցող՝ ներմուծվող նույնանման ապրանքներում ներառված է եղել 500 միավորի վաճառք, ինչպես նաեւ պարզ է դառնում, որ վաճառողը քանակության դիմաց տրամադրում է զեղչեր, ապա պահանջվող ճշգրտումը կարող է կատարվել՝ հիմք ընդունելով վաճառողի գնացուցակը եւ օգտագործելով այն գինը, որը կիրառելի է 10 միավորի վաճառքի դեպքում: Սրանով չի պահանջվում, որ վաճառքը պետք է իրականացված լինի 10 միավորի քանակության դեպքում, եթե գնացուցակը կազմվել է այլ քանակությամբ վաճառքների նկատմամբ բարեխիղճ կերպով: Նման օբյեկտիվ միջոցի բացակայության դեպքում, սակայն, 3-րդ հոդվածի դրույթների համաձայն մաքսային արժեքի որոշումն անընդունելի է:

5-րդ հոդվածի ծանոթագրություն

1. «Միավորի գին, որով ... ապրանքներն առավելագույն հանրագումարային քանակությամբ վաճառվում են» եզրույթը նշանակում է այն գինը, որով առավելագույն թվով ապրանքային միավորներ են վաճառվում այն անձանց, որոնք փոխկապակցված չեն այն անձանց հետ, որոնցից վերջիններս

այդ ապրանքները գնում են ներմուծումից հետո այն առաջին կոմերցիոն մակարդակում, որում տեղի է ունենում այդ վաճառքը:

2. Որպես նշվածի օրինակ՝ ապրանքները վաճառվում են գնացուցակից, որով ավելի մեծ քանակությամբ գնումների համար բարենպաստ միավոր գներ են տրամադրվում:

Վաճառքի քանակը	Միավորի գինը	Վաճառքների թիվը	Յուրաքանչյուր գնով վաճառված ընդհանուր քանակը
1-10 միավորներ	100	5 ապրանքային միավորով՝ 10 վաճառք, 3 ապրանքային միավորով՝ 5 վաճառք	65
11-25 միավորներ	95	11 ապրանքային միավորով՝ 5 վաճառք	55
ավելի, քան 25 միավոր	90	30 ապրանքային միավորով՝ 1 վաճառք, 50 ապրանքային միավորով՝ 1 վաճառք	80

Նշված գներից որեւէ մեկով վաճառված ապրանքային միավորների ամենամեծ թիվը 80-ն է, ուստի առավելագույն հանրագումարային քանակով միավորի գինը 90-ն է:

3. Որպես նշվածի մեկ այլ օրինակ՝ երկու վաճառք է իրականացվում: Առաջին վաճառքի շրջանակներում վաճառվում է 500 միավոր, յուրաքանչյուրը՝ 95 արժույթային միավոր գնով: Երկրորդ վաճառքի շրջանակներում վաճառվում է 400 միավոր, յուրաքանչյուրը՝ 90 արժույթային միավոր գնով: Այս օրինակում կոնկրետ գնով վաճառված միավորների ամենամեծ թիվը 500-ն է, ուստի առավելագույն հանրագումարային քանակով միավորի գինը 95-ն է:

4. Երրորդ օրինակը կլինի հետեւյալ իրավիճակը, երբ տարբեր գներով տարբեր քանակություններ են վաճառվում:

ա) Վաճառք	
Վաճառքի քանակը	Միավորի գինը
40 միավոր	100
30 միավոր	90
15 միավոր	100
50 միավոր	95
25 միավոր	105
35 միավոր	90
5 միավոր	100
բ) Ընդամենը	
Վաճառված ընդհանուր քանակը	Միավորի գինը
65	90
50	95
60	100
25	105

Այս օրինակում կոնկրետ գնով վաճառված միավորների ամենամեծ թիվը 65-ն է, ուստի առավելագույն հանրագումարային քանակով միավորի գինը 90-ն է:

5. Վերոնշյալ 1-ին կետում նկարագրված ներմուծման երկրում որեւէ վաճառք, որն իրականացվում է այն անձին, որն օգտագործման համար ուղղակիորեն կամ անուղղակիորեն, անվճար կամ նվազեցված արժեքով մատակարարում է 8-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետում նշված՝ ներմուծվող ապրանքների արտահանման նպատակով դրանց արտադրությանը եւ վաճառքին առնչվող ապրանքային տարրերից որեւէ մեկը, չպետք է հաշվի առնվի 5-րդ հոդվածի նպատակներով միավորի գինը սահմանելիս:

6. Հարկ է նշել, որ 5-րդ հոդվածի 1-ին կետում նշված «շահույթը եւ ընդհանուր ծախսերը» պետք է դիտարկել որպես ամբողջություն: Այս նվազեցման նպատակներով թիվը պետք է որոշվի ներմուծողի կողմից կամ նրա անունից տրամադրված տեղեկությունների հիման վրա՝ բացառությամբ այն դեպքերի, երբ

ներմուծողի թվերը չեն համապատասխանում նույն դասի կամ տեսակի ներմուծվող ապրանքների՝ ներմուծման երկրում վաճառքից ստացված թվերին: Եթե ներմուծողի թվերը չեն համապատասխանում այդ թվերին, ապա շահույթի եւ ընդհանուր ծախսերի գումարը կարող է հիմնված լինել այլ համապատասխան տեղեկությունների վրա՝ ներմուծողի կողմից կամ նրա անունից տրամադրված տեղեկություններից բացի:

7. «Ընդհանուր ծախսերը» ներառում են տվյալ ապրանքների շուկայահանման ուղղակի եւ անուղղակի ծախսերը:

8. Ապրանքների վաճառքի հետ կապված վճարման ենթակա տեղական հարկերը, որոնց համար նվազեցում չի կատարվում 5-րդ հոդվածի 1-ին կետի «ա» (iv) ենթակետի դրույթների համաձայն, նվազեցվում են 5-րդ հոդվածի 1-ին կետի «ա» (i) ենթակետի դրույթների համաձայն:

9. 5-րդ հոդվածի 1-ին կետի դրույթների համաձայն՝ միջնորդավճարները կամ սովորական շահույթն ու ընդհանուր ծախսերը սահմանելիս այն հարցը, թե արդյոք որոշակի ապրանքներ «նույն դասի կամ տեսակի» են, ինչ մյուս ապրանքները, պետք է որոշվի յուրաքանչյուր դեպքի համար առանձին՝ հաշվի առնելով համապատասխան հանգամանքները: Պետք է ուսումնասիրվի նույն դասի կամ տեսակի ներմուծվող ապրանքների ամենափոքր խմբի կամ տեսականու՝ ներմուծման երկրում այն վաճառքը, որը ներառում է գնորոշվող ապրանքները, որոնց վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ կարող են տրամադրվել: 5-րդ հոդվածի նպատակներով «նույն դասի կամ տեսակի ապրանքները» ներառում են այն ապրանքները, որոնք ներմուծվում են նույն երկրից, որտեղից եւ գնորոշվող ապրանքները, ինչպես նաեւ այլ երկրներից ներմուծվող ապրանքները:

10. 5-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի նպատակներով «ամենավաղ ամսաթիվն» այն ամսաթիվն է, մինչեւ որը ներմուծված ապրանքների կամ

ներմուծված նույնական կամ նույնանման ապրանքների վաճառքն իրականացվում է միավորի գինը սահմանելու համար բավարար քանակությամբ:

11. Եթե կիրառվում է 5-րդ հոդվածի 2-րդ կետով նշված մեթոդը, ապա հետագա մշակման արդյունքում ավելացված արժեքի մասով կատարված նվազեցումները պետք է հիմնված լինեն այդ աշխատանքի արժեքի հետ կապված օբյեկտիվ եւ քանակապես չափելի տվյալների վրա: Ոլորտում ընդունված բանաձեւերը, միջոցները, շինարարության մեթոդները եւ ոլորտի այլ գործելակերպեր հաշվարկների համար հիմք կդառնան:

12. Հարկ է նշել, որ 5-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված գնորոշման մեթոդը սովորաբար կիրառելի չէ, եթե հետագա մշակման արդյունքում ներմուծվող ապրանքները կորցնում են իրենց տեսքը: Այնուամենայնիվ, կարող են լինել դեպքեր, որ թեեւ ներմուծվող ապրանքների տեսքը կորչում է, մշակման արդյունքում ավելացված արժեքը կարող է ճշգրիտ որոշվել առանց անհիմն դժվարությունների: Մյուս կողմից՝ կարող են լինել նաեւ դեպքեր, երբ ներմուծվող ապրանքները պահպանում են իրենց տեսքը, բայց ներմուծման երկրում վաճառվող ապրանքների մեջ այնպիսի աննշան բաղկացուցիչ տարր են կազմում, որ գնորոշման այս մեթոդի կիրառումն արդարացված չի լինի: Հաշվի առնելով վերը նշվածը՝ նմանատիպ յուրաքանչյուր իրավիճակ պետք է դիտարկվի յուրաքանչյուր դեպքի համար առանձին:

6-րդ հոդվածի ծանոթագրություն

1. Որպես ընդհանուր կանոն՝ մաքսային արժեքը որոշվում է սույն համաձայնագրի 5-րդ հավելվածի համաձայն՝ ներմուծման երկրում հանրամատչելի տեղեկությունների հիման վրա: Հաշվարկված արժեքը որոշելու համար, այնուամենայնիվ, կարող է անհրաժեշտ լինել ուսումնասիրել գնորոշվող ապրանքների արտադրության ծախսերը եւ այլ տեղեկություններ, որոնք պետք է ձեռք բերվեն ներմուծման երկրի սահմաններից դուրս: Ավելին, շատ դեպքերում

ապրանքն արտադրողը կարող է ներմուծման երկրի իշխանությունների իրավասության շրջանակներից դուրս լինել: Հաշվարկված արժեքի մեթոդի կիրառումը հիմնականում սահմանափակվելու է այն դեպքերով, երբ գնորդը եւ վաճառողը փոխկապակցված են, իսկ արտադրողը պատրաստ է ներմուծման երկրի մարմիններին ներկայացնել անհրաժեշտ ծախսերի հաշվարկներ եւ տրամադրել միջոցներ հետագայում որեւէ ստուգման համար, որը կարող է պահանջվել:

2. 6-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետում նշված «ծախսը կամ արժեքը» պետք է որոշվի արտադրողի կողմից կամ անունից մատակարարվող՝ գնորոշվող ապրանքների արտադրության հետ կապված տեղեկությունների հիման վրա: Դա պետք է հիմնված լինի արտադրողի առետրային հաշիվների վրա՝ պայմանով, որ այդ հաշիվները համահունչ են ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքներին, որոնք կիրառվում են այն երկրում, որտեղ արտադրվում են ապրանքները:

3. «Ծախսը կամ արժեքը» ներառում է 8-րդ հոդվածի 1-ին կետի «ա» (ii) եւ (iii) ենթակետերում նշված ապրանքային տարրերի արժեքը: Այն ներառում է նաեւ 8-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետում նշված ապրանքային ցանկացած այն տարրի՝ 8-րդ հոդվածի համապատասխան ծանոթագրության դրույթների համաձայն բաշխված արժեքը, որը գնորդի կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն տրամադրվել է՝ ներմուծվող ապրանքների արտադրության մեջ օգտագործման համար: 8-րդ հոդվածի 1-ին կետի «բ» (iv) ենթակետում նշված՝ ներմուծման երկրում ստեղծված ապրանքային տարրերի արժեքը ներառվում է միայն այնքանով, որքանով ապրանքային այդ տարրերի համար արտադրողը գումար է վճարում: Պետք է հասկանալ, որ այս կետում նշված ապրանքային տարրերի ոչ մի ծախս կամ արժեք հաշվարկված արժեքը որոշելիս կրկնակի չի հաշվարկվում:

4. 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետում նշված «շահույթի եւ ընդհանուր ծախսերի գումարը» որոշվում է արտադրողի կողմից կամ անունից

տրամադրված տեղեկությունների հիման վրա՝ բացառությամբ այն դեպքերի, երբ արտադրողի թվերը չեն համապատասխանում այն թվերին, որոնք սովորաբար արտացոլվում են նույն դասի կամ տեսակի ապրանքների վաճառքի շրջանակներում, ինչ գնորոշվող ապրանքների դեպքում, որոնք արտահանման երկրի արտադրողների կողմից արտադրվում են ներմուծման երկիր արտահանելու համար:

5. Այս համատեքստում պետք է նշել, որ «շահույթի եւ ընդհանուր ծախսերի գումարը» պետք է դիտարկել որպես ամբողջություն: Հետեւաբար, եթե որեւէ կոնկրետ դեպքում արտադրողի շահույթի ցուցանիշը ցածր է, իսկ ընդհանուր ծախսերը՝ բարձր, ապա արտադրողի շահույթը եւ ընդհանուր ծախսերը միասին վերցրած, այնուամենայնիվ, կարող են համապատասխանել նույն դասի կամ տեսակի ապրանքների վաճառքի շրջանակներում սովորաբար արտացոլված թվերին: Նման իրավիճակ կարող է առաջանալ, օրինակ, եթե ապրանքը թողարկվում է ներմուծման երկրում, իսկ արտադրողը բավարարվում է գրոյական կամ ցածր շահույթով, որպեսզի փոխհատուցի թողարկման հետ կապված մեծ ընդհանուր ծախսերը: Եթե արտադրողը կարող է ցույց տալ, որ ներմուծվող ապրանքների վաճառքից ստացված ցածր շահույթը կոնկրետ առետրային հանգամանքների հետեւանք է, ապա արտադրողի փաստացի շահույթի թվերը հաշվի են առնվում՝ պայմանով, որ արտադրողը ծանրակշիռ առետրային պատճառներ ունի դրանք հիմնավորելու համար, եւ արտադրողի գնային քաղաքականությունն արտացոլում է տվյալ ոլորտի համապատասխան ճյուղի սովորական գնային քաղաքականությունը: Նման իրավիճակ կարող է առաջանալ, օրինակ, երբ արտադրողները ստիպված են լինում ժամանակավորապես իջեցնել գները պահանջարկի անկանխատեսելի անկման պատճառով, կամ երբ նրանք ապրանքները վաճառում են ներմուծման երկրում արտադրվող ապրանքների տեսականին համալրելու նպատակով եւ բավարարվում են ցածր շահույթով՝ մրցակցությունը պահպանելու համար: Եթե արտադրողի՝ շահույթի եւ ընդհանուր ծախսերի ցուցանիշները չեն

համապատասխանում այն ցուցանիշներին, որոնք սովորաբար արտացոլվում են նույն դասի կամ տեսակի ապրանքների վաճառքում, ինչ գնորոշվող ապրանքների դեպքում, որոնք արտահանման երկրում արտադրողների կողմից արտադրվում են ներմուծման երկիր արտահանելու համար, ապա շահույթի եւ ընդհանուր ծախսերի գումարը կարող է հիմնված լինել համապատասխան այլ տեղեկությունների վրա՝ ապրանքներն արտադրողի կողմից կամ նրա անունից տրամադրված տեղեկություններից բացի:

6. Եթե հաշվարկված արժեքը որոշելու նպատակով օգտագործվում են արտադրողի կողմից կամ նրա անունից տրամադրված տեղեկություններից բացի այլ տեղեկություններ, ապա ներմուծման երկրի իշխանությունները ներմուծողի պահանջի դեպքում վերջինիս տեղեկացնում են այդ տեղեկությունների աղբյուրի, օգտագործվող տվյալների եւ այդ տվյալների հիման վրա կատարված հաշվարկների մասին՝ 10-րդ հոդվածի դրույթների համաձայն:

7. 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետում նշված «ընդհանուր ծախսերը» ծածկում են արտահանման ենթակա ապրանքների արտադրության եւ վաճառքի ուղղակի եւ անուղղակի ծախսերը, որոնք ներառված չեն 6-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետում:

8. Այն հարցը, թե արդյոք որոշակի ապրանքներ «նույն դասի կամ տեսակի» են, ինչ մյուս ապրանքները, պետք է որոշվի յուրաքանչյուր դեպքի համար առանձին՝ հաշվի առնելով համապատասխան հանգամանքները: 6-րդ հոդվածի դրույթների համաձայն սովորական շահույթը եւ ընդհանուր ծախսերը որոշելիս պետք է ուսումնասիրվի ներմուծման երկիր արտահանման համար ապրանքների ամենափոքր խմբի կամ տեսականու վաճառքը, որը ներառում է գնորոշվող ապրանքները, որոնց վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ կարող են տրամադրվել: 6-րդ հոդվածի նպատակներով «նույն դասի կամ տեսակի ապրանքները» պետք է լինեն նույն երկրից, որտեղից եւ գնորոշվող ապրանքները:

7-րդ հոդվածի ծանոթագրություն

1. 7-րդ հոդվածի դրույթներով սահմանված մաքսային արժեքները հնարավորինս պետք է հիմնված լինեն նախկինում սահմանված մաքսային արժեքների վրա:

2. 7-րդ հոդվածի համաձայն կիրառվող գնորոշման մեթոդները պետք է լինեն 1-6-րդ հոդվածներում սահմանված մեթոդները, սակայն այդ մեթոդների կիրառման ողջամիտ ճկունությունը պետք է համապատասխանի 7-րդ հոդվածի նպատակներին եւ դրույթներին:

3. Ողջամիտ ճկունության օրինակներից են՝

ա) Նույնական ապրանքները. այն պահանջը, որ նույնական ապրանքները պետք է արտահանվեն գնորոշվող ապրանքների հետ նույն կամ գրեթե նույն ժամանակ, կարող է ճկուն կերպով մեկնաբանվել. ներմուծված նույնական ապրանքները, որոնք արտադրվել են գնորոշվող ապրանքների արտահանման երկրից բացի այլ երկրում, կարող են մաքսային արժեքի որոշման հիմք լինել. կարող են օգտագործվել ներմուծված նույնական ապրանքների մաքսային արժեքները, որոնք 5-րդ եւ 6-րդ հոդվածների դրույթների համաձայն արդեն որոշված են:

բ) Նույնանման ապրանքները. այն պահանջը, որ նույնանման ապրանքները պետք է արտահանվեն գնորոշվող ապրանքների հետ նույն կամ գրեթե նույն ժամանակ, կարող է ճկուն կերպով մեկնաբանվել. ներմուծված նույնանման ապրանքները, որոնք արտադրվել են գնորոշվող ապրանքների արտահանման երկրից բացի այլ երկրում, կարող են մաքսային արժեքի որոշման հիմք լինել, կարող են օգտագործվել ներմուծված նույնանման ապրանքների մաքսային արժեքները, որոնք 5-րդ եւ 6-րդ հոդվածների դրույթների համաձայն արդեն որոշված են:

գ) Դեղուկտիվ մեթոդը. այն պահանջը, որ 5-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետում նշված ապրանքները վաճառվել են «այն վիճակով, որով

ներմուծվել են», կարող է ճկուն կերպով մեկնաբանվել. «90 օր» պահանջը կարող է կիրառվել ճկուն կերպով:

Ց-րդ հոդվածի ծանոթագրություն

1-ին կետի «ա» (i) ենթակետ

«Գնման միջնորդավճարներ» եզրույթը նշանակում է գնորոշվող ապրանքների գնման ժամանակ ներմուծողին արտասահմանում ներկայացնելու ծառայության համար ներմուծողի կողմից իր գործակալին կատարվող վճար:

1-ին կետի «բ» (ii) ենթակետ

1. Ց-րդ հոդվածի 1-ին կետի «բ» (ii) ենթակետում նշված ապրանքային տարրերի բաշխման վրա ազդեցություն է ունենում երկու գործոն՝ հենց ապրանքային տարրի արժեքը եւ այն եղանակը, որով այդ արժեքը պետք է բաշխվի ներմուծվող ապրանքների վրա: Այս ապրանքային տարրերի բաշխումը պետք է կատարվի ողջամիտ կերպով՝ հանգամանքներին եւ ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքներին համապատասխան:

2. Ինչ վերաբերում է ապրանքային տարրի արժեքին, եթե ներմուծողն ապրանքային տարրը կոնկրետ արժեքով ձեռք է բերում ներմուծողի հետ կապ չունեցող վաճառողից, ապա ապրանքային տարրի արժեքը հենց այդ արժեքն է: Եթե ապրանքային տարրն արտադրվել է ներմուծողի կամ ներմուծողի հետ կապ ունեցող անձի կողմից, ապա դրա արժեքը կլինի դրա արտադրության արժեքը: Եթե ապրանքային տարրը նախկինում օգտագործվել է ներմուծողի կողմից՝ անկախ նրանից՝ այն ձեռք է բերվել, թե արտադրվել է այդ ներմուծողի կողմից, ապա ձեռքբերման կամ արտադրության սկզբնական արժեքը պետք է ճշգրտվի դեպի ներքե՝ ապրանքային տարրի օգտագործումը հաշվի առնելով դրա արժեքն ստանալու համար:

3. Ապրանքային տարրի համար արժեքը որոշելուց հետո անհրաժեշտ է այդ արժեքը բաշխել ներմուծվող ապրանքների վրա: Կան տարբեր հնարավորություններ: Օրինակ՝ արժեքը կարող է բաշխվել առաքվող առաջին խմբաքանակի վրա, եթե ներմուծողը ցանկանա միանվագ վճարել ամբողջ արժեքի տուրքը: Որպես մեկ այլ օրինակ՝ ներմուծողը կարող է պահանջել, որ արժեքը բաշխվի մինչև առաջին առաքումն արտադրված միավորների քանակի վրա: Որպես լրացուցիչ օրինակ՝ ներմուծողը կարող է պահանջել, որ արժեքը բաշխվի ակնկալվող ամբողջ արտադրության վրա, եթե այդ արտադրության համար կան պայմանագրեր կամ կայուն պարտավորություններ: Բաշխման կիրառված մեթոդը կախված կլինի ներմուծողի կողմից ներկայացված փաստաթղթերից:

4. Որպես վերը նշվածի օրինակ՝ ներմուծողն արտադրողին տրամադրում է կադապար, որը պետք է օգտագործվի ներմուծվող ապրանքների արտադրության մեջ եւ 10,000 միավոր գնելու մասին արտադրողի հետ կնքված պայմանագրերում: Նախքան 1000 միավորից բաղկացած առաջին խմբաքանակի ժամանումը արտադրողն արդեն արտադրել է 4000 միավոր: Ներմուծողը մաքսային ծառայությունից կարող է պահանջել կադապարի արժեքը բաշխել 1000 միավորի, 4000 միավորի կամ 10000 միավորի վրա:

1-ին կետի «բ» (iv) ենթակետ

1. 8-րդ հոդվածի 1-ին կետի «բ» (iv) ենթակետում նշված ապրանքային տարրերին առնչվող լրացուցիչ գումարները պետք է հիմնված լինեն օբյեկտիվ եւ քանակապես չափելի տվյալների վրա: Ավելացվող արժեքները որոշելիս թե՛ ներմուծողի, թե՛ մաքսային ծառայության բեռը նվազագույնի հասցնելու նպատակով գնորդի առետրային հաշվետվությունների համակարգում հասանելի տվյալները պետք է հնարավորինս օգտագործվեն:

2. Գնորդի կողմից մատակարարված այն ապրանքային տարրերի համար, որոնք գնվել կամ վարձակալվել են գնորդի կողմից, լրացուցիչ գումարը կլինի գնման կամ վարձակալության արժեքը: Լրացուցիչ գումարներ չպետք է վճարվեն այն ապրանքային տարրերի համար, որոնք հասանելի են հանրային տիրույթում՝ բացի դրանց կրկնօրինակները ձեռք բերելու արժեքից:

3. Ավելացվող արժեքները հաշվարկելու դյուրինությունը կախված կլինի կոնկրետ ընկերության կառուցվածքից եւ կառավարման գործելակերպից, ինչպես նաեւ նրա հաշվապահական հաշվառման մեթոդներից:

4. Օրինակ, հնարավոր է, որ մի քանի երկրներից տարբեր ապրանքներ ներմուծող ընկերությունն իր նախագծային կենտրոնի փաստաթղթերը պահպանի ներմուծման երկրից դուրս այնպես, որ ճշգրիտ արտացոլվեն տվյալ ապրանքի հետ կապված ծախսերը: Նման դեպքերում ուղղակի ճշգրտում կարող է կատարվել Ց-րդ հոդվածի դրույթների համաձայն:

5. Մեկ այլ դեպքում ընկերությունը նախագծային կենտրոնի ծախսերը կարող է կրել ներմուծման երկրից դուրս՝ որպես առանց կոնկրետ ապրանքների վրա բաշխելու ընդհանուր վերադիր ծախս: Այս դեպքում Ց-րդ հոդվածի դրույթների համաձայն կարելի է կատարել ներմուծվող ապրանքների հետ կապված համապատասխան ճշգրտում՝ նախագծային կենտրոնի ընդհանուր ծախսերը բաշխելով այն արտադրության վրա, որն օգուտ է ստանում նախագծային կենտրոնից, եւ այդ բաշխված արժեքը միավոր գնի վրա հիմնված ներմուծմանն ավելացնելով:

6. Վերոնշյալ հանգամանքների փոփոխությունները, անշուշտ, կպահանջեն հաշվի առնել տարբեր գործոններ համապատասխան բաշխման մեթոդը որոշելիս:

7. Այն դեպքերում, երբ ապրանքային տվյալ տարրի արտադրությունը ներառում է մի շարք երկրներ եւ որոշակի ժամանակահատված, ճշգրտումը պետք է սահմանափակվի ներմուծման երկրից դուրս ապրանքային այդ տարրին փաստացի ավելացված արժեքով:

1-ին կետի «գ» ենթակետ

1. 8-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի մեջ նշված ոռոգողները եւ լիցենզիոն վճարները կարող են ներառել, ի թիվս այլնի, արտոնագրերի, ապրանքային նշանների եւ հեղինակային իրավունքների հետ կապված վճարումներ: Այնուամենայնիվ, ներմուծման երկրում ներմուծված ապրանքների վերարտադրման իրավունքի համար վճարները մաքսային արժեքը որոշելիս չեն ավելացվում ներմուծված ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գումարին:

2. Ներմուծված ապրանքների բաշխման կամ վերավաճառքի իրավունքի համար գնորդի կողմից կատարված վճարումները չպետք է ավելացվեն ներմուծված ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գումարին, եթե այդ վճարումները ներմուծված ապրանքների ներմուծման երկիր արտահանելու համար վաճառքի պայման չեն:

3-րդ կետ

Եթե 8-րդ հոդվածի դրույթներով պահանջվող լրացուցիչ գումարների վերաբերյալ օբյեկտիվ եւ քանակապես չափելի տվյալներ չկան, ապա գործարքի գինը չի կարող որոշվել 1-ին հոդվածի դրույթների համաձայն: Որպես նշվածի օրինակ՝ ոռոգողները վճարվում է ներմուծման երկրում որոշակի ապրանքի մեկ լիտրի վաճառքի գնի հիման վրա, որը ներմուծվել է կիլոգրամով եւ ներմուծվելուց հետո վերածվել լուծույթի: Եթե ոռոգողները հիմնված է մասամբ ներմուծվող ապրանքների եւ մասամբ այլ գործոնների վրա, որոնք ներմուծվող ապրանքներին առնչություն չունեն (օրինակ, երբ ներմուծվող ապրանքները խառնվում են տեղական բաղադրիչների հետ եւ այլեւս չեն կարող առանձին նույնականացվել, կամ երբ ոռոգողները չի կարող տարանջատվել գնորդի եւ վաճառողի միջեւ կոնկրետ ֆինանսական գործարքներից), ապա տեղին չի լինի փորձել լրացուցիչ գումարներ վճարել ոռոգողի համար: Այնուամենայնիվ, եթե այդ ոռոգողի

գումարը հիմնված է միայն ներմուծվող ապրանքների վրա եւ կարող է հեշտությամբ քանակապես սահմանվել, ապա կարող է կատարվել փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի ավելացում:

11-րդ հոդվածի ծանոթագրություն

1. 11-րդ հոդվածով ներմուծողին իրավունք է տրվում բողոքարկելու գնորոշվող ապրանքների համար մաքսային ծառայության կողմից կատարված գնորոշումը: Բողոքարկումն սկզբում կարող է իրականացվել ավելի բարձր օղակի մաքսային ծառայությունում, սակայն վերջում ներմուծողն իրավունք ունի դիմելու դատական ատյաններ:

2. «Առանց տույժերի» նշանակում է, որ ներմուծողը տուգանք չի վճարում կամ նրան տուգանք չի սպառնում միայն այն պատճառով, որ ներմուծողը որոշել է իրացնել բողոքարկման իրավունքը: Սահմանված դատական ծախսերի եւ փաստաբաններին վճարների վճարումը տուգանք չի համարվում:

3. Այնուամենայնիվ, 11-րդ հոդվածում ոչինչ չի խոչընդոտում, որ Կողմը նախքան բողոքարկումը պահանջի գնահատված մաքսատուրքերի լրիվ վճարում:

14-րդ հոդվածի ծանոթագրություն

2-րդ կետ

14-րդ հոդվածի նպատակներով «անձինք» եզրույթն անհրաժեշտության դեպքում ներառում է իրավաբանական անձանց:

2-րդ կետի «ե» ենթակետ

Սույն համաձայնագրի 5-րդ հավելվածի նպատակներով՝ մի անձը վերահսկողություն է իրականացնում մյուսի նկատմամբ, եթե առաջինն իրավաբանական կամ գործնական առումով այնպիսի դիրքում է, որ կարող է սահմանափակել կամ ուղղորդել մյուսի գործողությունները:

ՀԱՎԵԼՎԱԾ 6

ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՈՒ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ¹

Հայաստանի Հանրապետության համար՝ <https://www.armeps.am>;
<https://www.procurement.am/> պաշտոնական կայքերում

Բելառուսի Հանրապետության համար՝ <https://gias.by/>; <https://pravo.by/>;
<http://www.zakupki.butb.by/>; <https://goszakupki.by/> պաշտոնական կայքերում

Ղազախստանի Հանրապետության համար՝ <https://goszakup.gov.kz/>;
<https://adilet.zan.kz/eng> պաշտոնական կայքերում

Ղրղզական Հանրապետության համար՝ <http://www.zakupki.gov.kg/popp/>
պաշտոնական կայքում

Ռուսաստանի Դաշնության համար՝ <https://zakupki.gov.ru>;
<http://www.pravo.gov.ru/> պաշտոնական կայքերում

Իրանի Իսլամական Հանրապետության համար՝
<https://setadiran.ir/setad/cms> պաշտոնական կայքում¹

¹ Վերը նշված կայքերի որևէ փոփոխության դեպքում համապատասխան Կողմը մյուս Կողմին այդ փոփոխության մասին կձանուցի իր կապի ապահովման կենտրոնների միջոցով: